



# **ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ**

## **ՀԱՏՈՐ Գ**

**ԵՐԵՎԱՆ**  
**2011**

## **Հասորը հրատարակվում է Երևանի բաղամաղեսարանի հոլանսկորոյամբ**

ՀՏԴ 941(479.25)  
ԳՄԴ 63.3(23)  
Մ 660

«Մեր հաղթանակները»  
նախագծի դեկավար և հեղինակ՝  
Գագիկ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հեղինակային խմբի դեկավար՝  
Սուրեն ՄԱՐՏԻԿՅԱՆ

Գիտական խմբագիր՝  
Եղուարդ Լ. ՂԱՄԻԵԼՅԱՆ  
պատմ. գիտ. դոկտոր

Մեր հաղթանակները.- Դ.3.  
Մ 660 - Եր.: Նորավանք, 2011, 336 էջ

«Մեր հաղթանակները» նախագծի նպատակն է հանրությանը ներ-  
կայացնել Հայաստանի ռազմարվեստի պատմությունը։ Այս հատորում  
ընդորկված է XI-XIII դդ. Դայոց Բագրատունների թագավորության,  
հայկական իշխանությունների և Կիլիկյան թագավորության օտար  
նվաճողների ուն մոլած պայքարում մեր բանակի տարած հաղթանակ-  
ների համառոտ նկարագրությունը և վերլուծությունը։

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շոշանակների համար։

ԳՄԴ 63.3(23)

## Նախաբան

«Մեր հաղթանակների» հերթական, նախավերջին հատորում ներկայացված են Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությունների, ինչպես նաև այդ դարաշրջանի հայկական իշխանությունների համառոտ ռազմական պատմությունը և ռազմարվեստը: Պատմական այդ դրամատիկ փուլում Հայաստանը պայքարում էր թյուրք-սելջուկների և թաթար-մոնղոլների, ինչպես նաև բյուզանդական և «լատինական» Նկրտումների դեմ:

Միևնույն ժամանակ, այդ պատերազմներն իրենց բնույթով տարբեր են: Եվկոր ցեղերի դեմ պատերազմներն ուղղված են ոչ միայն մեր պետականության, այլև ազգային-քաղաքակրթական արժեքների պահպանմանը, ինչը պետք է որ համընկներ Բյուզանդիայի և Եվրոպայից եկած խաչակիրների ռազմավարական շահերի հետ: Սակայն մարտավարական բնույթի հակասությունները հայ, բյուզանդական և «լատինական» ուժերի միջև թույլ չտվեցին ձևավորել դիմադրության ընդհանուր ճակատ, ինչն էլ ժամանակի ընթացքում հանգեցրեց պարտությանը և Առաջավոր Ասիայի քրիստոնեական պետությունների անկմանը:

Բոլոր պարագաներում, անգամ այդ բարդ և հակասական ռազմաքաղաքական իրավիճակներում, հայ զորավարների վարած ճակատամարտերը հարստացրել են համաշխարհային ռազմարվեստի պատմությունը: Բավական է նշել Յարսան Սսուրի ճակատամարտում Բարսեղ Կամսարականի կիրառած ռազմական հնարքը՝ «սանդղաձև մարտակարգը», որում կենտրոնի զորաթևն ավելի հետ էր, քան թևերը: Ռազմարվեստում նոր խոսք էր Զաքարե Զաքարյանի կողմից կիրառված «հովհարաձև»՝ ալիքաձև առաջնաղացումներով հարձակման մարտավարությունը, որը հետագայում կրկնեց նաև Լևոն Բ-ն: Յայկական ռազմարվեստի ավանդույթների պահպանման և զարգացման նման օրինակները, ինչում կիամոգվի մեր ընթերցողը, ավելի քան շատ են:

«Մեր հաղթանակների» երրորդ հատորը տպագրվում է Երևանի քաղաքապետարանի հովանավորությամբ և աջակցությամբ, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը քաղաքապետ Կարեն Կարապետյանին:

Գագկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Նախագծի հեղինակ և ղեկավար

---

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ  
ԲԱԳՐԱՏՈՒԵԼԻՆԵՐԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ

---

## ՌԱՋԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԼ ՊԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ

**Պատմական տեղեկանք.** «Այն ժամանակ Յայոց աշխարհի թագավորն էր Բագրատունյաց ցեղի Աշոտի որդի, Սմբատի և Գուրգենի եռայր Գագիկը (990-1020թթ.), որը հզոր և պատերազմներում հաղթող մարդ էր: Սա խաղաղության մեջ պահեց Յայոց աշխարհը»:

**Արիստակես Լաստիվերցի, Պատմություն,  
գլ. Բ. Յայոց թագավորության մասին**

**Խ** ի. Երկրորդ տասնամյակից Առաջավոր Ասիայում հաստատված ուժերի անկայուն ու խիստ հարաբերական հավասարակշռությունը սկսում է խախտվել:

Տարածաշրջանային ռազմական քաղաքականության մեջ ներգրավված ուժերի վերաբաշխումն էական ազդեցություն է ունենում Յայաստանի ներքաղաքական զարգացումների վրա և Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության իրագործման թյուրքական<sup>1</sup> վտանգի աճի պայմաններում 1021թ. Բյուզանդիային են միացվում Կասպուրականի Կրօրունիների տիրույթները: Դրանց դիմաց Կասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծորունին Բարսեղ Բ (Կասիլ Բուլղարասպան, 976-1025թթ.) կայսրից ստանում է Փոքր Յայքի Սեբաստիա քաղաքն ու շրջակա գավառները: Թագավորի հետ Սեբաստիա են տեղափոխվում նրա մերձավոր ազնվականության մեջ մասն ու գործը:

1030-ական թթ. օդուզ-թուրքմենները հիմնականում ոչ մեծ ուժերով էին ասպատակություններ կատարում: Արևելքում իր քաղաքականությունը Բյուզանդիան կրկին աշխուժացնում է 1040-ական թթ. սկզբներին, որը ժամանակագրութեն գրեթե համընկնում է թյուրքերի ասպատակությունների նոր փուլի հետ: 1040-60-ական թթ. Բյուզանդիայի անհեռատես քաղաքականության հետևանքով թուլացած Բագրատունյաց Յայաստանը թիրախն է դառնում օտար նվաճողների համար: Իրադրությունը բարդանում էր նաև ներքին խնդիրների հետևանքով. բաժանված ուժերը չին կարողանում արդյունավետ պայքար վարել թշնամու դեմ: Սակայն նույնիսկ այդ պայմաններում հայկական կողմը թագնաթիվ ռազմական հաջողություններ է գրանցում:

<sup>1</sup> Արևելքից իրենց ասպատակություններն են սկսում թյուրքական ցեղերը, որոնց առաջին հարձակումները Յայաստանի հարավային շրջանների վրա (Կասպուրականի թագավորության տարածք) տեղի են ունենում 1016-1021թք.:

## **ԴԱՎԻՇ ԱՆՀՈՂԻ ՀԱՊԹԱՆԱԿՆ ԱԲՈՒ-Լ-ԱՍՎԱՐԻ ԴԵՄ**

**1040թ.**

**Փ**ագրատումյաց Դայաստամի թուլացումից շտապում է «օգտվել» Շադրադյանների քրդական ամիրայական տոհմը, որի ներկայացուցիչ Աբու-լ-Ասվար (Ապուսուար) ամիրան (1022-1067թթ.) սկսել էր նվաճողական քաղաքականություն իրականացնել հայկական իշխանությունների նկատմամբ: 1040-ական թթ. սկզբին ամիրան հարձակվում է Գանձակի և Տաշիր-Զորագետի հայկական թագավորության վրա, որում իշխում էր Դավիթ Անհողը (989-1048թ.):

**Պատմական տեղեկանք.** «Յայոց 489 թվականին (11 մարտ 1040 - 10 մարտ 1041թ.)... պարսից մեծ ամիրա Ապուտուարը շուրջ հարյուր հիւտն հազար անհավաների զրահավաք արեց և մեծ զայրությով հարձակվեց քրիստոնյաների վրա: Նա ավելիչ կատադրյամ մտավ Ալվանից Երկիրը, Դավիթ Անհողի զավարը և մեծ փորձանք բերեց հավատացյալների գլխին: Դավիթը... խուսափեց պատերազմից»:

**Մատքեռ Ռուհայեցի, ժամանակագրություն, Մասն առաջին**


Ուազմական գործողությունները սկսվում են Արու-լ-Ասվարի գործերի հարձակումով: Ամիրայի գործերը Գանձակի կողմից ներխուժում են Տաշիր-Զորագետի թագավորության տարածք և գրավում թագավորության արևելյան զավառները: Պատմիչի՝ թշնամական զորքերի քանակի մասին տեղեկությունից կարելի է եղուակացնել, որ Շաղդաղյանների միացյալ ուժերից բացի, հարձակմանը մասնակցում էին նաև որոշ հարևան ամիրայությունների գործերը:

## **Ռազմական դաշինքը**

Ստեղծված իրադրությունում Դավիթը ժամանակ շահելու նպատակով ամրոցներում կայազորներ է թողնում և դիմում խուսանավումների ռազմավարությանը: Արքան օգնության հանար առաջին հերթին դիմում է Գագիկ Ա Չահնշահի որդում՝ Յովհաննես-Սմբատին (1020-1042թթ.): Բագրատունյաց թագավոր Յովհաննես-Սմբատը ոչ միայն չորս հազարանոց ընտիր օգնական զորագունդ է ուղարկում Տաշիր, այլև Յայոց գերագույն գահակալի պարտականությունները կատարելով՝ Սյունիքի Սմբատ Աշոտյան թագավորին (1040-1044թթ.) հանձնարարում է Երկու հազարանոց զորագունդ դնել նորաստեղծ դաշինքի տրամադրության տակ: Կատարելով վասալական պարտականությունները՝ Սյունիքի արքան անձանձ է գլխավորում արշավանքի ուղարկվող զորագունդը: Ընդհանուր թշնամու դեմ պայքարին միանում են նաև ափխազների գորագնդերը:

**Պատմական տեղեկանք.** «Դավիթը ճարահասյալ դիմեց Յովհաննես (Յովհաննես-Սմբատ) թագավորին, որ Անիում էր նստում... Յովհաննեսը Դավիթին չորս հազար հոգի ուղարկեց, ապա միջնորդեց Կապանի թագավորին, որը նույնպես նրան (օգնություն) ուղարկեց՝ Երկու հազար հոգի... ափխազների թագավորը ևս օգնություն ուղարկեց՝ չորս հազար հոգի: Ինքը՝ Դավիթը, հավաքեց իր շուրջ տասը հազար հոգուց բաղկացած զորքը»:

**Մատքեռ Ռուհայեցի, ժամանակագրություն, Մասն առաջին**



Գուրզեր (XII դ.)

Գուրզը կարևոր տեղ ուներ հակառակորդի գլխավոր հարվածային ներուժը կազմող ծանրազեն հետևակի և հեծելազորի դեմ մերձամարտում, որի համար կարող էր լինել կարծ և երկար, իմշաբն նաև՝ ծանր, միջին ու թերեւ: Դատանիներին ռազմական գործին վարժեցնելու գործում անփոխարինելի էին գուրզախաղաղերը:

## Բարոյահոգեբանական գործունը

Դատկանշական է, որ ուժերի միավորումից հետո էլ հակառակորդին գիշող հայկական զորքերի բարոյահոգեբանական վիճակը բարելավելու նպատակով Դավիթ Անհող դիմում է Աղվանից Ջովսեփ կաթողիկոսին, որը ևս շուրջ երկու հարյուր հայ հոգևորականների ուղեկցությամբ միանում է ճակատամարտի ելած զորքերին: Կաթողիկոսի և մյուս հոգևորականների քարոզմերն ու աղոթքները կարևոր նշանակություն են ունենում փոքրաթիվ ուժերը վճռական ճակատամարտի պատրաստելու գործում, քանի որ պայքարը հոգևոր երանգ էլ է ստանում:

**Պատճական տեղեկանը.** «Տեր Ջովսեփ... նամակ գրեց վամբերը՝ վաճահյերին, որպեսզի ճանանց առանց վարամելու բոլոր վաճականներով հանդերձ գան միանան հավատացյալների զորքին: Նա հավաքեց Աղվանիքի բոլոր քահանաներին և սարկավագներին, քայլող կարողաց բոլոր գավառներում... Լսելով դա, հայրն իր որդիներով և մայրն իր դուստրերով գնացին հավատացյալների ճամբարը: Բովանդակ դաշտը լցվեց անհանար բազմությամբ, կարծես ոչխարմերի և գառների հոտով: Ապուստարը, իմանալով այդ մասին, ծիծաղեց և շարժեց քիստոնյաների գործի վրա»:

**Սատրեսու Ուրիայեցի, Ժամանակագրություն, Մասմ առաջին**


Չկարողանալով ըմբռնել իրադրության արմատական բեկումը՝ Արուլ-Ասվարը սպասողական դիրք է գրավում: Առաջին փուլում առձանագրած հաջող դուրյուններից ելնելով՝ նա հույս ուներ, որ ահաբեկված Դավիթն ի վիճակի չի

Ղինի շարունակել պայքարը: Չնայած ամիրան տեղեկություններ է ստանում, որ հայ հոգևորականների կոչով Տաշիրում աշխարհազորի գնդեր են կազմվում, սակայն նա լուրջ չի համարում սպառնալիքն ու սկզբում անգամ հեգնանքու է մոտենում Դավիթ թագավորի ռազմական պատրաստություններին: Բայց որոշ-շակի պահից հետո արդեն անհնար է լինում հաշվի չնատել իրականության հետ, և Կրուլ-Ասվարը հարկադրված «գործի է անցնում»:

## Ծակատամարտը

Երկու բանակները շարժվում են միջյան ընդառաջ: Տեսնելով այն արտասովոր խանդավառությունը, որը համակել էր հայկական զորքերին, Աքու-Լ-Ավարի և նրա զորախմբի տագնապը մեծանում է (տես սխ. 1):

## Ախեմա 1



Արև-Լ-Ասվարի հրոսակների ջախջախումը 1040թ.

Նկատելով իր գիմվորներին պատաժ անորոշությունը՝ Աբու-լ-Ասվարը որոշում է վճռական հարձակման անցնել, սակայն հայկական զորքերը կանխող հարվածով խափանում են նրա նտահեղացումը: Փաստորեն, ճակատամարտի սկզբից ևեր քուրդ ամիրան զրկվում է նախաձեռնությունից, որը ծանր հետևանքներ էր ունենալու նրա զորքի համար:

**Պատմական տեղեկանք.** «Դավիթը քանի հազար հոգով հարձակվեց այլազգիների քաջ մարտիկների վրա: Եթե նրանք ճակատեցին, քահանայական դասը միաբերան աղաղակեց առ Աստված: «Եկ, Տեր, օգնիր և փրկիր մեզ հանուն քո սուրբ անվան», և այդ ձայնից թնդաց երկիրը: Դավատացյալների գործը իրվեց անհավատների բազմությամբ ծովացած ճամբարը և ողողվեց: Նենց այդ ժամանակ քահանայական դասը մեկ մարդու պես բարձրացրեց քրիստոսական Սուրբ Նշանը և հարձակվեց թշնամիների վրա: Նրանցից սաստիկ հուր ցուաց և հարվածեց այլազգիների ռազմիկներին, որոնք գլխովին դիմեցին փախուստի»:

**Սատրենու Ռուհայեցի, Ժամանակագրություն, Մասմա առաջին**

Դակառակորոյից մի քանի անգամ փոքրաթիվ հայկական գորագնդերն ամբողջ ճակատով հումքու հարձակման են անցնում: Ենակատամարտը ծավալվում է Աբու-լ-Ասվարի ճամբարի մոտ՝ նրա զորքի ելման թնագֆի շրջանում, ու թեև երկու կողմներն էլ հասցել էին նախապատրաստվել մարտիկն, սակայն տեղանքը նպաստավոր էր հայկական զորագնդերի համար: Դարցն այն է, որ նախահարձակ լինելով՝ հայկական կողմը հակառակորդին սեղմել էր իր ճամբարին ու զրկել մարտավարական ամբողջ տարածքում ազատ գործելու հնարավորությունից:


Բարենպաստ տեղանքում ճակատամարտը սկսած հայկական գորագնդերը միշրճվում են հակառակորդի նարտակարգի կենտրոնը և սկսում հակառակորդի նարտակարգի ամենաքաղմամարդ հատվածում նրա զորաշարի ճեղքումը: Այս հնարքը բացահայտում է Տաշիրի արքայի մոռակացումը: Մարտակարգը հասող հարվածին զուգահեռ՝ զախչախվելու էր հակառակորդի ամենամեծարիվ զորքերը, որի հետևանքով նրա մյուս գորամասերը հարկադրված նահանջելու էին:

## Դաղլթանակը

ճակատամարտի երկրորդ փուլում Աբու-լ-Ասվարին հաջողվում է վերականգնել մարտակարգի կյայունությունը, և հայոց զորագնդերի հարձակումը կասեցվում է: Դա հավասարեցնում է կողմների հաղթանակի հասնելու հնարավորությունը: Դավիթ արքային ակնհայտ է դաշնում, որ հարաբերական հաջողությունն ամրապնդելու համար հակառակորդը կարող է մեծարիվ ուժերով

հակագրողի դիմել, և նա շտապում է մարտի մտցնել իր պահեստագործ: Այս գորամասերի հետ մարտադաշտ են մտնում մեկ տողանով շարված բոլոր երկու հարյուր վանականները՝ կաթողիկոսի գլխավորությամբ: Մարտադաշտը «խաչ ու ավետարան դարձրած» սկազգեստ հայ հոգևորականների անվան առաջ շարժվող շարքը սարսափեցնում է հակառակորդի գինվորներին և ոգևորում մեր գորամասերին (տես սխ. 2):

Սխեմա 2



Արու-լ-Ասպարի հրոսակների ջախջախումը 1040թ.

Դամալրված գորամասերով ուժեղացված հայկական զորքերն անցնում են հարձակման և, ի վերջո, ճեղքում են հակառակորդի մարտակարգը:

Ուշագրավ է, որ սկսված խուճապի պատճառով Շադրայան ամիրան չի կարողանում մարտի մտցնել իր պահեստային զորագնդերի մյուս մասը: Վերջիններս անպաշտպան են թողնում ճամբարը և փախչում մարտադաշտից: ճամբարում մնացած հսկայական ռազմավարն անցնում է հետապնդման ուղարկված զորամասերին:

**Պատմական տեղեկանք.** «Յայոց գինվորները սրամերկ հետապնդեցին նրանց և հինգ օր (շարումնակ) մեծ ջարդ տալով հալածական արեցին այլազգիների գինվորներին. դաշտերն ու լեռները արյամբ ողղովեցին: (Յայերը) տիրացան ոսկե և արծաթ անհանար գանձերի, բազում ավարի: Պարսից (կենդանի) մնացած գինվորները մազապուրծ, մերկ ու բրիկ հասան իրենց երկիրը: Երեք օրվա ընթացքում Դավիթը տիրացավ այլազգիների ծերզն անցած բոլոր գավառներին: Օգնության հասած բոլոր գինվորներին նա նեծամեծ պարզեներ տալով (տուն) ուղարկեց. նա բազում ինչը բաժանեց նաև Եփսկոպոսներին, քահանաներին, իր մոտ եկած բոլորին և տուն ուղարկեց: Եվ տիրեց խաղաղությունը»:

**Մատրիոս Ուսիայեցի, Ժամանակագություն, Մասմ Առաջին**

Այսպիսով, Տաշիր-Զորագետի թագավորությունն իրեն ենթարկելու Ծադդադյան Արու-լ-Ասվար ամիրայի փորձն ավարտվում է անհաջողությամբ: Յայկական և օգնության հասած ափխազական զորանասերը փայլուն հաղթանակ են տանում:

Մարտավարության տեսանկյունից հատկապես ուշագրավ է հակառակորդի հետապնդումը, որը նոր խոսք էր ռազմարվեստում: Բավկական է ասել, որ փախչող հակառակորդի հետապնդումը շարունակվել է հինգ օր: Ուժերի գերազույն լարումով իրականացված հետապնդումը երկրորդ հաղթանակն է բերում հայկական զորքերին: Զարմանալի չէ, որ կրկնակի հաջողության հասած Դավիթ արքայից ընդամենը հինգ օր է պահանջվում հակառակորդի նվաճած բոլոր հողերն ազատագրելու համար:

## ԹՈՌՆԱՎԱՆՈՒՄ ԹՈՒՐՁՄԵՆԱԿԱՆ ՀՐՈՍԱԿԱԽՄԲԵՐԻ ԶԱԽԶԱԽՈՒՄԸ

### 1042թ.

**Օ**դուզ-թուրքմենական արշավանքների երկարատև շղթայում առանձնանում են 1042թ. նոյեմբերի 15 հազարամոց զորքի հարձակումը Կասպուրական աշխարհի Թոռնավան (Թոռնեան) գավառի վրա և տեղի Արծունի իշխանների կազմակերպած դիմադրության դրվագը:

## **ՆԵՐԻԽՈՒԹՈՒՄԸ**

**Պատմական տեղեկանք.** «Անօրեն, արծաթամոլ, եղենացործ ու մեղսաեր... թուրերի ցեղերն... ունեն արյունաբերութագամների բնություն: Ահավոր կերպարանը ունեցող ցեղեր են, քանի որ նրանց տեսքը զարդարում է ու ահարեկում դիտողներին: Նրանք վայրի գազամների նման բնակվում են լեռներում, դաշտերում և անապատներում և գիշակեր են գազամների պես: Չեն պատվում մեծամեծերին, չեն խնայում ծերունիների սպիտակ մազերը և պատկառելիությունը, չեն խղճում երիտասարդներին ու մանուկներին, ոչ էլ խնայում են որևէ մեկի մանկությունը: Չար և ժաման ժողովուրդ են, որոնք չուղղեցին իրենց սրտերը և ոչ էլ իրենց հոգիներն ապավինուցին Աստծուն»:


**Պատմություն Արքունյաց տան**

Հարձակումը տեղի է ունենում 1042թ. Ուրմիո լճի ավագանից՝ Յերևանի գավառների կողմից: Թափառական թյուրքական ցեղերի հրոսակախմբերը ներխութում էին հայկական հողերն ու ամայացնող արշավանքներով ահարեկում Վասպուրականի հայությանը:

## **Խոլ Խաչիկի թիկնազորի հերոսությունը**

Հայոենի հողի պաշտպանությունը գլխավորում է խոլ Խաչիկ մականունով Արքունի իշխանը: Խաչիկ Արքունին Վասպուրականի թագավորական տան այն փոքրարիվ ներկայացուցիչներից էր, որոնք 1021թ. արտագաղթի ժամանակ հրաժարվել էին Սեմերերին թագավորի հետ հեռանալ Հայաստանից (տես՝ քարտեզը):

ՈԱՀՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1042 թ.



Դայրենասեր իշխանը նույն ոգով էլ դաստիարակել էր որդիներին՝ Դասանին ու ճնճղովին, որոնք ծառայության էին անցել բյուզանդական բանակում։ Ստեղծված իրավիճակում Բյուզանդիայի ռազմական ուժը Դայաստանի հարավային շրջանների և Միջագետքի հայաշատ վայրերի պաշտպանությանը ծառայեցմելու ձգտումով բազմաթիվ հայ իշխաններ էին համագործակցում բյուզանդական իշխանությունների հետ։

**Պատմական տեղեկանք.** «Նույն տարին (1042թ.) Վասպուրական գավառում սպանվեցին հայոց մեծ իշխան Խաչիկը և նրա մամլկահասակ որդին՝ Իշխանն՝ Շերի և Սալմաստի (կողմերից թափառական թյուրքերը) հավաքվելով, ավարի էին առել Թոռնաւան գավառը։ Այդ բանի լուրը հասել էր Խաչիկին, թե այլազգիների գործը մտավ քո գավառը։ Նա քաջ մարդ էր, պատերազմներում՝ հաղող, առյօնի ծնունդ, սակայն ծերացել էր և թողել պատերազմական գործը։ Նա հառաջում էր, ափսոսում, որ իր որդիներ քաջ Դասանն ու ճնճղովը գործերով հաներձ Սիքայել կայսեր հետ Արևոնտուր էին գնացել։»

*Մատթեոս Ուրիայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին*

Խաչիկ Արծրունին «Քռողել էր պատերազմական գործը», բայց այդ վճռական պահին անվարան գլխավորում է բարբարոս ավազակախնձերի ասպատակությունների դեմ պայքարի ելած ուժերը։

Դարցն այն է, որ բյուզանդական բանակի կազմում գործելու համար Դասան Արծրունին հարկադրված էր եղել իր հետ Թոռնավանից տանել գավառի գործերն ամբողջ զորագունդը, և Խուլ Խաչիկը մնացել էր առանց շատ թե քիչ կազմակերպված զինական ուժի։ Դայրենի հոդին կառչած իշխանի տրամադրության տակ մնացել էր ընդամենը յոթ տասնյակից կազմված իշխանական թիկնապահ ստորաբաժանում։

Այդ իրավիճակում մեկ ուրիշը հուսահատության եզրին կիայտնվեր, սակայն անելիքն ինացող Արծրունի իշխանն անցնում է գործի։ Նա ի մի է բերում բոլոր մարտունակ ուժերը և քաջաքար դուրս գալիս թյուրքական հրոսակախնձերի դեմ։ Նույնիսկ ծանրագույն իրավիճակում Խաչիկը սառնասրության օրինակ է ցուցաբերում։ Գիտակցելով, որ մեծարիվ հակառակորդի դեմ հաղթանակի հասնելու հույսերն անիրական են, իսկ պարտության դեպքելու նա անչափահաս (տասնինգամյա) որդուն՝ Իշխանին, թողնում է տանը։

**Պատմական տեղեկանք.** «Դայոց իշխան Խաչիկը... հասավ այլազգիներին, տեսավ, որ (նրանք) մեծարիվ են, բայց կոչ անելով իր մարտիկներին, կովի բռնվեց, ուժգին հարվածեց նրանց և գետին տապալեց։»

*Մատթեոս Ուրիայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին*

Խաչիկ հշանի որոշումն անբեկանելի էր. հակառակորդը *ցանկացած գնով պետք է դուրս շարտվեր Դայաստանից:* Նկատելով, որ իր մեծաքանակության պատճառով հակառակորդն անհոգ է ու տեղաբաշխվել է անբարենպաստ տեղանքում, Արքունյաց քաջերը որոշում են հարձակվել նոր վրա: Դարձար պահ ընտրելով՝ յոթանասուն քաջերը նետվում են հակառակորդի ճամբարի վրա: Սկսվում է թեժ ճարտ:

**Պատմական տեղեկանք.** «Այդ պահին նա (Խուլ Խաչիկը) տեսավ, որ իր տղան (Իշխանը) փակված տեղից փախչելով պատերազմի է գալիս: Խաչիկը սրտակոտոր եղավ, որովհետև տղան դեռ փոքր էր... Իշխանը, իր առյուծի կորյուն եկավ և մեծ ավլունով մտավ մարտի մեջ: Խաչիկը նրան քոնց և տուն ուղարկեց, բայց նա Շորից փախավ և դիմեց պատերազմի... Երբ այլազգիներն իմացան, որ նա քաջ (Խաչիկի) որդին է, նրան շրջապատեցին, բռնեցին և սպանեցին: Խաչիկի մեջքը կոտրվեց՝ տեսնելով այդ բանը, սուրբ ձեռքից ընկավ: Այլազգիների գինվորները տեսնելով դա, հարձակվեցին, ծերբակալեցին նրան և սպանեցին»:

**Սառթես Ռուհայեցի, ժամանակագրություն, Սասն առաջին**

Ղանկարծ Խաչիկ Արքունյան տեսնում է, որ երիտասարդական անհամբերություն դրսւորելով՝ Իշխանը չի կատարել իր հրամանը և եկել է նարտադաշտում միացել գրոհող ստորաբաժանումներին: Սարտի թոհուբոհում ժեր իշխանը չեր կարողանալու իշխանազումնին ամենայն ճանաբանամություններով բացատրել պահեստազորի հրամանատարի պարտականությունները կատարելու համար տանը բողնվելու քայլի կարևորությունը: Այդ պատճառով, ուղղակի պահանջում է կատարել իր հրամանն ու տուն վերադառնալ, իսկ ինքը միանում է իր մարտնչող գինվորներին:

Պատանին հարկադրված ենթարկվում է հոր պահանջին և հեռանում մարտադաշտից, սակայն կրկին զգացմունքներին զոհ գնալով՝ վերադառնում ու միանում է ուժերի գերլարումով գրոհը շարունակող քաջերին: Իշխանական հանդերձները տեսնելով՝ հակառակորդի գինվորները շրջապատում են պատանուն: Անհավասար մարտում Իշխանը զոհվում է: Որդու մահվան տեսարանն ու լարված մարտում ուժասպառ լինելու Խաչիկին վերջնական հուսահատության են հասցնում, և նա մի պահ իշեցնում է վեր բարձրացրած թուրը, որից չի հապաղում օգտվել հակառակորդը: Ծերունի իշխանը ևս զոհվում է: Իրենց իշխանի օրինակով ոգևորված՝ նոյն հերոսությամբ մահվան ընդառաջ են գնում հայկական փոքրաթիվ զորամասի գրեթե բոլոր զինվորները:

## Թակարդը

Արտասովոր հերոսական դիմադրության օրինակի ականատես դարձած թյուրքական հրոսակախմբերի վրա յոթանասուն հայ քաջերի հերոսությունն այնքան խոր տպավորություն էր թողել, որ նորանոր անակնկալներից խուսափելու նպատակով նրանք որոշում են բավարարվել արդեն իսկ կողոպտածով ու հեռանալ Ուրմիո (Կապուտան) լճի առափնյա տարածքներ (տե՛ս քարտեզը):

**Պատմական տեղեկանք.** «Մի քանի օր հետո Արևմուտքից ժամանեցին Խաչիկի որդիները... Այն ժամանակ Խասանը կանչեց մի քուրդ ռայիս<sup>1</sup>, որ իր դրացին էր, նրան տվեց հազար դահեկան և ասաց. «Մտիր Ճեր և Սալմաստ և ասա, թե Թոռնաւանում և բռվանդակ շրջանում մարդ չի մնացել, ի՞նչ եք պարապ նստել: (Այնտեղ) ոչխարների բազմաթիվ հոտեր և ծառաներ թափառում են: Ույիսն այդպես էլ արեց: Խավաքվեց շուրջ տասնհինգ հազար այլազգի, որոնք եկան մտան նշված վայրը: Ույիսը այդ բանն իմացրեց Խասանին և ննդուկին»:

**Մատքեռ Ուրիհյեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

Բակատամարտից ընդամենը մի քանի օր ամց իրենց գորագնդով թոռնապան են վերադարձնում Խովլ Խաչիկի որդիները: Պաշտպանությունը գլխավորում է ավագ որդին՝ Խասանը, որն անմիջապես ծեռնամուխ է լինում հակառակորդի ջախջախնան ծրագրի մշակմանը:

Ավարի ու թալանի համար Յայաստան մերիխուժած ավազակախումը թոռնավանից հեռանում էր կիսատ թողած գործը մի օր ավարտելու հոյսով, այդ պատճառով պատահական չէ, որ հայ իշխանն առաջին հերթին հակառակորդի ընչափաղ լինելը նկատի ունենալով է նախաձեռնում ռազմական գործողությունը:

Մի կաշառված «քուրդ ռայիսի» միջոցով հաջողվում է թյուրքական գորքերին «հայտնել», թե նրանց գգուշավորությունն ավելորդ է եղել և Արքունիները թոռնավանում մարտունակ գրումասեր չունեն: Խայծը գցելուց հետո մնում էր սպասել: Ռազմական խորամանկության դասական օրինակ հանդիսացող հնարքը համենլու էր նպատակին, քանի որ ավարառության բնագդով առաջնորդվող հրոսակախումը հնարավորությունը ծեռքից բաց չթողնելու համար կրկին վերադարձալու էր թոռնավան:

<sup>1</sup> Ցեղի ավազը, գլխավորը:

Մինչ թյուրքական ավագակախմբերը «ոգևորությամբ», բայց անփութորեն պատրաստվում էին Թոռնավանի երկրորդ ասպատակությամբ՝ Դասան իշխանը հայկական զորագունդը համալրում է այլ մարտունակ ուժերով (իհմնականում՝ աշխարհագործ ու հարձակման չենթարկված ամրոցներում մնացած կայազորյահն ստորաբաժանումներ): Նախապատրաստական ընդգրկուն միջոցառումների արդյունքում հնարավոր է լինում հինգ հազարանոց զորագունդ կազմավորել: Թեև դրանից հետո էլ հակառակորդ եռակի գերազանցություն ուներ, սակայն նրա քանակական գերազանցությունն արդեն այնքան չէր, որ հաղթելն անհնար լիներ:

Ինչպես և սպասվում էր, կողոպուտի «հոտն առած» թյուրքական հրոսակախմբերը, զանց առնելով անվտանգության միջոցառումները, անմիջապես ներխուժում են Թոռնավան: Դասան Արծրունին չի հապաղում օգտվել հակառակորդի բույլ տված մի շարք կոպիտ սխալներից: Մասնավորապես, օր առաջ Արծրունիների հարստություններին տիրանալու մոլուցքով տարված թյուրքերին գիշերելու համար տեղ ընտրելիս չէր մտահոգել տեղանքի մարտավարական առումով անբարենպաստ լինելը:

## Դադրանակը

Որոշվում է հարվածը հասցնել առավոտյան, որպեսզի հակառակորդը հեռացած չլիներ ճամբարից: Դասան իշխանի ուժերի հարձակումը հասնում է նապատակին: Թյուրքական զորամասերը հարկադրված են լինում մարտավարական առումով անբարենպաստ բնագծում հավաքեա մարտակարգ ձևավորել, որի պատճառով նրանց դիմադրությունն անարդյունավետ էր:

ճակատամարտի սկզբից և առաջ հայկական զորագունդը խլում է նախաձեռնությունը և իր կամքը թելադրում հակառակորդին: Ընդունված կարգի համաձայն, ճակատամարտի սկզբում երկու կողմերի լավագույն մարտիկները դուրս են գալիս մենամարտի:

Նոր վրեժը լուծելու հարցում հաստատակամ Դասան իշխանը մենամարտի է հրավիրում նրան սպանողին: Վերջինս մենամարտի է դուրս գալիս՝ իր հետ բերելով խոլ խաչիկի երկվարը, Արծրունյաց իշխանական դրոշը, զենքն ու զրահը: Թյուրք մարտիկը հոյս ուներ, թե դրանք տեսնելով Դասանը չէր կարողանա զապել հուզմունքն ու կզրկվեր ամբողջ ուժով մենամարտելու հնարավորությունից: Սակայն հայ իշխանը, «հարվածելով նրան, երկու կտոր արեց»:

Զաջողությունից ոգևորված հայկական զորագունդը գրոհում է հակառակորդի վրա: Պատմիչը նշում է, որ պատանի եղբօր՝ իշխանի վրեժն էլ լուծել է ճնճղովը, որը մարտի թոհուբոհում խոցում է նրան սպանողին:

Զորս հազար զոհ տալով և նախկինում խլած ամբողջ ռազմավարը թողնելով՝ հակառակորդը խուզապահը փախչում է:

**Պատմական տեղեկանք.** «Դասանը սաստիկ կատաղությամբ, *fun-g-ված գազանի պես հարձակվեց անհավատների ճամբարի վրա...* և, արիաբար մարտ տալով, այլազգիներին փախուստի մատնեց: Նրանցից չորս հազար հոգու կոստրեցին, որից հետո խաղաղությամբ ու մեծ ուրախությամբ վերադարձան և փոխեցին իրենց սպավորի գգեստները»:

**Մատքեռ Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասմ առաջին**

Մարտադաշտից փախչող օղուզ-թուրքմենական հրոսակախմբերն իրենց հետ ոչ խոստացված հարուստ ռազմվարն էին տանում, ոչ էլ իրենց սպանվածների դիակները: Դայրենի հողի համար մղվող պայքարի այս դրվագում նշանակությամբ գրեթե հավասարազոր երկու իրադարձության ենք ականատես լինում. Խուլ Խաչիկի յոթանասուն քաջերի արտասովոր անձնազոհ հերոսության և ոչ պակաս արտասովոր համարձակ գրո՛սությունների արդյունքում ձեռքբերված հաղթանակի:

## ԱՆԻԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

### 1042-1044թթ.

**Մ**ինչ Կասպուրականի հայությունը պայքարում էր հարավից նահանգ ներխուժող թյուրքական հրոսակախմբերի դեմ՝ Երկրի կենտրոնական զավառներում Բագրատունիների թագավորությունը պահպանելու համար պայքար է սկսվում թյուզանդաշիների դեմ։ Արտակարգ քարոզ իրադրությունում վերջիններիս վարած քաղաքականությունը պետք է որակել որպես առնվազն անհեռատես։ Կայսրությանն իրական վտանգ ներկայացնող թշնամու՝ թյուրքական հրոսակախմբերի դեմ պայքարելու փոխարեն նրանք գրադված էին հայկական ուժերը ջլատելով։ Մինչդեռ, թյուրքական արշավանքներին դիմակայող Դայաստանը գրեթե երեք տասնամյակ Բյուզանդիայի «ռազմավարական վահանի» դերն էր կատարում։

## ԹԱՂԿՈՒՅԱԶՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1042Թ.

### ***Արտագրոհների մարտավարության գարգացումը***

Հովհաննես-Սմբատ Բագրատունու մահվանից հետո հայտարարելով, թե Հայոց արքան Բյուզանդիային է կտուել իր տիրույթները, կայսրական՝ բանակը ծեռնամուխ է լինում «ժառանգության» տիրանալու գործին:

**Պատմական տեղեկանք.** «Եթր Հոռոնոց ինքնակալը լսեց Հայոց թագավորի մահվան լուրը, Հայաստանին վերաբերող նամակը (խոսք տիրահաչակ «կտակի» մասին է) գտնելով՝ ծեռնամուխ եղավ Ամի քառաքն ու երկիրը առնելում՝ իրեւ իր սեփական ժառանգություն»:

*Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Գլուխ Ժ*

Ցավոք, այդ վճռական պահին հայկական ազնվականության շարքերում պառակտում է սկսվում: Դայ իշխանների մի մասը, վատահելով բյուզանդացիների խոստումներին, սկսում է համագործակցել նրանց հետ:

**Պատմական տեղեկանք.** «Մեր հայոց 490 թվականին (11 մարտ 1041թ.- 10 նարո 1042թ.)... հոռոնները (բյուզանդացիները) կրկն անգամ հարձակվեցին Հայոց երկրի վրա: Հայոց գործի իրամանատար չունենալու պատճառով բազմաթիվ շրջաններ հոռոններին հպատակություն հայտնեցին»:

*Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, Մասմ առաջին*

### ***Պատերազմը***

Հայկական ուժերը կարողանում է համախմբել և գլխավորել 998թ. Ծումբի ճակատամարտի հերոս<sup>1</sup>, տաղանդավոր գորավար, իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին (967-1047թթ.): Նա կարծ ժամանակում կարողանում է իր շուրջը համախմբել կենտրոնանետ ուժերին և ծայրահետ դժվարին իրադրությունում զինված պայքարի է ելում: Ցավոք, ծերունազարդ գորավարի ամենավատ սպասումներն իրականանում են: Շուտով սկսվում են երկիրն ավերելու և ամեն կերպ մայրաքաղաք Անին գրավելու նպատակով Հայաստան ուղարկվող բյուզանդական բանակների արշավանքները:

<sup>1</sup> Տե՛ս «Մեր հաղթանակները», հատոր II, էջ 281-290:

**Պատմական տեղեկանք.** «Այս օրերում Հոռոմնց (բյուզանդացիների) գորքերը չորս անգամ իրար ետևից մտան Հայոց աշխարհը, սրով, իրով ու գերությամբ անմարդաբնակ դարձին ամբողջ Երկիրը: Երբ մտորում եմ այդ արեւները, խելքս թուզում է, միտքս՝ ցնորվում և ահավոր զարհուրանքից ծերներս դողալուց՝ չեմ կարողանում շարունակել շարադրանք, որովհետև դառն է այս պատմությունը և անհատունում ողբերի արժանի»:

**Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Գլուխ Ժ**

1042թ. վաղ գարնանը բյուզանդական շուրջ հարյուր հազարանոց բանակը իրերիա բանակաթեմի դուքս Սիբայել հասիտեսի գլխավորությամբ ներխուժում է Հայաստան և շարժվում դեպի Անի (տես՝ քարտեզը): Անայսցող արշավանքի պատճառով երկրում հակարյուղանդական տրամադրությունները տիրապետող են դառնում, և Վահրամ Պահլավունու շուրջը հանախմբված ուժերը ստվարանում են:

## **Ճակատամարտի վերածված արտագրոհը**

**Պատմական տեղեկանք.** «Հոռոմների հարյուր հազարանոց զորքը համախմբվեց ընդեմն թագավորաբնակ Անի քաղաքի և բանակեց նրա դարպասի առջև: Հայոց մնացած զորքը համախմբվեց մեծ սպարապետ Վահրամ Պահլավունու շուրջը, խնդրելով նրան պատերազմի դուքս գալ հոռոմնց զորքերի դեմ, որովհետև նրանք մեծապես անարգելով ու նախատելով էին դիմում պատերազմի»:

**Մատքեռ Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

Վահրամ Պահլավունին հասկանում էր, որ նարտահրավերը չընդունելը նորանոր մարդկային գոհերի պատճառ է դառնալու: Միևնույն ժամանակ, գիտեր, որ եթե շեղվի իր ռազմավարական ծրագրից, կծախողի օտար նվազողներին երկրից Վտարելու գործը: Ճետևաբար, չենթարկվելով հորդորներին՝ նա եռանդուն գործունեություն է ծավալում: Կարծ ժամանակում հաջողվում է նայրաբաղաքում կենտրոնացնելու հակառակորդի բանակի դեմ մարտական գործողությունների նախապատրաստել շուրջ 30 հազարանոց կայազոր: Այդ հաճամանքը, ինչպես նաև Անիի ամուր պարիսպները սպարապետին ակտիվ պաշտպանություն վարելու հնարավորություն են տալիս:

Իշխանաց իշխան Վահրամը անկանոն մարտավարությունից հրաժարվելու ջատագովն էր եղել: Երիտասարդ տարիքում բազմաթիվ ճակատամարտեր հաղթելով՝ նա հնարավորություն էր ունեցել համոզվելու իր տեսակետի

ճշմարտացիության մեջ, սակայն գորավարն աստիճանաբար գիտակցում էր, որ բոլոր ուղղություններից երկիրը հեղեղած գորախմբերի դեմ պայքարի նախախնդիրն ու եղանակներն այլև չեն կարող արդյունավետ լինել: Իրավիճակը ճիշտ գնահատելով՝ գորավարը որոշում է վերադառնալ անկանոն մարտավարությանը:

Միքայել Խասիտեսը տարակուսանքի մեջ էր: Արշավանքի սկզբում նա ուղղակի վստահ էր, որ Նվաճված տարածքների ամայացումը հայկական կողմին վճռական ճակատամարտի է դրդելու: Արշավանքի ընթացքում հայկական կողմի ակտիվ դիմադրությանը չհանդիպելուց հետո նա վստահ էր, որ Վահրամ Պահլավունին խուլ պաշտպանության մարտավարություն է ընտրել:

Դայոց սպարապետի հնարքը հաջողվել էր. Անիի մոտ ուժերը կենտրոնացնելուց հետո բյուզանդական բանակի հրամանատարն անակնելաներ (պաշարվածներին օգնության եկող ուժերի հարձակումներ, Անիի կայազորի արտագրումներ և այլն) չեր սպասում, բայց առանց բագավորության հիմնական ուժերին հանդիպելու մայրաքաղաքին հասնելով՝ նտահոգված էր միանգամայն այլ խնդիրներով: Դարցն այն է, որ երկար հզոր պարիսպներ ու բազմաթիվ աշտարակներ ունեցող Անին հնարավոր չէր լինելու գրավել կարծ ժամանակում կամ հանկարծակի գրոհով, իսկ բյուզանդական բանակը, համաձայն պատմիչների, չուներ բավարար քանակի պաշարուղական միջոցներ: Նկատենք, որ առավելապես հարձակողական գործողություններ վարող բյուզանդական բանակն աչքի էր ընկնում պաշարողական միջոցների առատությամբ և բազմազանությամբ, այնպես որ՝ այս արշավանքի ընթացքում դրանց բացակայությունը Միքայել Խասիտեսի բացթողումն էր:


Բյուզանդացիների մեջ երկարատև պաշարման «տրամադրությունները» տիրապետող են դառնում, երբ պաշարումը սկսելուց ընդամենը մի քանի օր անց բացվում են Անիի Շաղկաց կոչվող դարպասները և քաղաքից դուրս է գալիս Դայոց գործը: Սպարապետի առաջնորդությամբ 30 հազարանոց բանակը վճռական ճակատամարտի էր դուրս եկել:

Բյուզանդացիների համար նման հանդգնությունն անսպասելի էր, սակայն շուտով նրանք սթափվում են ու գենքի դիմում:

**Պատմական տեղեկանք.** «Դայոց գործը, մեծ զայրությով ու բարկությամբ լցված, գազազած գազանների նման, բոլորը միասին՝ երեսուն հազար հետևակ ու ծիավոր, դուրս գալով Շաղկաց կոչվող դարպասով, դիմեցին մարտի և որպես կայծակ թափկեցին հոռոմն զորքի գլխին, ամսնա սրի քաշեցին և կոտորելով՝ այնքան գազազած ու ամբարտավանացած զորքերին փախուստի մատնեցին: Կխուրյան գետը արյուն դարձավ»:

**Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասմ առաջին**

Ուստի գրքութեալները 1042-1044 թթ.



ճակատամարտի սկզբից և եթ իրավիճակի թելադրողը Վահրամ Պահլավունին էր: Նա ոսկերչական ճշտությամբ և մեծ արագությամբ կարողանում է զորքը դուրս բերել ընդամենը մեկ դարպասից և շարել մարտակարգով: Թեև բյուզանդական բանակի հրամանատարը հնարավորություն ուներ հետևելու հայկական զորամասերի վերախմբավորումներին, սակայն ճակատամարտի սկզբում չի հասցնում ավարտել մարտակարգի ծևավորումը: Դրա պատճառը ոչ թե հակառակորդի զորքերի կամ հրամկազմի ապաշնորհությունն էր, այլ հայկական զորագնդերի փոխսպառքությունների խստագույն համաձայնեցվածությունը:

## Յաղթանակը

Յատող հարվածների ենթարկվող բյուզանդական բանակի հրամանատարությունն այդպես էլ չի կարողանում միասնական մարտակարգ ծևավորել և փակել ճեղքածքները: Յակառակորդի շարքերում սկսված խառնաշփորձ հնարավորություն չի տալիս նույնիսկ գրութերի կամ առանձին գնդերի կազմով դիմադրություն կազմակերպել: Ծանր պարտություն կրելով՝ նրանց բանակը շուտով սկսում է նահանջել: Ընդ որում, հակառակորդի նահանջն այն աստիճան անկազմակերպ էր, որ հետապնդող զորամասերի ցասումը զսպելու համար Վահրամ Պահլավունին ստիպված է լինում անձամբ միջամտել ու դադարեցնել մարտադաշտից ճողովրոդ բյուզանդացիների ջարդը:

**Պատմական տեղեկանք.** «Սրբակրոն, մեծ սպարապետ Վահրամ Պահլավունին միջամտեց, մարդիկ ուղարկեց հայոց զինվորների մոտ, շատ աղաքեց ու պաղատեց նրանց և հազիվ կարողացավ համոզել, որ թույլ տան (կենդամի մնացած) սակավաթիվ հոռոմ զինվորներին գնալու: Յոռոնց կենդամի մնացած զինվորներն ահա այդպիսով փրկվեցին: Այս բանից հետո հոռոմն զորքերը այլևս չպահանջեցին Անի քաղաքը, այլ խայտառակ եղած դարձան գնացին Կոստանդնուպոլիս, Միքայելի<sup>1</sup> մոտ»:

**Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասմաս առաջին**

Մարտադաշտում հակառակորդին անխնա ոչնչացնելու կոչ անող սպառապետը, կատարելով հայ զինվորականության պատվով վարքականոնի պահանջները, ճակատամարտից հետո անձամբ է մարտադաշտ դուրս գա-

<sup>1</sup> Խոսքը Միքայել է Կալաֆատես (1041-1042թթ.) կայսեր մասին է:

լիս և իր գինվորներին հրամայում չկոտորել դիմադրությունը դադարեցրած և փախչող բյուզանդական գինվորներին: Այս մարդասիրական քայլը վկայում է, որ եթե Կահրամ իշխանը հայրենի հողի պաշտպանության համար պատրաստ էր ցանկացած զոհողության (ընդհուած նինչև ծեր հասակում հասարակ գինվորի կողըն մարտնչելը), ապա ճակատամարտից հետո էլ կարող է ցույց տալ, որ իրավամբ մարդասեր բանակի զորավարն է:

Այսպիսով, Անիի պարիսպների տակ հայկական բանակի հաղթանակը Վահրամ Պահլավունու անթերի մարտավարության և նրա գլխավորած բանակի գինվորների անձնուրացության արդյունք էր: Միևնույն ժամանակ, հաղթանակին մեծապես նպաստեցին բյուզանդական բանակի հրամանատարության ապաշնորի վարքագիծը և հսկայական բանակի զորամասերի փոխգործողությունները կազմակերպելու անկարողությունը, ինչի վկայությունն էր բյուզանդացիների տված զոհերի մեծարվությունը:

Ճակատամարտում մեկ անգամ ևս դրսարվեց Ջայոց ռազմական իրավունքում մարդասիրության նորմերի առկայությունը. Ջայոց բանակի գինվորները հակառակորդի դիմադրությունը դադարեցրած զորամասերին մեծահոգաբար թույլ տվեցին հետ վերադառնալ:

Որքան էլ Ծաղկոցաձորի (Անիի մոտ) ճակատամարտը մարտավա-



*Բյուզանդական բանակի գինվոր  
Բյուզանդական բանակի ծանրազեն զորա-  
նակներն աչքի են ընկնում իրենց բարձրո-  
րակ և տարածուսակ սպատագինությամբ,  
իսկ մեծ վահանը, ոտնազրահները և  
բազկակալները ժառանգելի եր  
հունահոռոմեական  
ժամանակաշրջանից:*

րության և ռազմական իրավունքի տեսանկյունից կարևոր և ուսանելի լիներ, Դայոց պատմության մեջ նրա նշանակությունն առաջին հերթին քաղաքական էր: Փայլուն հաղթանակից և բյուզանդական զորքերը երկրից վրանդելուց հետո՝ նույն 1042թ. Կահրամ Պահլավունին և նրա շուրջը համախմբված 30 հայ իշխանները Բագրատունյաց գահին են նստեցնում Դովիաննես-Սմբատի եղբայր Աշոտի տասնութամյա որդի Գագիկին և նրան օժում Դայոց թագավոր:



**Անիի բերդապարիսպը**

## ԱՆԻԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՈՐ ՓՈԽԸԸ

**1044թ.**

**Պ**աղկոցածորի ճակատամարտում տարած հաղթանակից հետո թագավորը դարձած Գագիկ Բ-ն (1042-1045թ.) շարունակում է կրել «շահնշահ» տիտղոսը: Հայոց արքան հանդես է բերում ոչ միան պետական, այլև ռազմական գործչի մեջ զնողունակությունները: Պետության հզորացումը սկսելով ներքին պառակտումների դադարեցումից՝ նա կարծ ժամանակում հիմնականում լուծում է բյուզանդական կողմնորոշում ունեցող ուժերի զապան խնդիրը: Պետության գոյությանը սպառնացող վտանգի պայմաններում հաջողվում է շատ թե քիչ միասնական ճակատ ձևավորել: Այդուհանդերձ, տարածաշրջանային իրադրությունը շարունակում էր արտակարգ բարդ մնալ:

**Պատմական տեղեկանք.** «Այն ժամանակ բարերար Աստծոն կամքով հոռոմնց զորքը խաղաղվեց, հոռոմներն այլևս չպահանջեցին Անի քաղաքը և հայոց դեմ նոր պատերազմի չիմեցին: Սուրբ Յոգու շնորհիվ, հաջողությամբ անցան Գագիկի թագավորության երկու տարիները: Այդ օրերին Գագիկ թագավորը, զորահավաք անելով, շարժվեց գնաց իր հայրենի շրջանները և բոլոր անհնազանդերին հնազանդեցրեց, թշնամիներին սաստիկ զայրույթով (երկրից) դուրս շպրտեց և բազում զորքով բանակեց Այրարատյան գավառում հարավային ազգից վրեժ լուծելու նպատակով»:

**Մատքեռ Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

### Ռազմական քաղաքականությունը

Նույնիսկ թյուրքական հրոսակախմբերի ավերիչ արշավանքների պարագայում բյուզանդացիները չեն հանդուրժում Հայկական թագավորության գոյությունը, թեկուզ որպես դաշնակից՝ տարածաշրջանում թյուրքական վտանգին դիմակայելու ընդունակ ուժ: Բյուզանդացիները շարունակում էին իրականացնել կայսրության արևելյան սահմանները «մերկացնելու» գնով տարածաշրջանում տիրապետության հաստատման իրենց ռազմավարությունը: Արդյունքում՝ ընդամենը մի քանի տասնամյակում բյուզանդացիները զգալի տարածքային կորուստներ էին ունենալու և, ի վերջո, կործանման էին հասցնելու երբեմնի հզոր կայսրությունը:

Կոստանդին թ Մոնոմախոսը ևս (Մոնամախ, 1042-1055թ.), զանց առնելով կայսրության իրական վտանգ ներկայացնող թյուրքական ցեղերի ներ-

Խուժման վտանգը, գահակալման առաջին տարիներին գլխավոր խնդիր է դարձնում Բյուզանդական արքունիքի «քաղձանքի» իրականացումը՝ Անիին տիրանալը:

**Պատմական տեղեկանք.** «Ինդիկտիոնի 13-րդ տարին (1045թ.) սկիզբ առավ Անիի դեմ պատերազմը: Բայց նախ պատմենք, թե ինչպես եղավ, որ Անիի տոպարքեսի (հմա՞ թագավորի) հանգստ տեղը նստած և ոչ մի արտառոց քամ չարած ժամանակ, Կոստանդնոս կայսրը դիմեց պատերազմի<sup>1</sup>... Նորա (Տովհաննես-Սմբատի) մահից հետո իշխանությունը ժառանգում է (նորա եղբոր՝ Աշոտի) դոդին՝ Կակիկիոսը (Գագիկ Բ), որը խաղաղություն և զինակցություն էր պահպանում հռոմայեցիների (բյուզանդացիների) հետ, սակայն նա տիրում էր հայրենական իշխանության և չէր ուզում այն զիջել հռոմայեցիներին»:

**Ակիլիսես-Կեղրինոս,  
Դամառոսագրություն պատմությանց, Երկրորդ մաս**

Թյուրքական ներխուժումներին դիմակայության նախապատրաստվելու համար պետք էր բյուզանդացիների հետ հաշտության եզրեր գտնել: Գագիկ թագավորը դժվարին իրադրության մեջ էր հայտնվել և հասուն պետական գործին վայել քայլի է դիմում: Իր թագավորության բարգավաճման մասին հոգալով՝ նա բյուզանդացիներին և մեկ անգամ ամեն ինչ ծանրութեքն անելու առաջարկ է անում: Կոստանդնոս կայսրին հայտարարվում է, որ երկու ժողովուրդների բարօրության համար հայկական կողմը պատրաստ է ընդամենը մի քանի ամիս առաջ երկիրն ամայացնող բյուզանդացիների դաշնակիցը դառնալ: Ավելին, տեսնելով, որ հարևանը չի գիտակցում թյուրքական վտանգի մասշտաբները և պատրաստ չէ կառուցողական երկխոսության, Գագիկը հայտարարում է, որ եթե Բյուզանդիան հանդես գա տարածաշրջանային ուժերը միավորելու առաջրկով, նա պատրաստ է նույնիսկ ընդունել հզոր հարևանի գերիշխանությունը: Միևնույն ժամանակ, նա չի ճոռանում շեշտել, որ ինքը հաղթանակած կողմի թագավորն է և իր իշխանությունը կայսրին չի զիջի: Սակայն արտասովոր համառություն ցուցաբերող հարևանի հետ «լեզու գտնելը» անհնար էր և, ի վերջո, տեսնելով, որ բյուզանդացիների նպատակը Դայոց թագավորության վերացումն է, Գագիկ Բ արքան որոշում է դիմադրել:


<sup>1</sup> Անուհետև պատմիչը նկարագրում է Տովհաննես-Սմբատի տիրահոչակ «կտակը», որն իրու թե բյուզանդական կայսրերին իրավունք էր տասիս օրինական ժառանգորդից պահանջել իր թագավորությունից և այն բռնակցել կայսրությամբ:

## Առաջին հաղթանակը

Ամեն ինչ հուշում էր, որ Բյուզանդիայի նվաճողական միտումները վաղ թե ուշ ավարտվելու էին նոր արշավանքով։

Գագիկ արքան բազմափորձ սպարապետ Վահրամ Պահլավունու հետ միասին մի շարք քայլեր է ծեռնարկում (բերդերի ամրացում, զորագնդերի նախապատրաստում և այլն)։ Քանի որ հայ ընտրանին և բնակչությունը վաղուց արդեն գիտակցում էին բյուզանդական արշավանքների ամբողջ վտանգը, ուստի երիտասարդ արքան իր ծեռնարկումներում ամենուր աջակցություն էր գտնում։ Չնարավոր չի լինում կարծ ժամանակում (մեկ տարուց քիչ ավելի) իրականացնել ամբողջ ծրագրվածը։ Սակայն 1044թ. վաղ գարնանը, երբ բյուզանդական բանակը հերթական արշավանքն է սկսում, երկիրն ավելի պատրաստված էր հակառակորդին դիմակայելու, քան երկու տարի առաջ (տես նախորդ ակնարկի քարտեզը)։

Բյուզանդացիները ևս որոշակի նախապատրաստական աշխատանքներ էին կատարել։ Մասնավորապես, վերլուծելով նախորդ արշավանքի անհաջողությունների պատճառները՝ բյուզանդական բանակի հրամանատարությունն ամեն ինչ արել էր տիհաճ անակնկալներից խուսափելու համար։ Երկու



### Ճամկիչ

Ճայաստամում ճամկիչներ կիրառելու սակավարիկ հիշատակումներ կապված են բյուզանդական բանակի հետ։ Կիյիկհայում ճամկիչներ կիրառել են նաև Ասորիթում հաստատված խաչակիրները (XII- առաջին կես)։

կողմերի՝ համակողմանիորեն ռազմական գործողություններին նախապատրաստվելը վկայում էր, որ հակամարտության նոր փուլն ավելի լարված է լինելու:

**Պատմական տեղեկանք.** «(Գագիկը) չէր ուզում հրաժարվել հայրենական իշխանությունից. դրա համար կայսրը որոշեց պատերազմել նրա դեմ: Կայսրը զորահավաք արեց, զորքը հանձնեց վեստ Միքայել Իասիտեսին, որ Իբերիայի արխոնն էր նշանակված, և որոշեց պատրազմել Կակիկիոսի (Գագիկի) դեմ: Իասիտեսը գնաց կատարելու հրամանը: Կակիկիոսը, իմանալով այդ մասին և տեսնելով, որ ինքը բարեկամի և դաշնակցի փոխարեն թշնամի է համարվել, ինքը ևս հավաքեց իր զորքերը և ուժերի ներածի չափով դիմադրում էր հարձակվողներին»:

**Ակիլիցես-Կեղրիմոս,  
Դամառոտագրություն պատմությանց, Երկրորդ մաս**

Կարող է տարօրինակ թվալ, սակայն բյուզանդական արքունիքն այս արշավանքը գլխավորել ևս վստահում է ընդամենը երկու տարի առաջ նույն Անդի պատերի տակ խայտառակ պարտություն կրած Միքայել Իասիտեսին: Դավանական է՝ Կոստանդնուպոլսում հոյս ունեին, որ Իբերիայի դուքսն այս անգամ կփորձի «Վարձահատույց» լինել նախկին ստորացման համար: Սակայն բյուզանդական գորավարն այս անգամ էլ չի կարողանում էական արդյունքների հասնել:

Դակառակորդի բոլոր գործողություններին ուշադիր հետևող Վահրամ Պահլավումին և ներխուժումը կամխելու միջոցառումներին ակտիվորեն մասնակցող Գագիկ Բ-ը բաց չեն թողնում ինարավորությունը: Դայց բանակը հաճարձակ հարձակվում է հակառակորդի վրա և նոր պարտության մատնում բյուզանդացիներին:

## Երկրորդ հաղթանակը


Կոստանդին կայսրը բյուզանդական գորքերի կրած երկրորդ պարտությունից հետո վերջապես հակվում է արևելյան ուղղությամբ գործող գորքերի հրամանատարին փոխելու մտքին: Նույն 1044թ. Գագիկ Բ-ի դեմ ուղարկված գորքերի հրամանատար է նշանակվում կայսեր սենեկապետը՝ ներքինի Նիկոլայոսը:

Օգտագործելով իրենց քանակական գերազանցությունը՝ բյուզանդական գորքերին հաջողվում է հասնել Անի և պաշարել քաղաքը: Սակայն այս անգամ

և հայոց բանակին, ակտիվորեն մարտական գործողություններին մասնակցող աշխարհազորի օժանդակությամբ, հաջողվում է կազմուատրաստ դիմավորել հակառակորդին: Մինչ բյուզանդացիները մոտենում էին նայրաքաղաքին, Գագիկ արքան եռանդով նախապատրաստվում է վճռական ճակատամարտին: Այս անգամ և նրա կողքին է անխոնջ սպարապետ Վահրամ Պահլավունին, որի խորհրդով է որոշվում է կրկնել 1042թ. հաջողություն բերած հնարքը (տես սխ. 1):

Ինչպես և նախորդ անգամ, արտագրոհն իրականացվում է պաշարումը սկսելուց մի քանի օր անց, երբ բյուզանդական զորքը, նույն սխալը թույլ տալով, «հասցեե» էր տրամադրվել Երկարատև պաշարնան ու սպասում էր հակական կողմի դիմադրությունը դադարեցնելուն: Արտագրոհն այս անգամ և աչքի էր ընկնում կազմակերպվածությամբ և սրբնացությամբ: Դաշվի առնելով 1042թ. փորձ՝ սպարապետը հարձակումն ավելի արդյունավետ դարձնելու նոր միջոցներ էր մշակել: Մասնավորապես, քաղաքից դուրս գալը և պարսպից դուրս մարտակարգ ծևավորելն այնքան արագ է կատարվում, որ հակառակորդը ոչ միայն մարտակարգ շարել չի հասցնում, այլև գինվորների մեջ մասը չի հասցնում հագնել զրահները, իսկ հեծելազորի մարտիկները՝ հանդերձավորել երիվարները:


Սխեմա 1



Անհի պաշտպանների արտագրոհը 1044թ.

Վահրամ Պահլավունին ծիշտ պահ էր ընտրել վճռական հարվածը հասցելու համար, անթերի էր ընտրված նաև գլխավոր հարվածի ուղղությունը: Արտագրողի նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ հայոց սպարապետը հատող հարված է կիրառել և մասնատել է հակառակորդի զորքերը (տե՛ս սխ. 2):

Սխեմա 2



Անիի պաշտպանների արտագրողը 1044թ.

**Պատմական տեղեկանք.** «Անի քաղաքում գտնվող հայ ժողովորդը... մի մարդու պես Անիի դարպասից դուրս եկավ պատերազմի և հօռոմնց զորքերին փախուստի մատնեց, ջարդ տվեց և հալածական արեց, թալանեց նրանց ամբողջ ճամբարը: Յայոց զորքը մեծ հաղթանակով վերադարձավ Անի քաղաքը»:

**Մատքեռ Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասմ առաջին**

Բյուզանդացիները ոչինչ չին կարող հակադրել տաղանդավոր զորավարի՝ մանրություն անգամ հաշվի առնող մարտավարությանն ու կատաղի, սակայն կարծատև դիմադրությունից հետո սկսում են նահանջել, որը շուտով վերածվում է խուճապահար փախուստի: Մարտադաշտից ճողովորդ բյուզանդացիներին նույնիսկ չի հաջողվում իրենց հետ տանել անրացված ճամբարում կու-

տակված այն ավարը, որը հասցրել էին խլել արշավանքի սկզբում ասպատակության ենթարկված շղաններից:

Բյուզանդական մեծաթիվ բանակների հետ պայքարի ելած հայոց տաղանդավոր զորավար Կահրամ Պահլավունին ցույց տվեց, որ հաղթելու համար ոչ թե մեծաթիվ բանակ է պետք, այլ հաղթելու կամք և ռազմարվեստի բարձր մակարդակ: Այս կառողությունը Դայոց բանակին հնարավորություն էր տալիս հաղթանակներ տանել հզոր հարևանի մեծաթիվ բանակների դեմ:



Անիի պարսպի ավագ դուռը

## ՇՈՒՂԱԿ ՍՈՒՐԱՐԻՈՒՄ 1053թ.

**Փ**յուղանդական կայսրության անհեռատես քաղաքականության հետևանքով շարունակվում էր թյուրքական վայրենի հրոսակախմբերի ահազնացող ասպատակությունների դեմ միայնակ մնացած Հայաստանի ռազմական ուժի մասնառումը: Տեսմելով, որ երիտասարդ Գագիկ Բ արքան հղորացնում է պետությունը և թյուղանդական բանակներին պարտության մատնելուց հետո արտաքին և հատկապես թյուրքական ներխուժումներից երկիրը պաշտպանելու միջոցառումներ է սկսել, Կոստանդին թ Կայսրը 1045թ. կեղծ խոստումներով իր մոտ է հրավիրում Գագիկին և ուխտադրություն հրաժարվում նրան բաց թող- մել իր երկիրը:

Սելջուկ թյուրքերի առաջնորդ Տուղրիլ թեգը գրադարձ էր Տիգրիսի արևել- յան կողմերի նվաճումով, սակայն չի ցանկանում ծեռքից բաց թողմել եղակի ռազմավարական հնարավորությունը: 1047թ. սկսած՝ Հայաստան են ուղարկ- վում սելջուկ-թյուրքական հրոսակախմբեր:

**Պատմական տեղեկանք.** «(Տուղրիլ) արքունիքից երկու գորապետ, որոնք Ալբեկին (Իբրահիմ Յաննայ) և Գրլուշ էին կոչվում, հսկայական գործով եկան Հայոց երկիրը՝ համոզված, որ հոռոմոց տիրապետության տակ գտնվող Հայոց ամբողջ երկիրը անտերունչ և անպաշտուան կլիմի, քանի որ հոռոմները քաջ ու հզոր տղանարդկանց հեռացրել էին Արևել- քից և աշխատում էին Հայոց երկիրն ու ամբողջ Արևելը պահել ծվատ գորահրամանատարներով»:

**Մատքես Ուժայեցի, Ժամանակագրություն, Մասն առաջին**

Հայաստանն ամայացնելու շտապող 100 հազարամոց գորքը, որոնց պատ- միչն անվանում է «քաղցած և ամհագուրդ գայլեր», Տուղրիլ թեգի եղբոր՝ Իբ- րահիմի և Գրլուշի գլխավորությամբ մեծ ավերիչ ասպատակություն է իրակա- նացնում: Թյուրքերը դեռևս պատրաստ չեն Հայաստանը նվաճելուն ու, որ- քան էլ մեծ լինեին նրանց արշավանքներին ներգրավվող ուժերը, դրանք ըն- դամենը հարուստ երկրի ավերական պատեհ առիթից օգտվելու նպատակ էին հետապնդում:

## 1053թ. արշականքը

1050-52թթ. Հայաստանում հարաբերական խաղաղություն էր տիրում, որը, սակայն, անդորր էր 1053թ. փոքրիկից առաջ: Հարցն այս է, որ խռովություններ էին սկսվել սելջուկյան տիրույթներում: Ապստամբած Իբրահիմ Յաննալը փախչելով ապաստանում է Գրլմուշի մոտ, որը նույնապես ապստամբել էր: Տուղրիլը պարտության է մատնում Իբրահիմին և գերում նրան, սակայն Գրլմուշը 60 հազարանոց զորքով փախչում է Վիրջի սահմանները, իսկ այնտեղից ներխուժում է Վանանդի (Կարսի) Բագրատունյաց թագավորության տարածքը, ավերում Կարսի շրջակայքը (տես քարտեզը):




**Յարաղամ**  
Նետագայում թուրք ջարդարանների միջոցով տարածաշրջանում կոտորածների տիրահեռակ «խորիրդանիշ» դարձած այս զենքը թյուրքական հրոսակների ամենատարածված զինատեսակներից էր:

**Պատմական տեղեկանք.** «Փրկվեցիմ միայն նրանք, ովքեր հասցեցին քաղաքի վերևուն գտնվող ամրոցը մտնել: (Գրլմուշի) Զորքերն ամբողջ օրը մնալով այստեղ՝ կողոպտեցին ու քարուքանդ արին տները, հետո կրակ տալով այրեցին քաղաքը, իսկ իրենք առնելով ավարմ ու գերին՝ գնացին իրենց երկիրը»:

**Սրիստակես Լաստիկերցի, Պատմություն, Գլուխ ԺԵ**

Կարսի անառիկ միջնաբերդը գրավված չէր: Կարսեցինների հերոսական դիմադրությունն արդեն իսկ լուրջ կասկածի տակ էր դրել հաջողության հասնելու հնարավորությունը, ուստի թյուրքերը Վանանդից հեռանում են Դվինի ուղղությամբ:

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1052-1053 ԹԹ.



Հարձակողական քնուրի գործողություններ (I փուլ)

→ Հակառակրող

Հարձակողական քնուրի գործողություններ (II փուլ)

→ Հայկական կողմ

→ Հակառակրող

Նահանջ (II փուլ)

- - - Հակառակրող

Պաշարում

Նակատամարտ

## Սուրբ Մարիի «գիշերամարտը»

Թյուրքական մեծաբիկ զորքի հետ բաց դաշտում ճակատամարտելու համար բավարար ուժեր չունեցող հայոց զորագնդերը, ամեն պահ հանկարծակի հարվածներ հասցնելու պատրաստ լինելով հանդերձ, հակառակորդից որոշ հեռավորության վրա էին գործում: Այնպես որ, եթե վերադարձի ճանապարհին Գրլուշը որոշում է գիշերել Սուրբ Մարի (Սուրբ Մարի), նոր բնակչություն որոշում են վրեժիսնիր լինել թյուրքերից: Իրավիճակը բարենպաստ էր նաև նորանով, որ մեծ քանակությամբ գերիները, անասուններն ու դեռ վերջերս բարգավաճող քաղաքից բերված հարուստ ավարդ բացրել էին թյուրք զորապեսի գգոնությունը (տես քարտեզը):

Սուրբ Մարիի բնակիչները հակառակորդին վարպետորեն կազմակերպված ծուլակն են գցում: Զևացնելով, թե Կարսում կատարվածն իրենց չի հուզել և որ իրենք անհանգստացած են միայն իրենց ճակատագրով, սուրբարեցիներն առաջ հյուրասիրություն են պատրաստում Գրլուշի հրոսակների համար:

Սուրբ Մարիի տներում գիշերելու համար «տեղավորված» թյուրքական զորախումբը, կարծես, մոռացել էր, որ գտնվում է այն երկրում, որն ընդամենը մի քանի օր առաջ ամիսնա ավերում էին: Առաջ հյուրասիրությունը տեսնելով՝ նրանք տարվում են անզուսպ կերուխումով: Մի քանի ժամ անց Գրլուշի ամբողջ զորքը «գինուցած» քնած էր:

Սպասելով մինչև բոլոր «հյուրերը» քնեմ՝ սուրբարեցիներն ու շրջակա գավառներից օգնության եկած զորագնդերը քաղաքապետ իշխանի<sup>1</sup> ազդանշանով սկսում են նրանց ջարդը:

**Պատմական տեղեկանք.** «Կարսն (բացի Միջնաբերդից) ավերելոց հետո Գրլուշը, լսելով Տուղրիլ թեգի բանակով իրեն հետապնդելու լուրը, արագ կերպով նահանջեց, և ճանապարհին չի մեծ փորձանք պատահեց: Գրլուշը, Ամինի մոտ Մարին (Սուրբ Մարի կամ Սուրբ Մարիի եղու...) ճանապարհորդի նման մտավ և բանակը տեղավորեց այստեղ... Այս քաղաքի քաֆիր («անհավատ», այսինքն՝ քրիստոնյա) ռայիսը խաթելով Գրլուշի գինվորներին, յուրաքանչյուրին հյուրասիրեց մի բնակարանում: Ռայիսի գաղտնի հրամանով յուրաքանչյուր տանը հյուրափրկու մահմերական գինվորին առաջ ուսելիք և գիմի տալուց հետո՝ գինովցուցին: Ուշ գիշերը բոլորը քնելու ժամանակ, հատուկ նշանի վրա տաճտերելով 60 հազար հյուր գինվորներին առանձին-առանձին սպածեցին: Առավոտյան Գրլուշը սարսափած և վշտահարված տեղի ունեցածից, իր շուրջը գտնվող հրամանատարների ուժեկցությամբ, հետապնդվելով հայերի կողմից, քառասմբակ փախուստի է դիմում:

**Կրու Նասր Բուրհան աղ-Դին, Ամին ալ-Կուլուր**

<sup>1</sup> Ցավոք, պատմիչները չեն նշում հերոս հայորդու անունը:

Հարբած թյուրք իրոսակների մեծ մասը քնի մեջ էլ սպանվում է: Համկարծակի եկած թյուրքերի այն փոքր մասը, որն, այնուամենայնիվ, հասցրել էր արթնանալ, չի հասցնում զինվել և կազմակերպված դիմադրություն ցույց տալ: Կոտորածն ավարտվում է լուսադեմին, երբ Գթլմուշի շուրջը համախմբված ոչ մեծաթիվ մարտիկների խումբն արդեն փախել էր Սուլումարիից:

Սուլումարեցիները սկսում են հակառակորդի հետապնդումը, որը ևս արտասովոր համարձակության ու հաղթանակը տրամաբանական ավարտին հասցնելու ծգտման վկայություն է: Սակայն Գթլմուշին հաջողվում է ճողովրել Հայաստանից:

Սուլումարեցիները թյուրքական զորքը ոչնչացրել էին մի այնպիսի պատմական ժամանակաշրջանում, երբ Բյուզանդական կայսրության կամ տարածաշրջանի մյուս պետությունների բանակները չեն կարողանում նույնիսկ հաջող պաշտպանություն կազմակերպել, իսկ շատ թե քիչ նշանակալի հաղթանակ տանելու դեպքերը եզակի են:

## ՏՈՒՂՐԻԼ ԲԵԳԻ ՉՈՐՁԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԱԿԵՐՏԻ ՄՈՏ 1054թ.

**Տ**ուղրիլը 1054թ. Աստրապատականից ներխուժում է Հայաստան և իր հսկայական բանակը կենտրոնացնում Մանազկերտի մոտ (տես քարտեզը): Քաղաքի դիրքը (Հայաստանի գրեթե կենտրոնում) երկիրն ասպատակելու համար ռազմավարական մեջնակետի վերածելու հնարավորություն էր տալիս: Սակայն թյուրք զորավարը մեծ սխալ է կատարում. նա Մանազկերտի տակ մնում է ընդամենը երեք օր և արշավում է դեպի Ավճիկ և Կարին: Մինչդեռ քաղաքի բնակչությունը պատրաստ չէին հարձակմանը, և եթե պաշարումը երկարեր, գուցեն սեղուկները հաջողության հասնեին:

**Պատմական տեղեկանք.** «Առաջին անգամ, երբ անհամար զորքը (Տուղրիլը) եկավ շրջապատեց Մանազկերտ քաղաքը, բնակիչները... անպատրաստ էին: Եթե նա տասն օր շարունակեր պաշարումը, ապա քաղաքն առաջ կլիներ. բայց Աստված... նրա մտքերը մոլորեցեց. երեք օրից հետո ամրող բանակով շարժվելով՝ գնաց իջավ... Ավճիկ կոչված անառիկ ամրոցի մոտ. այնտեղ տեսնելով մարդկանց ու անասունների բազմություն և միայն նայելուց զգալով, որ անառիկ է, ոչ մի բան չձեռնարկեց և նրա մոտով անցնելով՝ եկավ... այն բարձունքի վրա, որ նայում է դեպի Կարին, տեսավ, որ քաղաքը զինված է ամեն պատրաստությամբ. Երկար ժամանակ նայելուց հետո կրկին ետ դարձավ: Իսկ Մանազկերտի բնակչությունը, քանի որ հենց հնձի ժամանակ էլ էր, առանց վախենալու դուրս գալով քաղաքից՝ մարդկանց ու անասունների համար առատ պաշար պատրաստեցին: Եվ մինչ Սուլթանն<sup>1</sup> (Տուղրիլը) այս ու այն գործն անելուց հետո նորից կվերադառնար այնտեղ, նրանք արդեն անհոգ ապահովված էին»:

*Արհստակես Լաստիվերդի, Պատմություն, Գլուխ ԺԶ*

<sup>1</sup> 1054թ. Տուղրիլը դեռևս սուլթան չէր, նա այդ տիտղոսը խալիֆայից ստացավ միայն 1058թ.՝ Քաղաքը գրավելուց հետո:

Սակայն Կարինի ու Կարսի շրջաններում թյուրքերը համար դիմադրության են հանդիպում (տես քարտեզը): Առանձնապես հաջող էր Վանանդի Գագիկ Բագրատունի արքայի (1029-1065թթ.) կազմակերպած դիմադրությունը:


Կարսեցի զինվորները բազմաթիվ ասքերի հերոսներ են դարձել: Արխստակես Լաստիվերցին պատմում է, որ հայ քաջարի Թաթուլ իշխանը մահացու հարված էր հասցել Տուղրիլի ազգական մի զինվորի, բայց ինքն էլ գերի էր ընկել: Տուղրիլը Թաթուլին ասում է, որ եթե վիրավորն ապրի, ապա նրան կազատի, իսկ եթե մեռնի՝ կիրամայի սպանել: Թաթուլը խիզախորեն պատասխանում է, որ թե հարվածն իմն է՝ չի ապրի:

Տուղրիլը բարդ խնդրի առջև է կանգնում: Կազմակերպելով արշավանքը՝ նա մտադիր էր գրավել ոչ միայն Յայստանը, այլև հարևան Երկրները: Սակայն Մանազկերտի, Ավճիկի, Կարինի ու Կարսի մոտ կրած անհաջողությունները ցորում են մեր Երկիրը «մեկ շնչով» նվաճելու նրա պատրամքը: Ավելին, օրակարգից դուրս է գալիս նաև այլ Երկրներ մերխուժելու հավակնությունը: Սակայն թյուրք զորապետը համառություն է ցուցաբերում և որոշում է Երկրորդ անգամ պաշարել Մանազկերտը:



**Ավճիկի բերդն այսօր**

Ապահով գործողութեալուսեց 1054 թ.



## Արշավանքի վերջնական ձախողումը

Քաղաքի պաշտպանության դեկավարը բյուզանդական հայագի անվանի ռազմական գործիք Բարսեղն էր՝ Ուռհայի (Եղեսիա) կառավարիչ Ապուքապի որդին<sup>1</sup>: Բարսեղն աննկուն գորավարի անուն է վաստակել, և պատահական չէ, որ նրա գորավարական տաղանդով հիացող պատմիները միարերան դրական խոսքեր են շայլում նրա հասցեին:

Սանագկերտի մոտ կենտրոնացնելով իր մեծաքանակ զորքը՝ Տուրիին անընդհատ գրոհներով ծգտում էր ուժասպառ անել քաղաքի պաշտպաններին: Նկատենք նաև, որ սեղուկներն ամեն անգան թարմ գորանասեր էին ուղարկում հարձակման, իսկ քաղաքի պաշտպանները համալրում չէին ստանում և նորանոր գրոհները կասեցնում էին անընդհատ նոսրացող շարքերով: Նրանք էլ ավելի դժվարին իրավիճակում են հայտնվում, եթե առաջին անհաջող գրոհներից հետո հակառակորդը սկսում է կիրառել պաշարողական միջոցներ: Թյուրքերի զինանոցում կային միջին մարդկանց հայտնի գրեթե բոլոր պարապակործան ներենաները, որոնք նրանք խել էին նվաճված երկրների բանակներից կամ բյուզանդացիներից: Բացի այդ, լայնորեն կիրառվում էր ամրոցի պատերի տակ անցքեր փորելը:

## Դետախուզական գործողություն

Սակայն այս իրավիճակում պաշարվածներն անգնահատելի օգնություն են ստանում Տուրիին «մտերին» մարդկանցից մեկից, որը թշնամու ճամբարից շարունակարար խիստ կարևոր տեղեկություններ էր հաղորդում մանազկերտուցիներին:

**Պատմական տեղեկանք.** «Մի ամիս (Տուրիիլը) քաղաքը պաշարած պահեց. օրը երկու ամգամ՝ մեկ լուսանալիս և մեկ էլ երեկոյան, կովի բռնվելով քաղաքի հետ: Բայց այստեղ դու տես Աստծոն իմաստությունը, թե ինչպես գիտի հակառակներով էլ հակառակի համար օգուտ առաջ բերել. մինչեւ քաղաքն այս ժամը դրության ու վլաճից մեզ էր, մի բարի միտք է ծննդյան մի իշխանի մեջ, որը Սուլթանի ամենամտերիմներից էր. սա Սուլթանի մտադրությունները կամ բանավոր, կամ գրավոր հայտնում էր քաղաքին: Շատ անգամ թղթի վրա գրելով և այն մետի սլաքին կապելով՝ պատերազմի կարգով մոտենում էր պարսպին ու նենը քաղաք ձգում և դրանով կովի բոլոր համգամանքները հայտնում էր նրանց՝ թե վաղը այսպիսի կամ այնպիսի ծնով է լինելու կոիվը, կամ թե

<sup>1</sup> Բարսեղ (Վասիլ) գորավարի մասին տես հաջորդ ակնարկներում:

այս նշված տեղում գիշերը ցանկանում են պարսպի տակը փորել ու մերս մտնել, բայց դուք ամուր կացեք և այդ տեղերի վրա հսկեցեք... Այսպիսով, թե՛ գիշեր, թե՛ ցերեկ, որ կողմում նրանք ճակատամարտ սկսեցին, սրանք գինավառված ու պատրաստ այստեղ էին գտնվում»:

*Արիստակես Լաստիվերի, Պատմություն, Գլուխ ԺԶ*

Դժվար է այսօր ասել, թե «քարի միտք» ունեցող «իշխանը» նախապես ներդրված կամ արդեն պատերազմական գործողությունների ժամանակ հավաքագրված հայկական գործակալ էր, թե ինքնակամ էր որոշել օգնել պաշարվածներին: Սակայն ակնհայտ է, որ նա կապ է ունեցել քաղաքի պաշտպանների հետ և իրազործել է բարդ հետախուզական գործողություն, որը մեծ ներդրում է հանդիսացել Վերջնական հաղթանակի գործում: Մասնավորապես, հետախուզակի օգնությամբ մանազկերտուցիները ժամանակին տեղեկանում են պարսպի տակ հակառակորդի փորելու մասին, և իրենք էլ քաղաքի կողմից փորելով՝ գտնում են փոսն ու ոչնչացնում քաղաք ներթափանցել ցանկացող թյուրքերին: Բարսեղ Ապուրապը նրանց հրամանատարին կախաղան է բարձրացնում, իսկ դիակը պարսպից ի ցույց դնում Տուղրիլին: Դա հակառակորդի մարտիկների վրա հոգեբանական ճմշող ազդեցություն է ունենում:

## Միջնադարյան «հակամարտկոցային» պայքարը

Երկու կողմերի հակամարտության կարևոր ուղղություն է դառնում «տեխնիկական» հակամարտությունը: Պարսպակործան և ամրոցների պաշտպանական մի ամբողջ խումբ մեքենաների նկարագրություն կա Մանազկերտի հերոսական պաշտպանության վկայություններում: Մասնավորապես, ուշագրավ է երկու կողմերի քարանետ մեքենաների «մենամարտը», որը մի քանի օր տևելով՝ Մանազկերտի մեկամսյա պաշտպանության կարևոր փուլերից է դառնում:

**Պատմական տեղեկանը.** «Դրանից (անհաջող գորիկ) հետո մերեմ ամեր պատրաստելով՝ նրանցով էին պատերազմում: Բայց մերոնցից մի ծեր քահանա, որ քաջատեղյակ էր այդ արհեստին, ինքն էլ իր փիլիկվանը<sup>1</sup> շինեց. երբ նրանը քարը մեքենայի պարսպատիկի մեջ դնելով դեպի քաղաք էին ծգում, քահանան իր քարը ուղիղ դեպի նրանց քարն էր արձակում, որը դիաքելով նրանց քարին՝ իրենց վրա էր գուման: Անօրենթը յոթ անգամ այս կրկնելով՝ ոչինչ չկարողացան անել»:


*Արիստակես Լաստիվերի, Պատմություն, Գլուխ ԺԶ*

<sup>1</sup> Տես քառարանը:

Անհաջողությունների շարանը թյուրքական բանակում պառակտություն է առաջացնում: Տուղրիլին աջակցող թյուրքական ցեղապետերը Դայաստանի գյուղական շրջաններում նշանակալի ավար էին ծեռը բերել, և նրանց առանձնապես չեր հուզում արշավանքի ռազմական, առավել ևս, քաղաքական հաջողության խնդիրը, և ցանկանում էին օր առաջ ավարտել արշավանքը: Տուղրիլ էլ գուցե դեմ չեր վերադառնալ Ատրպատական, սակայն Մանազկերտի պատերի տակ պարտությունը կարող էր հեղինակագրել նրան և, ի տարբերություն իր «զորապետերի», նա ցանկանում էր արշավանքն ավարտել Մանազկերտի գրավիւնով:

## **Դիվերսիոն գործողությունը և հաղթանակը**

Անհաջողություններ կրող Տուղրիլը հրամայում է Բաղեշից բարան բերել: Մանազկերտցինները մինչ այդ էլ ուժերի գերագույն լարումով էին հետ մղում թշնամուն, իսկ բարանի տեղ հասնելուց հետո հայտնվում են շատ ծամր իրավիճակում: Ակնհայտ էր, որ հակառակորդը վճռական գրոհի է պատրաստվում:



**Քարանետ մեքենաները միջին դարերում պաշարողական ամենազորեղ միջոցն էին:** Սակայն, եթե դրանց կիրառումը չեր է հանգեցնում անորոշ գրավման, ապա հոգեքանական ճշշող ազդեցություն անպայմանորեն ունենում էր:

**Պատմական տեղեկանք.** «Ապա այլ պատերազմական գործիք պատրաստելով, որը իրենք բարան էին կոչում, որը շատ զարհութելի էր այնպես, որ ասում էին, չորս հարյուր սպասավորներ ումեր, որոնք պարանաերն էին քաշով և վարսուն լիտր<sup>1</sup> դնելով պարսադիկի մեջ՝ դեպի քաղաքն էին ճգում... Եվ եր այս այսպես կարգավորեցին, արձակեցին մի քար, որն ուժգնորեն դիմէնով պարապին փլորեց և անցը բացեց... Դաշտոր օրը առավոտյան դեմիկների<sup>2</sup> զրոավարը... հարծակվելով բացվածքի ուղղությամբ ցանկանում էր ուժով ներս մտնել... Պարսաի վրա եղողներոց երկարի ճամկը ճգելով՝ նրան բռնեցին ու քաշելով գցեցին պարսաից ներս: Նրա գործերն այդ տեսնելով՝ տրտմությամբ վերասարձան իրենց քամակը, իսկ քաղաքի համար դա եղավ մեծ ուրախություն»:

### **Արհստակես Լաստիկերի, Պատմություն, Գլուխ ԺԶ**

«Նա (Տուղրիլ) մարդ ուղարկեց Բաղեց և բերել տվեց տասնինգ ատիլանց<sup>3</sup> ահավոր և զարմանալի քարանը, որը Վասիլ կայսրն էր սարքել տվել Յեր քաղաքի համար... Ամեն կորմից անմատչելի դարձրին այն և սկսեցին հսկայական քարերով հարվածել քաղաքի պարիսարը... Ալաշին հարվածով կայազորի երեք մարտիկներ և կրծապահ<sup>4</sup> գետին տապալվեցին»:

### **Մատքեռու Ուրիհայեցի, Ժամանակագրություն, Մասն Երկրորդ**

Բարանի արձակած արկը անցք է քացում ամրոցի պատին, որով շտապում են ներս խուժել դեմիկների զրոավարները: Սակայն նրանց գրոհը հաջողվում է հետ մղել, իսկ իր մարտիկներին նոր գրոհի տանելու համար ոգևորելու նպատակով պայքարի ամենաթեժ տեղամասը մտած դեմիկների ցեղապետը չի նկատում ճանկիչը, որով քաղաքի պաշտպաններին հաջողվում է նրան գերեւ: Մարտի ամենաթեժ պահին այսպիսի սխրանքի ականատես եղած Տուղրիլի զորամասերը խուժապի են մատնվում և հերթական անգամ փախչում:

Հաղթանակը նոր ոգևորություն է առաջ թրում մանազկերտցիների շրջանում: Նրանք անմիջապես ձեռնանուխ են լինում քանդված պարսաի վերականգնման աշխատանքներին, որը շուտով հաջողվում է ավարտել: Սակայն մարտի ընթացքում տված զոհերը և բարանի դեմ պայքարի «տեխնիկական» միջոցների բացակայությունը նրանց հարկադրում է իրավիճակից ելքեր փնտութել: Եթե կարծ ժամանակում բարանը չոչնչացվեր, նրա արձակած արկերի ավերածությունները ողբերգական կարող էին լինել: Բարսեր իշխանը որոշում

<sup>1</sup> Ըստ Անամինա Շիրակացու, մեկ լիտրը հաշվվում է 326,4 գրամ: Յետևար, վարսուն լիտրը կլիմի մոտ 20 կգ: Սակայն XI դարում փիլիկվաններով (փիլիկոններով) կարողանում էին ամհամենատ ավելի ծանր արկեր արձակել:

<sup>2</sup> Եղյամիմերը կամ դեմիտմերը, որոնց մեր պատմիչները դեմիկներ են կոչում, իրանական ցեղ էին, որոնք բնակում էին Կասպից ծովից դեպի հոգի հորավարականությունը:

<sup>3</sup> Ենթադրություն կա, որ ասիլը չափի միավոր է: Այն օդիւ (աւղիւ) բարի աղավաղված տարբերակն է:

<sup>4</sup> Կրծապահ- պարսպի առաջակողմք պահպանող:

Է բարանը ոչնչացնելու համար կամավոր մարտիկներից մեկին ուղարկել հակառակորդի ճամբարը: Այդպիսով մշակվում է բազական հանդուգն դիվերսիոն գործողություն:

Կամավորության սկզբունքով ընտրությունը կանգ է առնում բյուզանդական մի գինվորի թեկնածության վրա: Վերջինս բանակցությունների գնալու պատրվակով դուրս է գալիս քաղաքից ու բարանի մոտով անցնելու կարողանում նավթով ու ծծմբով պատրաստված դյուրավառ խառնուրդով այրել բարանը: Ուշագրավ է, որ վարժ հեծյալ լինելով՝ գինվորը հասցնում է գործած սխրանքից հետո Մանազկերտ վերադառնալ:

**Պատժական տեղեկանք.** «Այս ժամանակ Հոռոմների գործերից մի կտրիծ մարդ նավթով ու ծծմբով կրակ պատրաստելով և լցնելով ապակյա ամանի մեջ, քաջասիրտ արիությամբ, վահանով միայն թիկունքը ապահոված, նստելով ազնվացին նժոյագ՝ քաղաքի դրսերից դուրս եկավ ու նտնելով այլազգիների բանակը, իրեն մանդատոր<sup>1</sup>, այսինքն՝ թղթաքրե հայտարարելով. գնալով մինչև բարանը պտտվեց նրա շուրջը և հանկարծակի վերցնելով շիշօ թափեց նրա վրա. անմիջապես թղթաքրված կրակի ծիրանի ռոց բարձրացավ, իսկ ինք շոսապով վերադարձավ: Անօրեններն այդ տեսնելով, ապշաք, ձիերը նստելով՝ ընկան նրա ետևից, բայց հասնել չկարողացան: Նա անվճառ մտավ քաղաք, Աստծոն օգնությամբ ոչ մի վերք չունեցավ, իսկ Սուլթանը կատարված տեսնելով՝ մեծ բարկությամբ հրամայեց պահապաններին սրակոտող անել»:

### **Արիստակես Լաստիվերցի, Պատժություն, Գլուխ ԺԶ**

Դժվար է գերազանահատել այս դիվերսիոն գործողության ազդեցությունը Մանազկերտի տակ ծավալված մարտական գործողությունների հետագա ընթացքի վրա: Այստեղ խոսքը միայն հակառակորդի բանակի վրա ունեցած հոգեբանական ազդեցության մասին չէ. Բյուրքական բանակում քարանետ մեքենաների վարպետներ չկային, այնպես որ այս անհաջողությունից հետո նրանք չեն կարողանալու կարծ ժամանակում նոր բարան պատրաստել:

Չայրացած Տուղրիլը հրամայում է անցքեր փորել ամրոցի պատի տակ, սակայն Մանազկերտի պաշտպանները խափանում են նրա նոր ծեռնարկումներն ու հարկադրում հեռանալ Շայաստանից:

<sup>1</sup> Կստահենի, սակայն, որպես կանոն, ցածրաստիճան գինվորական, որն ավագ հրամանատարի կարևոր նամակները կամ ուղերձները հանձնում են հասցեատերին: Բանքեր, սուլիհանդակ:

**Պատմական տեղեկանք.** «Սուլթանը, սաստիկ զայրացած, նորից ծեռնարկեց գետնափոր անելուն, մտադիր լինելով պարհսպը տապալել, բայց սրտապարդված քաղաքացիները նրա բոլոր ճեքենայությունները բանի տեղ չէին դնում: Երկարէ կեռ սարքերով և նրանք թշնամու բոլոր փորողներին դուրս էին քաշում և սպանում: Սուլթանը, տեսնելով դա, խայտառակ եղած մերջ տվեց գործին»:

**Մատրեսու Ռուհայեցի, ժամանակագրություն, Սասն երկրորդ**

**Պատմական տեղեկանք.** «Սուլթան Թուղթիլբեկը (1054թ.) արշավանքի ընթացքում մեծ գործեր կատարեց և շատ կողոպտեց, սպանեց, գերեվարեց... ապա, երբ ծմեռը վրա հասավ, վերադարձավ Ալորպատական, առանց Մանազկերտոց գրավելու»:

**Իբն ալ-Ասիր**

Մանազկերտի հերոսական պաշտպանությունը թյուրքական հրոսակախմբերի դեմ հայ ռազմարվեստի փայլուն վկայություններից է: Մազմական տաղանդավոր գործիչ Բարսեղ Ապութափի գլխավորությամբ փոքրաթիվ կայազորը և քաղաքի ամբողջ բնակչությունը մեկ ամիս շարունակ դիմադրում էր բազմաթիվ բանակների պարտության մատնած և մի քանի տարում Միջին Ասիան ու Իրանական բարձրավանդակը նվաճած մեծաթիվ բանակին:

Մանազկերտի տակ տարած հաղթանակը Դայաստանի համար կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ Տուղրիլ բեգը ստիպված էր հանգիստ թողնել մեր երկիրը և պատերազմել Միջագետքում ու Պարսկաստանի հարավային կողմերում:

---

**ՈԱՉՄԱՐՎԵՍԸՆ  
ԱՐԾՐՈՒՆԻ-ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ  
ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃՐԳԱՆՈՒՄ**

---

## ԱՐԾՐՈՒՆԻ-ԶԱՅԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՆՄԸ

**Պ**աքարյանների հոչակավոր իշխանական տան մասին տեղեկություններին հանդիպում ենք Խլդ. կեսերի պատմության մեջ, երբ Մեծ Հայքի հարավային՝ Կորճայք նահանգի Կարքունիք գավառից հյուսիսային՝ Գուգարք նահանգի Տաշիր-Զորագետի թագավորությունն է տեղափոխվում Խորով Արծրունին իր տոհմով:

**Պատմական տեղեկանք.** «(Արծրունիները) տեղափոխվել և եկել էին Զորագետի թագավորների մոտ... արժանացել էին պատիվների. իբրև բնակության տեղ նրանց տրվել էր Խոշորնին և, որովհետև խստ քաջ էին՝ առաջացան օրըստօրե դիրքով ու պատվով»:

**Կարդան Վարդապետ, Դավագումն պատմության, գլ. ԶԲ**

Խոսրով իշխանը հաստատվում է Զորագետում և ճամաչում Տաշիր-Զորագետի թագավոր Կյուրիկն (Գուրգեն) Բ Բագրատունու (1048-1089թթ.) գերիշխանությունը: Քաջություն և անձնվիրություն դրսերելով՝ Խոսրով Արծրունին կարծ ժամանակում աչքի է ընկնում և որպես կալվածք ստանում է Խոշորնի (Խոժոռնի) գավառակը՝ համանուն ամրոցով:

Արծրունիների տոհմի այս ճյուղի բարձրացումը շարունակվում է 1120-ական թթ. սելջուկների դեմ վրաց Բագրատունիների մղած պայքարի ծավալման պայմաններում: Շարունակելով ապրել իրենց հայրենիքում Արծրունիների վերջիններիս հետ համատեղ պայքար են մղում ընդդեմ սելջուկների<sup>1</sup>: Խիզախությամբ աչքի է ընկնում Խոսրով իշխանի որդին՝ Զաքարիան (Զաքարե), որի անունով էլ տոհմը սկսում է կոչվել Զաքարյան:



Գեղրգի Գ-ի օրոք (1156-1184թթ.) աչքի ընկնող հայ իշխաններից մեկն է դառնում Զաքարիայի որդի Սարգիսը «Մեծ» պատվանունով<sup>2</sup>: Նա նշանակալի մասնակցություն է ունենում հայ-վրացական զորքերի Շիրակի արշավանքին (1161թ.): Անիի ազատագրումից հետո եռանդում իշխանը նշանակվում է քաղաքի կառավարիչ, Վրաց զորքի սպարապետ Իվանե Օրբելու օգնական, և ներգրավվում Աստրապատականի ամիրայության Ելտկուզ արաբեկի (1148-1172թթ.) զորքերի դեմ մի քանի տարի շարունակվող պատերազմին (տես քարտեզ 1):

Երիտասարդ Սարգիս իշխանի համար առաջին լուրջ փորձությունն է դառնում 1162թ. մեծ արշավանք սկսած Ելտկուզ արաբեկի զորքերի դեմ պայքարի կազմակերպումը: Անիի հերոս պաշտպանները մեկ ամիս շարունակ դիմադրում են հակառակորդի հսկայական բանակին և հարկադրում դադարեցնել պաշարումն ու հեռանալ: Այդուամենայնիվ, պահպանել Շիրակը չի հաջողվում, որն անցնում է Շաղդաղյան ամիրայությանը:

<sup>1</sup> Դավիթ Դ Շինարար թագավորի գահակալության (1089-1125թթ.) վերջին տարիներին:

<sup>2</sup> Նույն պատվանվանն է արժանացել նաև Սարգիս Զաքարյանի որդին՝ Զաքարիան:

## Ուստահամ գործողությունները 1161-1174 թթ.



## Սարգիս Մեծ

Հայոց Բագրատունյաց Երբեմնի մայրաքաղաքն ազատագրելու պայքարը շարունակվում է նաև հետագայում: Դերբական հաղթարշավից հետո՝ 1174թ., Անհն անցնում է հայ-Վրացական գործերի հսկողության տակ: Եվ կրկին քաղաքի կառավարիչ Իվան Օրբելու կողքին էր անխոն Սարգիս Զաքարյանը, որը պարթահասակ և լայնաթիկունը լինելու և անսովոր ֆիզիկական ուժի պատճառով Բագրատունյաց արքունիքում ստանում է «Երկայնաբազուկ» (վրացերեն՝ Մխարգրօնելի) պատվանունը: Ի դեպ, վրաց ժամանակագրիների մի մասը, որոնք անհրաժեշտ չափով ծանոր չէին Զաքարյան տոհմի պատճությանը, Սարգիս որդիներին և Երկայնաբազուկ են անվանում՝ դրանով փոխարինելով նրանց տոհմանունը:

1177թ. Սարգիս Զաքարյանը ներքաշվում է վրացական թագավորության ներքաղաքական պայքարին՝ հարկադրված լինելով միանալ Գեորգի Գ-ի դեմ վրաց սպարապետի բարձրացրած խռովությանը: Սակայն Սարգիսը խռովությանը միացած առաջին իշխաններից է լինում, որն անցնում է քագավորի կողմը: Իր որդի Զաքարիայի (Զաքարե) և եղբորորդի Զաքարիայի հետ միասին Սարգիսն ակտիվիտեն մասնակցում է խռովության ճնշմանը, մեծարվում թագավորի կողմից և ամրապնդում իր տոհմի դիրքը:

Իվանե Օրբելու խռովությանը հաջորդած տարիներին Զաքարյանները դառնում են վրացական թագավորության հայկական ամենաազդեցիկ իշխանական տոհմը: Նրանց դերը հատկապես բարձրանում է Գեորգի Գ-ի դստեր՝ Թամար թագուհու գահակալության տարիներին (1184-1213թ.): Սարգիս Մեծը 1185թ., որը մինչ այդ հայկական գործերի սպարապետն էր (ամիրսպասալար), նշանակվում է նաև վրաց գործի սպարապետ: Նա վրաց արքունիքի կողմից ծանաչվում է ոչ վաղ անցյալում Տաշիր-Զորագետի Բագրատունի թագավորներին պատկանող և նրանց մայրաքաղաքի շրջակա գավառն ընդգրկող տարածքների տերը և դառնում ամենահեղինակավոր իշխաններից մեկը<sup>1</sup>: Հայ-Վրացական դաշնակցության ամրապնդումը հետագա հաղթանակների կարևոր նախապայմանն է դառնում (տե՛ս քարտեզ 2):

Սարգիս սպարապետն անմիջապես լծվում է Հայաստանի ազատագրման գործին: Նախքան գլխավոր իշխանահարցերի լուծնան անդրադառնալը՝ որոշվում է ապահովել հարձակման գլխավոր ուղղության (Շիրակի) ռազմավարական թևերն ու թիկունքը և կանխող հարվածներ ուղղել դեպի Վանանդ, Արագածոտն-Կոտայք-Արարատյան դաշտ, Ուտիք-Արցախ:

<sup>1</sup> Հայկական հողերի ազատագրմանը գուգընթաց աճում էր հայկական գորագների թիվը, որոնք անվեռապսիդն ենթակվում էին Զաքարյաններին: Արդեն 1170-ական թթ. վեցերին հայոց գորագներն առաջնորդող Սարգիս Մեծի իշխանության ներքո ավելի քան 20 հազարամոց ուժեր կային:

## ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԹՅՈՒՐՔՎԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉՈՐՁԵՐԻ ԴԵՄ 1185-86թթ.

1185-1186թթ. ՊԱՏԵՐԱՋՄԱՆԾՐԱՎԱԾ

**1185** թ. Թամար թագուհին ամուսնանում է Վլադիմիր-Սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոյուրսկու որդի Յուրիի (Գեղրգի) հետ, որին հաջորդած տարին փորձությունների շրջան է դառնում ինչպես վերջինիս, այնպես էլ նորանշանակ սպարապետի համար:

Շրջակայքի թյուրբական ամիրայությունները վճռական հածակման էին պատրաստվում, որի պատճառով անհրաժեշտ էր նրանց կանխող հարվածներ հասցնել: Սակայն մինչ հայ-վրացական բանակը նախապատրաստում էր այդ գործողությունները, ռազմական գործողություններ են սկսվում սահմանի հարավարևելյան տեղամասում, ուր արշավում են թյուրբական հրոսականքները:

Բժախնդորութեն նախապատրաստվող գլխավոր (արևանտյան) հարվածը չթուլացնելու նպատակով որոշվում է այդ ուղղությունից ուժեր չտեղափոխել արևելք: Յակառակորդի ջախչախումը հանձնարարվում է Գամբեկել Թորեցուն: Վերջինս հաջողությամբ կատարում է իր առջև դրված խնդիրը: Դա ոգևորում է հայ-վրացական ուժերին:

## Հաղթանակները

Հարավարևելյան ճակատում ծեռք բերված հաջողության լուրջ ստանալուն պես Յուրիի գլխավորությամբ հայ-վրացական զորքերն արշավում են դեպի Կարս: Արշավանքի սկիզբը մարտավարական առումով հաջող էր, իսկ արդյունքներն առավել քան գոհացուցիչ էին: Այդ նկատի ունենալով՝ որոշվում է հաջողությունը զարգացնել Կարինի ուղղությամբ: Երկրորդ հարվածը ևս հասնում է իր նպատակին: Դաշնակիցները շարունակում են առաջխաղումն ու ի վերջո հասնում են մինչև Բասեն: Հայ-վրացական զորքերը խորտակիչ հարված են հասցնում այս շրջաններ ներխուժած թյուրքական ուժերին:

**Պատմական տեղեկանք.** «Սախ արշավեցին Կարսի և Կարինեփորի երկրները և ավերեցին մինչև Բասիան (Բասեն): Եվ հաղթանակած ու լի վերադարձան ու եկան Աստծով լուսավորված պատրինի առաջ և լցվեցին սիրով ու ուրախությամբ»:

**«Թագավորմերի պատմությունն ու գովարանությունը», էջ 377**

Դա հնարավորություն է տալիս լուծել ևս մեկ կարևոր ռազմավարական խնդիր. հակառակորդին այնքան ծանր դրության մեջ դնել, որպեսզի նա ի վիճակի չլինի չոչընդոտել մոտ ապագայում հարավային ուղղությամբ հասցվելիք հարվածներին:

Հայ-վրացական գլխավոր ուժերի ուշադրությունն արշավանքից շեղելու նպատակով հակառակորդը թառմ ուժեր է բերում ռազմական գործողությունների գոտիի: Յուսիսային Ասորիիքից Կարինին օգնության եկած թյուրքական զորախմբերը տեղ են հասնում արշավանքի եղրափակիչ փուլում, երբ հայ-վրացական բանակը գտնվում էր Բասենում: Նրանք հարձակվում են Շավշեթի ու Կղարջքի ուղղությամբ:

Հայ-վրացական զորքի ուշադրությունը շեղելու նպատակով հասցվող հարվածը միայն մասսամբ է հաջողվում: Գլխավոր ուժերն ավարտին են հասցնում սկսած մարտական գործողությունները, և նրանց դեմ է ուղարկվում միայն Գուրգան Տայեցու զորագունդը: Հակառակորդն այս անգամ ևս ջախջախսվում է և մարտադաշտում զգալի ռազմավար թողնելով՝ նահանջում:

Կղարջքի ուղղությամբ ևս իրադրությունը կայունացնելով՝ Սարգիս Մեծը հնարավորություն է ստանում արևելքում և արևմտություն մարտական գործողություններ վարող ուժերը կենտրոնացնել հարավում: 1186թ. գարնանը սկսված հարձակման նպատակը Դվինն էր լինելու:

Հայոց Միջնաշխարհում հասցվող հարվածը սպարապետի համար առանձնակի կարևորություն ուներ: Պատահական չէր, որ արշավանքին ներգրավվել էին հայկական բոլոր զորագնդերը: Հատկանշական է, որ արշավանքին մաս-

նակցում էին Զաքարյան տոհմի բոլոր ներկայացուցիչները: Ընդհանուր ուժերով հաջողվում է ջախջախնել հակառակորդին և ռազմավարական այս ուղղությունը ևս անվտանգ դարձնել:

**Պատճական տեղեկանք.** «Գնացին Երկայնաբազուկները, Սարգսի ու Վահրամի որդիները, ազնիվ կտրիծներ, ավագներ՝ Զաքարիան... Իվանեն ու Սարգիսը... և արշավեցին Ղափանի (Ղվինի) երկիրը<sup>1</sup>: Հարթանակածների ու պարառածների վրա հասան ուժեղ զորքեր: Բախվեցին առյուծի կատաղությամբ: Ի վերջո (Զաքարյանները) նրանց փախուստի նատնեցին»:

**«Թագակիրների պատմությունն ու գովարանությունն», էջ 378**

Այսպիսով, 1185-86թթ. պատերազմաշրջանի ընթացքում հայ-վլացական բանակին հաջողվում է ջախջախնել արևմտյան, հարավարևելյան և հարավային ուղղություններով ուժերը կենտրոնացնող թյուրքական ամիրայությունների զորքերին և պայմաններ նախապատրաստել Հայաստանի հյուսիսային և արևելյան շրջանների ազատագրման համար: Արշավանքների ընթացքում զորավարական տաղանդով փայլում է Հայոց և Վրաց զորքերի սպարապետ (ամիրսպասալար) Սարգիս Զաքարյանը: Ռազմական գործողությունները, սկսվելով հաջորդաբար, վարվում էին միաժամանակ մի քանի ռազմավարական ուղղություններում: Այս առումով, սպարապետը հանդես է գալիս նաև որպես հայոց ռազմավարության բարեփոխիչ:

<sup>1</sup> Արարատյան դաշտ:

# ՀԱՍՁՈՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՄԲԵՐԴԻ ԱՇԱՏԱԳՐՈՒՄԸ

## 1195-1196ԹԹ.

### Դադարակաների ռազմավարությունը

Դաջողությամբ ավարտելով կանխող հարվածների իրականացումը՝ Դայն և Վրաց գործերի սպարապետը ծեռնանուխ է լինում լայնածավալ հարձակողական ռազմավարության մշակմանը: Նոր հայեցակարգի մշակմանը, ամենայն հավանականությամբ, մասնակցել են նաև Զաքարեն ու Իվանեն: Դամաճայն այդ ռազմավարության, նախատեսվում էր հարձակողական գործողություններ ծավալել հարավարևելյան, հարավային, հարավարևմտյան և արևմտյան ուղղություններով և ազատագրել Դայաստանի մեծ մասը: Ռազմավարական հայեցակարգի առանցքը կազմում էր մեկ խնդիր. ազատագրումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվեն տարածքները Վերադարձնելու ու տեղական բնակչությունից թյուրք ամիրաների վրեժնդրությունները:

Սպարապետը որոշում է հարձակողական գործողություններն իրականացնել մեկ գլխավոր և մեկ կամ մի քանի աջակցող հարվածների տեսք ստացող ալիքածեն առաջխաղացումներով<sup>1</sup>: Ակնկալվում էր, որ նույն պատերազմաշրջանի ընթացքում տարրեր ուղղություններով հասցվող մի քանի հարվածների շնորհիվ աջակցող հարվածները հնարավորություն էին տալու գլխավոր հարվածներին գուգընթաց տարածքներ ազատագրել: Ապա նաև, հակառակորդի ուշադրությունը գլխավոր հարվածների ուղղություններից շեղելով, նրան գրկելու էին իրադրությանը համարժեք քայլեր ծեռնարկելու հնարավորությունից: Ակնհայտ էր, որ ազատագրական արշավանքների բանալին Շիրակն էր՝ քաղաքամայր Ամինով:

Սպարապետը գտնում է խնդիր ամենապարզ լուծման եղանակը. նախորդ արշավանքներից դասեր քայլելով՝ որոշվում է ապահովել գլխավոր հարձակման ռազմավարական թևերը և թիկունքը: Այդ նպատակով առաջին հարվածները հասցվելու էին սելջուկների հենակետերի ուղղությամբ՝ հակառակորդին գրկելով Դայաստանում իր տիրապետության պահպանման հնարավորությունից: Սակայն Սարգիս Մեծին վիճակված չէր իրականացված տեսնել իր մտահղացումները:

<sup>1</sup> Տե՛ս բառարանը:

1187թ., երբ ավարտվել էր պատերազմի մշակումն ու սկսվել էին արշավանքների նախապատրաստական աշխատանքները, սպառապետը մահանում է: Նրան փոխարինած Գամբեկել Թորեցին իր ռազմավարական ծրագրերն ունենալով՝ հետաձգում է արդեն իսկ մշակված և ամբողջացված նախագծի իրականացումը: Նրան ավելի շատ հուզում էր Թամարի ամուսին Յուրիի ապստամբության ճնշումն ու դրա հետևանքների վերացումը, քան Զաքարյանների գլխավորությամբ ազատագրական պայքարին աջակցություն ցույց տալը:

## Զաքարե Մեծ

Կիլիկիայում Լևոն Բ-ի իշխանապետության տարին (1187թ.) նշանավորվում է ևս մեկ կարևոր իրադարձությամբ. Զաքարյան տոհմի առաջնորդությունը ստանձնում է Սարգսի որդի Զաքարեն:

**Պատմական տեղեկանք.** «Լևոն Յայոց արքայի թագավորության ժամանակ Արևելյում ապրում էին երկու եղբայրներ, բարեպաշտ Սարգիս իշխանի որդիները... առաջինի անունն էր Զաքարե և երկրորդինը՝ Իվան. սրբազն քաջ տղամարդիկ էին ու հզոր էին իշխանությամբ և արժանացել էին պատիվներից»:

**Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Յայոց, Էջ 122**

1191թ. Իվանեն նշանակվում է արքունի վեզիր<sup>1</sup>, իսկ մեկ տարի անց Զաքարեն հայ-վրացական զորքերի սպարապետ է դառնում:

**Պատմական տեղեկանք.** «Եվ այդ ժամանակ մահացավ ամիրսպաւլար Գամբեկելը (Գամբեկել Թորեցին)... Այնժամ շնորհեցին ամիրսպասալպությունը Զաքարիա Երկայնաբազուկին՝ Սարգիս ամիրսպասալարի որդուն, որը նստում էր Յայոց թագավորի տեղում և տերն էր Լոռու: Կտրիմին, որ արժանի էր սպարապետության, ավելացրեցին նաև Ռուսակ քաղաքը<sup>2</sup>:»

**«Թագավիրների պատմությունն ու գովարանությունն», Էջ 394**

<sup>1</sup> Յետագայում՝ 1212թ. Զաքարեի մահից հետո Իվանեն ստանձնում է արքունի խնամակալի՝ աթաքեկի պաշտոնը, իսկ արքունի վեզիր է նշանակվում հորեղբոր Վահրամի որդի Զաքարեն:


<sup>2</sup> Մինչ այդ քաղաքը և Արագի գետի հովիտը եղել էր Սահկանաբերողի տեր Ամիր-Թուրդ Արծրունու կալվածքը:

Թամար թագուհու արդեն նախկին ամուսին Յուրիի (Գեորգի) գլխավորած ապստամբության ճնշնան ակտիվ մասնակցություն ունեցած Զաքարյան Եղբայրներն եւ ավելի են ամրապնդում իրենց դիրքերը Բագրատունիների արքունիքում: Եվ այժմ, երբ Վերացվել էին Շայաստանի հյուսիսային և արևելյան շրջանների մյուս մասն ազատագրելու բոլոր արգելքները, Զաքարյան ծեռնամուխն է լինում հոր հեղինակած ռազմավարական ծրագրերի իրականացմանը:

Ստեղծված իրադրությունը և, հատկապես, դրա զարգացման անհրապույտ հեռանկարը չէին կարող չմտահոգել Ալոքատականի ու Գանձակը զավթած ամիրայության արարեկ (Խնամակա) Մուհամմեդ Փահլակի որդի Աբու-Քարին (1191-1210թթ.): Նա գիտակցում էր, որ հարկավոր էր արագ կանխել Զաքարյանների հզորացումը:

Ռազմավարական իրադրությունը բարդ էր և աթարեկից պահանջում էր զգուշություն: Չնայած իր զորքերի թվային առավելությանը՝ նա նախ հայ-վրացական բանակի առաջնադաշտացնան դեմ պաշտպանական միջոցառումներ է իրականացնում: Դրանից հետո միայն Աբու-Քարին և նրա դաշնակից բոլոր ամիրայությունների հսկայական բանակը 1195թ. սկսում է գործողություններ հայ-վրացական զորքերի առաջնադաշտացնումը կանխելու նպատակով (տես՝ քարտեզը):

Ապահով գործողությունները 1195-1196 թթ.



## Հաղթանակը

Սկզբնական շրջանում հաջողությունն ատրպատականյան գործի կողմն էր, բայց խարսխիկ հաջողությունը կարծ է տևում: Յայ-Վրացական քանակը Շամքոր ու Գանձակ քաղաքների միջև տեղի ունեցած վճռական ճակատամարտում ջախչախիչ պարտության է նատնում թշնամուն: Եռանդուն հետապնդումը հնարավորություն է տալիս ավարտել հակառակորդի ջախչախումը:

**Պատմական տեղեկանք.** «Բերեցին նվեր, ընծա ու գանձ անթիվ, մարդիկ (տիրակալ-ազնաուրից մինչև ծառա) 12.000, հովազ՝ 40, ծի՝ 20.000, ջորի՝ 7.000, ուղու՝ 15.000:

Ո՞վ կարող էր հաշվել այդ դրոշները, բազում ամանեղենը, ուկին ու կտրեղենը»:

**«Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», էջ 411-412**

Ուազմավարական նշանակության հաջողությունը հնարավորություն է տալիս մի քանի ուղղություններով ծառագայթաձև<sup>1</sup> հարձակման անցնել Դաշտային Արցախում ու հարակից շրջաններում:

Պարտված հակառակորդի փախչող գորամաերի հետապնդումից բացի, գրեթե միաժամանակ հումկու հարձակում է կատարվում այդ տարածքի բոլոր քաղաքների ուղղությամբ: Արյունքում՝ կարծ ժամանակում Վահրամ Զաքարյանին, ապա նաև նրա որդի Զաքարեին հաջողվում է ազատագրել մի շարք շրջաններ, այդ թվում Շամքորը, որը կցվում է Գագ կենտրոնով նրանց կալվածքին: Գանձակը զավթած աթաքելության թուլացումը նպաստավոր էր հատկապես Զաքարյանների Վահրամյան ճյուղի համար: Զաքարեի ու Իվանեի հորեղբայր Վահրամն ու նրա որդիները կալվածքներ ունեն Գուգարաց աշխարհի Զորավոր կամ Կայեն գավառում: Թամար թագուհու առաջին ամուսին Յուրիի ապստամբության ծննդան գործում աչքի ընկնելու համար Վահրամն ստանում է նաև Գագն ու շրջակայքի ամրոցները: Յետագայում Վահրամն ու նրա որդիները, որոնք այդուհետ սկսում են կրել Վահրամյան տոհմանունը, ակտիվ մասնակցություն են ունենում Ուտիքի և Արցախի ազատգրման գործին:

<sup>1</sup> Տե՛ս բառարանը:

## Ազատագրական առաջին «ալիքը»

Ըստ ամենայնի, Արագածոտնի ուղղությամբ հասցվող առաջին հարվածի հեղինակը Սարգիս սպարապետն էր: Սակայն արշավանքի փայլուն իրականացումը կապվում է նրա որդիների և, առաջին հերթին, Զաքարիայի անվան հետ: Սասմավորապես, նա սկզբից և առ մեծացնում է արշավանքի շրջանակները և այն վերածում Հայաստանի արևելյան նահանգների մահմեդական տիրապետության դեմ վարչող լայնածավալ հարձակման: Ինչպես և որոշված էր, հայ-վրացական բանակը հարվածը հասցնում է Գանձակը զավթած ամիրայության գորքերի գլխավոր խնճավորման ուղղությամբ: Կարևոր էր նաև, որ հարվածը հասցվում էր հայեցակարգի մշակմանը հաջորդած տասնամյակի ընթացքում ձևավորված ռազմաքաղաքական իրադրությունը հաշվի առնելով: Իրադրության սրաբի գնահատականը և ներգրավված ուժեղությունը:

Հայ-վրացական բանակը տապալում է Գանձակը զավթած ամիրայության գորքերի դիմադրության բոլոր փորձերը և հարվածն ուղղում դեպի Ամբերդ: Հակառակորդն անզոր էր դիմադրություն ցույց տալ, և կարևորագույն նշանակություն ունեցող ամրոցը գրավվում է (տես՝ քարտեզը):

Ամբերդի ազատագրումով Զաքարյանները հուսալի ռազմահենարան են ստեղծում Այրարատ աշխարհում: Արագածոտնի ազատագրումով հայ-վրացական գորքերը ռազմավարական նախաձեռնությունը վերցնում են իրենց ձեռքը՝ օտար ամիրայություններին գրկելով փոխգործողությունների կազմակերպման և ընդհանուր ճակատի ձևավորման հնարավորությունից:

1195թ. Շամբորի ճակատամարտը և 1196թ. Զաքարե սպարապետի գլխավորած բանակի հաղթարշավը մեր ամենանշանավոր հաղթանակներից են: Աբու-Բաքրի բանակի ջախջախումով Զաքարյանները հակառակորդի առջև հուսալիորեն փակում են ազատագրված տարածքներն ու ապահովում Ամբերդ-Շամբոր գծով անցնող տարածքների անվտանգությունը: Բարենպաստ պայմաններ են ստեղծվում Արցախի և Սյունիքի ազատագրման համար: Շիրակի և Արարատյան դաշտի ուղղությամբ հարձակումը շարունակելու նպատակով անվտանգ ու ռազմավարական առումով հուսալի թե է ձևավորվում:

# ԻՎԱՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԳԵՂԱՐՔՈՒՅՑԱՅ ԱՐՀԱՎԱՆՔԸ

## 1197Թ.

**Կ**ամքորի մոտ կրած պարտությունը թյուրքերի շրջանում խուճապային տրամադրություններ էր առաջացրել, և ստեղծված իրադրությունն օգտագործելու նպատակով Զաքարյան եղբայրները որոշում են նոր արշավանք իրականացնել, այս անգամ՝ Գեղարքունիք: Դայ-Վրացական զորքերը՝ Խվանեի հրանաստարությամբ, ուղարկվում են հետախուզական արշավանքի, որը հաջողությամբ է սկսվում:

Անհաջողություններից ոգելքված մահմեդական զորամասերը չեն կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ Խվանեի զորախմբին: Դայոց զորքը Շամքորից շարժվում է դեպի արևմուտք և առանց եական խոշընդուների մոտենում Սևանա լիի ավագանին: Շուտով Վրացական զորամասերը վերադառնում են, և արշավանքը շարունակելու խնդիրը դրվում է միայն հայկական զորագնդի վրա: Նրանց փոքրաթվությունը համարձակություն է հաղորդում հակառակորդին: Խետախույզներից տեղեկանալով, որ առաջխաղացումը ոչ մեծ ուժերով է շարունակվում, Գեղարքունիքը զավթած թյուրքական զորքն ավելի վճռական դաշնում:

Այդ պայմաններում Խվանեն կարող էր դադարեցնել արշավանքը և ամրանալ ազատագրված տարածքներում: Ուժերի ստեղծված հարաբերակցության պայմաններում զգուշավորությունն ավելորդ չեր: Դայկական կողմը ռազմերին ապահովելու նպատակով անընդհատ հետախուզական խմբեր էր ուղարկում գլխավոր ուժերից առաջ: Առաջխաղացման ընթացքում հակառակորդի գլխավոր ուժերի հետ ընդհարումը բացառելու նպատակով ծևավորվում է նաև առաջնային երթային ուղեկալի դեր կատարող առաջապահ (առաջապահ ջոկատ):

Կարծ ժամանակում հնարավոր է դաշնում հսկողության տակ առնել արշավանքը շարունակող զորամասերի շրջակայթում ստեղծված իրավիճակը, և ծեռնարկված միջոցառումների արդյունքում հակառակորդը զրկվում է հայկական զորագնդերի դեմ անսպասելի գործողություններ վարելու հնարավորություններից: Մարտական ապահովման բարձր մակարդակը և հետախուզության ակտիվությունը հնարավորություն են տալիս թվային առավելություն ունեցող հակառակորդի հետ մարտավարական հավասարակշռություն հաստատել:

## «Հակածուղակը»


Տեղեկություն է ստացվում, որ Գանձակի կողմերից դեպի Վրարատյան դաշտ է շարժվում Բաբլանի զորքը (տես քարտեզը): Ակսված մարտական գործողությունների մասին տեղեկանալով՝ վերջինս զորքը շարժում է դեպի արևմուտք և փորձում կտրել հայ-վրացական գլխավոր ուժերի և Գեղարքունյաց արշավանքի ելած ուժերի միջև կապը: Իվանեի զորագնդից տասնապատիկ ավելի ուժեր ունենալով՝ նա հույս ուներ արագորեն ծուղակը գցել հայկական զրագնդերը և նախքան Զաքարի գլխավորած ուժերի հետ վճռական ճակատամարտի դուրս գալը՝ նպաստավոր ռազմավարական իրադրություն ձևավորել:

Դետախուզական ջոկատները ժամանակին տեղյակ են պահում Իվանի իշխանին հակառակորդի առաջխաղացման մասին: Դայտնի է դաշտում նաև, որ հակառակորդը ճնշող գերազանցություն ունի: Բաց դաշտում ճակատամարտ տալն անհմաստ էր: Կրկին զինանոցից հանվում են անկանոն մարտավարության հնարքները: Իվանեն որոշում է ծուղակը գցել հակառակորդին: Այդ նպատակով նա, տեղանքն օգտագործելով, հմտորեն դարս է կազմակերպում: Ստեղծվում է ուշագրավ իրադրություն, քանի որ հայկական զրագնդերին ռազմավարական ծուղակը գցելու նտադրությամբ արշավանքի ելած հակառակորդն ինքն է ընկնում մարտավարական ծուղակը:

## Հաղթանակը

Սպասելով՝ մինչև հակառակորդը հասնի դարանակալ ուժերին, Իվանեն վճռական գրոհի հրաման է տալիս: Մոտ տարածությունից ամբողջ ճակատով հակառակորդի երթակարգի թկին հասցված հարվածն անսպասելի էր Բաբլանի համար:

Հակառակորդի համար անբարենպաստ իրավիճակում սկսված մարտը հնարավորություն է տալիս զգալիորեն չեզոքացնել նրա քանակական գերազանցությունը: Ակսված մարտի ընթացքում Բաբլանին չի հաջողվում զորքի երթակարգը շատ թե թիշ կանոնավոր մարտակարգի վերափոխել, որի հետևանքով թյուրքական զորքի դիմադրությունը սկսում է արագորեն թուլանալ: Դա ընթանում է նաև Բաբլանը, որը թվայրին իրավիճակում համախնքում է իր թիկնազորը և նետվում է մարտի: Թշնամու մարտական դասավորությունը մի պահ կայունանում է, և հետ քաշվել սկսած ստորաբաժնումները կրկին սկսում են համարորեն դիմադրել: Այս դեպքում արդեն վճռական նշանակություն է ստանում հակառակորդի մեծաթվությունը:



የኢትዮጵያዊነት ማስወገድ ተንተሬ ከፋይ

Թշնամու հակագրոհի պահին հայկական կողմը հիմնականում կորցրել է ի հանկարծակի հետևանքով ստացած առավելությունը, իսկ մարտական իրավիճակի կայունացումով թյուրքական զորամասերը միասնական մարտաշար էին կարողացել ձևավորել: Նկատելով փոփխությունը՝ Իվանեն բոլոր ուժերը կենտրոնացնում է այն տեղամասում, որտեղ Բարձրանի գլխավորած զորամասը հակագրոհել է ի հայոց զորքի մարտակարգի: Ծանր հարվածի ենթակված զորամասին օգնության շտապող ստորաբաժնումները փաստացի թևանցում են հակառակորդին: Կատաղի մարտ է սկսվում, որի ընթացքում հայ մարտիկներին հաջողվում է գերել Բարձրանին:

**Պատմական տեղեկանք.** «Որովհետո Իվանեն առյուծի սիրտ ուներ, անտեսեց իր (զորքի) փոքրավությունն ու թշնամու մեծավությունը, և դուրս թռչելով՝ ցրեց, փախցրեց, սպանեց, ոչնչացրեց... և Աստծու զայռույթը թափեց նրանց (թշնամու) գլխին: Գերի վեցրեց իրեն Բարձրանին, զորքերին ու դրոշները»:

**«Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», Էջ 415**

Դրամանատարի գերումը որոշիչ ազդեցություն է գործում հակառակորդի գինվորների վրա, որոնք գերեք անմիջապես դադարեցնում են դիմադրությունը: Իվանեն Զաքարյանն, օգտվելով ստեղծված հնարավորությունից, սկսում է հետապնդումը և գերում թշնամու մեջ թվով գինվորներ:

Այսպիսով, Իվանեն Զաքարյանի գլխավորած հայկական զորագնդերի Գեղարքունյաց արշավանքն ավարտվում է հաղթանակով, որով նոր թափ է ստանում հայկական երկրամասի ազատագրումը: Ի դեպ, նենց Իվանեն է հետագայում Գեղարքունիքը ստանում որպես կալվածք:

Դադարանակը ծեռք է բերվում հակառակորդի մասին հստակ տեղեկություններ ստանալուց հետո ճիշտ կազմակերպված դարանի շնորհիվ: Վճռական ճակատամարտը հետախուզական ստորաբաժանումների գործողությունները ճիշտ կազմակերպելու, ռազմական խորամանկության, տեղանքն օգտագործելու, հակառակորդի հակագրոհի անդրադարձման և մարտավարական մի շարք կարևոր խնդիրների առումով օրինակելի է: Այն վկայում է Զաքարյանների օրոք հայոց ռազմարվեստի զարգացման բարձր մակարդակի մասին:

Հայկական զորագնդերի մարտակարգը թվարանակով գերազանցող հակառակորդի դեմ ճակատամարտելիս չէր երերում, ինչը վկայում է նրանց բարձր բարոյակամային որակների մասին:

## **ՇԻՐԱԿԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՂԱՇՏԻ ԱՉԱՏԱԳՐՈՒՄԸ**

**1199-1203թթ.**

**Փ**որձելով առավելագույնս օգտագործել հակառակորդ ճամբարում ձևավորված խուժապը՝ սպարապետը որոշում է հասցնել երկրորդ գլխավոր հարվածը: Նկատենք, որ նախկինում մշակված ծրագրի համաձայն, ազատագրական պայքարի այս փուլը մի քանի (նվազագույնը՝ երկու) պատերազմաշրջան-ալիքներով պետք է իրականացվեր: Սակայն հաշվի առնելով ստեղծված բարենպաստ իրադրությունը՝ Զաքարե Զաքարյանը ցուցաբերում է ռազմավարական ճկունություն և մեկ միասնական մտահղացումով «կապում» է Շիրակում (Անիի), Կոտայքում (ռազմավարական հենադաշտի ստեղծման) և Արարատյան դաշտում (Դվինի) վարչելիք հարձակողական գործողությունները:

## ԱՆԻՒ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Հարավային և հարավարևելյան ուղղություններն անվտանգ դարձնելուց անմիջապես հետո սպարապետի ուշադրությունը սկսվում է Շաղդաղյաններին Շիրակից արտաքսելու խնդրի վրա: 1199թ. հայ-վրացական զորքերը սկսում են Շիրակի ազատագրման արշավանքը (տես քարտեզը):

Գործողությունը հնարավորինս ճանրամասնորեն էր նախապատրաստված և վարվում էր շրջահայացորեն: Զորքի առաջխաղացմանը նպաստելու համար արվել էր ամեն ինչ: Դաշնակիցները, որոնք նախորդ երեք տասնամյակների ընթացքում երկու անգամ ազատագրել էին քաղաքը, քաջածանոթ էին տեղանքին:


Անին զավթած Շեղադյան Քեյ-Սուլթանը գիտեր, որ հայոց և վրաց սպարապետի գլխավորած բանակի հետ ընդհարումը վճռական է լինելու: Դայ ժողովորի համար Անին գերված Շայրենիքի յուրօրինակ խորհրդանշիչի էր վերածվել, և ակնհայտ էր, որ ազատագրական պայքարը նախ և առաջ հոգեբանական է լինելու: Իրողության գիտակցումը կանխորշում է հակամարտության ելքը:

Անիի անրություններն այնքան հզոր էին, որ կարելի էր հայ-վրացական բանակից անհամենատ ավելի մեծ զորքի հարձակում կասեցնել, սակայն ռազմական գործողություններն այլ ընթացք են ստանում: Անիրան չի կարողանում լուրջ դիմադրություն ցուցաբերել հայ-վրացական զորքերի 1199թ. արշավանքին: Թերևս, խորհրդանշական էլ էր, որ Շայոց քաղաքանայրը հայկական զորագնդերին՝ իր օրինական տերերին էր հանձնվում առանց դիմադրության:

Անիի ազատագրումն իրավական հարթությունում որակապես փոխում է վրաց Բագրատունիների և աննախադեպ հզորացած Զաքարյանների հարաբերությունները: Վերջիններս ստանում են նաև նախսկինում Անիի տիրակալ հայ Բագրատունիների գերազահությունը հավաստող «շահնշահ» տիտղոսը: Այսպիսով, ազատագրական պայքարի ծավալմանը զուգընթաց փոխվում է Զաքարյանների իրավաքաղաքական դրությունը, և նրանք դառնում են ազատագրված Շայաստանի ինքնիշխան տիրակալներ:

Պակաս կարևոր չէ նաև, որ Շիրակի ազատագրումով այդ տարածքի Շայոց շուրջ 10 հազարանոց զորագունդը միանում էր Զաքարյանների բանակին: Անիի ազատագրման կարևորությունը շեշտելու համար Զաքարեն նոր ձևավորվող պետության գործակալաւությունները (արքունիքը) Լոռիից տեղափոխում է այստեղ:

ՆԱԽԱՐԱՐ ՋԱԼՈՎԱՆԻ ԹԵՐՅԱՆԴՐԱՑ 1199-1202 թթ.



## ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱԾԻ ԱԿԱՏԱԳՐՈՒՄԸ 1203թ.

**Ա**նիի ազատագրումը տագմապեցնում է Զաքարյանների Ասիլովյանների հարևան բոլոր զավթիչ թյուրքական ամիրաներին<sup>1</sup>: Զկարողանալով դիմակայել հայկական արշավանքներին՝ նրանք խուլ պաշտպանության են անցնում:

---

<sup>1</sup> Տես ռազմական տերմինների բառարանը:

## Դեպի Կոտայք

Արագածոտնի ու Շիրակի ազատագրումը՝ աջից, Շամբորի ազատագրումը՝ ձախից հուսալիորեն պաշտպանում էին դեպի Արարատյան դաշտ շտապող հայ-վրացական գորքերի ռազմավարական թևերը: Ավելին, ատրպատականյան գորքերի ջախջախումը նախապայմաններ էր ստեղծել հաջողությունը դեպի Արցախի լեռնային շրջաններ և Սյունիք զարգացնելու համար:

Արշավանքի կազմակերպման հետ կապված դժվարությունները հիմնականում «տեխնիկական» էին: Դարցն այն է, որ դժվար էր մեկ «ցատկով» Արարատյան դաշտից հակառակորդին դուրս մնելը. իսկ հենադաշտի դեր կատարելու համար նպաստավոր ամրացված կետեր չկային: Ստեղծվել էր ուշագրավ մի իրավիճակ, երբ Լոռեն (Լոռի) շարունակում էր գլխավոր հենավետի դեր կատարել այնպես, ինչպես մինչ այդ կատարում էր հարևան Շիրակի, Արագածոտնի կամ Ուտիքի ազատագրման ընթացքում: Շամբորը հեռու էր մարտական գործողությունների գոտուց, իսկ Ամբերդը, որքան էլ հուսալի պաշտպանական նշանակություն ունենար, ռազմավարական հարձակում իրականացնելու առումով բավարար նպաստավոր չէր:


Զաքարե շահնշահը խնդրի ուշագրավ լուծում է գտնում: Որոշվում է Արարատյան դաշտում հարձակողական գործողությունները սկսելուց առաջ ռազմավարական նոր հենադաշտ ստեղծել: Այդ նպատակով 1201թ. հարված է հասցվում Կոտայք գավառի ուղղությամբ (տես քարտեզը):

Կոտայքի դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր էին հաջողությունը դեպի հարավ զարգացնելու համար: Բացի այդ, արևելքից կրեանցվելին Այրարատ նահանգի ամրարաքսյան գավառները զավթած հակառակորդի ամրությունները՝ պայմաններ ստեղծելով հետագայում Վասպուրական-Տուրութերան-Բարձր Ջայք գծով ակտիվ գործողություններ վարելու համար:

Կոտայքյան արշավանքի (1201թ.) ընթացքում Զաքարյանների գլխավոր հաջողությունն է դարնում Բջնիի ազատագրումը: Պահլավունի իշխանները ռազմարվեստի ամենախիստ պահանջների համապատասխան ամրացրել էին բերդը, որի գրավումը նշանակալի էր մի շարք հիմնահարցեր լուծելու համար.

- Բջնին ինքնին հզոր բերդ էր և գերիշխում էր շրջակայքի վրա,
- Կոտայքում ամրացած հակառակորդը սպասնում էր Արագածոտնի ու Գեղարքունիքի ազատագրված տարածքների (ռազմավարական թևերի) անվտանգությանը,
- Լային Բջնին հարավային ուղղության համար ռազմահենադաշտի վերածելու բոլոր նախապայմանները:

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐՈՒՂԱԹԹՅԱՆՆԵՐԸ 1203 թ.



## Արարատյան դաշտի ազատագրումը

Արշավանքը վարպիւմ է ռազմավարական երկու ուղղություններից: Արագածոտնից (դեպի հարավ) ու Կոտայքից (գլխավոր հարվածը դեպի հարավարևմուտք, իսկ աջակցող հարվածը՝ հարավ) հարձակում վարող Զաքարյան-Ների զորագնդերն արագորեն հսկողության տակ են առնում Վրարատյան դաշտի հյուսիսային մասն ու հասնում են Արաքս գետի ափը (տե՛ս քարտեզը):

Եթեր ուղղություններով հասցվող հարվածները հակառակորդին զրկում են հայկական ուժերի հարձակումը կասեցնելու հնարավորությունից: Դամարթեք հակաքայլեր ծեռնարկելու հնարավորությունից զրկված հակառակորդը սկսում է ուժերը հետ քաշել: Աստիճանաբար նրա զորքերը կենտրոնանում են Դվինում:

## Դադրանակը

Դեպի Դվին հայ-վրացական զորքի առաջխաղացմանը զուգընթաց, հակառակորդի դիմադրությունն աճում է: Որոշվում է նախքան վճռական հարվածը հասցնելը հայկական զորագնդերը միավորել Զաքարտ Զաքարյանի հրամանատարության ներքո: Մարտավարական իրավիճակին համապատասխանող այս նոտահացումը տալիս է սպասված արդյունքը:

Արշավանքի ելած ուժերը միավորված են, երբ հակառակորդը մի վերջին փորձ է անում կասեցնել Զաքարյանների առաջխաղացումը: Անբերդից ու Բշնիից քշված զորամասերը, որոնք, պատմիչների պնդմամբ, զբաղված են քարավանների քալանով, միանում են Դվինից Եկած զորքին: Իրենց ուժերը վճռական ճակատամարտի համար բավարար համարելով՝ նրանք որոշում են քաղաքից հյուսիս-արևմուտք ընկած բաց տարածքում հանկարծակի գրոհով պարուտթյան նատնել հարավ արշավող հայոց բանակին (տե՛ս քարտեզը):

Զաքարեն հերթական անգամ հաղթում է հակառակորդին և պաշարում Դվինը: Անարիկ ամրություններով շրջապատված քաղաքի գրավումը դժվարին և երկողմանի հյուծիչ գործ էր: Արու-Բաբրից օգնություն ստանալու հնարավորություն չունենալով հանդերձ՝ Դվինում պատսպարված թշնամու զորքը շարունակում է հուսահատ դիմադրությունը և, ի վերջո, հանձնում է քաղաքը:

Այսպիսով, Զաքարյաններին հաջողվում է ազատագրել Դվինն ու հսկողության տակ առնել ամբողջ Վրարատյան դաշտը: Ներթական անգամ ջախջախվում են Ալտրպատավանի ու Գանձակը զաքարած ամիրայության զորքերը, որոնք կորցնում են հակամարտության ընթացքում ռազմավարական նշանակություն ստացած բարեբեր շրջանները:

Դվինի ազատագրումը Զաքարյանների առջև բացում է Երկպառակտչական պատերազմներով թուլացած ամիրայության զորքերից Կապանն ու Նախճավանն ազատագրելու հնարավորությունը:

## **ԲԱՍԵՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ**

### **1204/05թթ.**

**Լ**արավում հաջողության հասած Զաքարե Զաքարյանի ուղադրությունն աստիճանաբար սեռվում է արևմուտքում ծավալվող զարգացումների վրա: Արու-Բաքրի զորքի կրկնակի ջախջախումից և Շամքորի ու Դվինի պես կարևոր հենակետերի ազատագրումից հետո պայքարի գլխավոր խոչընդունում է մնում Իկոնիայի սուլթանությունը:

## Չորրորդ խաչակրաց արշավանքը

Երրորդ խաչակրաց արշավանքը և Կիլիկիայում ու Խսավիայում Լևոն Բ-ի տարած հաղթանակները նկատելի հարված էին հասցրել Իկոնիայի սուլթանությանը, սակայն այն շարունակում էր իր դիրքերը պահել Փոքր Ասիայի գգալի մասում:

Օգտվելով Չորրորդ խաչակրաց արշավանքի ընթացքում (1204թ.) Բյուզանդական կայսրության պարտությունից, որի մեջ մասում՝ արևմտյան նահանգներում, ստեղծվում է Լատինական կայսրությունը (1204-1261թթ.) Կոստանդնուպոլիս մայրաքաղաքով, Իկոնիայի Ռուբր ադ-Դին Սուլեյման Բ սուլթանը<sup>1</sup> (1196-1204/05թթ.) որոշում է պատերազմ սկսել արևելքում: Նա իր ռազմական ուժերը տեղափոխում է արևելք. բյուրքական հսկայական բանակը կենտրոնացվում է Բասենի դաշտում: Նա մտահոգված էր, քանի որ Երասմանձորում հաջողության հասած Զաքարյանները «Վտանգավոր» հարձակումը շարունակում էին Արաքսի հոսանքին հակառակ՝ դեպի արևմուտք: Դայկական զորագնդերը հարավից թևանցել էին Վանանդը և օրախմոդի դարձել Կարսի ազատագրումը:

Նախքան ռազմական գործողությունների ծավալումը, սուլթանը յուրովի է պատերազմ հայտարարում: Վրաց արքունիք է ուղարկվում հատուկ դեսպանություն՝ Թամար թագուհու համար վիրավորական նամակով: Սուլթանից ստացած հրահանգի համաձայն, դեսպանն իրեն կտիհաբար է պահում: Նա իր վարքագնդը ամեն կերպ ձգտում է հայ-վրացական կողմին դրդել պատերազմի: Զաքարյան, չիանդուրելով դեսպանի անպատկառությունը, այնպես է հարվածում վերջինիս, որ նա ընկնում է «ինչպես նահացած»:

**Պատմական տեղեկանք.** «(Ռուբր ադ-Դինը) ուղարկեց թագավորի<sup>2</sup> մոտ դեսպան, և տվեց գիր, որում գրված ուներ այս պատկեր... «Աշխարհի բոլոր կողմերի տիրապահից<sup>3</sup>: Բոլոր կանայք իհնար են, և դու, որ հրամայել ես սուր վերցնել: Արդ, ուղարկել եմ իմ ամբողջ զորքը, որ ոչնչացնեմ այդ երկիր բոլոր տղամարդկանց...»

Եվ երե եկավ (սուլթանի) դեսպանը ու տարան թագավորի մոտ, Թամարի առաջ, տվեց գիրը և առաջ գալով սկսեց ասել ոչ պատշաճ խոսքեր. «Եթե ձեր թագավորը թողնի իր հավատը, սուլթանը կազմի նրան կնության, իսկ եթե չթողնի հավատը, կլինի սուլթանի հարցը»:

Որովհետև (դեսպանը) խսոքերը ասում էր ամբարտավանությամբ, առաջ եկավ Զաքարյան ամիրսպասալարը և ծեռքով այնպես հարվածեց:

<sup>1</sup> Տես ռազմական տերմինների բառարան:

<sup>2</sup> Պատմիչը նկատի ունի Թամար թագուհուն, որն այս դեպքում հանդես է գալիս որպես ինքնակալ:

<sup>3</sup> Ռուբր ադ-Դինը նկատի ունի իրեն:

Ծրա դեմքին, որ ընկավ ինչպես մահացած ու մնաց: Եթի քաշեցին ու ...ուշքի եկավ, Զաքարիան ասաց. «Եթե դեսպան չլինեիր, արդար էր, որ մաս լեզուի կտրվեր, և հետո՝ գլուխոյ, կտի համարձակությանը համար: Այժմ ավելորդ է խոսքը: Այս գիրը տուր նուքայինին (Ռուբը աղ-Դինին) և ասա. մենք պատրաստ ենք կռվելու և հանդիպելու (քեզ հետ), բոլ Սատծու դատաստանը լինի»:

**«Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», էջ 431-433**

Միևնույն ժամանակ, ինչպես նշում են պատմագիրները, Զաքարե շահնշահը արժանապատվորեն է ընդունում մարտահրավերը:

Ժամանակ չկորցմելով՝ Զաքարեն գորահավաք է կազմակերպում:

**Պատմական տեղեկանք.** «Այնժամ կոչեցին Այնկողմի ու Այսկողմի գորականներին՝ Նեկոփսիայից մինչև Կարուբանդ, և հակավեցին Զավախորում: Առաջամարտիկը ամիրսպասալար Զաքարիա Երկայնարագուն էր... Զորքերը շարժեցին Բասիանի (Բասեն) կողմերը»:

**«Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», էջ 433**

Ուժերը համախմբելով՝ հայ-վրացական բանակը համարձակորեն շարժվում է դեպի Բասենի դաշտ, որտեղ հասել ու բանակ էր դրել Ռուբն աղ-Դինի հսկայական գործը:

**Պատմական տեղեկանք.** «Եվ (Տոնականի կամ ճառընտիրի) գրության ավարտման ժամանակ (1204/05թթ.), Սեբաստիայի սուլթանը, հավաքելով ամիուն բազմություն... հասավ Թեղորսուայրին (Կարին) և այս տեղից կամենում էր ամցնել Յայոց և Վրաց աշխարհը: Եվ նա բոլորովին մոռացել էր Աստծուն և, հույսը դնելով իր նանրության վրա՝ ուզում էր ավարի առնել ամբողջ այդ աշխարհը»:

**Մշտ Առաքելոց վանքի ճարդնորդի հիշատակարան**

## Ճակատամարտը


Մեծաթիվ հակառակորդի դեմ տասնյակ ճակատանարտեր տված գորավարին չի վկատեցնում Ռուբն աղ-Դինի բանակի մեծաթվությունը: Անհրաժեշտ բոլոր միջոցառումները ծեռնարկած դաշնակիցների բանակն անմիջական շփման մեջ է մտնում հակառակորդի հետ:

Մինչդեռ հակառակորդի գորքի մարտական պահպանությունն անբավարար էր, որը Ռուբն աղ-Դինի մարտավարական սխաներից պետք է համարել: Այս պայմաններում Զաքարիան որոշում է գորաթերի բաժանած և մարտակարգ

Ընակվորած զորքը հակառակորդին մոտեցնել հնարավորինս անաղմուկ: Դաշնակիցների հրամանատարությունը ձգտում է մոտենալ հակառակորդին, որպեսզի մոտ տարածությունից գրոհելու և նախքան հակառակորդի սպառագինվելու ու ճարտակառ կազմելու նախաձեռնության հնարավորություն ստանա:

Սակայն հակառակիրդը պատահականորեն տեղեկանում է հայ-վրացական գրագնդերի առաջխաղացման մասին և հասցնում սպառազինվել ու առաջապահ ուժերի կողմից վարվող մարտի ընթացքում մարտակարգ ծևավորել (տես սխ. 1): Այդուհանդերձ, համկարծակի գրողը նաև համուն է նպատակին, քանի որ նախքան գլւավոր ուժերի հետ ընդհարման մեջ մտնելը, դաշնակիցներին հաջողվում է օշաբչախել հակառակորդի առաջապահ ուժերի մի մասին:


## Ախեմա 1



Հայ-վրացական բանակի մարտակարգը Բասենի ճակատամարտի սկզբում

Առաջինը մարտադաշտ հասած հայ-վրացական հեծելազորն ամբողջ ճակատով գրոհում է և մինչև հետևազորի գնդերի բացազատումն իր վրա վերցնում հակառակորդի գլխավոր ուժերի հակագրոհի անդրադարձնան խնդիրը: Գրեթե հավասար մարտը շարունակվում է մի քանի ժամ (տես սխ. 2): Այդ ընթացքում հակառակորդի մարտիկներին հաջողվում է խոցել հեծելազորի մարտակարգում գործող իվանե Զաքարյանի և հայոց ու վրաց ազնվականների մի շաքը այլ ներկայացուցիչների ծիերին: Սակայն հակառակորդի հետևազորի դեմ մարտը իվանե շարունակում է հետևակի կազմում: Իրենց հրամանատարի կողքից չեն հեռանում առանց ծիու մնացած մյուս քաջերը ևս:

Սխեմա 2



Բասենի ճակատամարտը (1204/5)թ.

Հայ-վրացական բանակի մարտակարգի կենտրոնում իրարանցում է սկսվում, քանի որ Զաքարյան իշխանի համարձակությունից ոգևորված հեծյալները շտապում են օգնել իրենց հրամանատարին և խմբելով նրա շուրջը՝ սկսում են խոշընդուել հետիոտն մարտնչողներին:

Հակառակորդ փորձում է օգտվել բարենպաստ մարտավարական իրավիճակից ու մարտի ընթացքում բեկում նոցնելու հույսով հակագրոհի և անցնում կենտրոնում:

## Հաղթանակը

Իրավիճակն օրհասական էր, երբ Հայոց և Վրաց զորքն իրականացնում է միջնադարի ռազմարվեստում հազվագյուտ և համերժ վերախմբավորում:


Շարունակվող մարտի պայմաններում հակառակորդի գերազանցող ուժերի հակագրոհն անդրադարձնելուն զուգընթաց մարտակարգի կենտրոնում մարտնչող հեծյալների մի մասն իշնում է ձիերից և միանում հետևակայիններին (տես սխ. 3): Փաստորեն, ճակատամարտի երկրորդ փուլում դաշնակիցները մարտը վարում էին «դասական» մարտակարգով, երբ թևերում կենտրոնացված հեծելազորն ապահովում է կենտրոնի հետևակի գործողությունները: Բացի այդ, կենտրոնում ծավալված թեժ մարտի պայմաններում հետևակի մարտակարգ ձևավորող զորամասերի վերախմբավորմանն աջակցելու նպատակով աջ թևում Զաքարե շահնշահը և ձախ թևում Դավիթ Սոսլանը<sup>1</sup> հեծյալ զորամասերը հեռացնում են կենտրոնից:

Հեծյալ զորամասերի վերախմբավիրում հետևանքով կենտրոնի ժամանակավոր թուլացումը հակառակորդին որոշ չափով առաջանալու հնարավորություն է տալիս: Դրա հետևանքով թևերում նոր զորիի նախապատրաստվող հեծյալ զորամասերը հայտնվում են սանդղածն դարձած մարտակարգի առաջ քաշված դիրքում ու երկու կողմից էլ հնարավորություն են ստանում թևանցում սկսել:

Աքցանի մեջ հայտնված թյուրքական զորքի թվային գերազանցությունը դադարում է եական դեր կատարել, քանի որ թևանցման պահից սկսած նրանց մեջ մասը խռնվում է իրենց զորքի մարտակարգի կենտրոնում և արհեստականորեն զրկվում մարտին ակտիվորեն մասնակցելու հնարավորությունից: Սկսվում է մարտակարգ ձևավորել չկարողացող թյուրքական զորամասերի ջախջախումը, որը բավական երկար է տևում:

<sup>1</sup> Թամար թագուհու երկրորդ ամուսինը:

### Ախեմա 3




## Բասենի ճակատամարտը (1204/5)թ.

**Պատմական տեղեկանք.** «Եվ հանկարծ զրբերի այնպիսի բազմություն ջարուեց, պարսւեց, ցրիվ եկավ, որ թվում էր, թե անծայրածիր անտառը հողով հանդերձ պոկվել էր ու փոլ եկել: Հազիվ թե որևէ տեղ նման բան եղի է: Ինչըան աչքը կտրում էր, ամենուր երևում էր անտառի նման զորք փախչող»:

**«Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», էջ 435**

Ազ և ձախ թերուում դաշնակիցները զգալի հաջողության են հասնում, որը վճռում է ճակատամարտի ելքը (տե՛ս սխ. 4): Խորացնելով հասցվող հարվածները՝ Զաքարեի ու Դավիթ Սովոլանի զորանասերն անցնում են շրջանցման: Դեռևալազորը սպառնում էր շրջապատել հակառակորդին:

## Սխեմա 4



Բասենի ճակատամարտը (1204/5)թ.

Անսպասելի ընթացք ստացած մարտի և շրջապատման ակնկալիքը խուճապային տրամադրություններ է առաջացնում հակառակորդի շարժերում: Նահանջ սկսած զորամասերը հայ-վրացական զորքի հարկածների տակ չեն կարողանում քաշվել դեպի ճամբար, և անկանոն նահանջը շուտով վերածվում է փախուստի:

Քետապնդումն ինքնուրույն մարտական գործողության է վերածվում: Քատկանշական է, որ այս փուլում հետիոտնացված զորամասերի մարտիկները կրկին նստում են իրենց ձիերը և մինչև ուշ գիշեր հետապնդումը շարունակում իրենց համար սովորակամ հեծելազորի մարտակարգով:

Այսպիսով, 1204/05թթ. Բասենի ճակատամարտում հայ-վրացական բանակը Զաքարէ Զաքարյանի և Դավիթ Սոսլանի գլխավորությամբ ծանր պարտության է նատնում Իկոնիայի սուլթան Ռուքն աղ-Դինի հսկայական բանակին՝ կիրառելով Երկկողմանի թևանցման ու Երկկողմանի շրջանցման զորաշարժերը: Ուշագրավ հնարքով արցանի մեջ հայտնված հակառակորդի թվային գերազանցությունը գրեթե անբռոջությամբ չեզզրացվում է և դադարում էական ազդեցություն ունենալ մարտավարական իրավիճակի վրա: Ինչպես նշում է պատմագիրը, «Ինչպես որ հաղթանակը Շամխորի ճակատամարտում լայն հնարավորություններ ստեղծեց Աստրապատականի կուսակալության գերիշխանության տակ գտնվող հայկական տարածքի ազատագրման համար, այնպես էլ հաղթանակը Բասենում ճանապարհ էր բացելու Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Շահիարմենների տիրապետության տակ գտնվող տարածքի ազատագրման համար»:

Իրենց հաղթանակով դաշնակիցները հակառակորդին զրկում են արևմտյան ուղղությունից առաջ շարժվելու հնարավորությունից: Ավելին, նոր հովհարածներ հարձակում իրականացնելու հնարավորություն է զնձեռվում: Հովհարածներ հարձակումը դառնում է Զաքարէ Զաքարյանի կիրառած ռազմարվեստի բնորոշ գիծը:

## **ՎԱՆԱԴԻ ԱՌԱՋՐՈՒՄԸ 1206/07թօ.**

**Բ**ասենի ճակատամարտում հկոնիայի (Ռում) սուլթանության գորքերի ջախջախումը կարևորագույն ռազմավարական հետևանքներով ռազմական մեծ հաջողություն էր: Դրանով չեղացացվում են արևմտյան ուղղության սպառնալիքները, ինչը թույլ է տալիս նախ՝ կենտրոնանալ արևելյան ուղղությամբ վարվելիք գործողությունների վրա, այնուհետև արշավելով հյուսիս՝ զբաղվել վանանդի ազատագրման խմբով:

## Արշավանքներ Խլաթի ամիրայության դեմ

Կարսի ազատագրման խնդիրը լուծելուց առաջ Զաքարեն որոշում է հարավում հուսալի թիկունք ձևավորել, որը բխում էր ստեղծված իրադրության պահանջներից և համապատասխանում 1180-ական թթ. մշակված ռազմավարության ոգուն: Կարերպում էր նաև այն հանգամանքը, որ Կարսի հզոր ամրություններում պատսպարված թշնամու կայազորը՝ գրկված լինելով իր սեւծուկ ցեղակիցներից օգնություն ստանալու հնարավորությունից, չեր կարողանալու երկար դիմադրել:

**Տեղեկանք.** 1100թ. Հարավային Հայաստանը (Խլաթ կենտրոնում) զավթված սեւծուկ Սուլթան ալ Կուրքին և նրա հաջորդները իրենց Շահ Արմեն էին կոչում: Դարավերջին նրանց ամիրայությունը Զաքարյանների հասցրած ծանր հարվածների արդյունքում քայլայվեց:

Արշավանքի ընթացքը հաջող էր, և Զաքարյան եղբայրների գլխավորած հայկական զորագնդերը սկզբից ևեր տիրանում են նախաձեռնությանը և հասնում մինչև Մանազկերտ ու Արճեց: Ամիրայության գլխավոր ուժերը չեն հանարձակվում դեմ դուրս գալ, որի հետևանքով, չնայած արշավանքի ակնհայտ հաջողությանը, նրանց զախշանել չի հաջողվում: Դաշտորի տարի Զաքարե շահնշահը հարկադրված է լինում ևս մեկ արշավանք իրականացնել այդ ուղղությամբ: Արշավանքը նաևամբ է հաջողում: Հայկական կողմը լուծում է իր առջև դրված խնդիրը. հակառակորդը հարկադրված անցնում է պաշտպանական ռազմավարության:

## Վանասի արշավանքը

Բասենի ճակատամարտին հաջորդած տարիների համար պայքարում Զաքարյաններին հաջողվում է Կարսը զավթած թյուրքական կայազորին զրկել օգնություն ստանալու բոլոր հնարավորություններից:

Հայկական բանակը պաշարում է Կարսն ու հուսալիորեն մեկուսացնում քաղաքն արտաքին աշխարհից: Յզոր ամրության գրիհը մեծաթիվ գրիերի պատճառ կարող էր դառնալ: Այդ պատճառով յոյւծող պաշարման ձևով մարտական գործողությունները շարունակելը նպատակահարմար էր: Դիմադրությունն աստիճանաբար անհեռանկար ու ինքնանպատակ էր դառնում, որը թյուրքական կայազորի հրանանտարին հարկադրում է քաղաքը հանձնել Զաքարե շահնշահին:

**Պատմական տեղեկանք.** «Երբ խնդիրը երկարեց ու (Կարսը զավթած կայազորի հրամանատարը) տեսավ, որ ոչ չէր օգնում, հաշտություն կնքեց պարտավորվելով ամրոցը հանձնել»:

**Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Յայաստանի հարավային շրջանները զավթած Շահ Արմենների ամիրայությունը խոր ճգնաժամի մեջ էր: Զաքարեն շտապում էր հարավային ուղղությամբ նոր հարվածով ազատագրել Երկրի կենտրոնական շրջանները: Կարսի ազատագրումից հետո, կրկին՝ հարվածների մի ամբողջ շարքով, ազատագրվում է Վանանդի մյուս մասը, ինչպես նաև Կարմիփորի և Արաքսի ավագանի ամրոցները:

Այսպիսով, Զաքարեի գլխավորությամբ Յայոց բանակը 1205-1207թթ. ընթացքում փայլում կերպով զարգացնում է Բասենի ճակատանարտում ձեռք բերված հաջողությունը: Կարսի ազատագրումն, իր հերթին, կարևոր մեկնակետ է դաշնում այնտեղից արևմտյան, հարավարևմտյան և հարավային ուղղությամբ լայմածավալ հարձակողական գործողությունների համար: Ազատագրվում են Վանանդը՝ Յայաստանի ամենամեծ քաղաքներից մեկը հանդիսացող Կարս կենտրոնով և Բասենի շրջակա գավառները: Յայկական զորագնդերը հասնում են Յայկական պար լեռնաշղթային:



Կարսի բերդը

**Պատմական տեղեկանք.** «(Զաքարյան Եղբայրները) բազմաթիվ հերոսական մարտեր մղեցին, որովհետև պարսիկների ու արաբների կողմից գրավված հայոց շատ երկրամասեր խլեցին նրանցից իրենց համար. (ազատագրեցին) Գեղարքունյաց ծովի շուրջ գտնվող զավառները՝ Տաշիրը, Այրարատը, Բջնի քաղաքը, Ղվիճը, Ամբերդը, Անի քաղաքը, Կարսը, Վայոց ձորը, Սյունյաց աշխարհը ու նրա շուրջ գտնվող բերդերը, քաղաքներն ու գավառները։ Դարկատու դարձրին նաև Կարին քաղաքը զավթած սուլթանին, ավերեցին պարսից ու Ատրպատականի շատ զավառներ. ամեն կողմից ընդարձակեցին իրենց սահմանները»։

**Կիրակոս Գանձակեցի, Դայոց պատմություն, Էջ 122-123**

# ԱՏՐՊԱՏԱԿԱՆՅԱՆ ԱՐԾԱՎԱՆՔՆԵՐԸ

## 1208թ. ԵՎ 1212թ.


### ՆԵՐԽՈՒԹՈՒՄԸ

1207թ. արշավանքի երկրորդ փուլը ևս հաջող էր հայկական կողմի համար: Ազատագրված տարածքներում ամրանալու նպատակով Զաքարիան տարեվերջին դադարեցնում է զորքի առաջխաղացումը: Այդ պահին տեղեկություն է ստացվում նաև Թամար թագուհու ամուսին՝ Դավիթ Սոսլանի մահվան մասին: Կենտրոնական Հայաստանն ազատագրելու նպատակով մեծ արշավանքի նախապատրաստում՝ գրադական Զաքարիան և Իվանեն միայն 1208թ. գարնանն են կարողանում ժամանակ գտնել ու մեկնել Գեգութ՝ ամուսնու մահը սգացող Թամարին ցավակցելու:

Զաքարիի բացակայության մասին տեղեկանալով՝ Հայաստան է ներխուժում մահմեդական տիհրակալներից Արտավետը (Արդարիլ) զավթած ամիրան: Գիտակցելով, որ Զաքարի շահնշահը հայկական հողերի ասպատակություններն անհետևանք չի թողնի, ամիրան որոշում է հարվածը հասցնել հայոց վերականգնված պետության մայրաքաղաք Անիի ուղղությամբ և արագորեն հեռանալ՝ իր հետ տանելով այնքան ռազմավար, որքան կարողանա:

Ընդունված ռազմավարության պահանջների համաձայն՝ առանց միասնական հրամանատարության մնացած հայկական զորամասերը խուսափում են ընդհարման մեջ ներքաշվելուց և միանում են նոտակա ամրոցների կայագորներին ու պատրաստվում դիմադրության: Գիտակցելով, որ հայկական զորագնդերի միավորումը բարդագույն խնդիրների առջև կարող է կանգնեցնել իրեն, ամիրան առաջխաղացումն արագացնելու նպատակով հրամայում է շրջանցել ճանապարհի ամրությունները: 1208թ. ապրիլին հակառակորդը հանկարծակի հայտնվում է մայրաքաղաքի պատերի տակ ու գրավում այն (տես քարտեզ 1):

ՊԱՅՄԱԿԱՆ ԳՐՈՒԹԻԹՅՈՒՆՆԵՐԸ 1208թ.



**Պատճական տեղեկանք.** «Թագավորը (Թամար թագուհին) Գեղութում էր, որովհետև սուրբ պասն էր: Երկու Երկայնաբազուկներն էլ թագավորի մոտ էին: Եվ երբ իմացավ այս մասին Արդավիլի (Արտավետ) սուլթանը<sup>1</sup>, քիստոնյաների նկատմամբ թշնամությունից նոյնական էր այս մասին: Իր գործականներին, եկավ ու ասերեց Անին, որովհետև գիտեր, որ Երկայնաբազուկները տանը չեն»:

**«Թագավիրների պատճությունն ու գովարանությունը», էջ 438**

Յոյակերտ Եկեղեցիներով հոչակված Անիի ավերումն իրականացվում է առանձնակի դաժանությամբ: Վայրագությանը զոյն է զնում ավելի քան 12 հազար մարդ: Թշնամու բանակի այս գործելակերպը պատահական չէր: Ամիրան ձգտում էր հայկական պետության մայրաքաղաքի ամայացումով սարսափ տարածել և հոգեբանորեն ճնշել հայերին:

## Առաջին պատասխանը

Խուսափելով հայկական գորագների կենտրոնացումից ու պատասխան միջոցառումներից՝ ամիրան հեռանում է իր Երկիրը: Ըստ նրա, ավերված մայրաքաղաքը բավարար ահազանգ էր դառնալու Զաքարյանների համար, որոնք Անիի վերանորոգումով գրադպելով՝ դադարեցնելու էին առաջխաղացումը:

**Պատճական տեղեկանք.** «Եվ Երկայնաբազուկները գնացին Անի ու սկսեցին պատրաստվել... Քարթեցիներին չտարան (արշավանքի), որ Արդավիլում եղողները գլխի չընկնեն: Դավաբարեցին Անիում ու շարժվեցին դեպի Արդավիլ: Անցան Գելաքունը (Գեղարքունիքը) և իշան Սիսիան, անցան Խուտափիրի կամուրջը<sup>2</sup> և ուղղվեցին Արդավիլ: Այնախի ժամ ընտրեցին, որ երբ լուսանար, կլիներ «աիդ», որ է նրանց զատիկը, այդ գիշերը պաշարեցին Արդավիլը»:

**«Թագավիրների պատճությունն ու գովարանությունը», էջ 438-439**

Դայկական կողմն այնքան մեծ արագությամբ է առաջ շարժվում, որ հակառակորդի հետախույզները չեն հասցնում նույնիսկ տեղեկացնել ամիրային սկսված արշավանքի մասին: Մրցնթաց ռազմերով Դայոց բանակը հայտնվում է Արդարիլի պատերի տակ և պատրաստվում վճռական հարվածի: Արշավանքի սկզբից ևեր հակառակորդը գրկվում է նախաճնշումություն ստանալու բոլոր հնարավորություններից:

<sup>1</sup> Դայտնի է, որ այս ժամանակ Արդարիլում սուլթան չկար: Դեղնակն ամիրային է սուլթան կոչում:

<sup>2</sup> Արաքսի վրայով գցված նշանավոր կամուրջներից մեկը:

Համեմատակիության հասնելու տեսանկյունից պահը ճշշտ էր ընտրված: Համարելով, որ Ամիի արշավանքի հետևանքները վերացնելը հայկական կողմից որոշակի ժամանակ է պահանջելու, իրեն «ապահովագրած» ամիրան պատրաստվում էր վայելել ձեռք զցած ռազմավարը, երբ Հայոց բանակը սկսում է պատասխան արշավանքը: Պարզվում է, որ հայկական վերականգնված պետության ուժերն այնքան կենսունակ էին, որ ստացված վերքերն անորելուն գուգընթաց ի վիճակի էին մեծամասշտար հարծակողական գործողություն իրականացնել Աստրապատականը զավթած ամիրայության տարածքում (Տես քարտեզ 1):

**Պատմական տեղեկանք.** «Երդ ձայն տվեց նրանց պիոծ հավատի ծայնարկում և հաճախեց մուեզինների կոչը, Երկայնարազուկները խթանեցին ձիերը, ամեն կողմից ներխուժեցին և առանց կռվի ձեռք զցեցին քաղաքը (Արդարիլը), և իրեն սուլթանին, նրա կանանց ու զավակներին, և սուլթանի ու քաղաքի ողջ հարստությունը»:

**«Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», Էջ 439**

Առավոտյան Արդարիլի դարպասները բացելուց քիչ անց, հանդուգն գրոհով հայոց հեջալ զորամասերը ներխուժում են քաղաք, որի ապշահար եղած կայազորը չի կարողանուն պատշաճ դիմադրություն ցույց տալ մեծարիվ հայկական բանակին: Խորհափ մատնված ամիրան ի վիճակի չի լինում կազմակերպել Արդարիլի պաշտպանությունը: Հայոց բանակը գրավում է Արդարիլը և գե-



Խորհափերին (Քարավագ) կամուրջը

րում ամիրային, նրա կանանց ու զավակներին: Դայկական կողմն Անհում հակառակորդի կազմակերպած կոտորածին նույն կերպ է պատասխանում: Արդարիլի մզկիթներում սպանվում է 12 հազար մարդ:

Զաքարեն պարտված հակառակորդից պահանջում է վերադարձնել Անիից թալանածը, որից բացի, որպես ռազմատուգանք խլում է նաև ամիրայի ու նրա պալատականների ամբողջ հարստությունը: Ռազմավարն այնքան շատ էր, որ արդեն իսկ ժամանակակիցները լեզենդներ էին հյուսել այս մասին:


**Պատմական տեղեկանք.** «Այնպես լցվեցին անքիվ հարստությամբ, ակով ու նարգարիտով, ոսկով ու արծաթով, ոսկյա ու արծաթյա անոթներով, հագուստով, գորգով ու ամեն տեսակ հարստությամբ այդքան հարստացած քաղաքի, որ պատմելը, իսկապես դժվար է: Լիացան ծիերով, ջորիներով, ուլտերով: Նրանց ունեցվածքը նրանց իսկ գրաստների վրա հազիվ բարձելով, բռնեցին ետդարձի ճամփան»:

**«Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», էջ 439**

## Երկրորդ պատասխանը

1208թ. արշավանքի ընթացքը հաջող էր հայկական կողմի համար, որը վերադարձի ճանապարհին մի շարք միջոցառումներ է իրականացնում Սյունիքում ամրանալու, իսկ հնարավորության դեպքում՝ ամբողջ նահանգն ազատգրելու ուղղությամբ: Արդարիլում կրած ստորացուցիչ պարտությունից հետո հակառակորդն այնպիսի խուճապի էր մատնվել, որ իրական իիմքեր էին ստեղծվել ամբողջ Սյունիքի ազատագործությունը ավարտելու համար: Սակայն մինչ այդ, հունիսին (Արդարիլից վերադառնալուց գրեթե անմիջապես հետո) Զաքարեն իրականացնում է այն հարձակումը, որը նախապատրաստվում էր գարնանը (տես քարտեզ 2):

Ուստի գործողությունը 1208թ. վերահսկված է 1209թ.



Այս անգամ հարձակման թիրախը Խլաթը զավթած (1207թ.) Դյուսիսային Միջագետքի Այյուբյան ամիրայությունն էր: Դայկական զորագնդերն ազատագրում են Բագրեսանդն իր շրջակայքով, հարձակումն ուղղում դեպի Տուրութերանի հյուսիսային գավառները: Այստեղ ևս դիմադրությունը հաղթահարվում է, և զգալի տարածքներ են ազատագրվում: Դաշորդ տարի նոր հարձակման ուղղություն են ընտրվում Մանազկերտն ու Վրճեցը:

Իրադրությունն առավել քան նպաստավոր էր, եթե նկատի ունենանք, որ թշնամին չեր համարձակվել դուրս գալ իր զավթած Խլաթ քաղաքից, որը պաշարում է առաջխաղացումը հաջողությամբ շարունակող հայկական բանակը: Խլաթի պաշարման ընթացքում Իվանն Զաքարյանն անզգուշության պատճառով գերվում է, որը Զաքարեին հարկադրում է դադարեցնել արշավանքը և Իվանեին ազատելու նպատակով Առիհադ ամիրայի հետ խաղաղություն կնքել:

## **Երրորդ պատասխանը**

1211թ. Զաքարեն ևս մեկ արշավանք է իրականացնում դեպի Ատրպատական: Այն հայոց ռազմարվեստի փայլուն օրինակներից մեկն է և պսակում է Զաքարե շահնշահի քսանամյա զորավարական գործունեությունը: Նախճավանի ու Զուղայի վրայով հայոց բանակը շարժվում է դեպի Արդարիլ (տե՛ս քարտեզ 3):


**Պատմական տեղեկանք.** «Վեց հարյուր վարսուն թվականին (1211/1212թթ.) վերցրին (Զաքարիան և Իվանեն) նաև Սյունիքը, Որոտնը, Բորոտանը, Բղենը, Բարկուշատը<sup>1</sup>: Թեանտն ու տեղի ունեցավ տարբեր թվականների, սակայն բոլորն էլ նրանք ու իրենց որդիները գրավեցին և մեր երկիրն ազատագրեցին սելջուկ-թուրքեն լծից»:

**Ստեփանոս Օռբեյան, Սյունիքի պատմություն, գլ. ԿԶ**

Դականարտության սկզբնական փուլում մարտավարական առումով բարենպաստ տեղանքում հակառակորդին ջախջախելու նպատակով հարվածը դեպի Մարանդ ուղղելը շահնշահի զորավարական տաղանդի առաջին վկայությունն է:

<sup>1</sup> Սյունիք նահանգի բերդերը:

ԱՐԵՎԱԿԱՆ ԳՐԱԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ 1211-1212 թթ.



Արշավող գորքի թևերն ու թիկունքն անվտանգ դարձնելու նպատակով Զաքարեն Մարանդում բանակը բաժանում է մի քանի մասի: Դակառակորդի գլխավոր ուժերի կողմից կազմակերպված դիմադրության հանդիպելու ոչ մեծ հավանականության պայմաններում այս որոշումն առավել ճիշտն էր: Ինքնուրույն գործող զորագնդերը կարողանում են միաժամանակ մի քանի խնդիր լուծել: Արդյունքում՝ կարծ ժամանակում գրավվում է Սարանդի ամբողջ շրջակայքը: Այդ հնարամիտ որոշումը հակառակորդին գրկում է ռազմավարական նախաձեռնությունը խլելու բոլոր հնարավորություններից (տե՛ս քարտեզ 3):

Սարանդից հետո հարձակումն ուղղվում է դեպի Թավրիզ, ապա՝ Լազվին: Սրբնաց ռազմերորդ Զաքարիան մարտական գործողությունները տեղափոխում է Արդարիլի շրջակայքը:

**Պատմական տեղեկանք.** «Եվ այսպես ի վերուստ հաջողվեց նրանց Զաքարյան երայրներին» իրենց հաղորդությունը նրանց քաջութան համբավը տարածվեց շատ երկներ և շատ ազգեր, որը սիրուց, որն էլ երկուողից, հարկառու դարձան նրանց: Վերաշննվեցին բազմաթիվ վանքեր, որ վաղուց ի վեր ավերվել էին արաբական ավազակների կողմից»:  
**Կիրակոս Գանձակեցի, Դայոց պատմություն, էջ 123**

Այս անգամ ևս հաջողությունը Դայոց բանակի կողմն էր, որը մեծ ռազմավարով և, գլխավորը, հակառակորդի հարձակողական «պոռթկումը» վերջնականապես վերացնելուց հետո վերադառնում է:

Այսպիսով, Զաքարէ շահնշահի գլխավորությամբ Դայոց բանակը 1208թ. գարնանը հակահարձակման է անցնում, ռազմական գործողությունները տեղափոխում է Արդարիլի ամիրայության տարածք, պարտության մատնում հակառակորդի բանակը և գրավվում Արդարիլը, որտեղ գերվում է թշնամի ամիրան: Աստրապատականում տարած հաղթանակը նախապայմաններ է ստեղծում հարավարևմտյան ուղղությամբ արշավանքի իրականացնան համար, որն իր հերթին հնարավորություն է տալիս նոր հզոր հարձակում իրականացնել դեպի Աստրապատական: Այս փուլում Զաքարի Զաքարյանը մեծացնում է հիվարածն<sup>1</sup> հարձակումների ծավալները՝ դրանք վերածնելով ռազմավարական միջոցառման: Դավարածեական հարձակումների կիրառումը Զաքարիայի կողմից նորություն էր հայոց ռազմարվեստում:

<sup>1</sup> Տե՛ս քարտեզ:

**Պատմական տեղեկանք.** «Նրանք (Զաքարեն և Իվանեն) մեծ ջանքեցին Հայոց աշխարհն ազատեցին պարսիկներից<sup>1</sup>, գրավեցին Առանից մինչև Ներքին Բասեն, Բարկուշատից մինչև Մժնկերտ<sup>2</sup>: Վերցրին Կարսը, Վաղարշակերտը<sup>3</sup>, Կազկանքը<sup>4</sup>, Սուլր Սարին, Անին, Անբերդը, Բջնին, Գառնին, Կվին մայրաքաղաքը, Գարդմանը<sup>5</sup>, Գանձակը, Զարեքը<sup>6</sup>, Շերքը<sup>7</sup>, Շամքոր, Շաքին<sup>8</sup>, Պարտավը, Զարբերդը<sup>9</sup>»:

*Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, գլ. ԿԶ*

<sup>1</sup> Խոսքը ոչ թե պարսիկների, այլ Իրանում գերիշխանություն հաստատած սելջուկների մասին է:

<sup>2</sup> Մժնկերտ (Մամանակերտ) գյուղ և թերություն է Արեւյամբ գավառի մեջ:

<sup>3</sup> Վաղարշակերտ քաղաք Այրարատ նահանգի Բագրևանդ գավառում: Քաղաքի անոնը հետազայռ աղավաղպելով դարձել է Ալաշկերտ:

<sup>4</sup> Նշանալոյն կեն ավան էր Այրուատ նահանգի Արշարումիք գավառում Արաքսի հովտում:

<sup>5</sup> Մեծ Հայքի Ուտիշ աշխարհի Գարդմանաձոր գավառում է Գարդման ամրոցը:

<sup>6</sup> Զարեք թերող գանվում էր Փախիսոս գավառում:

<sup>7</sup> Քերպ (Քերեր) թերու և համամուն գավառ Աղվանքում Կուր գետի ծախս ափին:

<sup>8</sup> Շաքի՝ քաղաք բուն Աղվանքում:

<sup>9</sup> Զարբերդ ամրոց Արցախում Տրտու գետի և նրա Թղորի վտակի միջև եղած մի բարձր ժայռի վրա:

## ՊԱՏԵՐԱԿՄ ԶԱԼԱ ԱԴ-ԴԻՆԻ ԴԵՄ 1226-28ԹԹ.

**13**-րդ դարի սկզբին մոնղոլական ցեղերը միավորվում են Չինգիզ խանի (Թեմուչին, 1206-1227թթ.) իշխանության ներքո և կարծ ժամանակում իրենց իշխանությունը տարածում հսկայական տարածքներում: Ընդարձակելով նվաճումների աշխարհագրությունը՝ մոնղոլներն արշավում են դեպի Միջին Ասիա, որտեղ նվաճում են Խորեզմի շահ Ալա ադ-Դին Մուհամմադի տիրույթները: Մոնղոլների դեմ պատերազմը գլխավորում է շահի ավագ որդին՝ Ջալալ ադ-Դինը, որը 1225թ. արագորեն նվաճում է Իրանի հյուսիսարևմտյան և հարեւան տարածքներն ու ձգուում դրանք Վերածել մոնղոլների դեմ վարվելիք արշավանքների մեկնակետի:

**Պատմական տեղեկանք.** «Նախապես հիշատակված հյուսիսարևելյան ազգը, որը թարար էր կոչվում, նեղեց խորասանի սուլթան Ջայալադինին ու ջարդեց նրա զորքը, կործանեց նրա երկիրը: Նրան համեցին (և) փախստական գցեցին Ալվանից աշխարհը: Նա եկավ Գանձակ քաղաքը ու գրավեց այն: Պարսիկներից, արաբներից, թուրքերից անչափ զորք հավաքեց իր համար ու եկավ Հայոց աշխարհ»:

**Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 163**

## Զալալ աղ-Դինի 1225թ. արշավանքը

1225թ. աշնան սկզբին Զալալ աղ-Դինը 60 հազարանոց բանակով ներխուժում է Հայաստանի արևելյան շրջաններ, գրավում Դվինը: Գառնի ամբողջ մոտ տեղի ունեցած մարտում հայկական առաջապահ գորամասը հերոսական դիմադրություն է ցուցաբերում, սակայն հայ-վրացական հիմնական ուժերը, մեծ կորուստներ կրելով, չեն կարողանում կանգնեցնել թշնամուն, և Զալալ աղ-Դինի զորքերն ասպատակում են Հայաստանը՝ ավերելով Գանձակը, Լոռին, այնուհետև, անցնելով Կուր գետը, մտնում Վրաստան և պարտության մատնելով վրացական բանակին, գրավում են Տփղիսը: Զավթած քաղաքներում կայազրոներ թողնելով՝ Զալալ աղ-Դինը հեռանում է Քիրման (Կրման):

## Առաջին հաղթանակը

Խորեզմյան բանակն այնպես էր ամայացրել Վրաստանի կենտրոնական շրջանները, որ Տփղիսում թողնված կայազրի պարեմավորման գործում խնդիրներ են ծագում: Զալալ աղ-Դինի վեզիր և Վրաստանում տեղակայված զորքերի հրամանատար Շերեֆ ալ-Սուլթան ճախսածենում է պարեն հայրայթելու գործը: Զգտելով մեկ հարվածով երկու խնդիր լուծել՝ նա ավարառության նպատակով զորագունդ է ուղարկում Հայաստան՝ Կարինի ուղղությամբ: Արշավախմբի խնդիրն էր սնունդ հայրայթելուն զուգընթաց ավերել ճանապարհին ընկած բնակավայրերն ու պայմաններ ստեղծել այդ գավառների գրավման համար:

Իրենց բնորոշ եռանդով խորեզմյան զորագները կատարում են առաջադրանքը և հարուստ ավարով ճանապարհ ընկնում դեպի Վրաստան: Սակայն վերադարձող խորեզմցիներին անակնկալ էլ սպասում: Խլաթի տիրակալ ալ-Աշրաֆի<sup>1</sup> զորքերը, որոնց մեծ մասը Խլաթի ու շրջակա գավառների հայկական զորագներն էին, Հուսան աղ-Դին Ալի ալ-Մառուսիլիի գլխավորությամբ դարան են գցում ասպատակներին ու գլխովին ջախջախում:

Կարինից վերադարձող զորամասերի պարտության և Տփղիսի կայազրությունների մասին տեղեկացած Զալալ աղ-Դինն արագ ավարտում է գործերը հարավում և 1226թ. ամռան վերջին հարկադրված վերադառնում Տփղիս:

<sup>1</sup> Ծահ Արմեն Ալ-Մալիք ալ-Աշրաֆ Այյուբյան Իվանե Զաքարյանի փեսան էր, նրա դստեր՝ Թամբայի ամռանին:

## 1226թ. արշավանքը

Լավ իմանալով, որ Յայաստանում իշխանություն հաստատելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարտության մատնել հայկական իշխանական տների գերազական Զաքարյաններին, Զալալ ադ-Դինը նոր արշավանքի թիրախն է դարձնում նրանց տիրությունների կենտրոնական շրջանները՝ Շիրակն ու Կանանդը: Խորեզմյան հսկայական բանակը Վրաստանից մտնում է Յայաստանի հյուսիս-արևելք և ճանապարհին ամրոցների պաշարնան վրա ժամանակ չծախսելով ներխուժում Շիրակ:

Արագացված ռազմերթով Անի հասնելու նպատակը հայկական կողմին հանկարծակի բերելն էր, որը, սակայն, մասսամբ է հաջողվում: Դարեր շարունակ անկանոն մարտավարություն կիրառող հայկական զորագնդերին դժվար էր հանկարծակի բերել, մասնավանդ որ Շիրակում հայկական զորքի հրամանատարությունը ստանձնել էր բազմափորձ զորավար Իվանե Զաքարյանը:

Զալալ ադ-Դինի բանակը 1226թ. սեպտեմբերի սկզբին պաշարում է Անին: Սուլթանը չէր կասկածում իր հաղթանակին և զորքերի առջև նոր էլ ավելի մեծ խնդիրներ է դնում: Չսպասելով Անիի պատերի տակ ծավալված գործողությունների ավարտին և զգտելով նախքան ձմեռնամուտը հնարավորինս ընդարձակ տարածքներ գրավելով հաջողությամբ ավարտել պատերազմաշրջանը՝ նա ուժերի մի մասն ուղարկում է Վանանդ, որտեղ պաշարում է Կարսը:

Անիի ու Կարսի պաշտպանները համար դիմադրություն են ցույց տալիս խորեզմյան զորքերին, ինչը վերջին տարիների հաղթանակներից հետո անակնկալ էր նրանց համար: Իրադրությունն էապես չի փոխում նաև պարսպակործան մեքենաների կիրառումը:

**Պատմական տեղեկանք.** «Զալալ ադ-Դինը վերադարձավ Քիրմանից Տփիլս և այնտեղից գնաց Անի քաղաքը: Նա պաշարեց (Անին) և զորքի մի մասն ուղարկեց Կարս քաղաքը: Դրանք երկուսն էլ այդ երկորի ամենաամուր և անարիկ բերդերից են: Նա եկավ, պաշարեց, կրիվ մնեց այնտեղ եղած զորքերի հետ: Նա քարանատ մնեքենաներ դրեց և համար պայքար սկսեց երկուսի համար էլ... (Բաղադրների կայազորները) մեծ ջամփեր թափեցին պաշտպանվելու համար, վախենալով, որ իրենց հետ կանեն այն, ինչ որ նախապես արել էին իրենց հավատակիցների հետ Տփիլսում»:

**Իր ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Հնուտ պաշտպանությամբ հերոս քաղաքների պաշտպանները խափանում են հակառակորդի մտահացումը: Ականատես պատմիչ Սամուել Անեցին նկարագրում է, թե ինչպես Այծեմնիկ անունով մի հայ աղջիկ քարեր էր գլորում Անիի պարիսապը մագլցող թշնամու զինվորների գլխին:

## Դադական պաշտպանությունը

Մեկ և կես ամիս շարունակ խորեզմյան բանակն ապարոյուն ջանքեր էր թափում գրավելու Ամին ու Կարսը: Արագ հաղթանակի հասնելու հեռանկար չունեցող Զալալ ադ-Ղինը որոշում է ուժերի մի մասով վերադառնալ Տփոյս և այնտեղից արշավել Արխագիս, և անողոքաբար անայացնում է երկիրը:

Չհամարձակվելով նորից հարձակվել իվանեց Զաքարյանի գլխավորությամբ հուսալի պաշտպանության պատրաստված Շիրակի ուղղությամբ՝ նա որոշում է Արտպատական վերադառնալ խլաթի ամիրայության տարածքով: Խլաթում գլխավոր ուժերին աջակցելու նպատակով Զալալ ադ-Ղինը հրամայում է դադարեցնել Ամինի ու Կարսի պաշարումը, որը նրա բանակի առաջին մեջ պարտությունն էր:

1226թ. նոյեմբերի 6-ին Զալալ ադ-Ղինի գրությանը պաշարում են Մանազկերտը: Սուլթանն այս անգամ ևս որոշում է չքավարարվել միայն մեկ քաղաքի պաշարումով և ուժերի մեջ մասն ուղարկում է Խլաթ, որը պաշարվում է նոյեմբերի 8-ին:

Նորևս 1054թ. Տուղիլ թեգի հորդաների առաջնադացումը կասեցրած Մանազկերտի հզոր ամրությունները և երկար ժամանակ ազատագրական պայքարի առաջանարտիկների համարում վաստակած քաղաքի բնակչների առկայությունը էին, որ պաշարումը դյուրին չէր լինելու: Այդ պայմաններում ուժերը մասնատելու Զալալ ադ-Ղինի որոշումը մարտավարական սխալ էր: Նրա գրությանը կրկնվող գրությանը խլաթի պաշտպանները համար դիմադրություն են ցուցաբերում, և սուլթանն այստեղ նույնպես անհաջողության մատննում:

**Պատմական տեղեկանք.** «(Զալալ ադ-Ղին) անմշապես հարձակվեց, և սաստիկ կրիվ տեղի ունեցավ նրա և խլաթի բնակչների միջև: Նրա գործը հասավ քաղաքի պարսպին, սակայն շատերը սպասվեցին, ապա երկրորդ անգամ հարձակվեց և խիստ ընդհարվեց քաղաքի բնակչների հետ: Զորքը մեծ վնաս պատճառեց խլաթի բնակչներին, հասավ քաղաքի պարսպին, մտավ նրա արվարձանը և սկսեց կողոպտել, հափշտակելով կանանց: Երբ խլաթի ժողովուրդը այս բանը տեսավ, վրդովվեց և... կռվեց ու նրանց դուրս քշեցին քաղաքից»:

**Իրմ ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

## Չաղթանակների երկրորդ փուլը

Զալալ ադ-Դինի պարտությունները որակապես փոխում են ռազմավարական հրադությունը ոչ միայն Շայաստանում, այլև հարևան երկրներում: Իվանե Զաքարյանը հնարավորություն է ստանում ակտիվացնել պաշտպանությունը և օգնության հասնել Տփոխիս ազատագրման ծրագրեր մշակող վլա զորքերին: Շիրակի հայկական զորագնդերը ձմռանը եռանդուն աշխատանքներ են իրականացնում և 1227թ. գարնանամուտին ավատում Տփոխիս արշավանքի նախապատրաստումը: Մարտ ամսին սրբներաց հարձակումով հայ-վրացական ուժերին հաջողվում է ազատագրել Տփոխիս ու ոչնչացնել քաղաքում գտնվող հակառակորդի կայազորը: Պատժից չեն կարողանում խուսափել նաև Տփոխիս մահմեդականները, որոնց օգնությամբ Զալալ ադ-Դինը գրավել էր քաղաքը:

Շայկական զորագնդերի հաջողություններից ոգևորված ալ-Աշրաֆն էլ 1227թ. աշնան իր գնդերն է հանում արշավանքի: Խլաթի կուսակալ Շուսամ ադ-Դին Ալիի գլխավորությամբ Խլաթի գործերը գրավում են Խոյը, Մարանդն ու Նախճավանը:

Բնական է, որ 1190-1200-ական թթ. Շյուսիսային Շայաստանի ազատագրման ծրագրի ճարտարապետներից մեկը՝ Իվանե Զաքարյանը, չէր բավարարվելու ձեռք բերածով: Նա, առաջին արշավանքը կազմակերպելուց բացի, այլ մտահեցումներ էլ ուներ: Շակառակորդը դեռևս մեծարիվ էր, սակայն նախքան իրանում վարվող ռազմական գործողություններով զբաղված Զալալ ադ-Դինը կիասցներ հակաքայլեր ձեռնարկել, իվանե Զաքարյանի անվանի զորավարներից մեկը՝ Կասակ Խաղբակյանի որդի, մեծ իշխան Պոռշը, հրաման է ստանում ջախջախել Խորեզմի արքայազնի Դյինում թողած կայազորը: Նոր զորագունդը 1227թ. Վերջին կամ 1228թ. սկզբին ներխուժում է Դյին, ոչնչացնում այստեղի խորեզմյան կայազորը և մասնավորապես պատժում է քաղաքի այն մահմեդականներին, որոնք 1225թ. քաղաքի գրավումից հետո կոտորել էին տեղի հայերին:

Այսպիսով, 1126-28թթ. հայկական զորագնդերը մի շարք հաղթանակներ են տանում Շայաստան ու Վրաստան ներխուժած խորեզմյան զորքերի դեմ: Զալալ ադ-Դինի կայազորների դեմ վարվող մարտերն աչքի էին ընկնում համարձակ, առանձին դեպքերում հանդուգն հարձակողական գործողությունների առատությամբ, որը անկանոն ռազմարվեստի պահանջն էր:

Այս հաղթանակները խորեզմյան զորքերի դեմ պայքարը շարունակելու հաստատականություն են ներշնչում տարածաշրջանի մյուս տիրակալներին: Իկոնիայի սուլթան Ալա ադ-Դինի հետ դաշինք կնքած Ալ-Աշրաֆի զորքերը 1230թ. Երզնկայի մոտ տեղի ունեցած ծակատամարտում ծամր պարտության են մատնում Զալալ ադ-Դինին: Վերջինիս զորքերի ջախջախմանը մասնակցեցին նաև Կիլիկիայի հայկական թագավորության ու խաչակրիների զորքերը: Զալալ ադ-Դինն արևելյան ուղղությամբ մոնղոլներից և ծամր հարվածների ենթարկվելով՝ դիմում է փախուստի և Ամինի շրջակա լեռներում սպանվում է:

## ԻՇԽԱՆԱԲԵՐԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1236թ.

**Պ**ինգիզ խանի մահվանը հաջորդած ժամանակավոր անորոշությունը տևում է մի քանի տարի: Վերջապես, ճշտելով առաջնահերթությունները, մոնղոլական ցեղապետերի ժողովը 1235թ. որոշում է հետագա նվաճումների հիմնական ուղղությունները: Գրեթե միաժամանակ երկու զորապետեր առաջադրանք են ստանում արշավանքներ սկսել: Բաթուն զորքն առաջնորդում է դեպի Ռուսաստան ու Եվրոպա, իսկ Չարմաղանը՝ դեպի Հայաստան ու հարևան երկրներ:

## Մոնղոլների արշավանքները

Մոնղոլ զորապետերն արշավանքներին նախապատրաստվում էին այնքան մանրամասնորեն, որքան որ դա թույլ էր տալիս միջնադարյան ռազմարվեստը (ապատեղեկատվության տարածումից, առևտրականների միջոցով լրտեսությունից մինչև բազմապիսի պարսպակործան տեխնիկայի կիրառում): Մասնավորապես, տարածած ապատեղեկատվության արդյունքում, մոնղոլների արշավանքի սկզբում քրիստոնեական երկներում վստահ էին, որ Միջին Ասիայի ու Իրանական բարձրավանդակի մահմեդական պետություններն ավերածությունների մատնած մոնղոլներն արշավանքի են ելել թյուրքերի վրեժն առնելու համար և նրանց թշնամի չէին համարում:

Չարմաղանց ասպատակությունների ռազմահենադաշտ է դարձնում Մոլոյանի դաշտավայրը, որտեղից 1236թ. ամռան սկզբին ուժերը մի քանի մասի բաժնելով մտցնում է Յայաստանի արևելյան շրջաններ ու Վրաստան:

## Կայեն բերդի պաշտպանությունը

Մոնղոլ զորավար Դուլատայի գործը 1236թ. ամռանը պաշարում է Կայեն բերդը, որտեղ ապաստանել էր շրջակա գավառի բնակչության մի մասը: Բերդի պաշտպանությունը գլխավորում էր Իվան Զաքարյանի որդի Ավագը, որը համար դիմադրություն է կազմակերպում: Յերոսական դիմադրությամբ Կայենի պաշտպանները կարևոր ժամանակ են շահում:

Այդ ընթացքում Ավագ Զաքարյանը դիմում է Սևանի առավիճայ շրջամաներում գտնվող Չարմաղանցին և հայտարարում մոնղոլների գերիշխանությունը ճանաչելու պատրաստականության մասին պայմանով, որ չափերն իր տիրույթներն ու Կայենի պաշտպանների հաշվեհարդար չեն: Իրենց դիմադրած քաղաքների բնակչության ամիսնա կոտորելը մոնղոլների ռազմական գործողությունների անքակտելի մասն



**Մոնղոլ հեծյալ**  
Մոնղոլական բանակն աշքի էր ընկնում զորաշարժային հնարավորություններով և արտաստվոր դաժանությամբ:

եր, և առաջարկի վերջին կետը սկզբունքային նշանակություն ուներ հայկական կողմի համար:

Զաքարյանների դեմ հյուծիչ հակամարտության հեռանկարը Զարմաղանին էլ չէր ոգևորում, քանի որ Կայենում մոնղոլներն ականատես էին եղել Ավագ Զաքարյանի դիվանագիտական և զորավարական ծիրճին: Արդյունքում՝ Զարմաղանը Դուլաստային հրամայում է դադարեցնել Ավագի տիրույթների ասպատակությունն ու հեռանալ այդ շրջաններից:

Ավագը պահպանում է հայ-վրացական գրքերի գլխավոր հրամանատարի պաշտոնը: Դատկանշական է, որ ինքնագլուխ որոշումներ կայացնելու մեջ չմեղադրվելու համար Զարմաղանն Ավագին ուղարկել էր մոնղոլական տերության մայրաքաղաք՝ Կարակորում, որտեղից վերջինս վերադառնում է իր տիրույթներում իշխելու մեջ խաքանի թույլտվությունը ստացած և հետագայում պահպանում է հայ իշխանների նկատմանը իր գերագահությունը:

## Խոխանաբերդի (Խշխանաբերդի) պաշտպանությունը

Զուդրուդա զորավարի գլխավորած մոնղոլական զորաբանակը ներխուժում է խաչեն (Արցակի լեռնային հասվածքը), որտեղ համար դիմադրության է հանդիպում: Ընդ որում, ի տարբերություն մյուս երկրամասերի՝ Խաչենում ոչ թե պայքարը կենտրոնացված էր հանգույց հանդիսացող մեկ ամրոցում, այլ ստեղծվել էին դիմադրության բազմաթիվ օջախներ:

Վերին Խաչենում շրջակա գյուղերի բնակչության պաշտպանությամ կենտրոնի էր Վերածվել Թարթար գետի աջ կողմանունը Ավաշտպանությամ կենտրոնը: Մոնղոլներին հաջողվում է գրավել Յավքախաղացը, որտեղ ապաստանած ամրող բնակչությունը սրի է քաշվում: Այսուհետև, Զուդրուդան հարձակումն ուղղում է դեպի Ներքին Խաչեն: Այստեղ մոնղոլների դեմ պայքարը գլխավորում է Յասան Զալալ Դոլամ՝ Վախբանգ Տանգիկ իշխանի որդին: Նա ամրանում է Խաչենագետի ափին՝ Գանձասարի վանքից հարավ գտնվող Խշխանաբերդում:

**Պատմական տեղեկանք.** «(Մոնղոլները) գնացին նաև Զալալ անվանված բարեպաշտ իշխան Յասանի վրա: Սա մեծամեծ իշխաններ Զաքարեկի և Իվանեկի (Զաքարյանների) քեօնորդին էր... Երբ այս հմատուն իշխանը տեսավ անօրենների հարձակմանը, իր երկորի բնակիչներին անհացող պարսկերեն լեզվով խոխանաբերդ<sup>1</sup> կոչված ամրոցում»:

**Կիրակոս Գանձակեցի, Յայոց պատմություն, էջ 192-193**

<sup>1</sup> Խոխանաբերդ նշանակում է իշխանաբերդ:

Մոնղոլական գործը պաշարումը սկսում է Իշխանաբերոյի մատուցմերը հուսալիորեն փակելով: Պաշարողական մի շարք այլ աշխատանքներ կատարելուց հետո մոնղոլներն իրենց սովորության համաձայն առանց ժամանակ կորցնելու, սկսում են ամրությունների գրոհները: Վճռականության ցուցադրումն, ըստ Զուղորդայի, պետք է սարսափեցներ հայկական կողմին ու ստիպեր օր առաջ հանձնել բերդը: Սակայն Յասան Զալալն անդրդվելի էր: Առաջին գրոհը, որի հաջողության հետ մեծ հույսեր էր կապում մոնղոլ զորավարը, ավարտվում է լիակատար ծախողումնով: Գրոհի ընթացքում մոնղոլներին չի հաջողվում պարսպում ծնդպածք բացել կամ շատ թե քիչ նշանակալի մարտավարական այլ հաջողության հասնել: Պաշարումն աստիճանաբար ձգձգվող բնույթ է ստանում:

Խոխանաբերոյի (Իշխանաբերոյի) պաշտամների կամքը կոտրելու նպատակով Զուղորուղան նորանոր գրոհներ է կազմակերպում: Նա հույս ուներ, որ Երկարատև ու լարված պաշարման հետևանքով բերդի պաշտպանների շրջանում դժգոհություն կառաջանար և նրանք կդադարեցնեին դիմադրությունը: Դա նպատակին չի հասնում, քանի որ անմատչելի ամրությունների գրոհներով առաջին հերթին հյուծվում էին սովորաբար անխոնց մոնղոլ զինվորները: Գրոհների թափն աստիճանաբար սկսում է նարեւ: Դա բերդի հայ պաշտպաններին ոգևորում է և հաղթանակի հասնելու հույս ներշնչում:

## Յաղթանակը

Աստիճանաբար իրադրությունը սկսում է փոխվել հօգուտ հայկական կողմի: Ավելորդ շտապողականություն դրսւորող հակառակորդի հրամանատարությունը սկսում է անհամբերության նշաններ ցույց տալ: Երկարատև պաշարումը և գրոհով ամրությունները գրավելու փոքր հավանականությունը սպառնում էին մեծ անհաջողության վերածվել և կասկածի տակ էին դնում Զուղորուղայի գրոհի առաջարկանքի կատարումը:

Մինչեւ համար պաշտպանությամբ Իշխանաբերոյի պաշտպանները Զուղուղային հարկադրում են հաշտություն առաջարկել Յասան Զալալին:

Մոնղոլական գրոքերին դիմադրելու որոշում կայացնելիս Իշխանաբերոյի պաշտպանների նպատակն էր զավաճն ամայացումից պաշտպաննելը: Նետևաբար, նրանք լուծել էին իրենց առջև դրված խնդիրները, և Յասան Զալալն ընդունում է բանակցությունների առաջարկությունը: Մեծաթիվ հակառակորդն բանակցությունների սեղանի շուրջ նստեցնել և իր կամքը թելադրել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մոնղոլների առաջխաղացումը ոչ միայն կասեցնելը, այլև ընդամենը դանդաղեցնելը դժվարին խնդիր էր Եղել բազում երկրներում, հազվագյուտ երևույթ էր: Դիմադրությունը դադարեցնելու, մոնղոլների գերիշխանությունը ճանաչելու և պաշտոնապես նվերների տեսքով

որոշակի հարկ տալու դիմաց Զուղբուղան խոստանում է չասպատակել Հասան Զալալի տիրույթները:

**Պատմական տեղեկանք.** «Երբ մոնղոլները եկան այն (Իշխանաբերդը) պաշարելու, տեսան, որ հնարավոր չէ այդ ամրությունները գրավել, հաշտությամբ ու խաղաղությամբ նրան կանչեցին իրենց մոտ: Նա իմաստնաբար գոհացրեց նրանց: Յետո բազմաթիվ ընծաներով ինքն էլ նրանց մոտ գնաց: Նրան մեծարելով, նրա երկիրը հանձնեցին իրեն և այն էլ մեծացնելով: Նրան հրամայեցին ամեն տարի իրենց հետ պատերազմի գնալ և հավատարմությամբ հնազանդ մնալ իրենց»:

**Կիրակոս Գանձակեցի, Դայոց պատմություն, Էջ 193**

Խոխանաբերդի (Իշխանաբերդի) պաշտպանությունը հայոց ռազմարվեստի պատմության հերոսական դրվագներից է:

Այսպիսով, Հասան Զալալ Դոլայի գլխավորությամբ Խոխանաբերդում (Իշխանաբերդում) մոնղոլների դեմ կազմակերպված պաշտպանությունն ավարտվում է հաղթանակով: Բերդի պաշտպանների հերոսության և համառության շնորհիվ արցախահայության զգալի նասն ազատվում է մոնղոլական ասպատակությունների սպառնալիքից և հնարավորություն ստանում շարունակելու ստեղծագործ աշխատանքը: Պատահական չէ, որ մոնղոլական ասպատակություններից ոչ շատ ժամանակ անց ավարտվում է Գանձասարի հոյակերտ վանքի շինարարությունը:

Ավելացնենք նաև, որ Ներքին Խաչենի մյուս մասերում և Զուղբուղայի հրոսակախմբերը հանդիպել են արցախահայության համառ դիմադրությանը:

---

**ՀԱՅԿԱԿԱՆ  
ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՌԱՋՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

---

## ՄԵԼԻՏԵՆԵՈՒ ԳԵՐՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԿԱՏԱԳՐՈՒՄԸ ԹՈՌՆԻԿ ԻՇԽԱՆԻ ԿՈՂՄԻՆ 1059թ.

**Մ**անազկերտի լեգենդար պաշտպանությունը խախտել էր տարածաշրջանում ակտիվ դերակատարում ունեցող բոլոր ուժերի, այդ թվում՝ նույնիսկ բյուզանդացիների ռազմաքաղաքան ծրագրերը: Առավել երկիմաստ էր նաև Տուղրիլի վիճակը, որը Յայաստանից հեռացավ թեև ավարով, սակայն պարտություն կրած:

## Դազմական քաղաքականությունը

Մանագկերտից հետո (1055-1063թթ.) թյուրքական հրոսակախմբերի առաջնորդը ոչ միայն Շայաստանի, այլև Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող մյուս երկրների դեմ խոշոր արշավանք ձեռնարկելու փորձ անգամ չի կատարում: Սակայն որքան էլ ներ լիներ հաղթանակի քարոյահոգեբանական նշանակությունը, ռազմաքաղաքական տեսանկյունից այն ժամանակավոր նշանակություն ունեցավ:

1056թ. սելջուկյան զորքերը մի շարք ասպատակություններ են կատարում Շայաստանի սահմանամերձ շրջաններում: Բյուզանդական սահմանային ուժերի գլխավոր հրամանատար նշանակված Նիկեփոր Վրիենոսի պաշտպանական ուշացած միջոցառումներն ապարդյուն էին անցնում: 1057-1058թթ. սելջուկյան ներխուժումներին միանում է Տուրքիլ սուլթանի դեմ ապատամբած թուրքմենների մի մասը: Թշնամին կրկին պաշարում է Կարսը: Սակայն թյուրքերին այս անգամ էլ չի հաջողվում կոտրել կարսեցիների հերոսական դիմադրությունը:


Կարսի մոտ պարտություն կրած թյուրքերը նահանջում են դեպի Անի, որտեղ նրանց նոր անհաջողություն էր սպասվում: Անիի ամրակուռ պարիսպներին բախվելով ու անեցիների համար դիմադրությանը հանդիպելով՝ թյուրքերն այս-տեղից էլ են հեռանում: Նրանք մտնում են Բասենի դաշտ, որտեղ ավերածությունների են ենթարկում մի շարք բնակավայրեր:

## 1058թ. արշավանքը

Թյուրքերին բնորոշ թալանչիական արշավանքներից էր 1058թ. հարուստ Մելիտինե (Մելիտենե) քաղաքի ասպատակությունը: Սելջուկյան հորդաներն այս անգամ գլխավորում էր Արու Դինար ամիրան: Շայաստան մտնելով՝ սելջուկները բաժանվում են երկու մասի: Մի մասն, անցնելով ճորոխի հովտով, ներխուժում է Փոքր Շայք ու հարձակվում Կոլոնիա (Կողոնիա) քաղաքի վրա, մյուս մասը հարձակվում է Մելիտինեի վրա ու գրավում քաղաքը (տե՛ս քարտեզը):

Մելիտենեն վայրագ կողոպուտի է ենթարկվում, իսկ բնակիչներն անխղճար կոտորվում են: Իրենցից հետո ավերակներ թողնելով՝ Արու Դինարի հրոսակախմբն ուղղություն է վերցնում դեպի արևելք: Նրանք անցնում են Եփրատն ու ձմեռում Անձիս գավառում, իսկ 1059թ. գարնանը Արածանիի հովտով ուղղություն են վերցնում դեպի Իրան:


ԱՐԵՎԱԿԱՆ ԳՐՈՒՂԱԽԱՅԱՐԱՆՆԵՐԸ 1058-1059 թթ.



## **Ծակատամարտը**

Տարոնում՝ Ար. Կարապետ վանքի մոտ, Արու Դիմերի ծանապարհը կտրում են քաջ սասունցիները, որոնց գլխավորում էր Մամիկոնյան թոռնիկի իշխանը: Նա զորահավաք է կատարում և համարձակ շարժվում հակառակորդին ընդհառաջ (տե՛ս սխ. 1):

Սխեմա 1



Զորքերի տեղաբաշխումը գրոհի պահին և մարտի սկիզբը

**Պատմական տեղեկանք.** «Երբ գարունը եկավ, այլազգիների զորքը զնաց Տարոն զավաճը և բանակեց Տավոս լեռան ստորոտում, Սասունի մոտ: Դայոց հզոր և քաջ իշխան թոռնիկը՝ Մուշեղի որդին, լսելով այդ մասին, բովանդակ Սասունում զորահավաք արեց և արշավեց այլազգիների զորքի վրա»:

**Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասն Երկրորդ**

Մամիկոնյան իշխանը բավական ժամանակ ուներ վճռական ճակատամարտին նախապատրաստվելու համար: Մասնավորապես, շարունակելով անկանոն ռազմարվեստի դարավոր ավանդույթները՝ թոռնիկն առաջին հերթին հարմար տեղանք է ընտրում գրոհի համար: Դայկական լեռնաշ-

խարիի բարձրադիր գավառներից մեկը հանդիսացող Սասունում մարտավարական առումով բարենպաստ կիրճերը, լեռնացքներն ու նմանատիպ այլ վայրերը բազմաթիվ են, և այս կարգի խնդիրներ չեն ծագելու: Վարվող գործողությունները մի կողմից դարանակալություն էին հիշեցնում (միաժամանակ պարունակելով նաև ծուղակի և ռազմական խորամանկության տարրեր), մյուս կողմից՝ դասական ճակատամարտի տարրեր են պարունակում:

**Պատմական տեղեկանք.** «Այլազգիների գինվորները հնչեցրին պատերազմական շեփորները, և բոլորը միասին եղան մարտի: Այդ օրը սուլակի և ահավոր եղավ, քանզի երկու կողմն էլ միմյանց դեմ էին կովում առյուծների ջոկերի նման: Քաջ Թոռմիկը ձայն տվեց իր զորքի աջ թևին, հարձակվեց այլազգիների ձախ թևի վրա և մեծ ուժգնությամբ ճեղքեց այն: Նա դարձավ նայեց Սուրբ Կարապետի վանքին և գոչեց. «Գլակա վանք, Սուրբ Կարապետ, հասիր մեծ օգնության և այս օրը հավատացյալների համար երևելի դարձրու»: Բոլորը միասին, իրար ձայն տալով, հարձակվեցին այլազգիների վրա»:

**Մատթեոս Ուռիհայեցի, Ժամանակագրություն, Սասն Երկրորդ**


Դանկարծակի հարձակումից բացի՝ Թոռնիկ Մամիկոնյանը որոշել էր հակառակորդին ապակողմնորոշել նաև երեք ուղղություններից հասցվող միաժամանակյա հարվածներով: Դա գինվորները երեք կողմից աքցանի մեջ են առնում թյուրքական հրոսակախմբին և աջ ու ձախ զորաքերն առաջ եկած սամրդածն մարտակարգով գրոհում են հակառակորդի կենտրոնի գրդաթևի թիկունքի ուղղությամբ (տես սխ. 1):

Թեև գրոհ սկսած հայկական զորամասերի և թյուրքերի միջև բավական տարածություն կար, Արու Դինարը չի հասցնում երակարգը ամբողջական մարտակարգի վերափոխել: Նրա զորաքերը չեն հասցնում անհրաժեշտ տարածությունն անցնել և մերձամարտի բռնվելու պահին կենտրոնից հետ են մնում, իսկ գերիների ու ավարի տեղափոխումը վերահսկող վերջապահ ուժեղ չկարողացան ծևավորել մարտակարգ:

Սարտի եւք վճռվում է աջ թևում, որտեղ կենտրոնացած էին Դայոց զորքի գլխավոր ուժերը: Նրանց հաջողվում է ծեղեթել հակառակորդի ձախ թևն ու կտրել մարտակարգի առաջնի գծին չհասած թյուրքական վերջապահի ճանապարհն ու շրջանցել նրա կենտրոնը (տես սխ. 2):

Թյուրքերի մարտական դասավորությունը խախտվում է: Նրանց հրամանատարները դադարուն են տիրապետել մարտական հրավիճակին, իսկ գինվորներն իրենց անելիքը չիմանալով՝ խուճապի են մատնվում, սակայն չցանկանալով զրկվել գերիներից ու հարուստ ավարից՝ թյուրք թալանչիները չեն նահանջում:

Սխեմա 2



Գերիների ազատումը

## Չաղթանակը

Թոռնիկ Մամիկոնյանը գործը մարտադաշտ էր բերել երկու հավասարազոր խմբիներ (գերիների ազատումը և հակառակորդի ջախջախումը) լուծելու համար: Բացառված չէր, որ «ավարը» չգիշելու համար բյուրքերը կարող էին կոտրել գերիներին:

Չետևաբար, մարտի սկզբից և եթ մտահղացման առանցքը երկու խմբիների միաժամանակյա լուծումն էր:

Երեք կողմից գրոհելով՝ հայկական կողմը հակառակորդի ուժերի մեջ մասը գամում է իրեն և նրան զրկում գերիներին ֆիզիկապես ոչնչացնելու հնարավորությունից:

Այդ նպատակին էր ծառայում նաև ընտրված տեղանքը, որտեղ բացազատվելու հնարավորություն ունեցող բյուրքերը, գերիներին ու հարուստ ավարը չգիշելու մոլուցքով տարված, ձգտելու էին առավելագույնս մեջ ծակատ ձևավորել՝ հարձակումը կասեցնելու համար:

Նույն նպատակն էր հետապնդում նաև հակառակորդին (մանավանդ նրա

հեծյալ զորամասերին) նախօրոք մարտակարգ ձևավորելու «հնարավորություն» չտալը, գլխավոր հարվածը զորաթևորում (երթակարգի կենտրոնին մոտ) հասցնելով՝ հայկական զորամասերը ծառում էին դոպե առաջ հասնել գերիների կենտրոնացման վայրը:

Գրոհն այնպիսի հաշվարկով էր տարվում, որպեսզի ճեղքող զորագնդերից առնվազն մեկը կարողանար ապահովել ստրկության քշվող բազմության անվտանգությունը: Դայերին հաջողվայր է իրականացնել այս խնդիրը: Արագորեն դեպի հայկառակորդի գլխավոր ուժերի թիկունքը հարձակումն ավարտելուց հետո նրանք վերախմբավորվում և սկսում են նրա հետապնդումը:

**Պատմական տեղեկանք.** «(Թյուրքերից) խեցին ամրող ավարը և ազատեցին բոլոր գերվածներին: Մի կերպ կենդանի մնացած այլազգիները խայտառակ կերպով գնացին պարսից երկիրը: Քաջ Թոռնիկը մնեց ուրախությամբ վերադարձավ Սասուն և շնորհակալությունը հայտնեց Աստծուն, որ Մելետեն քաղաքի անթիվ բազմությունը ազատեց պարսից անհավաստ ժողովրդի ստրկությունից»:

**Մատրենո Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասն երկրորդ**

Թոռնիկ Մամիկոնյանի փայլում գործողությունը մեկ անգամ ևս ապացուցում է այն փաստը, որ Զայաստանում մնացող հայ իշխաններն ամենուրեք քաջարար նարտոնչել են հայրենիքի պաշտպանության համար: Սասունցիներն արդեն այս փուլում դարձել էին Զայոց ազատագրական պայքարի առաջամարտիկներից, և պատահական չեն, որ հենց նրանք են ունենում Զայաստանի արևմտյան նասից վերադարձող թյուրքական հրոսակախմբերի ճանապարհը փակելու համարձակությունը:

**ՈՒԽԱՅԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
1070թ. ՄԱՐՏԻ 10 - ԱՊՐԻԼԻ 29**

**1070** թ. սելջուկները Ալփասլանի<sup>1</sup> առաջնորդությամբ  
մտնում են Ուշիայի գավառ և ասպատակելով  
շոշակայքը՝ պաշարում քաղաքը (տե՛ս քարտեզը):

---

<sup>1</sup> Սելջուկյան սուլթան (1063-1072թթ.), Տուղրիլի Եղբօրորդին:

ՀԱՅԱԿԱՆ ԳՐՈՒԹ-ՁՅՈՒՆԵՐԸ 1070 թ.



Ուրիհայի դուկը բուլղարական Ալուսիան արքայի որդի Վասիլն էր, որը ծառայության մեջ էր բյուզանդական կայսեր մոտ: Նա կարողանում է իր շուրջը համախմբել քաղաքի բնակիչներին, և չնայած անքարենպաստ պայմաններին (Ուրիհան պատրաստ չէր հարձակմանը, իսկ ասպատակվող գյուղական շրջանների բնակիչների օգնության աղերսները հոգեբանական ծանր մթնոլորտ էին ստեղծում քաղաքում), նրանք կարողանում են համախմբվել արքայազն Վասիլի շուրջն ու սկսել պարհսպների ամրացման աշխատանքները:

## **Պաշարումը**

Ալփասլանն ակնկալում էր, որ ուրիհայեցիներն առանց մարտի իրեն կհանձնեն քաղաքը: Սակայն տեղեկանալով, որ հայկական կողմը ոչ միայն քաղաքը հանձնելու մասին չի մտածում, այլև պարսպի ամրացման աշխատանքներ է կատարում, որոշում է նախապես ուր օր պատրաստվել, և հետո նոր վճռական գրոհի հրաման արձակել: Ալփասլանը մտադիր էր մեկ հարվածով վճռել անընկճելի քաղաքի ճակատագիրը, սակայն դա նրան չի հաջողվում:

**Պատմական տեղեկանը.** «Սուլթանի գործերի բազմությունը ողողել էր դաշտն ու լեռնազագագաթները: Նա ուր օր մնաց առանց պատերազմելու... (ուրիհայեցիները) սրտապնդվեցին պատերազմելու: Վասիլը, քաղաքի դուկը, մի քաջ և պատերազմող մարդ, սկսեց քաջալերել ողջ քաղաքը: Սուլթանը, տեսնելով դա, շատ բարկացավ. նա հրամայեց հնչեցնել պատերազմական շեփորը և գազանի պես նետվեց պատերազմի... Այդ օրը դարձավ նշանավոր օր, պատերազմն՝ ահավոր և սաստիկ, ողջ քաղաքը լցվեց արձակված նետերով... Պարսից երկրի բոլոր գործերը օրվա մեջ մասք մարտնչեցին Ուրիհայի դեմ, բայց ոչինչ չկարողացան անել, որովհետև Տերը նրանց պարտության մատնեց և խայտառակ արեց»:

***Մատքեռ Ուրիհայեցի, Ժամանակագրություն,  
Մասմ Երկրորդ***

Սուլթանը հաջորդ գրոհն արդյունավետ դարձնելու նպատակով նոր թափ հաղորդելու համար թերել է տալիս պարսպակործան և քարանետ մեքենաներ: Քաղաքի շրջակայքի բոլոր ծառերը կտրվում են, և դրանցով լցվում է ամրոցի շրջակա գրեթե ամբողջ արգելափոսը: Տասը սայլեր միացնելով՝ դրանց վրա գրոհային աշտարակ է սարքվում: Քաղաքի պաշտպանների վրա հատկապես ծանր ազդեցություն է թողնում շարժական աշտարակի տեսքը: Սակայն, երբ դեռ նոր էին պաշարողները սկսել աշտարակը մոտեցնել պարսպին, այն փլվում է: Պատճառը թերևս այն էր, որ թյուրքերը չունեին պաշարողական մեքենաներ

սարքելու հմտությունների տեր վարպետներ, սակայն չի կարելի բացառել նաև քաղաքի պաշտպանների կողմից դիվերսիոն գործողության վարկածը:

Բոլոր պարագաներում պաշարվածներն այս իրադարձությունն ընկալում են որպես երկնային պարզ և այնպիսի ոգևորությամբ են սկսում մարտը, որ առանց գրոհային աշտարակի մնացած հակառակորդը, չնայած պարսպի որոշ հատվածներին տիրանալու և ներս թափանցելու փորձերին, ոչնչի չի հասնում:

## Ուզմական խորամանկությունը

Պաշարվածները շտապում են օգտվել բարենպաստ իրավիճակից: Նրանց հատկապես մտահոգում էր պարիսպը շրջապատող արգելափոսը լցված գեռանները վերացնելու խնդիրը, քանի որ նախորդ գրոհի ժամանակ հակառակորդը դրանց վրայով անարգել հասել էր պատերին: Քննարկումներից հետո որոշվում է առավել նպատակահարմար համարվող արևելյան կողմից գաղտնի ստորգետնյա փոս փորել, որով քաղաք մտցնել գերանները՝ դրանք շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով:

Սկզբում մտահղացման իրագործումը հաջող է ընթանում, և կարծ ժամանակում պաշտպանները բավականաչափ փայտ են կուտակում, սակայն հակառակորդի հետախույզները նկատում են ամրոցի պատերի տակ սկսված իրարացումը և շտապում այլտեղ: Տեսնելով, որ ստորգետնյա անցում է փորված, նրանք փորձում են դրանով ներխուժել Ուրիշ:

Դանաւ, բայց կարճատև մարտ է սկսվում: Քաղաքի հերոս պաշտպանները հասցնում են այրել արգելափոսում մնացած գերաններն ու նահանջելով՝ փակել իրենց փորած փոսը: Թյուրքական հրոսակների հանպատրաստից գրոհն առանց մեծ դժվարությունների անդրադարձվում է, իսկ համարձակ հնարքի հետևանքով քաղաք բերված գերանները հետագայում օգտագործվում էին ամրաշինական աշխատանքներում:

## Ուրիշան գրավելու մյուս փորձերը

Ալիքասլանը, տեսնելով ստեղծված իրադրության անհեռանկարայնությունը, դիմում է մարտավարական նոր միջոցների և որոշում է քաղաքի ամրությունների ուղղությամբ թվով յոր խոր անցը փորել և դրանցով գործը մտցնել քաղաք կամ, առնվազն, քանի պարիսպները: Սակայն այդ փորձը նոյնպես անհաջողության է մատնվում: Ուրիշայի պաշտպանները, նկատելով հակառակորդի գործողություննե-

րը, հանարժեք հակաքայլեր են ձեռնարկում: Նրանք հակառակորդին ընդառաջ հակասանային փոսեր են փորում և ոչնչացնում ներխուժել փորձող թշնամիներին:

**Պատմական տեղեկանք.** «Այլազգիները պարիսպը կործանելու նպատակով խոր խրամի միջից յոթ անցք փորեցին: Քաղաքացիները նրանց փորածի դիմացից փորել սկսեցին և այլազգիներին բռնելով, սատկացրեցին: Տերը զորացրեց քաղաքը՝ ընդդեմ այլազգիների»:

*Մատթեոս Ուռիհայեցի, Ժամանակագրություն,  
Սասան Երկրորդ*

Սուլթանը դժվարին մարտերից ու «տեխնիկական լուծումների» որոնումներից հետո հարկադրված էր արձանագրել, որ երկարատև պաշարման ընթացքում ոչնչի չի հասել և որ պաշարումը շարունակելու անհիմաստ է:

## Հաղթանակը

Հուսահատ սուլթանը հայտարարում է, որ մեծ պարզեներ կտա նրան, ով կկարողանա թեկուզ մեկ քար հանել Ուռիհայի պարսպից, որպեսզի նահանջելով իր հետ ի հիշատակ տանի իրան: Գուցեն տարօրինակ է, քայլ արևելյան թռնակալի այդ անմիտ ձեռնարկման համար կենտրոնացվում են բանակի բոլոր ուժերը: Սակայն, չնայած սուլթանի հպատակների բոլոր ջանքերին, այդ խնդիրը նույնպես չի լուծվում: Թյուրքերին չի հաջողվում թվում է թե ամենահասանելի տեղում գտնվող Սուլթր Սարգիս Եկեղեցու արևելյան խորանից հանել և ոչ մի քար:

**Պատմական տեղեկանք.** «Սուլթանը գանձ և իշխանություն խոստացավ նրան, ով կկարողանա պարսպից մի քար հանել: Նա ուզում էր այն որպես հիշատակ Պարսկաստան տանել: Դվինի ամիրա Ապուսվարն<sup>1</sup> ասաց նրան. «Ահա, մեր կողմում է գտնվում Եկեղեցին, նրան ոչ ոք պաշտպանում»:

Նրանք շատ ջանք թափեցին, քայլ չկարողացան Սուլթր Սարգիս Եկեղեցու արևելյան խորանից հանել և ոչ մի քար: Սուլթանն անաշեց... Այդ օրը Ուռիհա քաղաքում չար գազանից փրկվելու առթիվ մեծ ուրախություն եղավ»:

*Մատթեոս Ուռիհայեցի, Ժամանակագրություն,  
Սասան Երկրորդ*

<sup>1</sup> Տե՛ս հատորի Երկրորդ ակնարկը:

Այդպիսով, Ալփասլանն սպառում է հնարքների իր ամբողջ գինանցը և պաշարումն անհմաստ համարելով՝ նահանջի հրաման է տալիս:

Ուրիայի հաղթանակը ոչ միայն մարտավարական կամ բարոյահոգերանական, այլև, առաջին հերթին, ռազմավարական և ռազմաքաղաքական նշանակություն ուներ: Բյուզանդացիները 1070թ. դեռ պատրաստ չէին վճռական ճակատամարտի, որի պատճառով էլ սուլթանն այդքան կարևորում էր Ուրիայի գրավումը և Յայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններում ծավալվելիք գործողություններից առաջ ռազմավարական թերի անվտանգության ապահովումը: Նա մտադրվել էր նախքան հաջորդ տարվա մեջ պատերազմը սկսելն առաջ անցնել բյուզանդացիներից և հաջորդության նժարն իր կողմն թթվել: Սակայն ուրիայեցիները խափանեցին այդ հավակնութ ծրագրերի իրականացումը և Ալփասլանին հարկադրեցին տարածաշրջանային գերիշխանության հարցի լուծումը հետաձգել առնվազն մեկ տարով:

## Եկրատեզերքի և Կիլիկիայի հայկական իշխանությունները

Տուղրիլ թեզի մահվանը հաջորդած տասնամյակը բեկումնային ժամանակաշրջան էր Յայաստանի, Փոքր Ասիայի, Ասորիի ու Իրանի ժողովուրդների կյանքում: Տարօրինակ զուգադիպությամբ սելջուկյան նվաճումների ընթացքը կրկին վճռվում է Սանագերտի պատերի տակ (1071թ.): Բյուզանդական բանակի պարտությունը երթեմի հզոր կայսրության կործանման սկիզբն է դնում, և պատահական չէ, որ ճակատամարտն ավելի շատ հայտնի է որպես «Մանագերության աղետ»: 1072 թվականից բյուրքական նվաճումների դառնությունը ճաշակելու հերթ հասնում է Փոքր Ասիայի բնակչությանը:

Սանագերտում Բյուզանդիայի հզորությունը խորտակած սուլթան Ալփասլանին փոխարինած Սելջուքի օրոր (1072-1092թք.) նորանոր ավարառությունների թիրախ են դառնում ամայացումից գերծ մնացած Յայոց երկրամասերը, որտեղ նախորդ ժամանակներում ստեղծվել էին և շարունակում էին գոյատել մի քանի հայկական թագավորություններ [Տաշիր-Զորագետի Կյուրիկյաններ<sup>1</sup> (978-1113թք.), Սյունիքի (987-1170թք.)] և իշխանություններ: Յայոց հաղթանակների հետագա պատմությունը նաև այս իշխանությունների Յայոց գինութիւն վարած մարտերի հետ է կապվում:

<sup>1</sup> Տաշիր-Զորագետի թագավորության հիմնադիր Գուրգեն (Կյուրիկե) Ա թագավորունու մասին Կիրակոս Գանձակեցին գրեւ է. «Կյուրիկե Բագրատունին, որ Լոռե քաղաքում էր, իր ամբողջ կյանքի ընթացքում կանգնեց վրացիների դեմ ու հասասուն պահեց իր հայթենթը» (Կիրակոս Գանձակեցի, Յայոց պատմություն, Երևան, 1961, էջ 151):

**Պատմական տեղեկանք.** «Երբ թուրքերը դուրս եկան Խորասանից և հեղեղեցին այս շրջանները (Հայաստանը, Ասորիքն ու Կապաղովիան), հույները շատ թուլացան, և նրանց կայսրությունը դադարեց տիրու Ասորիքին, Կապաղովիային և Հայաստանին: Այդ ժամանակ որոշ հայեր մտան զարիթափ լեռներում գտնվող բերդերը և ամրացան այնտեղ»:

**Միքայել Ասորի, Ժամանակագրություն, հատ. III**

Հայոց պետականության պաշտպանության պայքարում 1060-ական թթ. վերջերից աչքի էր ընկնում Վահրամը, որը նշանավոր Վարաժնունի տոհմից էր<sup>1</sup>: Նա կարծ ժամանակով կարողանում է իր գերիշխանությանը ենթարկել Կիլիկիան, Միջազգետքի և Ասորիքի գգալի մասն ու ստեղծել ընդարձակ իշխանականություն՝ Մարաշ կենտրոնով<sup>2</sup>:

## Վահրամ Վարաժնունու վերելքը

Վահրամը պատանի հասակում կրթություն էր ստացել հորեղբոր՝ Ժամանակի նշանավոր գիտնական վարդապետ Շովիհաննես Կոգեռնի մոտ, Հարսան-ՍՍուր գավառի Զորվիր Կողեռն վաճքում: Սակայն շուտով երիտասարդ դուրս է գալիս վաճքից, գինվորական ծառայության մտնում և անցնում միջնադարում գինվորականների և պետական գործիչների կայացման համար անհրաժեշտ համարվող «փորձությունների» բոլոր աստիճանները: Բավական է ասել, որ իր տերության ստեղծումը նա սկսել է սեւզուկների հարձակումների ժամանակաշրջանում Մարաշի շրջակայքում պայքար վարող հայ երիտասարդների հիւնյակի հրամանատարությունից:

Կարծ ժամանակում Վարուժանը ոչ միայն տեր է դառնում Մարաշին ու շրջակա բավական ընդարձակ տարածքներին, այլև թյուրքական հորդաների դեմ պայքարող անխոնջ մարտիկի համարում է ձեռք բերում:

**Պատմական տեղեկանք.** «(Վարուժանի հաղթանակների մասին) տեղեկանալով՝ հօնմեացինների (Բյուզանդիայի) կայսրը նրան ընծաներ ուղարկեց, իսկ հետո Փիլարտոսն անձամբ Կոստանդնուպոլիս գնաց, և հույններն ուրախացան նրա համար. նրանք նրան ոսկյա գրահներ տվեցին և «Օգոստոս» հոչակեցին»:

**Միքայել Ասորի, Ժամանակագրություն, հատ. III**

<sup>1</sup> Հունադավան լինելու պատճառով հայ իշխանը հիշատակված է Փիլարտոս Վարաժնունի, իսկ բյուզանդիական աղբյուրներում Ֆիլարտոս կամ Ֆիլարետոս կրախամիոն (Կահրամ) անունով:

<sup>2</sup> Կահրամ Վարաժնունու ստեղծած իշխանապետությունը պատմինները հաճախ թագավորություն էլ են կոչում:

Սելջուկյան նվաճումների դեմ միայնակ պայքարելն անհնարին էր, և նա որոշում է զինակցել գործունյա Ունմանոս Դ կայսրին, որը հայ իշխանին սերաստոսի<sup>1</sup> բարձր տիտղոս է շնորհում: Տեսնելով կայսրության արևելյան սահմաններն ամրացնելու գործուն Ունմանոս Դ-ի հաստատակամությունը՝ Կարամուլին ճանաչում է Բյուզանդիայի գերիշխանությունը և, նույնիսկ, քաղկեդոնականությունը ընդունում:

Փոխադրձ վստահությունն այն աստիճանի է հասնում, որ հայ իշխանի գորավարական փայլուն ընդունակություններով հիացած կայսրը 1070թ. Ունմանոպոլիսի և Խոյաթի ուղղությամբ իրականացված արշավանքի ընթացքում իր գործի կեսը դնում է նրա ենթակայության տակ ու նրան գորավար է նշանակում:

Մանագկերտի աղետից հետո Վահրամ Վարաժնունին իրաժարվում է ճանաչել կայսր հրչակված Միքայել Է Դուկասին, քանի որ վերջինս գերված Ունմանոս Դ կայսեր բացակայությունից օգտվելով՝ անօրինական ճանապարհով էր իշխանության եկել: Դայ իշխանը ինքնուրույն արտաքին քաղաքականություն է սկսում իրականացնել՝ ցույց տալով, որ բյուզանդացիների հետ համագործակցելով՝ մտադիր չէ նրանց ձեռքում գործիք դառնալ: Մանավանդ որ պարտությունից հետո բյուզանդական իշխանությունները, լքելով Դայաստանի, Ասորիքի ու շրջակա տարածքների բնակչությանը, սկսել էին անկանոն նահանջը:

Վարաժնունի իշխանին այլ բան չէր մնում, քան վտանել այս տարածքների բյուզանդական պաշտոնյաներին ու ձեռնամուկն լինել թյուրքական ասպատակություններից Տափոսի լեռների բնակչության պաշտպանությանը:

**Տեղեկանք.** «Դայ քաջասիրտ իշխանների շարքում, որոնք օգտվելով բյուզանդական կայսրության խորտակումից՝ գրավեցին Փոքր Դայքից մինչև Կիլիկիա օնկած տարածքների<sup>2</sup> այս վերջին միջնաբերդերը, քանի որ թուրքերի դեմ իրենց պայքարում ստիպված էին ապավինել դրանց, առաջին կարգի տեղ է գրադացնում Փիլարտոս Վրախամիոսը (Վահրամը)»:

**Ողնե Գոռուս, Պատմություն խաչակրաց..., հատ. I**

<sup>1</sup> Այս մասին տես բառարանի «Բյուզանդական կայսրության աստիճանացուցակ» բառահովածում:

<sup>2</sup> Բնագրում քրված է «հարավարևելյան Անատոլիա» ամրող ձևով, մկանի ունենալով Դայկան լեռնաշխարհից արևմուտք ընկած Փոքր Ասիայի հարավարևելյան մասը: Տերեկայացվող նյութը ընթեղողուների համար ավելի հասկանալի դարձնելու նպատակով այս և հետագա տեղեկանքներում կնշվեն առավել ծանր տեղանուններ:

## **Դագմարվեստը Վահրամ Վարաժնունու տերությունում**

Կ.Պոլսի նվաճման սպառնալիքն ստիպում է Բյուզանդիայի կայսր Միքայել Ե-ին 1074թ. դիմել Հռոմի պապ Գրիգորին Ե-իմ՝ խնդրելով սելջուկյան հորդաների առաջնադացումը կասեցնելու նպատակով խաչակրաց արշավանք սկսել: Օգնության դիմաց կայսրը պարտավորվում էր բյուզանդական ուղղափառ եկեղեցին Ենթարկեցնել կաթոլիկ պապին: Հռոմում գոհունակությամբ է ընդունվում օգնության խնդրանքը, իսկ պապը հատուկ կոմիտակով դիմում է Եվրոպական գահականներին ու հայտարարում, որ պատրաստ է նրանց առաջնորդել արշավանքի ընթացքում, սակայն վերջիններս չեն շտապում օգնության համեմ արևելյան հավատակիցներին: Ստեղծված իրադրությունը խիստ մտահոգում է նաև հայ իշխաններին և հատկապես Վարուժան Վարաժնունուն:

### **Դարձակողական ռազմավարության քատագուր**


Վահրամ Վարաժնունին պետք է սկզբունքային երկու հարցի պատասխաներ. ինչպիսի՞ ռազմավարություն որդեգրել փլուզվող Բյուզանդիայի հանդեպ, ինչպիսի՞ ռազմավարություն որդեգրել հզորացող և իրենց ավերիչ ասպատակություններն ընդունող սելջուկների հանդեպ:

Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում հայ իշխանը համարձակուրեն որոշում է կիրառել ակտիվ պաշտպանական ռազմավարություն, ինչը Ենթադրում էր ոչ միայն պաշտպանվել նահանջող բյուզանդացիներից և լայնամասշտար նվաճողական քաղաքականություն վարող թյուրքերից, այլև երկուսի դեմ էլ իրագործել հարձակողական գործողություններ:

### **Առաջին հաղթանակները**

Որպես առաջին քայլ Վահրամն ընտրում է գործողությունների ամենահանդուզն տարրերակը՝ Մելիտենեի ազատագրումը: Եվ դա պատահական չէր: Այդ երբեմնի ծաղկուն քաղաքը 1069թ. նվաճնել ու անխնա ավերվում էր թյուրք իրոսակեների կողմից, գտնվում էր ճանապարհային կարևոր խաչմերուկների վրա, հետևաբար, ռազմավարական կարևոր հանգույց էր հանդիսանում: Քաղաքի գրավումով թյուրքական հորդաների դեմ վճռական բախումից առաջ կապահովվեր ռազմավարական ծախ թեր: Սակայն գլխավորը՝ հայ իշխանը Փոքր Հայքի կամ հարևան շրջանների իր հայրենակիցներին ևս մեկ անգամ կազդարրարեր, որ պատրաստ է նրանց սատարել և, թեև իրադրությունը բարդ է, սակայն չպետք է հուսահատվել (տես՝ քարտեզը):

ԱԵԼԻՏԵՐԻ ԵՎ ԿՐԴԻԿԻՎԱՅՐԻ ՄԻԱՅՈՒԱԾ ՎՃՐԱՍ ՎԱՐԱՄՈՒՆՈՒ ՏԵՐՈՒԹՅԱՆ 1070-ԱԿԱ թ.




Վահրամը միայն իրեն հատուկ համարձակությամբ ու ռազմավարական խորամանկությամբ իրականացնում է այդ անհավանական թվացող նախագիծը: Ազատագրական պայքարի ելած իշխանի համար հուսալի հենարանի դերում հանդես է գալիս Սելիխտենի հայ բնակչությունը, որի աջակցությամբ կարճ ժամանակում Վարուժանը վերահսկողության տակ է առնում քաղաքը: Դաջողության ռազմավարական ամրապնդման նպատակով հարձակումը չի սահմանափակվում միայն Սելիխտենի ազատագրումով: Դայ իշխանի գորքերը նոր հարձակում են ծավալում և հսկողության տակ առնում մերձեփրատյան ընդարձակ տարածությունները:

Իշխանապետության սահմանները հասցվում են դժվարամատչելի լեռնային զանգվածներին, որի հետևանքով անենավուանգավոր՝ արևելյան ուղղությունը դառնում է համեմատաբար ապահով: Սելիխտենի կառավարիչ է նշանակվում Վարաժնունու բանինաց գորավարներից մեկը՝ Շեթումի որդի Թորոս իշխանը:

## Դամախմբումը

Իշխանապետության սահմանները հասցվում վարող Վարաժնունի իշխանի համբավը նպաստում է նրա իշխանապետության շուրջ մյուս հայկական իշխանական ընտանիքների համախմբմանը: Առաջիններից նրան գինակցում է Թոռ-



Սելիխտենի եկեղեցին

նավաճի իշխան Յասան Արծրունու որդի Աբլղարիպը՝ Կիլիկիայի զգալի մասի բյուզանդական կառավարիչը: Նա ընդունում է Վահրամ Վարաժնունու գերիշխանությունն ու միանում ընդհանուր պայքարին: Այսպիսով, Վարաժնունու իշխանապետության կազմում են հայտնվում Կիլիկիայի ամենամեծ ու քաղաքական առումով կարուր կենտրոնները՝ Տարսոնը, Անավարզան ու Մամեստիան (տե՛ս քարտեզը):

Արծրունի իշխանի հորդորներով նույնական է անում նաև Արցախի և Ուտիքի կողմերում հայրենի կալվածքը՝ Մայրեացքուրը (Գանձակի մոտ) բողնելով 1073թ. Կիլիկիա տեղափոխված և նրանից անառիկ Լամբրոն ամրոցը ստացած Օշինը՝ Ներումյան իշխանական տան հիմնադիրը (Օշին Գանձակեցին): Այսպիսով, Կիլիկիան միավորվում է հայոց իշխանության ներքո:

**Տեղեկանք.** «Փիլարտոսն առաջինը փորձեց համախմբել Կիլիկիայի մատուցներում ցրված հայերին: Այդ հարցում նա նախակարասպետն է զալիք հայոց պետության, և լիովին օրինաչափ է, որ նա մնալու է որպես առասպելական մի անձնավորություն»:

**Կլոր Սուրաֆյան,  
Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Գլ. 7**

Վահրամ Վարաժնունուն իրենց հպատակությունն են հայտնում նաև մի շարք հույս և ֆրանկ իշխաններ, և նրա իշխանապետությունը վերածվում է լայնածավալ տերության, իսկ նրա առաջնությունը հակասելցուկյան ուժերի համար դառնում է անվիճելի: Փաստորեն, 1070-ական թթ. Կիլիկիայի, Ասորիքի, Փոքր Հայքի ու մերձեփրատյան տարածքների բնակչության համար Վահրամ Վարաժնունին է գրադարձնում բյուզանդական կայսերի կողմից լրված տեղը:

### **Ուռիայի միացումը Վահրամ Վարաժնունու տերությանը (1076թ.)**

Կիլիկյան պետության ծևավորումը հայ իշխանի ռազմավարության առաջին փուլն էր: Վահրամ Վարաժնունու նախանշած ռազմավարական թիրախները բյուզանդացիների նահանջից հետո համեմատաբար ապահով դարձած արևմտյան ուղղության վրա չէին. Կիլիկիայում իրենց իշխանությունը հաստատած բյուզանդական նախկին կառավարիչներին իր գերիշխանությանը ենթարկելով՝ նա ընդամենք հուսալի թիկունք էր ստեղծում արևելյան և հարավային ուղղություններով մի շարք հարվածներ հասցնելու համար:

Պետք էր ամենավտանգավորը համարվող արևելյան սահմաններն ամեն գնով տեղափոխել բնական սահման հանդիսացող Եփրատի միջին ավազանից

ու վերջնականապես ամրանալ Յայկական Տավրոսի լեռներում, որպեսզի անդրեփրատյան տարածքները վերածվեին ռազմավարական հսկայական նախադաշտի (տես քարտեզը): Այս ուղղությանը նվաճումների ելած թյուրբերի ռինակների դեմ գլխավոր պատվարը Ուրիշան էր լինելու, իսկ դրա համար անհրաժշտ էր քաղաքը վերցնել բյուզանդացիների ձեռքից:

## **Արշավանքի նախապատրաստումը**

Ուրիշան գրավելու առաջադրանքով արշավանքի է ելնում Կահրամ Վարաժնունու ամենաօժտված ու եռանդուն զորավարներից մեկը՝ Մանավերտի 1054թ. լեգենդար պաշտպանության դեկավար Բարսեղը (Կասիլը): Ընդունված որոշման վրա կարևոր ազդեցություն էր ունեցել այն, որ Ուրիշայի ամրությունների նորոգման վերջին մեծամասշտար աշխատանքները դեկավարել էր Բարսեղի հայրը՝ Ապուրքապ հշխանը, քաղաքի կառավարիչ եղած տարիներին: Դետևաբար, Բարսեղը քաջածանոթ էր ամրությունների համակարգին, գիտեր պարսպի թույլ տեղանասերը և կկարողանար պահանջված ձևով կազմակերպել ու դեկավարել պաշտումը: Զորավարական փայլուն հեռատեսություն դրսւուրելով՝ Բարսեղն առաջին հարվածն ուղղում է ոչ թե քաղաքի, այլ շրջակա բնակավայրերի ուղղությամբ (տես քարտեզը): Դրանց գրավման և հնարավոր բոլոր ուղղություններից Ուրիշայի կայազորին մեկուսացնելուց հետո էր սկսվելու պաշարումը:


Դատկանշական է նաև, որ վեց ամիս շարունակվող պաշարման վրա ուժերն ու ուշադրությունը կենտրոնացրած Բարսեղը, նախապատրաստական աշխատանքներին գուգընթաց, զգալի ջանքեր է գործադրում նապաղջուր (Ռոմանոպոլիս) բերդաքաղաքի պարիսպներն ամրացնելու վրա:

**Պատմական տեղեկանք.** «Այս ժամանակ Դավիթ կուրապաղատի նախկին վրանապահ Ապուրքապի որդին՝ Վասիլը (Բարսեղը), Փիլարտոսի իրանանով հեծելազորի զորահավաք արեց և նեկավ Ուրիշ քաղաքի վրա: Նա, բազում մարտեր մնելով, վեց ամիս նեղ վիճակի մեջ գցեց քաղաքը: Այդ տարին Վասիլը կառուցեց հոռոմոց կայսր Ռոմանոսի շինած Ռոմանոպոլիս բերդաքաղաքի պարիսպները, որից հետո պաշարեց Ուրիշ քաղաքը»:

**Մատքեռ Ուրիշեցի, Ժամանակագրություն, Մասն Երկրորդ**

Յայ իշխանը Ռոմանոպոլիսը վերածում է ռազմավարական կարևորագույն հենադաշտի, որը պետք է թույլ չտար կոնունիկացիոն ուղիների վրա գործող հակառակորդի ուժերի միտրումը տերության կենտրոնական շրջաններից հեռացած զորաբանակի թիկունք:


ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1076 թ.



Այնուամենայնիվ, գլխավոր խնդիրն Ուռիայի գրավումն էր: Որքան էլ ջանար Բարսեղ իշխանը, նա չէր կարող Ուռիայի պատերի տակ մեծ ուժեր կենտրոնացնել: Տեղյակ լինելով այդ մասին Ուռիայի բյուզանդական կայազորը քաղաքի գրոհով գրավման տարբերակն ուղղակի բացառում էր ու պատրաստվել էր երկարատև պաշարման դիմակայելու:

Չակառակորդի սպասումներին հակառակ, Բարսեղը համարձակ գրոհներ է իրականացնում: Ուռիայի հայ բնակչությունը չէր թաքցնում ազգակիցների հանդեպ ունեցած համակրանքն ու բյուզանդական կայազորից պահանջում էր դադարեցնել դիմադրությունն ու միանալ սեղուկների դեմ պայքարող Վահրամ Վարաֆնունու ուժերին:

Միջնադարյան ռազմարվեստի բոլոր պահանջերին համապատասխան իրականացվող պաշարումն ակնհայտորեն մոտենում էր հանգուցալուծնանը (տես քարտեզը):



#### **Սամղուղքներ**

Միջնադարյան քանակներում տարատեսակ սամղուղքներով նազլցելն այնքան կարևոր նարտավարական ունակություն էր համարվում, որ այդ ձևով ամրոցները գրավելու նպատակով ամրող զարանասեր կն վարժեցվում:

## **Դադարեցնակը**

Նկատի ունենալով Ուռիայի պաշտպանվածությունը և Բարսեղի ուժերի փոքրարվությունը՝ պաշարումը կարծես թե դատապարտված էր անհաջողության: Սակայն համարձակ գրոհները պաշարվածներին հասցնում են հուսահատության և հարկադրում դադարեցնել դիմադրությունը:

**Պատմական տեղեկանք.** «(Ուռիայի) քաղաքացիները Լևոն ամունով իրենց դուկի՝ ... դեմ խօռվություն բարձրացրին: Լևոն դիմեց փախուստի քաղաքացիները ... նույն օրն ... Ուռիան տվեցին Վասիլին՝ Ապուքասի որդուն, որ բարի և աստվածածին մարդ էր, որդերի և այրիների գքացող, խաղաղարար և երկիրը շենացնող: Իրենից առաջ Ուռիա քաղաքի դուկն էր եղել իր հայր Ապուքասը, նա էր շենացրել և պարսպապատել ողջ գավառը»:

**Մատքեռ Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասմ Երկրորդ**

Պաշարումն, ի վերջո, ավարտվում է հաղթանակով (1077թ.): Բարսեղ իշխանին հաջողվում է գրավել անառիկ Ուռիան՝ միաժամանակ կատարելով անդրեվրատյան ընդարձակ տարածքները Վարաժնունու իշխանության ներք միավորելու առաջադրանքը:

Ընդամենը վեց ամսում խստ սահմանափակ ուժերով Բարսեղ իշխանը լուծում է հետևյալ խնդիրները.

### 1. Ուզգմավարական հարբուրյունում.

- Ուռնանոպնիսի պարհապերի ամրացում և քաղաքի՝ ռազմավարական բազայի վերածում,
- անդրեվրատյան տարածքների միացում Վարաժնունու տերությանը,
- Ուռիայի գրավմանը զուգընթաց ռազմավարական թևերում իրականացված նվաճումներով հաջողության ամրապնդում:

### 2. Մարտավարական հարբուրյունում.

- գլխավոր ուժերի կոնունիկացիոն ուղիների հուսալի պաշտպանությունը թյուրքական ավազակախմբերից,
- Ուռիայի հնուտ պաշարումը և պարբերական գրոհներով քաղաքի կայագրի մարտիկների շրջանում դիմադրությունը դադարեցնելու անխուսափելի ության մտայնության ձևավորում:

Վահրամ Վարաժնունու տիրապետության տարիներն Ուռիայի պատմության ամենահիշարժան ժամանակաշրջանն էին, իսկ Բարսեղը՝ Մատթեոս Ուռիայեցու երախտագիտական խոսքերի շնորհիվ, մնացել է որպես Ուռիայի պատմության մեջ ամենաբարի համբավ ունեցած կառավարիչներից մեկը՝ իր գործունեությամբ գերազանցելով նույնիսկ հորը՝ Ապուքապին:

**Պատմական տեղեկանք.** «(1083թ. Բարսեղի մահվան) առթիվ Ուռիայում և ամբողջ գավառում մեծ սուզ եղավ, քանզի զրկվեցին այդ հեզ ու բարի կառավարչից, մի մարդուց, որ մեծի ու փոքրի նկատմամբ հոր և ծնողի ննան հոգատար էր: Բարի հիշատակ թողնելով, նա հեռացավ այս աշխարհից և զնաց Քրիստոսի մոտ»:

**Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասն երկրորդ**

1083թ. Վահրամ Վարաժնունին իր անմիջական իշխանության տակ է առնում Ուռիան:

## **ԱՆՏԻՌԵ ՄԻԱՅՈՒՄԸ ՎԱՀՐԱՄ ՎԱՐԱԺՆՈՒԽՈՒ ՏԵՐՈՒԹՅԱՆԸ 1077թ.**

**ՈՒ** ռհայի գրավումով Վահրամի տերությունը վերածվել էր Բյուզանդիայի և Քյուրք-սելջուկյան հորդաների զավթած տարածքների միջև մխրճված սեպի՝ բոլոր կողմերից շրջապատված թշնամիներով, որոնք սպասում էին պատեհ պահի՝ այն վերացնելու համար:

**Տեղեկանք.** «Թյուրքական ներխուժման մակրմթացության հորձանուտում հայտնված բյուզանդական բնակավայրերի քրիստոնյա բնակչությունը շրջվեց դեպի այդ եռանդում հայորդին (Վահրամ Վարաժնունին)՝ որպես փրկչի... Արդարև նոր Հայաստանի հիմքերն էին, որ Մանազկերտին (աղետին) հետևած այս վճռորոշ տարիներին դնում էր Փիլարտոս-Վահրամը: Եվ ապագա XIII դարի Ռուբինյան և Ներումյան թագավորության ծրագիրն էր, որ գծում էր նա»:

**Ողնե Գրուե, Պատմություն խաչակրաց..., հատ. I**

## ԱՆՏԻՒՔԸ ՕԳՆՈՎԹՅԱՆ Է ԿԱՆՀՈՒՄ

**Պատմական տեղեկանք.** «Յայց 525 թվականին (2 մարտ 1076 - 1 մարտ 1077թթ.)... սպանվեց հայոց Վասակ իշխանը՝ Գրիգոր Մագիստրոսի որդին... և Անտիոք քաղաքի դուկն էր և նենք հոռոմների ծերով սպանվեց Անտիոքի շուկայի փողոցում: Երբ նա անցնում էր փողոցով, երկու հաստատներ<sup>1</sup> եկան Վասակին երկրպագեցին և ինչ-որ կեղծ նամակ մեկնեցին նրան. Երբ նա խոնարհվեց այն վերցնելու, տապարով հարված իջեցրին նրան աջ կողին»:

**Մատրեն Ռոմայեցի, Ժամանակագրություն, Մասմ Երկրորդ**

Տնարդ սպանությունից վրդովված քաղաքի բնակչությունը և Վասակ Պահլավունու զինվորներն օգնություն են հայցում Վարիամ Վարաժնունուց և որոշում նրան հանձնել Անտիւքը:

## ԱԿՄԻՎ պաշտպանության ռազմավարության գագաթնակետը

Վարաժնունու զինվորները հորդորում էին նրան զընդունել Վտանգմերի հետ կապված Անտիոքի դիմումը, սակայն նա գիտակցում էր այդ քաղաքի ռազմավարական կարևորությունը թշնամիներով շրջապատված իշխանապետության համար: Յանդես գալով որպես շրջակայիքի հայության պաշտպան՝ նա առաջ է քաշում ամբողջ տարածաշրջանը միավորնելու համարձակ ռազմաքաղաքական նախագիծ:

Նման նախագիծը խիստ բարդ էր իրականացնել, քանի որ այդ ժամանակաշրջանում, երբ բոլորը նվաճումներն իրականացնում էին դեպի արևմուտք և հյուսիս, հարվածը հասցվում է հարավային ուղղությամբ՝ դեպի Անտիոք (տես՝ քարտեզը): Սակայն հաջողության պարագայում այն կամքողջացներ վերջին տասը տարիներին վարած ռազմավարությունը և թույլ կտար գոնե կարճատև խաղաղություն հաստատել:

<sup>1</sup> Հաստատ (լատ. *hastatus*) - միջակակիր: Յունական տարբերակը (*կոմմորատ*) ևս հայ պատմիչները բավական հաճախ օգտագործում են:

Ապահովագործությունները 1977 թ.



Բանապարհին տեղական բնակչությունը ցնծությամբ էր ընդունում օգնության շտապող հայկական զորագներին, ողջունում որպես ազատարարի և ամեն կերպ աջակցում առաջխաղացմանը: Յատկանշական է, որ Վարուժանի զորքերին նույնպիսի ոգևորությամբ դիմավորում էին նաև ոչ հայկական բնակավայրերում: Յայկական զինուժը սելջուկյան հրոսակախմբերի դեմ պայքարի համախմբող ուժի էր վերածվել՝ փոխարինելով իրեն վարկաբեկած բյուզանդական բանակին:

Հասնելով Անտիոք՝ Վահրամ Վարաժնունին խստագույնս պատժում է Վասակին սպանողներին:

Այսպիսով, շուրջ մեկ տասնամյակ տևած համար պայքարում Վահրամ Վարաժնունին իր իշխանության տակ միավորում է բյուզանդական բանակների նահանջից հետո սելջուկյան հրոդաներին բոլոնված Կիլիկիայի, Ասորիքի հյուսիսի և Յայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններն ու գլխավորում այդ տարածքների բնակչության պայքարն օտար նվաճողների դեմ:



Գլխավորապես լեռնային կամ կտրտված տեղանքում մարտեր վարելիս Եփրատեզերի հայկական իշխանությունների հետևակային զինվորի կաշվե զրահը թևն երկարացված էր մինչև ծնկները, սակայն չէր կաշկանդում մարտիկների զորքողությունները:

**Պատմական տեղեկանք.** «(Վարաժնութիւն) գնաց և թագավորեց Տարսոնի և Սոպութեստեի վրա. նա գրավեց Մարաշը, Քեսունը, Ռաբանը, Եղեսչան, Անարզաբան և մտավ Անտիոք. նա հզրացավ և մտավ Զիհանի երկիր և Սելիստին։ Յաղթանակելով՝ նա կրվեց թյուրքերի դեմ հռոմեական բանակի հետ»։

**Միքայել Ասորի, Ժամանակագրություն, հատ. III**

Հայ իշխանի ռազմաքաղաքական գործունեության արդյունքների մասին տեղին է հիշել Ուրնե Գոռուսեի դիպուկ խոսքերը. «Թեև Փիլարտոսը պարբերաբար յուրացնում էր բյուզանդական կայսրության տարածքները, որոնց հաշվին Տավրոսում կառուցվում էր այս նոր հայկական պետությունը, Նիկեփոր Բոտանիատես կայսրը (1078-1081թթ.), հույս չունենալով վերանվաճել այս հեռավոր գավառները կամ էլ գիտակցելով սելջուկյան նվաճումների հորձանութուն կանգուն մնացած քրիստոնյա այդ մարտկոցի օգտակարությունը, խոհեմություն ցուցաբերեց հարաբերություն հաստատել նրա հետ»։

---

## **ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽԱՅԿԻՐՆԵՐԻ ԱՐԾԱՎԱՔՆԵՐԸ**

---

## ՄԵԼԶՈՒԿՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՄԱՆ ՍԿԻՖԸ ԵՎ ԽԱՅԱԿՐԱՅ ԱՌԱՋԻՆ ԱՐԾԱՎԱՆՔԸ

**1092**թ. սելջուկյան սուլթան Մելիքշահի մահվանը հա-  
նրա հսկայածավալ տերության կազմալուժման և տրոհման  
ժամանակաշրջանը<sup>1</sup>: Մելիքշահին հաջորդած տասնչորսամ-  
յա որդու՝ Բարկիարուքի գահակալության տարիները (1093-  
1104թթ.) գրեթե անցնդիատ ծագող արյունահեղ երկպառա-  
կությունների ժամանակներ էին:

Արյունալի կրիվ է սկսվում նաև գահակալական կրիվնե-  
րին զոհ գնացած Ասորիքի սելջուկյան տիրակալ Տուտուշի  
(Մելիքշահի եղբոր) որդիների միջև, որը թուլացնում է սել-  
ջուկյան տիրապետությունը Պաղեստինում և Ասորիքում:  
Իրադրությունից շտապում են օգտվել բոլորը. Եգիպտոսի  
Ֆարխմանները գրավում են Պաղեստինը, իսկ Հռոմի Ուրբա-  
նոս Բ պատճ կլերմոնում (1095թ.) խաչակրաց արշավանքը  
սկսելու կոչն է անուն: Տիրոջ գերեզմանի ազատագրման քա-  
րոզներով Ուրբանոս Բ-ը մի կողմից ձգտում էր իշխանություն  
հաստատել Եվրոպայի աշխարհիկ միապետերի վրա, մյուս  
կողմից՝ Վերահսկողության տակ առնել բյուզանդական ուղ-  
ղափառ եկեղեցին:


---

<sup>1</sup> Տրոհումը սկսվել էր դեռևս 1086թ., երբ Գրլուշի որդի Սուլայմանը Փոքր Ասիա-  
յում իիմնել էր Ուսմի կա հկոմիայի սուլթանությունը, որն անկախ էր, թեև ծանա-  
չում է մեծ սուլթանի գերիշխանությունը:

## Խաչակրաց արշավանքի սկիզբը

Արշավանքը սկսվում է 1096թ. ապրիլին, իսկ 1097թ. հունիսին, շուրջ մեկ տարի պաշարումից հետո, խաչակրները գրավում են Նիկիան՝ Փոքր Ասիայում զավթումներ կատարած սելջուկների առաջին մայուաքաղաքը։ Խաչակրներն այստեղից կապ են հաստատում Կիլիկիայում և շրջակայքում ամրացած հայ հշիանների հետ, որոնք խաչակրներին սելջուկ-թյուքերի դեմ պայքարի բնական դաշնակիցներ էին համարվում։ Յայերը, մասնավորապես, Բալդրին Բուլոնցուն զգալի աջակցություն են ցույց տալիս։

1097թ. հուլիսին Դորիլայնի (Կոստանդնուպոլիսից 330 կմ հարավ-արևելք) ճակատամարտում խաչակրները ջախջախում են սելջուկյան միացյալ բանակը։ Ասպետական ծանրազեն հեծելազորի դեմ մարտավարության փորձ չունեցող թյուքերը դադարացնում են դիմադրության իրենց փորձերը։ Ստեղծված բարոյահօգեբանական մթնոլորտի մասին պատմիչ իրն ալ-Քալանիսին գրում է. «Քանի որ մահմեդականության համար ամորթալի այս իրադարձության մասին տեղեկությունները հասնում էին մեկը մյուսի հետևից, ապա խուճապը մեծ չափերի հասավ, ավելացան սարսափն ու տագնապը»։



**Նեժալ խաչակիր ասսենս**  
Արարական, ապա նաև սելջուկյան արագաշարժ թերթագնն հեծելազորի դեմ պայքարում նվիրակամ բանակների հեծելազորը զրահապատկեց, ու ստեղծվեց ասպետական հեծելազորը, որի հարձակումը կասեցնելը լուրջ փորձության էր վերածվում։

## Խաչակիրները Կիլիկիայում

1097թ. աշնանը Կիլիկիան հյուսիսից և արևելքից շրջանցելով՝ խաչակրաց գլխավոր ուժերը Ասորիք են շարժվում:

Իշխան Բարսեղ Կամսարականի (Գող Վասիլի) եղբայր Բագրատ իշխանի խորհրդով Բալդուին Բուլոնցին և Տանկրեդ՝ իրենց զորամասերով, 1097թ. սեպտեմբերին բաժանվում են խաչակիրների գլխավոր ուժերից, անցնում Տավրոս կիրճով ու կարծ ժամանակում սելջուկյան կայազորներից ճաքրում Կիլիկիայի ամրությունները (տես «Վահկայի միացումը Ռուբինյանների իշխանությանը (1098թ.)» ակնարկի քարտեզը):

**Պատմական տեղեկանք.** «(Բագրատը) փախել էր հունական կայսեր քանոից: Բալդուինը նրան պահեց Նիկոլայում, որովհետև նրան ասել էին, որ նա հմուտ զինվոր է և չափազանց խելոք, և որ կատարելապես ծանոթ էր Յայաստանին, Ասորիքին և հույների երկրին»:

**Ֆուշե Շարտրոցի, Խաչակիրների պատմություն, VI**

Վահրամ Վարաժնունու տերության քայլայումից հետո կենտրոնական իշխանությունից զուրկած Կիլիկիան նվաճումների հարմար թիրախի էր Վերած-վել, սակայն իրենց ունեցած փոքր ուժերով խաչակիրները չէին հասնի հաջողության, եթե չլիներ քրիստոնյա բնակիչների, հատկապես՝ հայերի օժանդա-



Կոռիկոսի ցամաքային ամրոցը

կությունը: Յամաձայն ժամանակագիր Ողբերտ վանականի վկայության. «Գալով հայոց երկիր (Կիլիկիա), ֆրանկները կարծ ժամանակամիջոցում հայերի օգնությամբ տիրեցին Մամեստիային, Աղանային և բազմաթիվ այլ ամբողջների»:

Միևնույն ժամանակ, Կիլիկիայում արշավանքի սկզբից ևեր դրսնորվում են խաչակիրների զավոռական միտումները. ինչը հետագայում պետք է կոչտ մրցակցության վերածվեր:

1098թ. Բալդուինի Ուռհայում հաստատվելուց հետո Տանկրեդի իր ձեռքն է վերցնում Կիլիկիայի զգալի մասի փաստացի իշխանությունը, որը վիճարկում էր բյուզանդացիների հետ: Անտիոքում Բոհեմոնի հաստատվելուց հետո Տանկրեդն ամեն ինչ անում է Կիլիկիան բյուզանդացիներին վերադարձնելու փոխարեն Ասորիիքի Ենթակայության տակ դնելու համար: Այսպիսով, Կիլիկիան և հարևան հայկական իշխանությունների տարածքը խաչակիրների ու բյուզանդացիների հակամարտության թատերաբեմի են վերածվում:

## Խաչակրաց արշավանքի արդյունքները

Իր նվաճողական գաղափարներին հավատարիմ Բալդուին Բուլոնցին Կիլիկիայից անցնում է Մարաշ, ապա՝ գրավում Թլպաշարը: Այստեղ նա ստանում է Ուռհայի (Եղեսիա) տեր, հայազգի իշխան Թորոսի՝ Սամսոստի դեմ համատեղ արշավանք ծեռնարկելու հրավերը. լորարինգի իշխանն անմիջապես համաձայնում է:

Խաչակիրների հանդեպ վստահություն դրսնորելով՝ անզավակ հայ իշխանը Բալդուինին որդեգրում և ժառանգորդ է հռչակում: Սակայն վերջինս, չնայած որդեգրման ժամանակ տված բարձրագոչ խոստումներին, «վարձահատույց» է լինում Թորոսից և առաջին իսկ հնարավորության դեպքում դավադրաբար զավթում է իշխանությունը:



*Դայ Ժամբազեն հետևակային գինվոր Երկար թեփուկավոր զրահը կաշկանդում էր մարտիկի գործողությունները, սակայն որա լիովին փախհատուցվում էր մեծամարտում ծակող ու հատող գենցերից հուսայի պաշտպանությամբ:*



Դատված Սամոսատի (Ծամշատի) բերդից

Տեսնելով ստեղծված իրադրության ողբերգականությունը՝ Թորոսն իրեն Մելիտենե<sup>1</sup> հեռանալ թույլատրելու պայմանով առաջարկում է Բալդուինին հանձնել Ուշիայի միջնաբերդը: Խաչակիր իշխանը, որի համար երդումները ոչինչ չարժեին, նշխարների վրա խոստանում է Թորոսին թույլ տալ մեկնել քաղաքից: Վստահելով այդ երաշխիքին՝ հայ իշխանը միջնաբերդը հանձնում է խաչակիրներին: Դաջորդ օրն իսկ, մոռանալով իր երդումները, Բալդուինը սպանել է տալիս իրեն որդեգրած ծերունուն և 1098թ. մարտին հիմնում խաչակրաց (լատինական) առաջին պետությունը՝ Եղեսիայի (Ուշիայի) կոմսությունը:

Առանց դժվարությունների Անտիոք հասած խաչակիրները միայն երկարատև պաշարումց հետո են գրավում քաղաքը: Անտիոքում ընդհարումներ են տեղի ունենում Բոհեմոնդ Տարենտացու և Ույամոնդ Սենժիլցու միջև: Բոհեմոնդը հաղթում է իր «զինակցին» և Անտիոքում խաչակրաց պետություն է հիմնում:

Կիլիկիան և Ասորիքը նվաճած խաչակիրները ծովափով շարժվում են դեպի Երուսաղեմ ու 1099թ. հուլիսի 15-ին գրավում այն: Քաղաքը մտնելով՝ խաչակիրները դաժան կոտորած են կազմակերպում: Ականատես Ռայմոնդ Աժիլցին այս առթիվ գրում է. «Քաղաքի փողոցներում և հրապարակներում կարելի էր տեսնել գլուխների, ծեղքերի և ոտքերի կոյստեր... Սողոննի տաճարում արյունը հասմուն էր մինչև ծիակորների ծնկմերը և ձիու սամձերը»: Ըստ Սմբատ Սպարապետի, Երուսաղեմի ջարդին զոհ է գնացել 66 հազար մարդ: Խաչակրաց առաջին արշավանքը հասմուն է նպատակին:

Գոդֆրուա Բուլոնցին հոչակվում է «Սուրբ Գերեզմանի հավատարմատար»: Նրա մահից հետո՝ 1100թ. հոկտեմբերին, Բալդուինը Եղեսիայի կոմս է հոչակում իր զարմիկ Բալդուին II Բուլգացուն (1100-1118թթ.) և մեկնում Երուսաղեմ՝ դառնալու Սուրբ Երկրի առաջին օջալ խաչակիր թագավորը:

<sup>1</sup> Մելիտեններում իշխում էր Թորոսի աներիայի Գաբրիելը:

## ՈՒՌԱՅԻ ՊԱՇՏԱՆՈՒԹՅՈՒՆ 1095թ.

**Մ**ելիտենեում ծառայության ընթացքում բամիմաց «սահմանապահի» հոչակ ձեռք բերած Դեթում կյուրապաղատի որդի Թորոս (Թենդորոս) իշխանին Վարուժան Վարաժնունին Մելիտենեից տեղափոխում և նշանակում է Ուռիայի կառավարիչ։ Բյուզանդական կայսրությունը պաշտոնապես ճանաչում է այդ նշանակումը և հայ իշխանին շնորհում կյուրապաղատի կոչում։ Թորոսը կարողանում է ճիշտ կողմնորոշվել ժամանակի ռազմաքաղաքական զարգացումներում և 1094թ. ստանձնում է Ուռիայի միանձնյա ղեկավարումը։ 1094-98թթ. Ուռիան փաստացի անկախություն էր վայելում։

## Դազմավարությունը

Դայկական ինքնիշխանությունները լուրջ մարտահրավեր էին հանդիսանում սելջուկների համար, և 1095թ. օգոստոսին Ուշիայի հարևան գավառների սելջուկյան ցեղապետերը Թորոսի ստեղծած անկախ իշխանությունը վերացնելու համար միավորում են իրենց ուժերը (տե՛ս քարտեզը):

**Պատմական տեղեկանք.** «Դայոց 544 թվականին (26 փետրվար 1095 - 25 փետրվար 1096թք.) Արդուլիսի որդի Սուլդմանը և Սամոսատի ամիրա Պալտուխը՝ Ամիրիազգեի որդին, հեծյալների զորահավաք ամելով, հնձի օրերին հարձակվեցին Ուշիայի վրա: Ուշիայի տեր Թորոս կուրապաղատը շատ խելացի գործունեություն ծավալեց: Նա սկսեց ամեն կողմից անրացնել քաղաքը: (Դակառակորդները) բարաններ և փիլիկպաններ կանգնեցնելով, ամխնա հարվածում էին քաղաքի պարիսպը»:

**Մատքեռ Ուշիայեցի, Ժամանակագրություն, էջ 164**

Պաշարողական բավարար միջոցներ ունենալով՝ թյուրքերն առաջին իսկ օրվանից սկսում են Ուշիայի պարիսպների ամխնա քարկոնումը և գրոհները՝ միևնույն ժամանակ ցուցաբերելով արտակարգ գգուշավորություն: Նրանք պահեստագորում միշտ մեծարիվ հեծյալ զորամասներ ունեին, որոնք պատրաստ էին անդրադարձնել արտագրոհները: Թորոսը գիտակցում էր դա և ուժերն անհճաստ արտագրոհների վրա չէր ծախսում: Դանար պաշտպանության վարպետի համարում ունեցող իշխանը գիտեր, որ թյուրքերը երկարատև պաշարումներն «անգործություն» են համարում և նրանց նյարդերը մի օր տեղի են տալու:

Արշավանքը գլխավորում էին Արտուրյանների Ջին-Քեֆայի և Ամիրի ճյուղի ամիրա Սուլդման (Սուլգման) Ա-ն (1098-1105թք.) և Սամոսատի ամիրա Բալդրիկը (այս գործը ամիրան իր անփառունակ գործունեությունն ավարտելու էր 1098թ.: Խաչակրաց արշավանքից սարսափահար լինելով, Սամոսատը Բալդրիկն Բուլղարուն վաճառելով): Արշավանքը լավ էր կազմակերպված, ինչի մասին վկայում են հետևյալ հանգամանքները:

- արագ քաղաքին հասնելու նպատակով ռազմերի էին հանվել միայն հեծյալ զորամասներ, ինչը թույլ է տալիս հակառակորդին հասնել հանկարծակի-ության և նպաստեռնություն ստանալ,
- ծիշտ էր ընտրվել հարվածը հաշմանքներու պահը՝ հնձի աշխատանքներին խոչընդոտելու մտահղացումը վկայում է, որ թյուրքերը գիտակցում էին դրա կարևորությունն ուրիշեցիների համար,
- հակառակորդը լավ էր պատրաստվել երկարատև պաշարման, նրանք ու-նեին բարաններ ու փիլիկներ:



## Վճռական գրոհի անդրադարձումը

Պաշարման վարսունինգերորդ օրը թյուրքերին հաջողվում է գրեթե միաժամանակ երկու կողմից քանդել Ուրիայի պարիսպները: Պաշարողները բոլոր ուժերը նետում են գրոհի: Նույնիսկ այնպիսի փորձված զորավարի համար, ինչպիսին Թորոս իշխանն էր, պարսպի երկողմանի քանդվելն անակնկալ էր: Ավելի քան երկու ամսի վճռական գրոհի սպասելով՝ նա մշակել էր հակագրոհների տասնյակ տարրերակներ, սակայն միանգամից երկու կողմից պարիսպների փլուզվելու տարրերակը չէր հաշվարկել:

**Պատմական տեղեկանք.** «Թյուրքերը բազում օրեր անդադար մարտ էին նայում, բայց քաղաքին ոչինչ անել չկարողացան: Վարսունինգերորդ օրը, երկու տեղից ճեղքելով քաղաքի պարիսպը, նրանք խուժեցին քաղաքը. նարսն արդեն քաղաքում էր գնում, բայց նրանք նորից չկարողացան տիրանալ քաղաքին»:

*Մատթեոս Ուրիայեցի, Ժամանակագրություն, էջ 164*

Օգտագործելով իրենց քանակական գերազանցությունը՝ թյուրքական հրոսակները երկու կողմից ներխուժում են քաղաքը: Սկսվում են փողոցային մարտեր, սակայն թշնամուն չի հաջողվում եական հաջողությունների հասնել, և գրոհը մի պահ հապաղում է: Դա Թորոս իշխանին հնարավորություն է տալիս վերադասավորել ուժերը և հակագրոհ ձեռնարկել:



Դեմիկ հետևակային գինվոր  
Դեմիկների զորամասերի գլխավոր  
առավելությունը արագաշարժությունն էր:

**Պատմական տեղեկանք.** «Թորոս կյուրապաղատը ամրացրեց քաղաքը և բազում քաջությամբ պահեց և այլազգիները դարձան անոթով»:

**Սմբատ սպարապետ, Տարեգիրք, 1095թ.**

Գործն ավարտված համարող թյուրքերի համար հուժկու հակագրոհն անսպասելի էր: Յուրօրինակ թակարդում հայտնվելով՝ նրանք խուճապի են մատնվում և լարված, բայց կարճատև մարտից հետո սկսում են նահանջել:

## Դադթանակը

Քաղաքից հակառակորդին դուրս մղելուց հետո Թորոս իշխանն առանց ժամանակ կորցնելու սկսում է վերականգնել պարիսպները: Անենուր՝ գրոհն անդրադարձնելին և պարսպի վերականգնման աշխատանքների ժամանակ, նա իր զինվորների կողքին էր, որոնց համար իշխանի օրինակը ոգևորիչ էր: Փիլիկվանների արձակած քարե կարկտի տակ ուրիհայեցիներն ընդամենը մի քանի ժամուն գոեթե ամբողջությամբ վերականգնում են պարսպի վնասված հատվածը:

Դաջորդ օրը թյուրքերը հայտնվել էին հակասական իրավիճակում: Նրանք պետք է ամբողջ ծավալով կրկնեին նախորդ երկու ամիսների աշխատանքը: Սակայն տիհած անակնկալները դրանով չեն սահմանափակվում. երկարատև պաշարումից հոգնածությանը գումարվում էր պաշարման շարունակման անորոշությունը: Դարցն այն է, որ հնձի ժամանակ Ուրիհան պաշարելով՝ նրանց տեղեկացրել էին, թե քաղաքում պետք է միայն նախորդ տարվա պաշարները մնացած լինեն, հետևաբար սովահարության հեռանկարը հարկադրելու է պաշտպանվողներին հանձնվել: Գրոհի անդրադարձումը վկայում էր, որ Ուրիհայում մթերքի բազարը պաշարներ կան և անհայտ էր, թե դրանք երբ կարող են սպառվել:

Ուրիհայի պատերի տակ անգործության մատնված իրոսակները դեռևս «քննարկում» էին պաշարում շարունակելու նպատակահարմարությունը, երբ տեղեկություն է ստացվում, որ դեպի Ուրիհա է արշավում Ջալեպի, Անտիոքի և շրջակայի սելջուկյան տիրակալների 40 հազարանոց բանակը: Պարզվում է, որ Ուրիհային տիրանալու և նահանգում հայկական իշխանության վերջը տալու ցանկությունը համակել էր շրջակայի թյուրքական ամբողջ վերնախավին:

**Պատմական տեղեկանք.** «Այդ նույն օրերում եկավ Ջալեպի սուլթանը, որի անունը Ռատուան է՝ Դրուշի որդին: Բառատուն հազար զինվորներով Ուրիհայի վրա հարձակվեց և Ասխանը՝ Անտիոքի տեղու: Դրա վրա Սուզանն ու Պալտուխը փախան սուլթանից»:

**Սատրենու Ուրիհայեցի, ժամանակագրություն, էջ 164**

Մեկ այլ իրավիճակում դա կործանարար կարող էր լինել ուռիհայեցիների համար, սակայն Ասորիքին (Սիրիա) տիրացած Հալեպի ամիրա Ռիդվանը (Ռատուան) և Ասորիքի տեր Բաղդ Սիան (Ալսիան) Մուհամմեդը Հայկական լեռնաշխարհի հարավային և արևմտյան շրջանների, ինչպես նաև Եփրատեզերքի նվաճման խնդրում հանդես էին գալիս որպես տեղի թյուրքական ցեղապետնի նրանքիցներ:

Գիտակցելով, որ պաշարումը շարունակելու դեպքում Ուռիհայի պատերի տակ հարկադրված են լինելու ճակատամարտել Ասորիքից արշավող զորքերի դեմ, Սուլթանն ու Բալղուկը հեռանում են իրենց տիրույթները:

## **ԵՎԱ ՄԻ ԻՎԱԴՐԱՆԱԿ**

Հալեպի ու Անտիոքի ամիրաների զորքերը պաշարում են Ուռիհան ու փորձում օգուտներ քաղել հյութից պաշարումից: Երկարատև դիմադրությունից հետո ուռիհայեցիները նոր՝ ավելի ծանր փորձության առջև էին կանգնել, սակայն ուռիհայեցիներն այս փորձության էլ են պատվով դիմագրավում: Թորոս իշխանին հաջողվում է իր շուրջը համախմբել համարադրացիներին, որոնց աջակցությամբ քաղաքի կայազորը կարողանում է կասեցնել քարմ ուժերով գրիհող հակառակորդին:

**Պատմական տեղեկանք.** «Քաղաքացիները, տեսմելով (սուլթանի) գորքերը, սարսափահար եղան: Թորոս կրտսապահատը Ուռիհայի բոլոր բնակիչներին սիրտ էր տալիս, քաղաքի կարիքները հոգալու համար անհամար դրամ էր հատկացնում: Քաղաքի համար բազում օրեր կատաղի պատերազմ նեցին, բայց Աստված օգնեց քաղաքացիներին, և (թշնամին) չկարողացավ ոչիմ անել. բոլոր քաղաքացիները՝ այսուժամիրտ դարձած, դիմագրավեցին այլազգիներին, որոնց զորքը, կատաղի պատերազմից ճարահատյալ, ամորթ հետացավ»:


**Սատրենո Ուռիհայեցի, Ժամանակագրություն, էջ 164-165**

Պարզվում է, որ նոր հակառակորդը չունի պաշարողական միջոցներ, ինչը ոգևորում է ուռիհայեցիներին: Թեև պայքարն այժմ վարվում էր անհամենատ ավելի մեծարիվ հակառակորդի դեմ, սակայն հաջող պաշտպանության կազմակերպումն այդքան էլ անհնարին չէր:

Շուտով հակառակորդի հրամանատարության առջև նոր խնդիր է ծառանում: Դրան զուգահեռ պարզվում է, որ մեծարիվ զորքով Ուռիհա հասած սելջուկյան իրուսակները պահեստած բավարար պարեն չունեին, և նրանց համար «անգործությունը» կործանարար կարող էր լինել: Արագորեն համոզվելով, որ պաշար-

վածներն իրենց ողորմածությանը հանձնվելու մտադրություն չունեն, իսկ կատաղի գրոհներն էական արդյունքների չեն հանգեցնում, հակառակորդը որոշում է դադարեցնել պաշարումն ու հեռանում է, ինչը հավասարազոր էր պարտության:

Այսպիսով, շրջակայքի սելջուկյան տիրակալների դեմ եռամսյա հերոսական պաշտպանությունն ավարտվում է Թօրոս իշխանի գլխավորած ոչ մեծ իշխանության հաղթանակով։ Դատկանշական է, որ այս դրվագը նկարագրող պատմիչ Մատթեոս Ուրիհայեցին նկարագրությունը ավարտում է հետևյալ խոսքերով։  
«Ուսիհա քաղաքում խաղաղություն տիրեց»։



**Խոյի ճամփումը**  
Խոյը պարսպակործան հնագույն միջոցն է։  
Նույնչափ հին են խոյի դեմ պայքարի հնարքները։

## **ՎԱՀԿԱՅԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՈՈՒԲԻՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ 1098Թ.**

**ՈՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԽԱՅԱԿԻՐՆԵՐԸ**

**Կ**իլիկիայում խաչակիրների փոքրաթիվ ուժերի հաղթար-  
շավը սելջուկյան կայազորներին հարկադրում է հրաժար-  
վել դիմադրության բոլոր փորձերից: Նրանք անկանոն նա-  
հանջ են սկսում, որը խուճապահար փախուստի է վերածվում:  
Այդ ընթացքում խաչակիրներին մեծ օգնություն է ցուցաբե-  
րում Ռուբեն իշխանի որդի Կոստանդինը:

**Տեղեկանք.** Ուլրեն իշխանը Գագիկ Բ արքայի զորավարներից էր: Վերջինիս մահից հետո՝ մոտ 1080թ., Ուլրենը հաստատվել էր Կիլիկյան Տապուակի անահիկ Կոպիտաքի շրջանի Բարձրքերդ և Կորոնողու (Կոլինողու) ամրոցներում ու այստեղից քչեւ բյուզանդացիներին: Ուլրենին հաջորդած որդին՝ Կոստանդին Ա-ն (1095-1100թթ.), ծեռանոլիս է լինում նորաւետեղ իշխանության ամրապնդան և տնտեսական հզորացման գործին:

Մասնավորապես, խաչակրաց արշավանքի մախօրյակին Կոստանդինը թյուրքերին դուրս էր շարտել լեռնանցքներից և այդպիսով զգալիորեն աջակցել խաչակիրների առաջխաղացմանը (տե՛ս քարտեզը): Վերջիններս կարողանում են ճիշտ գնահատել ոչ մեծ, սակայն ռազմավարական առումով կարուր դիրք ունեցող իշխանության տիրոջ երկուստեք նպաստավոր օգնությունը, որը նրանց հնարավորությունն է տալիս արագորեն ավարտել Կիլիկիայի գրավումը:

Անտիոքի պաշարման ընթացքում սովորական եզրին հայտնված խաչակիրներին պարեն մատակարարելով՝ Կոստանդինն էլ ավելի է ամրապնդում իր դիրքերը: Ի նշան շնորհակալության՝ խաչակիրները հայ իշխանին բարոնի տիտղոս են շնորհում:


## Ռազմավարությունը

Խաչակրաց արշավանքի ընթացքում արտակարգ նպաստավոր դիրքում հայտնված Ուլրենիան իշխանությունը փորձում է օգուտներ քաղել ստեղծված իրադրությունից: Յարցն այն է, որ Կիլիկիայի բոլոր կարևոր ամրությունները թյուրքերից գրավելով՝ խաչակիրները շտապում էին հեռանալ և միանալ դեպի Ասորիք շարժվող գլխավոր ուժերին: Փոքրաթիվ կայազորներ են թողնվում Կիլիկիայի միայն գլխավոր քաղաքներում:

Ալեքսիոս Կոննենոս կայսրը ծագում է օգտվել Անտիոքում խաչակիրների ժամանակավոր անհաջողություններից: Գործի նմելով բյուզանդական դիվանագիտության բոլոր հնարքները՝ կայսրը կարծ ժամանակում հսկողություն է հաստատում թյուրք իրուսակներից մաքրված Կիլիկիայի մեծ մասում: Այդ ժամանակ, բոլորի համար անսպասելի, խաչակիրների և բյուզանդացիների քաղաքական բարդ «խաղին» միջամտում է նաև Կոստանդինը, որը խորամանկ հարվածով 1098թ. գրավում է Վահկա բերդը (տե՛ս քարտեզը):

Դայ իշխանի ռազմավարությունը այնքան համարձակ էր, որ սկզբնապես անորոշության մեջ է գցում ոչ միայն բյուզանդացիներին, այլև խաչակիրներին: Ակնհայտ էր, որ Երկու կողմին համար էլ ժամանակավորապես ծեռնտու չէր, գլխավոր խնդիրներից շեղվելով, ռազմական գործողություններ սկսել Կիլիկիայի լեռներում ամրացած ոչ մեծ իշխանության դեմ: Կոստանդինը կազմել էր իր ծրագիրը՝ Ելենով հետևյալ նկատառումներից:

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1097-1098 թթ.



● Բյուզանդացիները, նախքան Կիլիկիայում գերիշխանություն հաստատելը, հսկողության տակ պետք է առնեն Փոքր Ասիայում թյուրքերից հետ գրաված զգալի տարածքները: Իրադրությունը վերահսկելու նպատակով նրանք ոչ մեծ կայազորներով ընդամենը ճգնում էին պահպանել Դաշտային Կիլիկիայի կարևորագույն հանգույցները: Դետևաբար, նրանք ամեն կերպ խուսափելու էին նոր հականարտությունից:

● Քանի որու Ասորիքի թշնամական միջավայրում շարունակվում էր Աստիքի պաշարումը (հնարավոր է, որ դրանից հետո էլ), խաչակիրները կախվածության մեջ էին լինելու Կիլիկիայից ուղարկվող պարենից և չեն հանարձակվի սրբել հարաբերությունները Կոստանդինի հետ: Այդպիսով, գրեթե բացառվում էր հայերից Պահկան հետ խլելու և բյուզանդացիներին վերադարձնելու համար խաչակիրների Կիլիկիա վերադառնալու տարբերակը:

## Հաղթանակը

Որոշվում է գործել սրընթաց և վճռական հարձակումով: Լինելով երկրամասի առավել անմատչելի և մեծ ամրոցներից մեկը՝ Վահկան հեռու էր Դաշտային Կիլիկիայի բանուկ Ծանապարհներից: Դետևապես, ամրության գրավումը չեր վտանգում ոչ Բյուզանդիայի, ոչ էլ խաչակիրների կենսական շահերը: Այս առումով համար դիմադրության ցուցաբերման հավանականությունը նվազում էր: Բացի այդ, կայազորն այնքան փոքրաթիվ էր, որ բյուզանդացիների իշխանությունը Վահկայում գրեթե ծևական էր:

Դայոց զորամասերի արշավանքը սրընթաց էր ու անսպասելի: Ռազմերին ուղեկցվում էր հակառակորդին մոլորեցնելու և ռազմական խորամանկության տարրեր պարունակող մարտավարական հնարքների կիրառումով: Արյունքում՝ հակառակորդը վերջնականապես զրկվում է դիմադրելու կարողությունից և հանձնվում:

## Դադարանակի ամրագրումը

Դադարանակի նշանակությունն ընդգծելու և Վահկան պահելու վճռականությունը ցուցադրելու նպատակով Կոստանդինն այն դարձնում է իր նստավայրը՝ այստեղից եր սկսվելու իշխանության ընդարձակումը: Սիևուլյան ժամանակ, հայ իշխանը գիտակցում էր, որ Կիլիկիան հայկական իշխանության ներքո միավորելու ծգուումը պետք է «դիվանագիտական» իիմնավորում էլ ստանա: Առիթը սպասել չի տալիս:

Թլապաշարի տեր ժուլին Կուրտենցին<sup>1</sup> խնդրում է Կոստանդինի դստեր ձեռքը: Դայ իշխանը, որը Վահկայի կորստից վրդովված Ալեքսիոս կայսեր դեմ սպասվող պայքարում միայնակ չմնալու նպատակով ևս փնտրում էր խաչակիրների զինակցությունը, համաձայնություն է տալիս այդ ամուսնությանը: Ստեղծված անկայուն իրավիճակում Կոստանդին իշխանի և ժուլին Կուրտենցու մերձեցումն ու խաչակիրների հակաբրուցանդական պայքարին միանալը հայոց դիվանագիտության հաջողություններից են:

Այսպիսով, Վահկայի գրավումը և դիվանագիտական մտածված քայլերը դարձան Կիլիկիայի հայկական իշխանության ռազմական հզորացման կարևոր մեկնակետը:

**Տեղեկանք.** «Կիլիկիայի պատմության մեջ խկապես անկախ միակ պետությունը ծնունդ է առել միայն ԺՄ դ. վերջում, իսկ ԺԲ դ. վերջում դարձել է Կիլիկիայի հայկական թագավորություն: Շրջապատված Բյուզանդիայով, Ասորիքի լատինական պետություններով, մոնղոլներով ու մահմեդական աշխարհով՝ այն կարևոր քաղաքական դեր էր խաղալու Արևելքում»:

**Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 21**

<sup>1</sup> Խաչակիրների շրջանում մեծ հեղինակություն վայելող ժուլին Կուրտենցին հետագայում դարձավ Եղեսիայի կոնս (ժուլին Ա):

## ՄԱՐՍԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1100թ.

### ՄԱՐՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԵՂԵՈՒՄԸ

**Ա**հլիկիան հյուսիսից և արևելքից շրջանցող խաչակիրների գլխավոր ուժերը 1097թ. աշնանը գրավում են Սարացը: Քաղաքի գրավման իրադարձությունների կապակցությամբ էլ առաջին անգամ հիշատակվում է հայազգի հշխան Թաթուլի անունը, որը կարևոր ծառայություններ է նատուցում խաչակիրներին և արժանանում նրանց բարձր գնահատականին:

Ալեքսիոս Ա-ի հետ կնքած պայմանագրի համաձայն, խաչակիրները Մարաշը վերադարձնում են արշավանքի ընթացքում իրենց ուղեկցող բյուզանդական զորախմբին և շարունակում իրենց ճանապարհը: Ալեքսիոսը, հավանաբար նկատի ունենալով քաղաքի հայկական նկարագիրը, Մարաշի դուքս է նշանակում Թաթուլ իշխանին:

Թաթուլն անմիջապես ծեռնամուխ է լինում քանիցս ավերված քաղաքի ներքին կյանքի և ամրությունների վերականգնման, ինչպես նաև շրջակա գյուղական շրջանների շենացման աշխատանքներին:

**Պատմական տեղեկանք.** «Սպարապետ իշխանաց իշխան Թաթուլը նստում էր հունաց կայսր Ալեքսի իշխանության տակ գտնվող Մարաշ քաղաքում, որը ֆրանկ իշխաններն էին նախորդ տարին տվել Ալեքսին»:

*Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 179*

Վայելելով Մարաշի գավառի բնակչության վստահությունը՝ հայ իշխանն ընդհանենը երկու տարում կարողանում է ավարտել պահանջվող աշխատանքները: Քաղաքը վերստանում է իր վեհաշուր տեսքը: Բյուզանդական կայսրության հիմնական տիրույթներից կտրված լինելով՝ Թաթուլը փաստացի անկախ էր և Վահրամ Վարաճնունուց հետո վերականգնում է հայկական իշխանությունը Մարաշում:

## *Լատինների ռազմավարությունը խաչակրաց արշավանքից հետո*

Թվում էր, թե Երուսաղեմի գրավումով արշավանքը տրամաբանական ավարտին հասցելով՝ խաչակրաները պետք է դադար առնեին: Սակայն ծանր արշավանքից հետո ռազմական գործողությունների ինտենսիվությունն անկում չի ապրում, և արդեն 1100թ. գարնանը նոր «Եռուն» ժամանակներ են սկսվում: Հատկանշական է, որ արշավանքի ավարտից անմիջապես հետո լատինները դեն են նետում իրենց գործողությունները իհմնավորելու կոչված կրոնական «Փաստարկները» և բացահայտ նվաճողական քաղաքականության անցնում: Մոռացության են տրվում Սուրբ Վայրերի անվտանգության ապահովման հարցերը, որոնք թելադրում էին նահմեդականներից ազատված տարածքներից հարվածն ուղղել դեպի արևելք կամ հարավ: Լատինների առաջին խկ թիրախներն են դառնում իրենց տիրույթների հյուսիսում գտնվող հայկական իշխանությունները: Առաջին հարվածն ուղղվում է դեպի Մարաշ, այլ խոսքերով՝ խաչակրաց արշավանքի ուղղությանն ու տրամաբանությանը հակառակ:

Նվաճողական քաղաքականության «առաջամարտիկի» դերում հանդես է գալիս Անտիոքի պրինց Բոհեմունդ Ա Տարենտացին (1098-1111թթ.), որը գլխավորում էր խաչակրաների «հակաբրյուզանդական» թկը: Բնականաբար, նրա հարվածն էլ պետք է ուղղվեր տարածաշրջանում բյուզանդական իշխանաց իշխանի նստավայրը հանդիսացող Մարաշի ուղղությամբ, չնայած քաջատեղյակ էր, որ Թաթուլը փաստացի Բյուզանդիայից անկախ քաղաքականություն էր վարում:

**Պատմական տեղեկանք.** «Յույներն իրենց խոստումը չկատարեցին: Դրա համար էլ ֆրանկների մեծ կոմս Պեմունդը, նրա քեռորդի Ռիջարդը<sup>1</sup> ֆրանկների զորահավաք անելով, շարժվեցին Մարաշ քաղաքի վրա»:

**Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն, Էջ 179**

## Մարաշի պաշտպանությունը

Պաշարված Մարաշի դիմադրությունը ստանձնելով՝ Թաթուլը բավական բարդ իրադրությունում է հայտնվում: Խնդիրն այն է, որ լատիններից պաշտպան լինելով՝ նա գիտակցում էր, որ քաղաքի գլխավոր թշնամիները սեւուկներն են, որոնք իրական ուժ էին ներկայացնում: Մտահոգիչ էր նաև, որ այդ ռազմերը խաչակրաց արշավանքի մյուս առաջնորդների կողմից բացասական վերաբերմունքի չէր արժանացել:

Մարաշը լիակատար մեկուսացման մեջ էր հայտնվել, քանի որ շրջապատված էր բյուրքական հրոսակախմբերի ասպատակությունների ենթարկվող տարածքներով, իսկ բյուզանդական զորքերից աջակցություն ստանալու հավանականությունն աննշան էր: Բացի այդ, կարևոր նշանակություն ուներ Երուսաղեմի գրավումից հետո լատինների զորքերի մեջ տիրող ոգևորության մթնոլորտը:

## Հաղթանակը

Միայնակ մնացած մարաշցիները բյուզանդական փոքրաթիվ կայագորի օգնությամբ համար դիմադրություն են ցույց տալիս: Հայկական կողմի համար նպաստավոր էր այն հանգամանքը, որ Անտիոքից դուրս գալիս լատինները պատշաճ ուշադրություն չին դարձել զորքը պաշարողական տեխնիկայով ապահովելու հարցին:

Առանց պարապակործան մեքենաների Մարաշի հզոր ամրոցը գրավելու շտապող Բոհեմոնդի վարքագիծը վկայում էր նրա ինքնավստահության մասին, իսկ եթե դրան ավելացնենք նաև Թաթուլ իշխանի կազմակերպած հմուտ պաշտպանությունը, ապա արշավանքը սկզբից եթե դատապարտված էր անհաջողության: Այդուհանդերձ, որոշվում է շարունակել պաշարումը:

<sup>1</sup> Խոսքը Ուչարդ Սալերնացու մասին է, որը հետաքայում (1104-1108թթ.) Եղիսաբետի կառավարիչ դարձավ:

**Պատմական տեղեկանք.** «(Ֆրանկոնի) կատաղի պատերազմ մղեցին իշխանաց իշխանի դեմ, որի անունը Թաթուլ էր, նրանից Մարաշ քաղաքը պահանջելով։ Իշխանաց իշխանը չերկյուղեց պատերազմ տալուց։ Թաթուլը քաջ մարդ էր և պատերազմող։ նա բազմաթիվ ազատներով Մարաշ քաղաքում էր գտնվում։ Իսկ Պեմունդը (Բոհեմունդ), որ իրեն էր ենթարկել Մարաշի գավառը, բանակել էր Մարաշի դաշտում։»

**Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն, էջ 179**

Մարաշիները հաջողությամբ հետ են մղում մի քանի գրոհ։ Անսպասելի համար դիմադրության հանդիպած լատինները հարկադրված են լինում խոստվանել, որ իրենց ծրագիրն արկածախնդրություն էր ու դադարեցնում են քաղաքի պաշարումը։

# ՄԵԼԻՏԵՆԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## 1100թ.

### Ռազմավարության վերանայումը

Մարաշում կրած պարտությունը հանգիստ չէր տալիս Բոհեմունդ Ա-ին, որը ձգտում էր վերականգնել իր հեղինակությունը: 1100թ. հուլիսին նա արշավանք է ծերնարկում Յալեափի սելցուկյան ամիրայության դեմ: Կելլայի ճակատամարտում լատինները խոշոր պարտության են մատնում Ռիդվան ամիրայի զորքերին և հասնում գրեթե մինչև Յալեափի մատուցները: Դժվար է ասել, թե ինչով կավարտվեր «հառթարշավը», եթե Բոհեմունդը չստանար մտահոգիչ լուրեր Մելիտենեի հյուսիսից, որտեղ նրա դիրքերն ամուր չեն: Իրադրությունն Անտիոքի իշխանապետի համար բարդանում է, և անհրաժեշտ է դառնում վերանայել տարածաշրջանային ռազմավարության խնդիրները, առաջին հերթին՝ Եփրատեզերը-Կիլիկիա առանցքի հայկական իշխանությունների նկատմամբ դիրքորոշումը:

Բյուզանդացիներին և սելջուկներին թշնամաբար վերաբերվող Բոհեմունդը գիտակցում էր, որ տարածաշրջանում լատինների համար հյուսալի դաշնակից կարող էին լինել միայն հայերը: Յայկական իշխանությունների մի մասը ճանաչում էր Բյուզանդական կայսրության գերիշխանությունը, սակայն դրանք բոլորն էլ, հիրավի, անկախ քաղաքականություն էին վարում: Լատին իշխանների համար սկսվում է հայոց ռազմաքաղաքական դերի ու նշանակության վերիմաստավորման ժամանակաշրջանը:

**Տեղեկանք.** «Արևելյան բոլոր քրիստոնյաների շարքում, որոնց հետ ֆրանկ գաղութարնակներին վիճակված էր հաղորդակցվել, հայկական համայնքը միակն էր, որին նրանք պիտի վերաբերվեին որպես հավասարի, քանի որ այն միակն էր, որի մեջ նրանք ռազմական արժանիք պիտի հայտնաբերեին, միակը, որն ուներ գինվորական և հողատիրական ազնվականություն, որի հետ նրանք կարող էին միանալ առանց նվաստացած զգալու»:

*Ո՞մնե Գրուսե, Լևանտի կայսրությունը, հատ. I*

Մելիտենեի պաշտպանությունը նպաստելու էր լատինական պետությունների հյուսիսային սահմանների անվտանգության ապահովմանը, և Գարբրիել իշխանի դիմումին արձագանքելով՝ Բոհեմունդն ուղղություն է վերցնում դեպի հյուսիս:

Մելիտենեի հայկական իշխանության ջանքերի շնորհիվ ավելի քան չորս տարի խաչակիրներն ազատված էին իրենց կոմունիկացիաների պաշտպանու-

թյան անհրաժեշտությունից: ճանապարհների խաչմերուկում գտնվող քաղաքի ռազմավարական կարևորությունն անվիճելի էր, քանի որ 1096-1097թթ. Իկոնի-այի սուլթանության գործերի ուշադրությունն իր վրա գամելով՝ Գաբրիելն օր-յեկտիվորեն նպաստել էր խաչակիրների առաջխաղացմանը, ապա 1097-1099թթ. հետ մղել Սեբաստիայի ամիրա Մելիք Ղազի Գյումուշտեգին Իբր-Դա-նիշմանի (1084-1134թթ.) գործերը: Պահը նպաստավոր էր, մանավանդ որ փոր-ձառու հայ իշխանը հայտարարել էր Բոհեմունդից Մելիտենեի անվտանգու-թյան երաշխիքներ ստանալու դեպքում Անտիոքի գերիշխանությունն ընդունե-լու պատրաստակամության մասին:

## **Մարտավարության սիսալները**

Բոհեմունդը Մելիտենե է շարժվում 1100թ. օգոստոսին՝ Շալեպի արշավանքն ավարտելուց անմիջապես հետո: Մեծաքանակ բանակով Մելիտենեին սպառնա-ցող, Սեբաստիան զավթած ամիրա Ղազիի դեմ Բոհեմունդն իր զարմիկ Ոիշարդ Սալերնացու հետ միասին ընդամենը 500 ասպետ է դուրս բերում: Ի լրումն, լա-տին իշխանը զորախնմի ռազմերթը բավական անփույթ է կազմակերպում:

## **Դազմերթը**

Երեք տարի շարունակ սելջուկյան գործերը խաչակիրներից կրում էին պար-տություն պարտության հետևից, որին ավելացել էր Մելիտենեի հերոսական պաշտպանությունը: Այս պայմաններում Ղազին առաջին հերթին հոգեբանա-կան առումով էր կարևոր համարում թեկուց ոչ մեծ հաղթանակ տանելն ու սե-փական ուժերի նկատմանը վստահություն ծեռք բերելը: Բոհեմունդի անհաշ-վենկատ արշավանքը նրան հաղթանակ տանելու անշափ պատեհ հնարավո-րություն էր տալիս:

Զորավարական տաղանդ պետք չէր ունենալ հասկանալու համար, որ տա-կավին փոքրաթիվ լատինների և քաղաքն ամուր պահող հայերի միավորումն անիրական կդարձներ Մելիտենեի գրավման հոլյսերը: Յետևաբար, Մելիտենեի ճանապարհին գտնվող նորմանների վրա հարձակվելու Ղազիի որոշումը մար-տավարական առումով հիմնավորված է:

Ճանակարձակի հարվածով Սեբաստիայի ամիրան մարտ է պարտադրում Ան-տիոքից երկարատև ռազմերթով Մելիտենեին մոտեցող ասպետների գորանա-սին: Լատինները ծանր պարտություն են կրում, իսկ Բոհեմունդը գերվում է:

**Պատմական տեղեկանը.** «Սվագի և այլ վայրերի իշխան Կումուշտեղին իր Դիլուն բանակ կազմեց... Նա ջարդեց ֆրանկներին, որոնք արշավել էին Մալաթիայի կողմերը, և նրանց վրա հարձակվելով նրանց քաջավորին գերի վերցրեց»:

**Արու-Լ-Ֆիդա,  
Դամառոտ պատմություն մարդկային ցեղի, հատ. Ա**

Անհաջողությունը Բալդուին Բուլոնցուն հարկադրում է մի կողմ թողնել ներքին տարածայնությունները և ձեռքի տակ եղած բոլոր ուժերով (ընդամենը 140 ասպետ) շտապել օգնության: Տեղեկանալով Բոհեմոնդին փրկելու համար ձեռնարկված միջոցառումների մասին՝ Ղազին հեռանում է իր երկիրը, և Բոհեմոնդին փրկել չի հաջողվում: Այնուամենայնիվ, Բալդուինը կարողանում է իր գերիշխանությունը պարտադրել հականահներական պայքարի միասնական ճակատ ստեղծելու պատրամքերով տարված Գարրիկելին: Այսպիսով, Բալդուինը եղեսիայի կոնսուլյան ազդեցությունը տարածում է մինչև պատմական Փոքր Հայքի սահմանները:

## Հաղթանակը

Ամիրա Ղազիի դեմ պայքարում խաչակիրներին միանալու Գարրիել իշխանի որոշումը հարկադրված, սակայն արդարացված քայլ էր:

Երկարատև պատերազմում մելիտենացիների ուժերը հյուծվել էին: Հակառակ դրան, Բոհեմոնդին գերելուց հետո Ղազին ակտիվացրել էր իր գործողությունները: Մելիտենեի դեմ նախապատրաստվող արշավանքի հավանականությունը մեծանում էր, եթե նկատի ունենանք, որ հաջողությունից ոգևորված բյուրեղը ծգտելու էին Վլեթ փոխհատուցել մելիտենացիներին՝ լատինների ուշադրությունն իրենց դեմ կենտրոնացնելու համար: Բալդուինն ինքն էլ գիտակցում էր, որ Ղազիի ուշադրությունը Մելիտենեի վրա է կենտրոնացված լինելու: Այդ պատճառով, նոյնիսկ բավարար ուժեր չունենալով, նա քաղաքում կայագոր է բոլորւմ: Սակայն կայացորն այնքան փոքրաթիվ էր, որ նրա ներկայությունն ավելի շուտ հոգեբանական նշանակություն ուներ: Այդուհանդերձ, մելիտենացիների համար կարևոր նշանակություն է ունենում երկարատև միայնակ պայքարից հետո դաշնակից ունենալը: Նրանք անմիջապես ծեռնամուխ են լինում քաղաքի պաշտպանության աշխատանքներին:

Ինչպես և պետք էր սպասել, վերախմբավորումների վրա ընդամենը մի քանի շաբաթ ծախսելով՝ սեպտեմբերին Ղազին հարձակման է անցնում և չորրորդ անգամ պաշարում Մելիտենեն:

Քաղաքի ուժերն այնքան փոքրաթիվ էին, որ Գաբրիել իշխանն արտագրոհներ իրականացնելու հնարավորություն չուներ և քաղաքի «հերթական» պաշտոնանը պատասխանում է նախկինի պես խոլ պաշտպանության անցնելով։ Դակառակորդը գամկում է Մելիտենեին և դադարեցնում մյուս շրջանների ասպատակությունը։

Այս անգամ էլ ամիրան տեսնում է, թե որքան բարձր է մելիտենացիների ոգին, իսկ նախկին տարիներին Գաբրիել իշխանի կիրառած մարտավարության կրկնությունը սպառնում էր հերթական անհաջողությամբ ավարտել նաև այս պատերազմաշրջանը։ Շուտով Դագին հարկադրված գիտակցում է պաշտոնան շարունակման աննպատակահարմարությունն ու նահանջում։

Այսպիսով՝ Գաբրիել իշխանը կարողանում է հաղթանակով ավարտել ծայրահեղ անբարենպաստ սկսված պատերազմաշրջանը։ Մելիտենեի 1100թ. հերոսական պաշտպանությունը հայերի և խաչակիրների համատեղ տարած հաղթանակների վառ օրինակներից է։ Այն ցուցադրեց, որ հայ-լատինական դաշինքը երկու կողմերի համար էլ հետագա հաղթանակների գլխավոր նախապայմանն է։

**ՍԻՍ ԵՎ ԱՆԱՎԱՐԴԱ ԶԱՂԱՔՆԵՐԻ  
ՄԻԱՅՈՒՄԸ ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՅ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ  
1104թ.**

**Կ**իլիկիայում Կոստանդին Ա իշխանին փոխարինած նրա որդու՝ Թորոս Ա-ի (1100-1129թ.) օրոք հայկական իշխանությունը հզորացման ժամանակաշրջան է թևակոխում:

## **Տարածաշրջանային քաղաքականությունը**

Խլլդ. սկզբին խաչակիրների միջև սկսված պառակություններին ներքաշվում են նաև հարևան հայկական իշխանությունները: Նրանց մեծ մասն ընտրություն է կատարում հօգուտ Բոհեմունդ Ա-ի, քանի որ նա ընքրնել էր հայկական գործնի կարևոր դերակատարությունը տարածաշրջանում:

Լատին իշխանները միավորվում էին միայն կարճ ժամանակով: Այդպիսի մի առիթ է ստեղծվում 1104թ. գարնանը, երբ Եղեսիայի կոնս Բալդրիկն Բ-ի առաջարկով Բոհեմունդ Ա-ն ու Տանկրեդը միանում են Խառամի նվաճման նպատակով իրականացվող արշավանքին: Խառամից ոչ հեռու տեղի ունեցած ծակատամարտն ավարտվում է լատինների ջախչախիչ պարտությամբ: Բալդրիկն Բ-ն և արշավանքի մի շարք այլ առաջնորդներ գերվում են (տես քարտեզը):

Բոհեմունդն ու Տանկրեդը նահանջող զորքերի մնացորդները հապճեպ հանալուում են Ասորիքի և Կիլիկիայի՝ իրենց ենթակա ամրոցներից կանչված կայազրներով ու Եփրատեզերի հայ աշխարհազորայիններով: Մեծ դժվարությամբ նրանց հաջողվում է Խափանել Խառամի աղետից հետո հարձակման անցած թյուրքական զորքերի՝ Եղեսիան գրավելու փորձը:

Լատինների անհաջողությունից օգտվում է Ալեքսիոս Ա-ն. բյուզանդական բանակն անմիջապես ներխուժում է Կիլիկիա և լատիններին հարվածում թիկունքից:



**Տեսարան Եփրատի հովտից**

Ուժում գործող հաջորդական թիվը՝ 1104 թ.



## Դազմավարությունը

Բյուզանդացիները կարծ ժամանակում վերականգնում են իրենց իշխանությունը Դաշտային Կիլիկիայում: Նրանց հաջողությունները Թորոս Ա-ի համար տագնապալի էին, քանի որ տակավին անհայտ էին Եղեսիայի շուրջ ծավալված գործողությունների արդյունքները: Լեռնային Կիլիկիայի անարձիկ բերդերում ամրացած Ռութինյան իշխանությունը անվտանգության ապահովման համար հանապատասխան միջոցառումներ է ձեռնարկում: Դաշտային Կիլիկիայի մայրուղիներից հեռու և հարևանների կենսական շահերին չսպառնացող դիրքը շարունակում էր դրական դեր խաղալ Ռութինյանների ռազմավարության համար: Թորոսը նկատել էր, որ ոչ խաչակիրները և ոչ էլ բյուզանդացիներն առանձնապես չեն ձգտում գրավել Լեռնային ամրությունները, քանի որ չեն ցանկանում ուժերը ցրել ու դաշտավայրի կարևոր հենակետերից (Մամեստիա, Աղանա, Տարսոն և այլն) հեռու գտնվող ամրոցներում մեծաթիվ կայազորներ պահել:

## Դաղթանակը

Թյուրբերի և լատինների դեմ երկարատև պայքարում հյուծված Բյուզանդական կայսրությունը ոժվարությամբ էր կարողանում ապահովել իր գործերի առաջնադաշտում Դաշտային Կիլիկիայում, որի սահմանագծին գտնվող Լեռնային քաղաքները հսկղության տակ պահելը գրեթե անիրական էր դարձել: Թորոսը որոշում է օգտվել ստեղծված իրադրությունից և ամրանալ Լեռնային Կիլիկիայում: Նա առաջին հարվածը հասցնում է Սսի ուղղությամբ (տե՛ս քարտեզը):

Կիլիկիայի ապագա մայրաքաղաքը, որը հետագա դարերի ընթացքում հուսալիորեն կապելու էր Կիլիկիայի երկու հատվածներն ու, նույնիսկ, քագավորության իր անունն էր տալու, XIIդ. սկզբին սահմանային հարմար դիրք ունեցող, սակայն փոքր քաղաք էր: Լեռնային ոչ մեծ իշխանության տերը քաղաքական հեռատեսություն է ցուցաբերում և ծիշու է գնահատում Սսի քաղաքի կարևորությունը, որն իր իշխանությանը միացնելով (1104թ.)՝ սկսում է Կիլիկիայի միավորման քաղաքականությունը:

## Դաջողության զարգացումը

Թորոս Ա-ի գործողությունը չի արժանանում Եղեսիայի պաշտպանությամբ զբաղված լատինների և Դաշտային Կիլիկիան նվաճող բյուզանդացիների բացասական վերաբերմունքին: Եթե առաջին դեպքում դա միանգամայն հասկանալի էր, ապա Սսի գրավման հարցում բյուզանդացիների դրսերած վարքագի-

ծը ոչ թե նրանց ռազմավարության փոփոխության արդյունք էր, այլ ժամանակավոր քաղաքական խուսանավման:

Լատինների դեմ թշնամական դիրքորոշում որդեգրած Ալեքսիոս Ա-ն ոչ մեծ զիջումներով ճգոտում էր կայունացնել իր տիրապետությունը Կիլիկիայում: Ակնհայտ էր, որ մի օր նա վերադառնալու էր Լեռնային Կիլիկիայի նվաճման խնդրին, բայց առայժմ քավարար ուժեր չուներ մի քանի ճակատով պատերազմելու համար:

Ստեղծված իրադրությունում Թորոսը որոշում է ավարտել իր հշխանության ներքո Լեռնային Կիլիկիայի միավորումը, և նոր հարվածն ուղղվում է դեպի հարավ, Լեռնային Կիլիկիայի ամենամեծ քաղաքը համբխացող Անավարզայի դեմ, որը նույնական միացվում է իշխանությանը (տես՝ քարտեզը): Անավարզայի դիրքը ռազմական առումով արտակարծ կարևոր էր, սակայն Վահկան շարունակում էր մնալ իշխանանիստ քաղաք:

## Արդյունքը

Այսպիսով, Սսի և Անավարզայի շրջանների միացումով Կիլիկիության հայկական իշխանության սահմանները հասնում են Դաշտային Կիլիկիայի սահմանագծին: Դա Թորոս Ա-ի իշխանության տարիների կարևորագույն ռազմաքաղաքական հաջողությունն էր: Դա մարդակ գործողությունները ոչ միայն նախապայմաններ էին ստեղծում իշխանության հետագա հզորացման ու միջազգային հեղինակության բարձրացման հանար, այլև ապահովում էին իշխանության հարատևումը:

Ռազմական հաջողությունները նպաստում էին նաև իշխանության միջազգային հեղինակության բարձրացմանը, որը լատինական պետությունների կողմից Եփրատեղերի հայկական իշխանությունների վերացման փուլում (1100-1110-ական թթ.) պակաս կարևոր չէր:



Անավարզա ամրոցի աշտարակներից մեկը

## **ԲԵՐԴՈՒՄԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1107թ.**

**ԲԱՐՍԵՂ ԻՇԽԱՆՆ ՈՒ ՔԵՍՈՒՆԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

**Վ**ահրամ Վարաժնունու տերության ավերակների վրա վեր հայոնած և սելջուկների դեմ պայքարը շարունակող հայկական իշխանությունների մեջ ամենահզորը Կամսարական իշխանական տան ներկայացուցիչներից մեկի՝ Բարսեղ (Կասիլ) իշխանի (1082-1112թթ.) իիմնած քեսունի ու Ռապանի իշխանապետությունն էր: Նայոց անկանոն ռազմարվեստը շարունակող իշխանի անսպասելի, սրբնթաց ու հանդուգն հարձակումներն այնքան տպավորիչ էին ժամանակակիցների համար, որ նա ստացել էր «Դաջողած» և «Գող» պատվանունները<sup>1</sup>:

<sup>1</sup> XII-XIII դդ. հայկական հուշարձաններում գողանալ բայց հաճախ գործածվում էր գրավել կամ նվաճել ինաստով: Այդ ինաստն ունի Բարսեղի «Գող» պատվանունը:

**Տեղեկանք.** Թեսունի հայկական իշխանապետությունը տարածվում էր Մելիտենի սահմաններից մինչև Պիր և Եփրատից մինչև Մարաշ, ընդգրկելով մայրաքաղաքը Թեսունը, ինչպես նաև Ռապանը, Յարսան-Մսուրը, Պետեսճին, Յոռմկան և այլ նշանավոր բերդեր (տես Օախորդ ակնարկի քարտեզը): Կարծ ժամանակով նրա մասն են կազմել նոյնիսկ Սամոսատը և Սարաշը: Բարսեղը կրում էր մեծ իշխանաց իշխան տիտղոս:

Խեր. Վերջին Բյուզանդիայի հետ համագործակցող հայ իշխանների մեջ, թերևս, միայն Բարսեղն է արժանացել պատմիչների բարյացական վերաբերմունքին, որը բացատրվում է Հայ եկեղեցու հանդեպ նրա ունեցած նախանձախնդիր վերաբերմունքով: Ընդ որում, նա այդ չեր անուն կայսրության հետ հարաբերությունները վատացնելու գնով, և Ալեքսիոս Ա-ից ստանում է սերաստոսի տիտղոս:

Իշխանաց իշխանն այնքան մեծ հեղինակություն էր վայելում, որ Թեսունի շրջանի Կարմիր վանքում ապաստան է տալիս Հայ եկեղեցու հայութեական աթոռին: Այստեղ իր հովանակության վերջին տարիներն են անցկացնում 1099թ. խաչակիրների հետ երուսաղեմ հասած Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը (1066-1105թ.), ապա նրան փոխարինած Բարսեղ Ա Անցեցին (1105-1113թ.):

Բարսեղ իշխանը նասնակցում է Տրիպոլիի (Տրիպոլիս) համար խաչակիրների ծավալած երկարատև պայքարին և կարևոր դերակատառություն ունենում 1109թ. քաղաքի գրավմանը: Թեսունի իշխանապետությունը գոյությունը պահպանում է նաև Բարսեղի որդեգիր Բարսեղ Տղա (Վասիլ Տղա) Կամսարականի օրոք՝ մինչև 1117թ.:



Սամոսատի (Չամշատի) բերդի ամրոցները

## Ռազմավարությունը

Քեսունի իշխանապետությունն առավելագույն ծաղկման է հասնում 1100-ական թթ.: Չրջակա հայկական իշխանությունների գերակա ճանաչվող Բարսեղ Ղաջողացը ակտիվ մասնակցություն է ունենում տարածաշրջանային զարգացումներին: Նա զգալի աջակցություն է ցույց տալիս խաչակիրներին ինչպես արշավանքի ընթացքում, այնպես էլ հետագայում: Այդ մասնակցությունն առավել վառ դրսորվում է Մելիտենեի ճանապարհին գերված Բոհեմունդի փրկագննան ժամանակ:

Խաչակրաց արշավանքի առաջնորդները ցանկանում են Ղաղից փրկագնել նորման իշխանին, սակայն ամիրան չի ընդունում լատինների առաջրկը: Այդ ժամանակ գործին միջանտում է Բարսեղ իշխանը և 1103թ. կարողանում է գերությունից ազատել Բոհեմունդին:

**Պատմական տեղեկանք.** «Գոյ Վասիլ կոչվող հայոց մեծ իշխանի միջնորդությամբ և օգնությամբ ֆրանկների կոմս Պեմոնդը հարյուր հազար դահեկանոց փրկագնվեց Դամիշանից: Որպես փրկագին (Բարսեղը) տվեց տասը հազար դահեկան, երբ Ամսիորի կոմս Տանգրին Պեմոնդի փրկության համար չտվեց և ոչ մի բան: Ամբողջ գումարը հավարվեց Վասիլի նոտ: Նա մեծ ջանք ու աշխատանք բախեց, որ ...գումարը բերվի իր տիրապետության սահմանները: Նա հարյուր հազար դահեկան վճարեց և Պեմոնդին առավ բերեց իր նոտ»:


**Մատրեռու Ուրիշեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

Ի զարմանս Բարսեղի Բոհեմունդի փրկագնումից հետո Ամսիորը Բոհեմունդին փոխարինող Տանկրեդի հետ իր հարաբերությունները վատանում են: Բոհեմունդը դաման պարտություն է կրում Խառանի ճակատամարտում: Իրադրությունը բարդանում է, քանի որ Բյուզանդական կայսրությունն ակտիվացնում է հարձակումները տարածաշրջանում: Բոհեմունդը վերադառնում է Եվրոպա՝ թարմ ուժեր կուտակելու և բյուզանդացիների դեմ ռազմական գործողություններ սկսելու նպատակով:

## ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ

Բոհեմունդի հեռանալուց հետո Բարսեղը սեւզուկների դեմ հանդիման հայտնվում է մեկուսացման մեջ: Թյուրը բեգերը փորձում են օգտվել առիթից: Զհանդանելով հարվածը հասցնել Քեսունի իշխանապետությանը՝ նրանք առաջն թիրախ են դարձնում Կիլիկիո հայկական իշխանությունը (տես քարտեզը):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 1107 օ.



Իշխանության դեմ հակառակորդը 12 հազարանոց զորք է հաճում և որոշում է վերացնել Կիլիկիայի ու Եփրատի աջ ափի հայկական գերիշխանությունը: Հայկական կողմին սարսափեցնելու նպատակով թյուրքական հրոսակախմբերը դաժանությամբ ասպատակում էին հայկական բնակավայրերը: Սակայն դա մեծ արդյունք չի տալիս. Թորոս Ա-ն ամուր հաստատվել էր Անավարդա քաղաքի շրջակա լեռներում և համար դիմադրություն կազմակերպել: Հակառակորդը չի կարողանում կատարել իր ռազմավարական ծրագրի առաջին մասը՝ լեռնային ամրոցների արագ գրավումը:

Այնուամենայնիվ, ուժերն անհավասար էին: Մեծարիվ հակառակորդին միայնակ դիմակայելու հնարավորություն չունեցող Թորոս իշխանը կայագրուելու քողոնում ամրոցներում և օգնության համար դիմում Բարսեղին: Անմիջապես ձևավորվում է երկու հայ իշխանների դաշինքը, մանավանդ որ հակառակորդն Անավարդայի շրջակայքն ամայացնելով՝ շտապում էր դեպի Մարաշի դաշտ՝ Բարսեղի տիրույթների սահմանները:

## **Ճակատամարտը**

Համատեղ պայքարը գլխավորում է իշխանաց իշխան Բարսեղը: Իրեն բնորոշ սրբնաբարությամբ նա միավորում է ուժերը, հասնում Կիլիկիայից արևելք շտապող Թորոսի զորամասերին և, նույնիսկ, հասցնում է թյուրքական զորքի դեմ շարժվել (տե՛ս քարտեզը):

**Պատճական տեղեկանք.** «Նրանք եկան անցան Մարաշ քաղաքի դաշտով և անհանար քազմությամբ հասան Գող Վասիլի տիրույթները, Բերդուս կոչվող Վայրը, նվիրական սահմաններում: Հայոց իշխան Վասիլը, լսելով այդ մասին, հսկայական զորքերի զորահավաք արեց, որոնք արծվի կամ առյուծի կորյունի նման հասան այլազգիների վրա»:

**Մատքեռ Ուռհայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

Հայկական կողմի գործողություններն անսպասելի էին հակառակորդի համար: Առանց դիմադրության դեպի արևելք նահանջող Թորոսի զորագնդին հետապնդելով՝ թյուրքական զորամասերում ստեղծվել էր տպավորություն, թե Բերդուսի մոտ հայկական կողմը դեռևս ի վիճակի չի լինի ճակատամարտ տալ: Վերջին հանգամանքն էլ փորձում է օգտագործել Բարսեղը, որը, նպաստավոր տեղանքի հասնելով, բոլոր ուժերով վճռական և սրբնթաց հարձակման է անցնում:

## Յաղթանակը

Բարսեղի մարտավարությունը լիովին համապատասխանում էր ստեղծված իրավիճակին: Յարցն այն է, որ ճակատամարտը սկսվելու պահին հակառակորդը հիմնականում հասցնում է մարտակարգ ձևավորել: Սակայն թշնամու ուժերը չեն կարողանում դիմակայել բոլոր ուղղություններից իրականացվող գրոհներին: Ստրկության քշվող մեծաթիվ գերիներին և հարուստ ռազմավարը ձեռքից բաց չընդունելու նտրերով տարված թալանչիները չգիտեին դիմադրե՞ն հայկական զորագնդերի հարձակմանը, թե՞ հոգ տանեն թալանված հարստությունը «Փրկելու» մասին: Յայկական զորքերի հումքու գրոհներին չդիմանալով՝ հակառակորդը մարտադաշտում է թողնում գերիներին և ռազմավարն ու նահանջում: Կազմակերպվում է եռանդուն հետապնդում, որի ընթացքում գերվում են անկանոն փախչող հակառակորդի բազմաթիվ զինվորներ (տես քարտեզը):

**Պատմական տեղեկանը.** «Սաստիկ մեծ հաղթանակ տարան, Թուրքեցին փախուստի նատնեցին, մեկ մարդու պես սրերով հալածեցին նրանց և մեծ ջարդ տվեցին, շատերին գերեցին ու խլեցին նրանց վեցրոց ողջ ավարն ու գերիներին: Յայց իշխան Վասիլը և Յայց բուկանդակ ազատագունդը մեծ հաղթանակով և ցնծությամբ եկան Քեսուն քաղաքոյ:

*Մատքեռ Ուժայեցի, Ժամանակագրություն, Մասն Երրորդ*



Դառմկլայի ավերակները

# ՀԱՐՍԱՆ-ՄՍՈՒՐԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ

## 1108թ.

### Դազմական քաղաքականություն

Խառանի աղետից հետո գերված Բալդուին Բ-ն և ժուլին Կուրտենցին, հսկայական փրկագին վճարելով, 1108թ. ազատվում են գերությունից: Անտիոքի իշխանապետության խնամակալ Տամկրեղը, որը վերահսկում էր Եղեսչիայի կոմսությունը, հրաժարվում է այն վերահարձնել Բալդուինին: Բալդուինը հարկադրված օգնություն է խնդրում հայերից (Քարսեղ Քեսունցուց) և մահմեղականներից (Մոսուլի աթարեկից):

Անտիոքի պատրիարքի միջնորդությամբ Տամկրեղը Բալդուինին է վերադրձնում Եղեսչիայի կոմսությունը: Սակայն սեպտեմբերին Անտիոքի իշխանապետության և Եղեսչիայի կոմսության միջև ռազմական գործողություններ են սկսվում: Անտեսելով խաչակիրների կրոնական համերաշխության գաղափարները՝ երկու լատին իշխաններն էլ դաշնակցում են հարևան մահմեղական պետությունների հետ: Բալդուին Բ-ն օգնություն է խնդրում Մոսուլի աթարեկից, իսկ Տամկրեղը՝ Հալեպի ամիրայից: Թլպաշարի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում Տամկրեղը հաղթում է:

Տարածաշրջանի ռազմաքաղաքական նման իրավիճակում որքան էլ տպավորիչ լիներ Բերդուսի ճակատամարտում տարած հաղթանակը, սակայն այն չէր խաղաղեցնելու հայկական իշխանությունների հարևան կունիայի սելջուկներին: Օգովելով լատիմների երկպառակություններից՝ նրանք 1108թ. նոր հարձակում են սկսում:

### ՆԵՐԻԿՈՒԺՈՒՄԸ

Թյուրքերը հարվածն ուղղում են Քեսունի իշխանապետության ենթակա տարածքների վրա: Այս անգամ ասպատակվում է հյուսիս-արևելքը՝ Հարսան-Մսուր քաղաքը:

**Պատմական տեղեկանք.** «(Թյուրքերը) գորք գումարելով՝ շուրջ վեց հազար ընտիր մարտիկներ, իրենց սուլքանի գլխավորությամբ եկան հայոց իշխան Վասիլի Երկիրը վրեժ առնելու Բերդուսում Վասիլ իշխանից ստացած ջարդի համար: Նրանք հնձի օրերին զազանների պես հասան Հին Սանսուր (Հարսան-Մսուր) կոչվող քաղաքի սահմանները, կոտրեցին հնձվորներին և գերիներով հանդիրձ շարժվեցին գնացին դեպի Հարթան կոչվող բերդը»:

**Մատթեոս Ուռիայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**


Դարձակումը չէր տարբերվում այս ժամանակաշրջանի թյուրքական բազում ասպատակություններից:

## Ճակատամարտը

Բարսեղի վիճակը բնավ նախանձելի չէր, քանի որ ռազմավարական նախաձեռնության հասած հակառակորդի վեց հազարանոց զորքի դեմ ուներ ընդամենը ինգա հարյուր հոգանոց այրուծի և հետևակային ստորաբաժանումներ: Ճակառակորդին հայ իշխանը կարող էր հակադրել իր մարտիկների բարձր մարտական ոգին և հայոց անկանոն ռազմարվեստի անսպառ զինանոցը:

Վճռական գործողությունների մարտավարության կողմնակից լինելով՝ Բարսեղը նպաստավոր տեղանք է ընտրում ճակատամարտի համար ու անհապաղ գրոհում հակառակորդի վրա: Մարտի մտահղացման կարևոր բաղկացուցիչներից էր ուշագրավ սեպածն մարտակարգը, որն ուներ մեծ պահեստագոր (տես սխ. 1):

Սխեմա 1



Դարսան-Սուլթանի ճակատամարտը 1108թ.

Մարտակարգի կենտրոնում Տարոնի տեր Տաճատ իշխանի որդու՝ Ապլսաթ Մամիկոնյանի հեծելազորն էր, որն անկյունով առաջ դասավորության յուրօնինակ «շարժիչ» դերն էր կատարելու: Բազմադարյա փառավոր իշխանական տան ներկայացուցչին հանձնարարված էր այնպիսի գրոհով սկսել մարտական գործողությունները, որ հակառակորդի ամբողջ զորքի (հնարավորության դեպքում՝ նույնիսկ պահեստագործի) ուշադրությունը կենտրոնացվի իր գորաքելի վրա:


Սամիկոնյան իշխանի զորամասին թևերից աջակցելու էին Բարսեղի քեռողի Պետրոսի և Բարսեղ Տղա Կամսարականի սամողաձև շարված հեծյալները, որոնք մարտի էին մտցվելու կենտրոն զորաքելից քիչ ավելի ուշ: Երկու թևերում էլ ստեղծվել էին հնարավորինս հզոր խմբավորումներ, որոնք արցանի մեջ էին առնելու հակառակորդի զորաքելու: Նրանց գրոհը պետք է լիներ առավելագույնս հզոր, վճռեր մարտի ելքը: Գլխավոր ուժերի թիկունքում սեպուհ Տիրանի ուժերն էին՝ ամեն պահ մարտի մտնելու պատրաստ: Մարտակարգն ու կենտրոնի զորաքելի առջև դրված առաջադրանքը հակառակորդից պետք է քողարկեին մարտի մտահղացումը: Կարևորվում էր նաև գրոհի սրընթացությունը, որպեսզի հակառակորդը չհասցներ համարժեք հակաբայել:

## **Հաղթանակը**

Կենտրոնի զորաքելի գրոհով Ապլսաթ Մամիկոնյանը կարողանում է կաշկանդել հակառակորդի գործողությունները: Նրա գինվորները միշրճվում են հակառակորդի մարտակարգի մեջ և սելջուկյան զորքերի կենտրոնական զորաքելու իրարանցում են առաջացնում:

Խախտված մարտակարգը վերականգնելու նպատակով մարտի են մտցվում հակառակորդի պահեստագործ կազմող զորամասերը (տես սխ. 2): Մեծարիվ ուժերով իրականացվող հակագրոհները հակառակորդին հնարավորություն են տալիս մի պահ կայունացնել կենտրոնի զորաշարը: Սակայն սելջուկյան հրամանատարությունը, հակագրոհների վրա ուժերը սպառելով, աչքարող էր արել սամողաձև աջ և ձախ շարված թևերի գրոհի կասեցման խնդիրը: Մինչդեռ վերջինիս հետ մեծ հույսեր էր կապում Բարսեղը:

## ԱխԵմա 2




Հարսան-Մսուրի ճակատամարտը 1108թ.

Ինչպես և պետք էր սպասել, հատող հարվածների համար նախապատրիառտված թևերը միխճպում են հակառակորդի խոցելի դարձած թևերի մեջ և մասնաւում հակառակորդի մարտակարգը, որը կորցնում է կայունությունը: Սկսվում է խուճապ, որի պատճառով հակառակորդն ամբողջ ճակատով վկայվում է նահանջել (տե՛ս սխ. 3): Իրարանցման պատճառով մարտադաշտից չի հասցում ճողովրել սելջուկյան զորքերի գրեթե ամբողջ հրամանատարական կազմը, որը գերվում է:

**Պատմական տեղեկանք.** «Հայոց քաջագունդը ահեղ ճակատանարսում այլազգիների դեմ մեծ հաղթանակ տարավ, սոսկալի ջարդ տվեց նրանց և նրանց սուլքանին ու պարսից քազմաթիվ այլ իշխանավորների գերի վերցրեց: Հայոց իշխան Վասիլը մեծ հաղթանակով և քազմաթիվ ավարով եկավ Քենտուն քաղաքը. նա փրկեց այլազգիների վերցրած բոլոր գերիներին: Հավատացյալները մեծ ցնծության մեջ էին»:

**Մատթեոս Ուրիհայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**



Դակատամարտը 1108թ.

Դարսան-Մսուրի ճակատամարտում հաղթանակը ծեռք բերվեց բարդ ռազմաքաղաքական իրադրությունում ուժերի գերագույն լարումով։ Սելջուկների պարտությունն ու նահանջը երկար ժամանակով անվտանգ են դարձնում Քեսումի իշխանապետության հյուսիսարևելյան սահմանը, որը մինչ այդ ամենավտանգավոր հատվածներից էր համարվում։

Բարսեղ իշխանի շարած սանդղածի աջ և ձախ մարտակարգը հայոց ռազմարվեստի բարեփոխման արտահայտությունն է։ ճակատամարտում ծեռք բերված անչափ արժեքավոր փորձը հաստատում տեղ է գրադեցրել հայոց ռազմարվեստում, և հետագայում բազմից կիրառվել է հայ գորավարների կողմից։

## ԹՈՐՈՍ Ա-Ի ԱՐՃԱՎԱՆՔԸ ԴԵՂԻ ԿԻՉԻՍՏՐԱ 1111թ.

**Թ**որոս Ա-ի հաղթանակները բարձրացրել էին հայկական հշխանության հեղինակությունը, որի վկայությունն էր Ալեքսիս Ա-ի դիրքորոշման փոփոխությունը, որը նրան սերաստոսի բարձր տիտղոս է շնորհում: Այդ ծևով նա փորձում է վերահսկողություն հաստատել Կիլիկիայի ռազմաքաղաքական իրադրության վրա: Թորոս իշխանն ընդունում է բարձր, բայց ոչնչի չպարտավորեցնող տիտղոսը: Յատկանշական է, որ անկախ քաղաքականություն վարող հայ իշխանը տիտղոս ստանալուց անմիջապես հետո ձեռնամուխ է լինում կայսեր «համբերությունը» փորձելու իր ամենավտանգավոր քայլին՝ նրա ենթակայության տակ գտնվող Կիլիկիա Կանացմանը:

## Դազմավարությունը

Կիզիստրան հզոր ամրոց էր Կիլիկյան Տավրոսի հյուսիսում, որը դարեր շարունակ ամուր փակում էր Կապադովկիայի հարավային շրջանների մատուց-ները: VIII-IXդդ. արաբա-բյուզանդական պատերազմների ժամանակ Կիզիստրան կարևոր նշանակություն ունեցող սահմանային ամրություն է եղել: Կիլիկյան դռները հյուսիսային կողմից հսկող ամրությունը բազմից վերակառուցվել ու մեծացվել էր: XIIդ. սկզբին բյուզանդացիների համար քաղաքը պահպանում էր քաղաքական և ռազմավարական կարևորությունը, քանի որ Կիլիկյայի ուղղությամբ մարտական գործողություններ ծավալելու համար հանգույցի էր Վերածվել:

Արշավանքն ուներ ևս մեկ կարևոր խնդիր. անհրաժեշտ էր Գագիկ Բ շահնշահին սպանողներից «անմեղ արյան համար» վրեժիմնիր լինել. ուս նաև կնպաստեր հայության աչքում Թորոս Ա-ի իշխանության հեղինակության բարձրացմանը:

**Պատմական տեղեկանք.** «Յայց 560 թվականին (22 փետրվար 1111 - 21 փետրվար 1112թթ.)... Աստված մի հզոր մարդու՝ հյուց մեծ իշխան Թորոսի՝ Ուուենի որդի Կոստանդնի որդու ծեռքով վրեժիմնիր եղավ Գագիկ շահնշահի՝ Աշոտ Բագրատունու որդու անմեղ արյան համար: Թորոսի օրոք հայց Գագիկ արքային սպանողները բնակվում էին Կոնդոռոսկավիս կոչվող շատ ամուր և բարձր, ամեն կողմից անառիկ բերդում: Մանդալեի որդիները, եթե եղայրներ, դեռ կենդանի էին...»:

*Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ*

## Արշավանքը

Մանդալեի որդիները հույս ունեին, թե Ալեքսիոս Ա-ից սեբաստոսի տիտղոս ստացած հայ իշխանին չի հաջողվի մոտենալ իրենց տիրույթներին: Յարցն այն է, որ Տավրոսի լեռներում մեծաթիվ ուժերի տեղաշարժի համար անհրաժեշտ ճանապարհներ չկային: Թորոսի տիրույթներից ոչ հեռու, բայց անանցանելի լեռներով արգելափակված Կիզիստրա կարելի էր հասնել միայն Դաշտային Կիլիկյայի գլխավոր քաղաքների մոտով լեռները շրջանցելով: Այս տարածքում նպաստավոր միակ ճանապարհն անցնում էր Տանկրեդի կողմից 1108թ. հետ գրավված Մամեստիայի կողքով ու բյուզանդացիների հետ վիճակարույց համարվող Աղանայով (տես քարտեզը):

## ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1111 թ.



Իրոք, Թորոսի գորագնդի համար անհնար կլիներ շրջանցել հակամարտող երկու կողմերի բոլոր արգելվները, եթե հայ իշխանը դիվանագիտական ծանրակշիռ աշխատանք իրականացրած չլիներ: Դայ իշխանը վարպետորեն է օգտագործում բյուզանդացիների հետ նրանց անհաշտ թշնամու՝ Տամկրենի հակասությունները և ճանապարհ է ստանում:

Թորոսը բյուզանդական գործերի ուշադրությունը չգրավելու նպատակով առանց ավելորդ աղմուկի (բայց ոչ գաղտնի) սկսում է արշավանքը: Կայսեր վասալների դեմ իրականացվող արշավանքի մասին տեղեկանալով Տամկրենը բացում է ճանապարհները: Շրջանցելով բյուզանդական կայազորները՝ գորագունորդ հասնում է քաղաքի նախույն կայսերին:

## **«Դարանաձն» պաշարումը**

Տեղեկանալով, որ Մանդալեի որդիները մտադիր են համար դիմադրություն ցուցաբերել, Թորոսը ցուցադրական նահանջով գործը իեռացնում է քաղաքից: Անարիկ ամրության առջև կանգնած ոչ մեծ զորագնդի նահանջն այնքան տրամաբանական էր, որ բյուզանդական կայազորի նարտիկների մտքով իսկ չէր կարող անցնել պաշարման տարրերակը: Վստանգ անցած համարելով՝ նրանք վերադառնում են իրենց գործերին:

**Պատմական տեղեկանք.** «Թորոսն էլ նրա ներկայությամբ ճամփա ներկավ դեպի իր տունը, բայց երբ (Գագիկ Բ-ին) սպանողը չըվեց, նա իր զինվորներով գիշերը մոտեցավ բերդին. հետևակազորին դարան դրեց, իսկ ինքը իեժյաներով իեռացավ դեպի ազարակները, մտադիր լինելով ասպատակել շրջանը»:

**Մատքեն Ռուհայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

Թորոսը, գնահատելով իրավիճակը, որոշել էր, որ Կիզիստրայի գրավումը կարող է ձգձգվել, բայց նախքան ամրոցից հեռանալը հետևակային ստորաբաժնումներով դարան է կազմակերպում (տես քարտեզը):

Դարանակալ ուժերին խնդիր է դրվում փակել դեպի բերդ տանող ճանապարհները և հնարավորության դեպքում անսպասելի գրոհներով խուճապ առաջացնել Կիզիստրայում: Նրանց վրա է դրվում նաև շրջափակումը վերացնելու նպատակով կայազորի բոլոր գործողությունները (այդ թվում արտագրողը) կամխելը: Նեժյալ զորանասերը գլխավորող Թորոսը պաշարման առաջին օրերին պետք է ասպատակեր շրջակա գավառը: Ըստ հայ իշխանի, հեծելազորի վճռական գործողությունները հակառակորդին կստիպեին հակաբայլերի դիմել:

Արշավանքի ելած ուժերի մի մասին պաշարմանը չներգրավելով՝ Թորոս իշխանը հույս ուներ ակտիվություն հաղորդել մարտական գործողություններին: Կիզիստրայի պաշարման երկարելու դեպքում՝ գրավման պահին ստեղծվելու էր մի իրավիճակ, երբ ավերված շրջանը երկար ժամանակով կդադարեց Կիլիկիայի հեմ իրականացվող գործողությունների ռազմավարական բազայի դեր խաղալ:

## «Դարանած» գրոհը

Պաշարման հաջորդ օրը՝ առավոտյան, Կիզիստրայից դուրս են գալիս տեղաշիները, որոնք ընկնում են դարանը և խուճապահար փախչում դեպի ամրոց: Դարանակալ ստորաբաժանումը հասցնում է առաջ անցնել փախչողներից ու մարտի բռնվել դարպասը պաշտպանողների հետ: Օգտվելով փախչող քաղաքացիների առաջացրած խուճապից՝ հայ հետևակայինները կարողանում են իրդեհել աշտարակներից մեկի փայտե ծածկը:

**Պատմական տեղեկանք.** «Առավոտյան բերդաբնակ ժողովուրդը բերդից դուրս եկավ, բայց, տեսնելով դարան մտած (զինվորներին), փախուստի դիմեց: Թորոսի զինվորները սկսեցին բարձրանալ բերդ տանող զարդվորով: Բերդաբնակ ժողովուրդը, տեսնելով նրանց, փակեց բերդի դուռը, իսկ նրանք, տիրանալով դռանը դրսից, կռիվ սկսեցին և բերդի ծեղումի վռա կրակ օցեցին. այն սաստիկ բորբոքվեց: (Բերդի) բնակիչները, տեսնելով դա, բացեցին մյուս կրոնից դուռը և փախան: Թորոսի զինվորները գրավեցին բերդը, բռնեցին փախստականներին, ապա տեղի ունեցածի մասին զնացին զեկուցեցին Թորոսին»:

**Սատրեն Ուրիայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

Հրդեհի պատճառով իրարանցում է սկսվում: Խուճապի են մատնվում նաև կայազորի զինվորները: Կարծելով, թե անելանելի իրավիճակում են հայտնի նրանք բացում են ամրոցի հակառակ կողմից դարպասները և փախչում քաղաքից: Կիզիստրա մտած հայ հետևակայինները գերում են փախչողների մի մասին և ամրանում քաղաքում:

Հայ իշխանը չէր կարծում, որ հզորագույն բերդի գրավումը կարող է իրականացվել ուժերի միայն մի մասով, այն էլ՝ մեկ օրում: Նա շտապում է վերադառնալ Կիզիստրա, որտեղ գերիների մեջ էին նաև Մանդալեի որդիները: Հայոց իշխանը մահապատժի է ենթարկում եղբայրներից երկուսին, իսկ երրորդին գերեվարում է:

Փայլուն հաջողությունը զարգացնելով՝ հայոց զորագնդերն ամրանում են Կիզիստրայում և հարձակում շարունակում դեպի հարավ և հարավ-

արևմուտք (տես քարտեզը): Արշավանքի շարումակությունը հանդիսացող հարվածների հետևանքով հնարավոր է դառնում իշխանությանը կցել քաղաքի և Կիլիկիայի հայկական իշխանության միջև ընկած տարածքները և հուսալիութեն ամրանալ Կապադովկիա տանող ճանապարհների վրա:

Դասնելով նպատակին Թորոս Ա-ի գորագունդը վերադառնում է Վահկա: Կիլիկիայում կայազոր է թողնվում, որը խնդիր ունենալու համար թշնամիների (այդ թվում նաև թյուրքերի) ճանապարհը դեպի Կիլիկիա:

Այսպիսով, Կիլիկիայի արշավանքը պսակվում է հաջողությամբ: Կիլիկիայի հայկական իշխանության և Կիլիկիայի միջև ընկած տարածքները, ինչպես նաև քաղաքից հարավ ընկած ռազմավարական կարևորություն ունեցող ընդարձակ շրջանն անցնում են հայկական իշխանության գործերի հսկողության տակ: Ընդամենը մեկ արշավանքով և մի քանի ամսում հայկական իշխանությունը գրեթե կրկնապատկում է իր տարածքն ու հիմնավորապես ամրանում Լեռնային Կիլիկիայի մեջ մասում:



**Կիլիկիայի բանակի վարձկան լատին հետևակային  
Լատին վարձկան ասպետները տասնամյակներ շարունակ Կիլիկիան Դայաստանի  
բանակի մաս էին կազմում: Մինչև ոսթի ծայրը զրահապատկած  
հետևակային ասպետը նույնքան գրեղ էր, որքան հեծյալը:**

## ԿԱՐԿԱՌԻ ԱՇԱՏԱԳՐՈՒՄԸ

1124թ.

### Ուզմական քաղաքականությունը

1120-ական թթ. սկզբին վերսկսված հայ-լատինական մերձեցման հետևանով որպակապես նոր ռազմաքաղաքական իրադրություն է ձևավորվում: Միայն դրա շնորհիկ է հարևան մահմեդական ամիրաների հարվածների կիզակետում հայտնված Եղեսիայի կոմսությունը խուսափում կործանումից: Զգտելով առավելագույնս օգտագործել հայության մերուժը՝ կոնս ժուլին Ա Կուրտենցին (1118-1131թթ.) Եղեսիայի կառավարիչ է նշանակում Բայսեղ (Վասիլ) ամունով մի հայ իշխանի, որը կարծ ժամանակում վերականգնում է մայրաքաղաքի խարարված մերժին կյանքը:


Այդուհանդերձ, հայկական իշխանությունների դեմ վարած զավթողական քաղաքականությամբ իր սահմանները մերկացրած կոնսությունը չի կարողանում հաջողության հասնել հարևան մահմեդական ամիրայությունների դեմ պայքարում: 1122թ. ժուլին Ա-ն գերի է ընկնում Խարբերդը զավթած Արտուրյան ամիրա Բալակ իբր-Բահրամի ծեռքը: Նրա բացակայության պայմաններում կոմսության խնամակալությունը ստանձնում է Երուսաղեմի թագավոր Բալղում Բ Բուրգացին: Գիտակցելով նախկինում իր վարած քաղաքականության անհեռատեսությունը Բալղումն փորձում է միավորել լատինական պետությունների բոլոր ուժերը, սակայն 1123թ. գարնանը նույնպես գերվում է Բալակ ամիրայի կողմից:

### Ներխուժումը

Օգտվելով բարենպաստ իրադրությունից՝ Բալակը մեծածավալ հարձակում է սկսում, որի առաջին թիրախներից մեկն է դառնում Եղեսիայի կոնսության գերիշխանության տակ գտնվող Կարկառը (Կառկառ), որի տիրակալն էր իշխանության հիմնադիր Կոստանդին Մամիկոնյանի (1180-1114թթ.) ավագ որդի Միքայել (Միխայիլ) Մամիկոնյանը (1114-1136թթ.) (տե՛ս քարտեզը):

Միայնակ մնացած Միքայել իշխանը չի կարողանում դիմակայել մեծաթիվ հակառակորդին: Թյուրքերը գրավում են իշխանության կենտրոն համբիսացորդ Կարկառը:

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1124 թ.



**Պատմական տեղեկանք.** «Պալակը (Բալակ ամիրան) Կառկասի դուռը տարավ թագավորին (սուլթանին), և վերջինս Կառկասը հանձնեց Պալակին»:

**Սատրենո Ուրիայեցի, Ժամանակագրություն, Մասն Երրորդ**

## Յակահարձակումը

Կարկասի իշխանությունը կործանման եզրին էր հայտնվել, քանի որ անհաջողություններից ուշքի չեկած լատիններից օգնություն ակնկալելն անհմաստ էր, իսկ Միքայել Կարկառեցին բավարար ուժեր չուներ: Դժվարին իրավիճակում նա կարողանում է հակառակորդի գործի դեմ ընրամենը հիսուն հոգանոց զինախումբ հավաքել: Սակայն նման պայմաններում Միքայելը ոչ միայն չի հուսահատվում, այլև հարձակման հանդուգն ծրագրի է նշակում:

Լինելով ապստամբական հայեցակարգի հմտորեն իրագործող Մամիկոնյան տան ներկայացուցիչ՝ Միքայել իշխանը լավ էր յուրացրել անկանոն նարտավարության բոլոր նրբությունները: Միքայելի ստորաբաժանումն այնքան փոքրաթիվ էր, որ Կարկասի պես անառիկ ամրության պաշարնան նասին խոսք անգամ լինել չէր կարող: Թափում էր, թե քաղաքում տեղակայված թյուրքական կայազորն անհանգստանալու հիմքեր չունի, երբ Միքայելը ձեռնամուխ է լինում գորեք անհավանական հանդգնություն պահանջող ծրագրի իրականացմանը: Ընդամենը հիսուն հոգանոց գորախումբը պաշարում է Կարկասն ու ամուր փակում քաղաքի մասույցները (տես քարտեզը):

Յակառակորդը հայտնվում է դժվարին իրավիճակում, քանի որ չէր համարձակվում դուրս գալ ամրոցից ու գրոհել պաշարողների վրա: Յարցն այն է, որ հայ իշխանը պաշարումը վարում էր՝ տեղանքի հնարավորությունները հմտորեն օգտագործելով: Պաշարողները դիրքավորվել են դեպի Կարկաս տանող ճամապարհի մոտակա ոչ մեծ բլրակների վրա, որոնք ամրոցի պատերից այնպիսի հեռավորության վրա էին, որ արտագրողողները հարկադրված պետք է լինեին իշխել բարձունքից և հայ մարտիկների վրա գրոհին անբարենպաստ ուղղություններից:

Դայ նետաձիգները լավ տեսադաշտ ունեին և նախքան մերձամարտը սկսելը՝ լեռնալանջի ոչ լայն ճանապարհով իշխող հակառակորդին կկարողանային այնպիսի կորուստներ պատճառել, որ ստորոտից ոչ հեռու գտնվող բլրակներին հասած թյուրքական կայազորը կամ ջախչախված կլիներ, կամ նվազագույնը՝ մարտակարգը խախտած: Շրջակայքին քաջածանոթ լինելով՝ Միքայելը դարաններ և ծուղակներ էր պատրաստել բոլոր արահետների վրա: Այդպիսով կտրվել էր Կարկառում պաշարվածների կապն արտաքին աշխարհի հետ:

## Հաղթանակը

Զեռնարկված միջոցառումների շնորհիվ հայ իշխանը փոքրաթիվ ուժերով հասնում է առավելագույն արդյունքի: Այնքան բազմապիսի էին հակառակորդին մեկուսացնելու հնարքները, որ ամրոցի պատերի հետևում հայտնված թյուրքական կայազորը հայտնվում է խիստ ծանր կացության մեջ: Ի լրումն, կայազորն առավել քան տիհած լուր է ստանում. 1124թ. մայիսին Արտուրյանների տիրապետության տակ գտնվող Յալեափ շրջակայքի պաշտպանության կազմակերպման թեժ պահին Բայլակը սպանվում է: Ստեղծված իրավիճակում թյուրքների միակ իրական ելքն արտագրոն իրականացնելն էր, սակայն երկար երկնտեղուց հետո նրանք չեն հանդգնում դիմել այդ քայլին և հանձնվում են հայ իշխանի ողորմածությանը:

Յակառակորորդ ճամբարում տիրող անդրոշությունից օգտվելով՝ Միքայել Մամիկոնյանը ևս մեկ համարձակ քայլի է դիմում և ազատագրում նաև Պեպուլա (Բարուլա) թերդը: Վերջինիս գրավումը նպաստում է իշխանության անվտանգությանը, քանի որ սահմանները հեռացվում էին Կարկառից:

Այսպիսով, համարձակ հարձակողական ռազմավարության մշակումով և ամրությունը փոքրաթիվ ուժերով պաշարելով՝ Միքայել Մամիկոնյանը հանդես է գալիս որպես հայոց ռազմարվեստի բարեփոխիչ: Պաշարմանը մասնակցող հայկական ստորաբաժանումն այնքան փոքր էր, որ մեկ այլ իրավիճակում Կարկառի պես անառիկ թերդի պաշտպանություն կազմակերպելն անգամ կարող էր անհնար լինել:

Կարկառի ազատագրումը մեր հաղթանակների ուշագրավ դրվագներից է համարվում ևս մեկ պատճառով. քաղաքի վերագրավումով կողմանման վտանգի առջև հայտնված Եփրատեզերքի վերջին հայկական իշխանությունը շուրջ քառորդ դար պահպանում է իր գոյությունը:

## ՊԱՅՉԱՐ ԿԻԼԻԿԻԱ ՆԵՐԻՆՈՒԺԱՇ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՉՈՐՁԵՐԻ ԴԵՄ 1130թ.

**1120** -ական թթ. կեսերը Կիլիկիայի հայկական իշխանության հարևանների՝ Բյուզանդական կայսրության և Իկոնիայի սուլթանության իշխող շղանակներում գահակալական երկպառակությունների ժամանակաշրջան էին: Նրանց թուացման պայմաններում Թորոս Ա-ի եղբոր՝ Լևոն Ա-ի (1129-1137թթ.) համաձայնեցված գործողությունների հետևանքով հայկական իշխանությունը կայունության կղյակի էր վերածվել: Լևոն Ա-ի հետ հարաբերությունները բարելավելու նպատակով Զովիաննես Բ կայսրը (1118-1143թթ.) նրան շնորհում է սեբաստոսի տիտղոս<sup>1</sup>:

<sup>1</sup> Թորոս Ա-ի իշխանության տարիներին Լևոնն արդեն իսկ ստացել էր պրոտոնորենիսիմոս տիտղոսը: Յենևաբար, նոր, ավելի բարձր տիտղոս շնորհելով կայսրը ճանաչում էր Լևոն Ա-ի իշխանությունը Կիլիկիայում:

## **ՆԵՐԻԽՈՒԺՈՒՄՆԵՐԸ**

Դանիշմանյան Մելիք Դագին իր կողմն էր գրավել Մոսուլի և Ջալեափի ամիրա Իմադեդդին Զենգիին: Նրանք որոշում են հարվածներից մեկը հասցնել դաշնակիցներից համեմատաբար մեկուսացված Կիլիկիայի հայկական իշխանությանը:

Պատերազմաշրջանը սկսվում է 1130թ. փետրվարին, երբ հարավից Կիլիկիա է ներխուժում Բոհեմոնդ Բ-ի (1126-1130թթ.) գլխավորած անտիռօյան գործը: Լևոն իշխանն անմիջապես ծեռնամուխ է լինում իշխանության տարածք ներխուժած հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես, Դանիշմանյանների գլխավորած դաշինքի դեմ հավանական գործողությունների համար պատրաստ պահպող գորամասերը սկսում են կենտրոնացվել գորակայաններում (տե՛ս քարտեզ 1):

Սինչ Լևոն իշխանը կհասցներ նախապատրաստել ուժերն ու դուրս կգար հարավային ռազմավարական ուղղությամբ, տեղեկություն է ստացվում հյուսիս-արևելքից սկսված Դանիշմանյանների գործերի հարձակման մասին:

ՊԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1130 թ. (Ի ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆ)



## **Մտահղացումը**

Երկու ճակատով միաժամանակ պատերազմելը բարդագույն խնդիր էր: Լևոն Ա-ն պետք է արագորեն գնահատեր սրբնաթագությունը ռազմաքաղաքական իրավիճակը, ընդուներ գործողությունների որոշում, տար համապատասխան հրամաններ:

Առաջինը գործի է դրվում հայոց հետախուզական ծառայությունը, որը պետք է պարզեր, թե երկիր ներխուժմամբ հրոսակներն արդյոք դաշնակցում են միմյանց հետ, թե ոչ: Հայտնի էր, որ Բոհեմունդ Բ-ն Դամիջմանյան ամիրայի դաշնակիցը չէր, սակայն գրեթե միաժամանակյա ներխուժման փաստից կարող էր տպավորություն ստեղծվել, թե Կիլիկիայի տարածքում նրանց գործողությունները հանձանեցվում են: Հետախուզակները հայտնում են, որ հակառակորդ բանակներից յուրաքանչյուրն իր նպատակները հետապնդելով է ներխուժել Կիլիկիա: Ավելին, նրանք չգիտեն միմյանց մասին:

Քաղաքական իրավիճակը հնարավորինս պարզելուց հետո է Լևոն Ա-ն ձեռնամուկ լինում մի արտակարգ համարձակ և խոր ռազմավարական ծրագրի մշակմանը: Ծրագրի մեխոծ զորամասերի կազմակերպված տեղաշարժերով հակառակորդ քանակներին մոլորեցնել էր: Հատկանշական է, որ հայկական կողմը ձգտում էր բացառապես մարտավարական հնարքներով ռազմավարական արդյունքի հասնել: Մտահղացման անսովորությունն այն էր, որ հայկական կողմն իր կամքը հակառակորդներին պարտադրելու էր նախքան ռազմավարական նախաձեռնությունը նրանցից խլելը:

## **Ծուղակը**

Ապակողմնորոշող գործողությունների արդյունքում հայկական գորագոնդերը պետք է փակեին երկու հակառակորդների առաջխաղացման ուղիները և ապատեղեկացնեին նրանց այնպես, որ վերջիններիս մոտ ստեղծվեր կեղծ պատկերացում, թե երկուսն էլ արշավում են հայկական գլխավոր ուժերի դեմ: Դամաձայն փայլուն մտահղացման, վճռական պահին հակառակորդներին ապակողմնորոշող զորամասերն աննկատ հետ էին քաշվելու, և երկու գորքերը հայտնվելու էին իրար առջև: Ըստ Լևոնի հեռահար հաշվարկի, դա անխուսափելիորեն հանգեցնելու էր իր թշնամիների ընդհարումնը: Դրան զուգահեռ, հայկական կողմնը գլխավոր հարվածը նախատեսում էր հասցնել անտիռքան գորքերին, որի համար վերջիններիս ապակողմնորոշելու հանար լրացուցիչ միջոցառումներ են իրականացվում:

## Ներխուժողները թակարդում

Ուազմավարությունն այնքան վարպետորեն էր մշակված, որ Բոհեմունդի Բ-ն ոգործում է առաջին հաջողություններից և տեղեկություն չունենալով թյուրքական զորքի մասին ու անտեսելով հայկական կողմի հնարավոր դիմադրություն՝ ասպատակությունների նպատակով զորամասեր է ուղարկում այս ու այն կողմ: Երիտասարդ և անփորձ իշխանն անհիմն կերպով արագացնում է անտիռյան զորամասերի ռազմերը (տես քարտեզ 2): Այս ամենի հետևանքով Անավարդայի դաշտ հասնելու նախօրյակին նրա գլխավորությամբ գործող ուժերը գգալիրեն թուլանում են: Քացարձակապես անպատրաստ՝ Զիհուն գետի հովիտ հասած լատին ասպետները հանկարծակի հանդիպում են Կապաղովկիայից ներխուժած թյուրքական զորքին ու չեն հասցնում ի մի բերել ասպատակությունների հաճան ուղարկված իրենց ուժերը: Եվ լատին, և թյուրք զորավարներն էլ սխալ էին զնահատել իրավիճակը և ընկել էին Լլեոն Ա-ի լարած թակարդը: Նրանք հակված էին կարծելու, թե իրենց առջև Լլեոն Ա-ին օգնության շտապող ինչ-որ զորամասեր են, սակայն քանի որ թյուրքերն ավելի մեծարիկ էին, որոշում են գրոհել լատինների վրա: Վերջիններս ծանր պարտություն են կրում մարտում:

**Պատմական տեղեկանք.** «Երբ Անտիրի իշխան Բոհեմունդին իր զորքերով մտավ Կիլիկիո Երկիրը, մյուս կողմից մտավ նաև Ղազին: Ֆրանկ և թուրք զորքերը, որ եկել էին կործանելու Երկիրը, հանկարծ հանդիպեցին իրար: Թուրքական զորքերը շրջապատեցին Բոհեմունդին ու կոտորեցին նրա զինվորներին, որոնցից ոչ մեկը չփրկվեց: Սպանվեց ու գլխատվեց նաև Բոհեմունդը՝ այդ հրաշալի Երիտասարդ... Այսպիսով, այդ թագավորները կոտորեցին իրար, իսկ հայերը փրկվեցին»:

**Անանուն Եղեսիացի, Ժամանակագրություն, Գլ. 300**

## Punjab 2

ԱԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1130 թ. (II ՊԱՏԵՐԱՎԱԾՈՒՅԱՆ)



## Հաղթանակը

Համաշխարհային ռազմարվեստում բացարիկ ռազմական խորամանկությունը պսակվել էր լիակատար հաջողությամբ, սակայն ջանքերն ապարդյուն կլինեին, եթե հայկական կողմը չկարողանար օգուտ քաղել ռազմավարական հրադրությունից:

Անշեղորեն շարունակելով իր նախանշած ծրագրի հրականացումը՝ Լևոն Ա-ն փակում է տակավին իր վերահսկողության տակ մնացող կիրճերը: Առաջին հարվածը հասցվում է Անավարզայի ճակատամարտի նախօրյակին ասպատակության ուղարկված ու մարտին չմասնակցելով պատճառով փրկված անտիբյան զրորամասին (տե՛ս քարտեզ 2): Գլխավոր ուժերի ջախջախումից հետո խուճապի մատնված և հապեալ նահանջող զրորախմբերը չեն կարողանում դիմադրություն ցույց տալ իրենց վկա գրոհած հայկական թարմ ուժերին և ոչնչացվում են:

Փոխելով մարտական գործողությունների ուղղությունը՝ հարձակումը շարունակվում է թյուրքական զորքերի դեմ (տե՛ս քարտեզ 3): Կարծ ժամանակում նրանց առաջխաղացումը ևս կասեցվում է: Զարգացնելով հաջողությունը սրբնթաց հարձակումով՝ հայկական զրորամասերը հսկողության տակ են առնում Մամեստիա (Սսիս) և Աղանա քաղաքներն իրենց շրջակայթով:

Այսպիսով, կարճատև ռազմական գործողությունների ընթացքում Լևոն Այն, փայլուն մշակված ապատեղեկատվական և ապակողմնորոշող գործողությունների շնորհիվ, հաջողվեմ է Երկիր ներխուժած թյուրքական և լատինական զորքերին ճակատամարտել տալ միմյանց դեմ: Երկրորդ փուլում ջախջախավում է լատինների նահանջող զրորամասը, և ժամանակավորապես անվտանգ է դառնում հարավային ուղղությունը: Դրանից հետո ուժերը կենտրոնացվում են հյուսիսային ճակատում:

### Punkt 3

Առաջնային գործողությունները 1130 թ. (III Պատերազմական)



## ԿԻԼԻԿԻԱ-ԱՆՏԻՈՔՅԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ 1132-1136ԹԹ.

**Պ**նայած տարած հաղթանակին, Լևոն Ա-ի տիրապետությունը շարունակում է ենթարկվել ռազմական ու քաղաքական ճնշումների: Խուսափելով բացահայտ հակամարտություններից՝ նա գնում է որոշ զիջումների. հայտարարում է, որ պատրաստ է հարկ վճարել Մելիք Ղազիին, իսկ Խասհակ Կոմնենոսին (որն ապստամբել էր Եղբոր՝ կայսր Չովհաննես Բ-ի դեմ) ժամանակավորապես զիջում է Մամեստիան ու Աղանան<sup>1</sup>, որոնց մկատմամբ հավակնություններ ունեին ինչպես բյուզանդացիները, այնպես էլ լատինները: Սակայն կարծ ժամանակից Լևոնը հետ է վերցնում այդ քաղաքները: Միևնույն ժամանակ, Ռուբինյան իշխանը գիտակցում էր, որ դիվանագիտական խուսանավումներն ընդամենը հետաձգում էին պատերազմը:

---

<sup>1</sup> Քաղաքները Լևոն Ա Ռուբինյանը հանձնել է Խասհակ Կոմնենոսին՝ որպես իր դստեր ամուսնական օժիտ:

## 1131թ. արշավանքը


Մելիք Ղազիի բանակը 1131թ. կրկին ներխուժում է Կիլիկիա: Նկատի ունենալով ուժերի հարաբերակցությունը՝ Լևոն Ա-ն բոլոր ամրոցներում բավարար ուժեր և մթերապաշար է թողնում ու խուլ պաշտպանության անցնում: Նա գիտակցում էր, որ բյուզանդական կայսեր ամենամյա արշավանքներին դիմակայող Մելիք Ղազին չէր կարողանա երկար ժամանակ զորքերը Կիլիկիայում պահել, իսկ լեռնային ամրությունների գրավման ձգձգումը լրջագույն խնդրի էր վերածվելու նրա համար: Չակառակորող կարողանում է ընդամենը երկրորդական նշանակություն ունեցող մի քամի ամրոց գրավել (տե՛ս քարտեզ 1):

Պատերազմն ու առաջ ավարտելը երկու կողմերին էլ ձեռնտու էր, և Ուուրինյան իշխանը, թշնամուն իր տիրույթներից դուրս թերթու նպատակով, խոստանում է Մելիք Ղազիի ամիրայությանը հարկ վճարել: Սակայն դա դիվանագիտական խորամանկ քայլ էր: Թշնամու հեռանալուց հետո Լևոնը կրկին ցուցաբերում է իր անհնագանդությունը: Թյուրքերի հեռանալուց հետո Լևոն Ա-ն Մամետիան և Աղանան միացնում է հայկական իշխանությանը: Այդպիսով նա ավարտում է Դաշտային Կիլիկիայի ազատագրումը:

## Պատերազմի վերսկսումը

Դաշտային Կիլիկիայում գերիշխանության համար Բյուզանդական կայսրության և Անտիոքի լատինների միջև երեսնամյա պայքարն անսպասելի զննացք է ստանում, քանի որ հակամարտությանը միջամտած հայկական կողմն է հաղթող դուրս գալիս: Դովիհաննես Բ կայսրը գրալված էր Դանիշմանյանների դեմ վարվող պատերազմով և չի կարողանում միջամտել Դաշտային Կիլիկիայի համար վարվող պայքարին: Տեսադաշտում մնում են միայն լատինները, որոնք էլ պատերազմ են սկսում: Կարճատև ծմեռային դադարից հետո, 1133թ. անտիոքյան ճակատում ռազմական գործողությունները վերսկսվում են: Թեև անտիոքյան զորքերը տակավին թույլ էին, սակայն ռազմավարական նախաձեռնությունը շարունակում էին իրենց ծեռքում պահել:

Ուշական գործողութեառները 1131-1134 թթ.



## Պատերազմի ծավալումը

Միևնույն ժամանակ, օգտվելով Փոքր Ասիայի հյուսիսում բյուզանդական գործերի հաջողություններից՝ Լևոնը նոր ծրագիր էր մտահղացել: Յարավային ճակատում ծավալված գործողություններին զուգընթաց, հայկական գորագնդերը 1133թ. արշավանք են իրականացնում Սելիխոննեից հարավ-արևելք ընկած Մասարա քաղաքը, որն այդ ժամանակ Դանիշմանյանների գերիշխանության տակ էր: Սրբնաց հարձակումով Մասարան գրավվում է: Յուսիսարևելյան ուղղությամբ կատարված այդ գործողությունից հետո հայկական ուժերը տեղափոխվում են Դաշտային Կիլիկիա, որպեսզի թույլ չտան հակառակորդի ակտիվացնումը հարավային և արևելյան ճակատներում: հայկական իշխանությունը բավականաչափ հզորացել էր երկու ճակատով պատերազմելու համար:


1134 թվականը դիրքային պատերազմի տարի է դառնում, որի ընթացքում Լևոնին հաջողվում է կայունացնել իրադրությունը բոլոր ճակատներում (տե՛ս քարտեզ 2):

Յաջորդ պատերազմաշրջանը (1135թ.) նոր հաղթանակի ժամանակաշրջան է դառնում Լևոն Ա-ի գլխավորած ուժերի համար: Յարավից հարձակման անցած լատինների բոլոր հարվածները հաջողությամբ անդրադարձելով՝ հայկական կողմնը հերթական անակնկալն է մատուցում՝ հակահարձակման անցնելով ոչ թե դեպի հարավ, այլ՝ արևելք՝ Մարաշի և Քեսունի կոմս Բալդուինի տիրույթների ուղղությամբ: Թիրախն անմատչելի Սարվանդիքար ամրոցն էր, որը վերահսկում էր Ամանոսի դղմերը: Զգոր ամրոցը ևս հաջողվում է գրավել, որով հայկական գերիշխանությունը հաստատվում է Կիլիկիայի արևելյան բոլոր գավառներում:

Սարվանդիքարի գրավումը նոր մարտահրավեր էր, և տակավին անմիաբան լատինները՝ Անտիոքի իշխանապետ հոչակված Ռայմոնդ Պուտատիեցու (1136-1149թք.) գլխավորությամբ, կրկին հակահարձակման են անցնում: Սկսվում է պատերազմի ամենավճռական փուլը: Ռայմոնդին աջակցում էին Երուսաղեմի քաջավոր Ֆուլկ Անժուացին (1131-1143թք.) և Բալդուին Մարաշցին, իսկ Լևոն Ա-ին դաշնակցում էր քենորդին Եղեսիայի կոմս Ժուլին Բ-ն (1131-1150թք.):

Ուզանական գործողություններն ընթանում էին Կիլիկիայի տարածքում, ինչը ավերածություններից բացի՝ լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում հայկական իշխանության համար: Յարցն այն է, որ քրիստոնյաների հակասությունները նպաստավոր իրադրություն էին ստեղծում Կիլիկիայի անցուղաքին հետևող թյուրք իրոսակների համար: Նրանք յուրովի են արձագանքում ու փորձում են օգուտներ քաղել: Արշավանքը գլխավորում է Դանիշմանյան Մուլհամեդ Բ իրմ-Ղազի ամիրան (1134-1142թք.): Այս անգամ ասպատակությունների թիրախը ոչ միայն Կիլիկիայի բարեբեր շրջաններն էին, այլև Անտիոքի իշխանապետությունը:

Պատմական ԳՈՐԾՈՂԻ ԹՅԱՇԽՆԵՐԸ 1135-1136 թթ.



Սակայն թյուրքերին չի հաջողվում երկու ուղղություններում էլ հավասարաշափ հաջողությունների հասնել: Եթե անհամենատ ավելի պաշտպանված կիլիկյան ամրոցները հաղթահարելը նրա համար դյուրին գործ չէր, ապա Մարաշի կոնսության ուղղությամբ հասցվող հարվածը հաջողության է հասնում: Այգեկուրի օրերին հասցվող հարվածով ամայացվում են Մարաշի շրջակա գյուղական շրջանները, և կոնսության բնակչությունը հայտնվում է տովի սպառնալիքի առջև:

Լևոն Ա-ն, սակայն, դժվարին իրադրությունից կրկին պատվով է դուրս գալիս: Ուժերը համախմբելով՝ հայ իշխանը կարողանում է ջախջախնել Բալդուին Մարաշուն, ապա մի շարք հաջորդական հարվածներով դուրս քշել թյուրքերին և ամրանալ Դաշտային Կիլիկիայում:

Այդ ընթացքում Անտիոքի իշխանապետության տարածք ներխուժած Աֆշին զորապետի թյուրքական զորքերն ամայացնում են Քեսունի շրջանն ու թալանելով հասնում մինչև Անտիոք:

## Դադթանակը

Ստեղծված իրավիճակում լատիհներին հանգիստ չէին տալիս հայկական իշխանության հաջողությունները: Ռայմոնդ Պուատիեցին և Բալդուին Մարաշին 1136թ. խորանանկության են դիմում: Նրանք կարողանում են ծուղակը գցել ու գերել Լևոն Ա-ին: Որպես փրկագին հայ իշխանը Ռայմոնդին է զիջում գրեթե ամբողջ Դաշտային Կիլիկիան, իսկ Բալդուինին՝ Սարվանդիքարը: Ռայմոնդին ու Բալդուինին թվում էր, թե իրենք են հաղթողները, երբ Անտիոքի իշխանապետությունը հերթական անգամ ցնցվում է Դաշտային Կիլիկիայում ստացված հարվածներից: Լևոն Ա-ի զորագնդերը կայծակնային հաղթարշավով ընդամենը մի քանի օրում վերականգնում են իշխանությունն ամբողջ Դաշտային Կիլիկիայում:

**Տեղեկանք.** «Լևոն Ա-ին երկու ամիս գերի պահելուց հետո, Ռայմոնդ Պուատիեցին նրան ազատ արձակեց՝ ոչ միայն Սարվանդիքարի թերող, այլև Սսիս և Սղանա քաղաքները զիշելու դիմաց: Լևոնը, հազիվ ազատված, վերագրավեց Սղանան և Սսիսը»:

**Ոքնե Գրուսե, Պատմություն Խաչակրաց..., հատ. II**

Այսպիսով, Լևոն Ա-ն կարողանում է ոչ միայն ազատագրել Դաշտային Կիլիկիան, այլև գրեթե անընդհատ երկու ճակատով ռազմական գործողություններ վարելով՝ իշխանության տիրույթներն ընդարձակել դեպի հյուսիս-արևելք և արևելք: Թշնամական միջավայրում գոյության հաճար պայքար տանող իշխանությունը ծգություն է ամրանալ Կիլիկիայի աշխարհագրական սահմանը հանդիսացող աննատչելի լեռներում:

Թյուրբերի և լատինների ասպատակություններից իշխանության տարածքն անվտանգ դարձնելու նպատակով Լևոն Ա-ն հաճախ ռազմական գործողությունները տեղափոխում էր նրանց տարածքը:

## Յովհաննես Բ-ի 1136-1138թթ. արշավանքը

Դաշտային Կիլիկիայի ազատագրումով 1136թ. ամռանն ավարտված Կիլիկիա-անտիրօյան պատերազմը խաղաղություն չեր բերելու Ռուբինյան իշխանությանը, քանի որ Յովհաննես Բ Կոմմենոսը սկսում է իր գահակալման տարիների ամենամեծ ռազմական ծեռնարկումը՝ Կիլիկիա-անտիրօյան արշավանքը (1136թ. սեպտեմբեր):

Բազմափորձ Լևոն Ա-ն հաճարձակորեն գլխավորում է իր ժամանակի մեծագույն քանակներից մեկի դեմ կազմակերպված դիմադրությունը, և սկզբից ևեր բյուզանդական կայսեր գործը հանդիպում է կազմակերպված դիմադրության: Մասնավորապես, հայկական գենքի հաղթանակների շարքին պետք է դասել Անավարդագայի 37-օրյա պաշտպանությունը (1137թ. հուլիս-օգոստոս): Բավական է նշել, որ քաղաքի հերոս պաշտպանները հետ են մղում հսկայական ուժերով իրականացվող մի քանի գրոհ, իսկ հետո հանդուգն արտագրողիվ ոչնչացնում են բյուզանդական քանակի պաշտողական մեքենաները և անգործության մատնում հակառակորդին:

Նոյնքան համար ու հերոսական էր իշխանանիստ Վահկայի պաշտպանությունը: Բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատեսի խոսքերով՝ Վահկայի պաշտպանները «ոչ միայն մերում չխնդրեցին, այլև չհամաձայնվեցին հաշտության և ոչ մի պայմանագրի... մարտնչելուց բոլորովին չվախեցան»: Գիտակցելով, որ նոյնիսկ բյուզանդական ահօելի քանակը չի կառողանալու գրոհով գրավել քաղաքը, Յովհաննես Բ-ն գործի մի մասով գրավում է Թիլ Յամտունը, ապա Ալեքսանդրեթը և շարժվում դեպի Յովհանային Ասորիք (Սիրիա):

Արշավանքի մասին տեղեկացած անտիրօյան տիրակալները շտապում են հնագանդություն հայտնել Յովհաննես Բ-ին: Սակայն շուտով Կիլիկիա են ներխուժում Դամիջանյանների հրոսակախմբերը և գրավում Արտանան: Փակված կոմունիկացիոն ուղիները բացելու նպատակով 1137թ. աշնանը

կայսրը վերադարձում է Կիլիկիա: Թյուրքերից Դաշտային Կիլիկիան մաքրելով՝ կայսրը շարունակում Վահկայի պաշարումը, որը գրավվում է միայն 1138թ. գարնանը:

Այսպիսով, բյուզանդական բանակի 1136-1138թթ. արշավանքն ավարտվում է Կիլիկիայի ժամանակավոր նվաճումով: Լևոն Ա-ն իր կնոջ և երկու որդիների՝ Ռուբենի ու Թորոսի հետ գերվում է: Նրա մյուս որդիներին՝ Կոստանդինին, Ստեփանեին ու Մլեհին, ապաստան է տալիս Եղեսչայի կոմս Ժուլինը:

# ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԶԱԽԶԱԽՈՒՄԸ ՄԱՍՏՍԻԱՅԻ ՄՈՏ 1152Թ.

## Դազմաքաղաքական իրադրությունը

1136-1138թթ. արշավանքին հետևում է Անտիոքի իշխանապետության կողմից բյուզանդական կայսեր գերիշխանության ճանաչումը<sup>1</sup>, որին հաջորդում են Մուսուլմական պարտ Զենքի արարեկի կողմից 1144թ. Եղեսիայի կոմսության գրավումը և դրա հետևանքով երկրորդ խաչակրաց արշավանքի կոչը (1045թ.) և ձեռնարկումը (1147-1149թթ.): Երկրորդ խաչակրաց արշավանքին մասնակցում էին Ֆրանսիայի արքա Լյուդովիկոս Ե-ի և գերմանական կայսր Կոնրադ Գ-ի բանակները<sup>2</sup>:

Սանուել Ա Կոմնենոսը (1143-1180թթ.) բացասաբար է վերաբերվում խաչակրաների նոր արշավանքին, որովհետև Սաորիքի լատինական ու Կիլիկիայի հայկական պետությունների հղորացմանը նպաստելով՝ այն վտանգելու էր բյուզանդական տիրապետությանը: Նա ամեն ինչ անում է արշավանքը ծախություն համար, նույնիսկ հաշտության պայմանագիր է կնքում (1147թ.) Իկոնիայի սուլթան Մասուլի հետ, որը փաստորեն ուղղված էր խաչակրաների դեմ: Այս պայմանագրով կայսրությունը հեղինակազրկվում է քրիստոնեական աշխարհում, սակայն թյուրքերի հետ առաջին իսկ մարտում գերմանական բանակը ծանր պարտություն է կրում, և բյուզանդացիներին «պատժելու» հարցը երկրորդ պլան է մնում: Գերմանական բանակի մնացորդները միանում են ֆրանսիական բանակին և ռազմարշավը ծովով շարունակելով՝ 1148թ. մարտին ափ իջնում Անտիոքի մոտակայքում:

**Տեղեկանք.** «Խաչակրաց երկրորդ արշավանքը... ծախչախվեց Դամասկոսի մասուլյաներում և պայքարը չշարունակեց: Այն դարձավ ահետի թիվ կազմող ախոյանների պայքարի ասպարեզ, երկու արևմտյան միապետները՝ միմյանց դեմ, հոյները՝ լատինացիների դեմ, Սուլը երկրի լատինացի բարոնները՝ միմյանց դեմ, Աքվիտանիայի սյուզերեն Էլեոնորա թագուհին՝ իր անուսնու՝ Ֆրանսիայի արքայի դեմ, խաչակրաները՝

<sup>1</sup> Բյուզանդական գորքերի հեռանալուց հետո Ույոնոն՝ Պուտտեցին հրաժարվում է ճանաչել կայսեր գերիշխանությունը: Կիսաս թողած գործերը շարունակելու նպաստակով Նովաննես Բ-ն 1142թ. նոր արշավանք է սկսում դեպի Կիլիկիա ու Սաորիք, որի ժամանակ՝ 1143թ. մահանում է:

<sup>2</sup> Փոխադարձ անվտանգության պայմաններում միապետերն արշավանքն իրականացնում էին տարբեր երթուղիներով և չին ցանկանում միավորել իրենց ուժերը:

«մտրուկների» (ճականուն, որ տվել էին Ասորիքի ֆրանկներին, որոնք արդեն տեղացի էին դարձել): Եվ այս ամենը՝ մահմեղական շրջապատի թշնամական միջավայրում»:

**Սուրբաֆյան Կ.,  
Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, էջ 148**

## **Թորոս Բ-ի վերադարձ Կիլիկիա**

Գերված ու Կոստանդնուպոլիսի բանտ տարված Ռուբինյաններից (1143թ. կամ 1145թ.) ազատ է մնում միայն Թորոսը (1145-1169թթ.)<sup>1</sup>: 1140-ական թթ. երկրորդ կեսը նշանավորվում է Կիլիկիայում նրա սկսած հաղթարշավով: Հայրենի տիրույթները ազատագրելիս հայ իշխանը կանքի ուժ է դրսնորում, որով համախմբում է Կիլիկիայի բնակչությանը: Նոյնին հակառակորդները ստիպված էին խոստովանել, որ Թորոսի գորավարական տաղանդն անվիճելի է:

**Պատճական տեղեկանը.** «Լևոնի որդիներից մեկը, որի անունն էր Թորոս, փախսավ և գնաց: Քանի որ նա ոչինչ չուներ, նա ծպտված, ոտքով հասավ Մար Աքանասի մոտ (Անավարզայի Հակոբիկ Եսպիկոպոս), որն այդ վայրի ասողի արքավիսկոպոսն էր, քանի որ Վաստահում էր այդ ծերունուն իր հոր կենդանության ժամանակից... Սուլը Եսպիկոպոսը նրան նվերներ ու մեկ ծիռ փող է տալիս: Երբ նա երիվար է ունենում, տասներկու հոգի միանում են նրան, և նրանը գնում են Անուշա կոչվող թերդո... Վախը պատեց հոյսներին ու բյուրքերին: Շուտով Թորոսն իշխոց բազմաթիվ վայրերի և բազմաթիվ հայեր և ֆրանկներ հավաքվեցին նրա շուրջը»:

**Միքայել Ասորի, Ժամանակագրություն, հատ. III**

Առաջին հաջողությունից հետո Թորոս Բ-ի գլխավոր մտահոգությունը ոչ միայն ռազմական, այլև հոգեբանական առումով կարենոր նշանակություն ունեցող Վահկայի ազատագրումն էր: Հարցն այս է, որ Վահկայի շրջանն կոյնի-այի գործերը նվել էին բյուզանդացիներից, և ամրոցում տեղակայված էր նրանց կայազորը: Ներթական համարձակ գրոհով Վահկան գրավելով՝ Թորոսն այն դարձնում է իր նստավայրը: Բյուզանդական կայազորից Թորոսը գրավում է նաև Սիմանկլան, իսկ բյուրքական կայազորից՝ Առյուծաբերդը: Ինչպես հինգ տասնամյակ առաջ, այնպես էլ այժմ իշխանության հզորացումը սկսվում է Վահկայից:

<sup>1</sup> Լևոն Ա-ն բանտում նահացել էր մոտ 1142թ.: Գրեթե նոյն ժամանակ բանտապահները սպանում են Ռուբենին:

Կիլիկիայի ամրություններում մեծաթիվ կայազորներ էին տեղակայված, և սկզբնական շրջանում բյուզանդական իշխանությունները հույս ունեին դրանց ուժերով կասեցնել հայկական գորագների առաջինականությունը։ Իր հերթին Թորոսը, արագործեն ավարտելով Լեռնային Կիլիկիայի ազատագրումը՝ 1148թ. մարտական գործողությունները տեղափոխում էին դաշտավայր։



**Մարտական կացին բացարի տեղ ունեց նախահրազենային դարաշրջանում։ Տարածեակ կացիններով սպառագինվում էին, ինչպես հազարամյա հարուստ ուազմարվեստ ունեցող պետությունների, այնպես էլ քոչվոր ցեղերի ծանրազն ու միջն հետևակային գորամասերը։**

## Կիլիկիայի միավորումը

Խաչակրաց երկրորդ արշավանքի ձախողումը խուճապի է մատնում Ասորիքի լատիններին, որոնք անթաքույց հույսեր էին կապում այդ արշավանքի հետ։ Նրանց անհանգստացնում էր նաև, որ Ձենգիից հետո «հակախաչակրության» առաջնորդի դերը ստանձնում է նրա որդի Նուր առ-Ղինը (1146-1174թթ.), Եղեսիայի կոնսուլթյան չնվաճված հատկանիքը գրավելով 1151թ.՝ պայքարը տեղափոխում է Անտիոքի իշխանապետության տարածք։ Այսպիսով, Եղեսիայի կոնսուլթյան ոչնչացումով ավարտվում է Անտիոքի իշխանապետերի պայքարը Եղեսիայում գերիշխանության հաստատման համար, որը սկսվել էր դեռևս դարասկզբին։

Նոյն 1151թ. Կիլիկիայում Թորոս Բ-ն գրավում է Տարսոն ու Մամեստիա (Մսիս) քաղաքները։ Արդեն մի քանի տարի շարունակվող հաղթարշավի պայմաններում քաղաքների ազատագրումը մեծ ուշադրության չէր արժանանա, եթե Թորոսին չհաջողվեր Մամեստիայում գերել Կիլիկիայի բյուզանդական դուքս Թումասին (Թումա)։

Մամուլել Կոմննոսը, որը 1140-ական թթ. վերջերին պատերազմում էր Սիցիլիայի նորմանների, ինչպես նաև հունգարների դեմ, այնուամենայնիվ, կարողանում է 12 հազարանոց բանակ գումարել ու հորեղբորորդու։ Անդրոնիկոս Կոմննոսի գլխավորությամբ, արշավանք սկսել Կիլիկիայի հզորացող հայկական իշխանության դեմ։

## Ներխուժումը


Թորոս Բ-ն ազատագրական պայքարն իրականացնում էր ուժերի գերագույն լարումով։ Նրա հաջողություններին հատկապես նպաստում է տեղական բնակչությունից ստացվող աջակցությունը։ Բարենպաստ իրադրությունում Թորոսը, նախկին հայրենական կալվածքն ամբողջությամբ ազատագրելու գործն օր առաջ ավարտելու նպատակով, ամրոցների մեջ մասում կայազորներ չեր թողել։ Վերջիններին համար նախատեսված ստորաբաժնում ների մեջ մասը զինավոր ուժերին միավորելով՝ Թորոսը տպավորիչ արդյունքների է հասնում։ Սակայն ստեղծված իրադրությունից շտապում են օգտվել նաև բյուզանդացիները, որոնք 1152թ. անսպասելիորեն ներխուժում են Կիլիկիա (տե՛ս քարտեզը)։

Թորոսն ամրոցների մեջ մասում կայագրում էր կամ չուներ, կամ էլ դրանք այնքան փոքրաթիվ էին, որ երկարատև պաշտպանություն կազմակերպելն անհնար էր։ Իր հերթին, ազատագրված տարածքներում Թորոս Բ-ին ամրանալ թույլ չտալու նպատակով, բյուզանդական բանակը Կիլիկիայում գործում է հնարավորինս արագ։ Արյունքում՝ հայկական կողմը զրկվում է մեծաթիվ հակառակորդից նախաձեռնությունը խելու հնարավորությունից։ Թորոս Բ-ի համար ռազմաքաղաքական իրադրությունը ևս մեկ պատճառով էր անբարենպաստ։ Երան չեր հաջողվել անկախության պայքարի միասնական ծակատ ձևավորել։ Երկապառակությունների հետևանքով որոշ հայ բերդակալ իշխաններ միացել էին բյուզանդացիների արշավանքին։ Նրանց թվում էին Լամբրոնի և Պապեռոնի Հերումյան իշխանները, որոնք Ռուբինյանների հետ վիճարկում էին առաջնության իրավունքը։

Ստեղծված իրավիճակը հուշում է հակառակորդի ուշադրությունը շեղող հնարքով ժամանակ շահել։ Պետք էր ամրոցներում կայագրում տեղադրել և լուծել դրանց նատակարարման հարցը։ Վերահաս վտանգից իշխանությունը փրկելու և բյուզանդական բանակի արշավանքը դադարեցնելու նպատակով Թորոսը դիմում է փորձված քայլի, ինչպես այդ արել էր Լևոն Ա-ն Դամիշմանյանների հրոսակներին Կիլիկիայից դուրս քշելու նպատակով։ Նա Անդրոնիկոսին պատրաստակամություն է հայտնում ծանաչել բյուզանդական գերիշխանությունը՝ պայմանով, որ արժանանա այնպիսի ծանաչման, ինչպիսին ծեռք են բերել նյութ հայ իշխանները։

Կիլիկիայի նորանշանակ դուքսը կրահում է Թորոսի դիտավորությունը։ Բացի այդ, նա վստահ էր, որ իր ուժեղը բավարար են առանց ավելորդ գիշումների Կիլիկիայում բյուզանդական գերիշխանության վերահաստատման համար։

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1152 թ.



## **Պաշտպանությունը**

Թորոս Բ-ն ժամանակ շահելու նոր հնարքի է դիմում: Նա ցուցադրական գործողություններով բյուզանդական բանակի հրամանատարությանը «թույլ է տալիս» տեղեկանալ, որ գտնվում է Մամեստիայում (Մսիս) (տես՝ քարտեզը):

**Պատմական տեղեկանք.** «Անդրոնիկոսը պատերազմի դուրս եկավ հայերի դեմ, և ...շարժվեց Մսիս քաղաքի վրա... հոռոմները ծայնում էին քաղաքից ներս և (Թորոս Բ-ին) ասում. «մեզ մոտ են այն շղթանք-րը, որն ոցով հորդ կապած տարանք, դրանցով քեզ էլ ենք կապելու և տանելու»»:

**Մատրեն Ուշայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

Որոշելով, որ «ապստամբ» հայ իշխանին պատժելու բացառիկ հնարավություն է ընծեռվել, Անդրոնիկոս Կոմնենոսը շտապում է դեպի Մամեստիա և պաշարում այն:

Ուժերը «իմայելու» նկատառումներով Անդրոնիկոսը հրաժարվում է գրոհով քաղաքը գրավելու մտքից: Իրեն արդեն իսկ Կիլիկիայի տերը համարելով՝ նա որոշում է «մեկ հարվածով երկու նապաստակ խփել»: Որպեսզի Կիլիկիան վերագրավելուց հետո հարկադրված չլինի վերականգնել իր ավերած ամրոցները, պարսպակործան մեքենաներ ունենալով հանդերձ, Անդրոնիկոսը որոշում է զվաճակ Մամեստիայի պարիսպը, այլ պաշարման միջոցով գրավել քաղաքը:

Մամեստիան պաշարած բյուզանդացիներն արտագրոն անհավանական են համարում, որի պատճառով իմանական ուշադրությունը սկսում են դրսից օգնության ծանապարհները փակելու վրա: Դետախույզների միջոցով նրանք ճշտում են, որ մոտակայքում հայկական գորամասեր չկան: Այդայսով Անդրոնիկոսը մարտավարական սխալ է թույլ տալիս և պաշարման աշխատանքներն ավարտված համարելով՝ տրվում վայելքների:

Իրենց հերթին, Մամեստիայի պաշտպանները նկատում են, որ հակառակորն ամրոցի շրջանաձև դիտարկում չի կազմակերպել, և դիտորդները կարգված են միայն ճանապարհների հեռավոր ճատույզների վրա: Մարտական հերթապահության այդ տարբերակը դաշտավայրային, բայց անհարթ տեղանքում հակառակորդի դիտակետերի միջև հսկայական «մեռյալ» միջտարածություններ էր ստեղծում:

## Արտագրողը

Անմիջապես սկսվում է արտագրողի նախապատրաստումը: Այն տեղամասերում, որտեղ հակառակորդի դիտակետեր չկային, ամրոցի պատերի տակ ականներ (ամցքեր) են փորվում: Գործողությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ այդ ընթացքում եղանակը սկսում է վատանալ, և բյուզանդական դիտորդները սկսում են խուսափել անձրկի տակ ծառայողական պարտականությունների կատարումից:

Արտագրողը սկսվում է լուսադեմին՝ բյուզանդական բանակի ճամբարի ուղղությամբ իրականացված հուժկու հարվածով: Սրընթաց գրիհով հայկական զորամասերը հայտնվում են հակառակորդի ճամբարի կենտրոնում՝ Անդրոնիկոսի վրանի մոտ: Դանկարծակի եկած հակառակորդը չի հասցնում գինվել ու ընդունված կարգի համաձայն համախմբվել իրամանատարական վրանի շուրջը: Չկողմնորոշվելով և չիմանալով անելիքը՝ բյուզանդացիները չեն կարողանում միասնական մարտակարգ ձևավորել, թեև մի պահ գրիհով զորագնդերը երեք կողմից շրջապատված էին նրանցով: Սկսվում է խուճապ, որի պատճառով կարծատն ոդիմադրությունից հետո հակառակորդը նահանջում է մի քանի ուղղություններով: Անկանոն նահանջի հետևանքով ցրված զորքի հրամանատարությունն իրականացնելը դառնում է անհնար, և իրամանատարական վրանը պաշտպանող փոքրաթիվ ստորաբաժնան ջախչախմանը չսպասելով՝ մարտադաշտից փախչում է նաև Անդրոնիկոսը:

**Պատմական տեղեկանք.** «Քաջ Թորոսը... գիշերով քանդեց Մսիս քաղաքի պարիսպը և արկի ծագելու հետ միասին, առնելով իր գիշելու մերին, նրանց (բյուզանդացիների- հեղ.) դեմ պատերազմի դրւու եկավ, քայլվեց նրանց և հայթանակ տանելով, բոլորին փախուստի մատնեց: Նա ջարդ տվեց նրանց, սրի քաշեց, մի ակնթարթում բոլորի դիակները փոեց»:

**Սատրենո Ուրիայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

«Երբ Թորոսն իմացավ Անդրոնիկոսի թուլության մասին և տեսավ նրա անառակ կենցաղը... նա անլուսին և անձրկոտ մի գիշերով քազմաթիվ խորատներ փորեց Մամիսորայի պարսպի մեջ և հավաքելով իր բոլոր գնդերը՝ անակնկալ հարձակվեց հոյների վրա և նրանց փախուստի մատնեց»:

**Նիկետաս Խոնիատես, Ժամանակագրություն, հատ. III, 15**

## Հաղթանակը

Թորոս Բ-ն բոլոր ուժերը, այդ թվում նաև պահեստագործ, նետում է հակառակորդի հետապնդմանը, որն իրականացվում էր բոլոր ուղղություններով: Սկսվում է եռանդուն հետապնդում, որի ընթացքում բյուզանդական գորքի մի մասը գերվում է, իսկ մնացածը դուրս է վշնդվում Կիլիկիայից: Ենտապնդումն այնքան ակտիվ էր, որ նույնիսկ Անդրոնիկոս Կոմնենոսի գլխավորած ամենամարտունակ զրամասը չի կարողանում կանոնավոր մարտակարգով նահանջել: Ավելին, յուրօրինակ փակուլտում հայտնի վերջինս հարկադրված նահանջում է ոչ թե բոլորի հետ դեպի հյուսիս կամ արևմտուք, այլ դեպի հարավարևելք: Դքսի ողիսականն ավարտվում է միայն Անտիոքում, որտեղից նա մեծ դժվարությամբ ծովով հասնում է Կոստանդնուպոլիս:

**Պատմական տեղեկանք.** «Մեծ պատերազմում գերեցին բազմաթիվ թուլանորթ հոռո՞մ գինվորների ու, գինաթափ անելով, բաց թողեցին: Պատերազմում շատ արյուն թափվեց: Թորոսը դրանց հետո անվլոդով տիրեց Մսիս քաղաքին, այն գրավելով կմանման [Անդրոնիկոսից]: Թորոսն իր հոր համար վլեծ առավ նրանից... Մեծ թեռողորոսը, առնելով ձերքակալված իշխաններին և մյուս գերիներին, անհամար ուկով և արծարով, բազմաթիվ ու բազմապիսի ավարով և հունաց գորքի ձեռքից խած ուազմավարով, բազմաթիվ ծիերով ու ջրիներով խաղաղությամբ մտավ իր քաղաքը»:

**Մատրոսու Ուսհայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

Մարտադաշտում և նահանջի ճամապարհին գերվում են մի շարք հայ իշխաններ, որոնք տակավին համագործակցում էին բյուզանդացիների հետ: Վերջիններս ոչ միայն հսկայական փրկագին են վճարում իրենց ազատ արձակման դիմաց, այլև զղալով՝ ճանաչում են Թորոս Բ-ի գերիշխանությունը:

Այսպիսով, 1152թ. Մամետիայի ճակատամարտում բյուզանդական մեծաթիվ բանակը պարտություն է կրում Թորոս Բ-ի գլխավորած ուժերից: Համարձակ արտագրուից հետո կազմակերպված հետապնդումը հայոց մարտավարության ուշագրավ դրվագներից է: Հաղթանակած Թորոս Բ-ի գերիշխանությունն են ընդունում Կիլիկիայի բոլոր իշխանները, և իշխանությունը վերածվում է իշխանապետության:

**ԻԿՈՆԻԱՅԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ  
ԴԵՄ ՊԱՏԵՐԱՋՄԱՆ  
1153-1154թթ.**

**Մ**ամեստիայում տարած հաղթանակից հետո Թորոս Բ-ն վերականգնում է իշխանությունը Կիլիկիայի նաև այն հատվածի վրա, որը դեռևս չէր Ենթարկվել կենտրոնական իշխանությանը: Եթե 1140-ական թթ. սկզբներին Կիլիկիան ռազմավարական կարևոր հենադաշտ էր Եփրատեզերքի և Ասորիքի ուղղությամբ նվաճումները շարունակելու համար, ապա Անդրոնիկոսի արշավանքի ծախողումից հետո անհարթահարելի պատճեշի էր վերածվել կայսեր արևելյան քաղաքականության համար:

## **Բյուզանդացիների դիվանագիտական պայքարը**

Կիլիկիա ուղարկված բանակի ջախջախումից հետո Մանուել Կոմնենոսը բավարար ուժեր չուներ Կիլիկիայի հայկական զորագնդերի առաջխաղացումը կասեցնելու համար և այդ պատճառով դիմում է դիվանագիտական խուսանավումների:

Վերակենդանացվում է երկրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ արդյունավետ գործող յուրօրինակ բարեկամությունը, որն այժմ արդեն ուղղված էր լինելու Ռուբինյան իշխանապետության դեմ: Կիլիկիայի դեմ գործեր ուղարկելու համար Մանուել Ա-ն թանկարժեք նվերներով ուղղակիորեն կաշառում է Իկոնինիայի սուլթան Մասուդ Ռուքն ադ-Ղինին:

**Պատմական տեղեկանք.** «Յույները չին դադարում իրենց կայսրի համար վրիժառու լինելու մտքից և բազում դրան ուղարկեցին Մասուդ սուլթանին, որ բոլոր նուսուլմանների պարագլուխն էր: Յույների տված բազմաթիվ նվերներից խարված, նա վիթխարի բանակով առաջինը մուտք գործեց Թորոսի երկիրը»:

**Մատթեոս Ռուհյեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

Իր գերիշխանությունը ճանաչելու և 1151-1152թ. հայկական ուժերի կողմից ազատագրված քաղաքները բյուզանդացիներին վերադարձնելու պահանջով Իկոնիայի սուլթան Մասուդը 1153թ. արշավում է դեպի Կիլիկիա:

## ՄԱՍՈՒԴԻ ԱՐԵՎԱՊԱՆԵՐԸ

1153թ.

### Առաջին պատերազմաշրջանը

1153թ. սեղուկյան արշավանքը Մասուդը հապճեա էր կազմակերպել: Մաս-նավորապես, չէր պահպանվել գաղտնիությունը, որից օգտվում են հայկական ուժերը և հարված հասցնելով հակառակորդին՝ նրան գրկում են նախաձեռնությունից: Սակայն այս, ինչ հաջողվում է հայկական կողմին, վեր էր բոլոր սպասումներից (տես քարտեզ 1):

Թորոսը հակառակորդի առաջինադացումը կասեցնում է ոչ թե ամրոցներում կազմակերպված դիմադրությամբ, այլ նրա առջև Տավրոսի լեռնանցքները փակելով: ճիշտ է, որոշումը զգալի չափով պայմանավորված էր այն հանգամանքով, որ ամրոցները և բերդերը տակավին անպատճաստ էին երկարատև պաշարնան, սակայն համարձակ ռազմավարությամբ հակառակորդը ջախջախվելու էր սահմանային շրջաններում և գրկելու էր երկիրն ասպատակելու հնարավորությունից:

Հայկական կողմին հաջողվում է Տավրոսի լեռնանցքներում կազմակերպված դիմադրությամբ և համարձակ գրոհներով կասեցնել հակառակորդի առաջինադացումը:


**Պատմական տեղեկանք.** «Յայց զինվորները, Քրիստոսի բարեհաճությամբ հզորացած, եկան լեռան ստորոտը. (թշնամիները) գտնվում էին լեռան մյուս լանջին՝ իրենց երկրությունում, իսկ (հայերը) լեռան այս լանջին՝ իրենց երկրությունում. մոանք հանգիստ էին և այլազգիների մեծարիվ զորքը բամի տեղ չէին դնում: (Սեղուկները), տեսնելով քրիստոնյա զինվորների համարձակությունը, զարմացած ու ապշած ասացին. «Ի՞նչ է, նրանք իրենց կյանքից հրաժարվել են, որ մեր դեմ պատերազմի են դրւու գալիս»: Երբ նրանք դեռ այդպես տարակուսանքի մեջ էին, համկարձակի նախախնամությունից դորված թուրքերի սուլթանը հայց գորավար Թորոսի մոտ պատգամավոր ուղարկեց:

**Սատրենո Ուրիայեցի, Ժամանակագրություն, Մասմ Երրորդ**

Գիտակցելով, որ առաջին անհաջողություններից հետո մնում է միայն նահանջի տարբերակը և ձգտելով փրկել իր հեղինակությունը՝ Մասուդը բանակցելու համար պատգամավոր է ուղարկում Թորոս Բ-ի մոտ և հետ է քաշում գորքերը:

## Punntaq 1

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1152-1153 թթ.



## ԹՈՐՈՍ Բ-Ի 1154Թ. ԿԱՊԱՌՈՎԿԻԱԿԱՆ ԱՐԾԱՎԱՅՐԸ

### Երկրորդ պատերազմաշրջանը

Թորոսի հնարամիտ ռազմավարության շնորհիվ Մանուել Ա-ի քաղաքականությունը ձախողման եզրին էր հայտնվել մի այնպիսի պահի, երբ կայսրն արևելքում լայնածավալ ռազմական գործողություններ վարելու համար բավարար ուժեղ չուներ: Այդ պատճառով, թյուրքական հրոսակախմբերը գրկված էին լինելու աջակցությունից, և նրանց հեռանալու մասին (1153թ. աշուն) տեղեկանալով՝ Թորոս Բ-ն ձմեռային դադարից հետո, 1154թ. մարտին, անցնում է հակահարձակման<sup>1</sup> (տե՛ս քարտեզ 1):

1153թ. աշնանն իրականացված նահանջից և զորքը ձմեռելու համար ցրելուց հետո սուլթանը դեռ ի մի չէր բերել զորքը, երբ ստանում է ներխուժման լուրը:

**Պատմական տեղեկանք.** «Թորոս Դայկազնը՝ Կիլիկիայի իշխանը, մտավ Կապաղովկիա Երկիրը, նա այնտեղ գերեվարեց թյուրքերին և վերադարձավ իր Երկիրը»:

*Միջայի Ասորի, Ժամանակագրություն, հատ. III*

Դայկական կողմի այս գործողությունն անակնկալ էր Մասուդի համար, և նա սկզբնական շրջանում չէր կողմնորոշվում, թե ինչ կարելի է անել: Դա նպաստում է կիլիկյան գնդերի հաջողությանը: Դայոց զորքը սրբներով ռազմերթով դիմադրության անկազմակերպ օջախներն արագորեն հաղթահարելով՝ խորանում է հակառակորդի տարածքում:

Դժվար է ասել, թե անսպասելի հարձակումից իրեն կորցրած սուլթանն ինչքան էր մնալու անգործության նատնված, եթե կրկին նրա արքունիքը չժամանենին բյուզանդական բանագնացները: Նրանք նախկինից անհամենատ ավելի քանի արժեք ուներություն և ուսկու խստումներով կարողանում են Մասուդին «հետաքրքրել» Կիլիկիայի հայկական գերիշխանությունը վերացնելու նոր արշավանքի կազմակերպման ծրագրերով:

Որոշվում է օգոստել հայկական զորքի Կապաղովկիայի խորքերում գտնվելուց: Թորոս Բ-ի գլխավորությամբ արշավանքի ելած ուժերին կասեցնելու փո-

<sup>1</sup> Այս ընթացքում Փոքր Ասիայում սելջուկյան իշխանությունների միջև հակասություններ էին ծագել, որոնք անուղղակիորեն նպաստում էին հայկական բանակի առաջնադաշտական:

Խարեն որոշվում է ուժերը կենտրոնացնել Կիլիկիայի հետ սահմանային շրջաններում և ներխուժել հայկական իշխանապետության տարածք: Այդ դեպքում հնարավոր կլիներ լուծել միանգամից երկու խնդիր:

- կտրել արշավանք իրականացնող ուժերի նահանջի ուղիները,
- կոտրել առանց իհմնական ուժերի աջակցության մնացած իշխանապետության կայազորների դիմադրությունն ու անարգել թալանել Կիլիկիան:

Դարուստ ռազմավարի տիրանալու ցանկությունը կրկին ոտքի է հանում սուլթանության բոլոր «մարտունակ» ուժերին, որոնք դիմադրությունը շարունակելու փոխարեն սկսում են կենտրոնանալ հարավ-արևելքում հարձակման անցնելու նպատակով նախապատրաստվող հենադաշտում: Սակայն նույնիսկ արշավանքի «ամենաեռօր» պահին Թորոսը չէր մոռանում Կիլիկիայի պաշտպանության մասին և կռահելով հակառակորդի դիտավորությունը՝ նահանջում է նույնքան արագ, որքան արագ իրականացրել էր հարձակումը: Դադրանակած հայկական զորագնդերը վերադառնում են Կիլիկիա, որտեղ անմիջապես սկսվում են առաջիկա ներխուժման անդրադակման աշխատանքները:

# ՍՈՒԼԹԱՆ ՄԱՍՈՒԴԻ ԱՐԾԱՎԱՆՔԸ ԵՎ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 1154թ.

## Երրորդ պատերազմաշրջանը

Ինչպես նշվեց, Մասուլի 1153թ. արշավանքի ծախտղումից հետո բյուզանդացիները գործողությունների ուշագրավ հնարավորություն էին ստացել: Նրանք գործում էին «ինչ հնարավոր չէ անել փողով, հնարավոր է անել շատ փողով» սկզբունքով:

**Պատմական տեղեկանք.** «Դրանից հետո, երբ սկսվեց 603 թվականը<sup>1</sup>, կայսրը սուլթանին (Մանուել Ա-ն՝ Մասուլին) որպես նվեր նախորդ անգամից շատ ավելի ոսկի և արծաթ ուղարկեց՝ ասելով այսպես. «Գնա՛, հայոց դեմ բորբոքված իմ սիրտը հովացրու, ավերիր նրանց թերդերը, կրակի տուր նրանց եկեղեցիները, հրամայիր բոլորին հրո ճարակ դարձնել, որպեսզի թերևանա իմ զայրացած սիրտը»:

**Մատքեռ Ուժիայեցի, Ժամանակագրություն,  
Մասն Երրորդ**

Սելջուկների ներխուժումը սկսվում է 1154թ. մայիսին՝ նախկինից ավելի մեծաթիվ զորքով (տես՝ քարտեզ 2): Սակայն որքան էլ մեծաթիվ լիմենին թյուրքերի հրոսակախմբերը, մարտական գործողությունների սկզբից ևեր պարզ էր, որ մի քանի ամսում ռազմավարական իրավիճակը կտրուկ փոխվել էր: 1152-ից հետո, բայց հիմնականում 1154թ. արշավանքի ընթացքում կայազորները մեծ ծավալի աշխատանք էին կատարել Կիլիկիայի թերդերի ամրացման և դրանք երկարատև պաշարման նախապատրաստելու ուղղությամբ: Կայազորային ծառայություն տանող մարտիկները վարժեցվել էին պաշտպանական նարտեր վարելուն, իսկ կուտակված մթերապաշարը կարող էր բավարարել անգամ երկարատև պաշարման: Այժմ, հուսալի թիկունք ունենալով, հայկական կողմն օքանական գործողությունները վարել առավել անկաշկանդ:

<sup>1</sup> 11 փետրվար 1154 -10 փետրվար 1155թք.:

## Punutq 2

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1154 թ.



Այդուհանդերձ, որքան էլ սպասելի էր հարձակումը և որքան էլ ամբողջացված էին նախապատրաստական միջոցառումները, չի հաջողվում մեծաթիվ հակառակորդից լինել նախաձեռնությունը: Ներխուժումը տեղի է ունենում արևելքից՝ Ամանոսի լեռնանցքից, որը համեմատաբար մոտ էր Կիլիկիայի կենտրոնական շրջաններին: Մասուդն առաջին հարվածը հասցնում է Մամեստիայի ու Անավարդայի ուղղությամբ, որոնց մոտ անհաջողություն է կրում:

## Յայկական հեծելազորի և Տաճարական ասպետների գրոհը

Դամոզվելով, որ Թորոսը մտադիր չէ վճռական ճակատամարտի դուրս գալ և ուժերը մի քանի մասի բաժանելով՝ ընտրել է անսպասելի գործողություններով հակառակորդի ուժերը հյուծելու ռազմավարությունը, Մասուդը ևս իր ուժերը բաժանում է մի քանի մասի: Սուլքանի գորախմբերը կենտրոնանում են Թիլ Ջամտունի մոտ, որի պաշարումը սկսվում է մայիսի վերջին, ապա, բաժանվելով մի քանի մասի, ասպատակում են Դաշտային Կիլիկիան:

Ներխուժման սկզբում, եթե հակառակորդի ուժերը գործում էին համատեղ, հայկական կողմի խուսափողական գործողությունները ճիշտ էին, բայց այժմ կարելի էր ուժերը միավորել ու հակահարվածների անցնել: Այդ թույլ չտալու նպատակով հակառակորդը հատուկ հսկողություն է հաստատում կարևոր խաչմերուկների վրա: Դրանով հայկական կողմը զրկվում է ուժերը միավորելու և իրարից որոշակի հեռավորության վրա գործող թյուրքական զորամասերն առանձին-առանձին ջախջախելու հմարավորությունից: Ստեղծվում է մի իրադրություն, եթե թյուրքական զորքի բաժանվելուց հետո էլ նրանց անհնար էր անկանոն մարտավարությամբ հանկարծակի բերել վճռական հակահարվածներով:

Շուտով, սակայն, հայկական կողմի ակտիվ պաշտպանությունը տալիս է սպասված արդյունքը, և դրան նպաստում է ռազմական գործողությունների ծգգործում: Ամրոցների պաշարումով կաշկանդված Մասուդը սկսում է գիտակցել, որ փաստացի անգործությամբ նախաձեռնությունը զիջում է: Բացի այդ, ինչպես ճիշտ, ավարի բացակայության հետևանքով թյուրքական բանակում դժգոհություններ են ծագում:

Տեղեկություններ են ստացվում, որ Թորոս Բ-ն եղբօրք՝ Ստեփանեին նշանակել է իշխանապետության արևելյան զորքի հրամանատար և լիազորել իր անունից բանակցելու անտիքայան բարոնների հետ: Արևելքից Ջալեափի աթաքեն Նուր ար-Ղիմի ճնշումներին եմբարկվող Անտիքի իշխանապետության համար Կիլիկիան փոքրասիական սելջուկների ասպատակություններից պաշտպանող բնա-

կան վահանի դեր էր կատարում, և Մասուղը մտավախություն ուներ, որ շահերի ընդհանրությունը երկար ժամանակով կմիավորի հարևաններին:

Իրադրության անցանկալի զարգացումը կանխելու նպատակով Մասուղը ևս ուժերը բաժանում է երկու մասի: Սուլթանը ստանձնում է Կիլիկիայում մարտական գործողությունները շարունակող գլխավոր ուժերի հրամանատարությունը: Լատինների գլխավոր ուժերի հետ Ստեփանեի զորագնդի միավորումը կանխելու, ինչպես նաև հետախուզության և ասպատակությունների նպատակով Ասորվոց դռների (Պորտելայի լեռնանցք) շրջան է ուղարկվում Յաղուր գորապեսի գլխավորած զորքը: Սակայն Իկոնիայի բանակն ուժերի մասնատումով գրլվում է քանակական գերազանցությունից, իսկ Պաղյաս (Գաստոն) անրոցի Տաճարական միարանության ասպետներին միացած Ստեփանն իշխանի ուժերը հակահարվածի փայլուն հնարավորություն են ստանում: Անմիջապես հետևում է համկարծակի գրոհը: Յայ-լատինական զորքը, որի գլխավոր հարվածային ուժը կազմում էին Տաճարական ասպետները և հայկական ծանրագեն հեծելազորը, անսպասելի գրոհով Վլեքսանդրեթից ոչ հեռու՝ Ասորվոց դռների շրջանում, գլխովին զախշախում է թշնամուն (1154թ. հունիս): Թյուրք զորավարը սպանվում է մարտադաշտում: Նրա զորագնդի միայն փոքր մասն է փախչում ու միամնում գլխավոր ուժերին:

**Պատմական տեղեկանք.** «(Մասուղը) իր որդի Մելիքի մեծամեծներից մեկին, որին Աղոյա (Յաղուր) էին անվանում, մի դաժան ... մարդու, շուրջ երեք հազար զորքով ուղարկեց Անտիոք գավառն ասպատակելու: Երբ անցան (Ասորվոց) Դուռն կոչվող վայրերից, քրիստոնասեր ֆոքրմերի<sup>1</sup> գինվորները և... (Թորոս Բ-ի) եղբայրը Ստեփանեն... համկարծակի նրանց վրա խոյացան և բոլորին կոտորեցին, նրանց հրամանատար Աղոյա սարդին էլ նիզակ խորցին, որը դառնագին աղաղակով իր չար հոգին ավանդեց: Երբ այդ բանի լուրը ճամբար հասավ, բոլորը սարսափի մեջ ընկան»:

**Մասուղեն Ռուհայեցի, Ժամանակագրություն, Մասն երրորդ**

## Յաղթանակը

Արշավանքը ձախողման եզրին էր: Թյուրքական բանակը ոչ մի կերպ չէր կարող դառնում հաղթահարել Թիլ Յամսունի պաշտպանների դիմադրությունը, մինչդեռ Կիլիկիայում այդ ամրոցից ավելի հզոր պարիսամեր ունեցող և երկարատև պաշարման համար շատ ավելի լավ պատրաստված բերդեր ու ամրոցներ կային:

<sup>1</sup> Ֆրեք նշանակում է եղբայր: Նկատի ունի Տաճարական օրդենի ասպետներին:

Ամռան տապին պաշարումը շարունակելուն խոչընդոտում էր նաև ճահճապատ տեղանքը: Զինվորների շրջանում համաճարակ է սկսվում, որը կարծ ժամանակում սպառնալի չափերի է հասնում: Իկոնիայի բանակի մարտունակությունն այնքան է ընկնում, որ թիվ Դամտունի գրավման, առավել ևս, արշավանքը շարունակելու մասին խոսք անգամ լինել չէր կարող, և Մասունդը նահանջի հրաման է տալիս:

Թյուրքական զորամասերի նահանջը խստ ծանր է ընթանում, քանի որ հայկական զորամասերը փակում են հակառակորդի նահանջի ճանապարհներն ու հանկարծակի հարձակումներով խոչընդոտում նրանց:

**Տեղեկանք.** «Սահմեղական բանակի նահանջը աղետի վերածվեց. բազմաթիվ զինվորներ ստիպված էին թրափել իրենց գենքերն ու ձիռքն, թրքերից շատերն անգրուեն կոտորվեցին Թորոսի զինվորների կողմից, որնք վերահսկում էին իհմանական լեռնանցքները, իսկ բանակի մնացյալ մասը հետապնդվելով հայերից, մի կերպ Տավրոսը հաղթահարեց ավելի դժվարանցանելի լեռնանցքներով: Վերադառնալով իր երկիրը, Մասունդը տեսավ, որ Կապադովկիան քարուքանդ է արվել Թորոսի կողմից, որը՝ մինչ թշնամին ավերում էր իր սեփական տիրությունները, չեր վախեցել գնալ ավարի մատնելու հակառակորդի երկիրը»:

**Ֆերդինանդ Շալանդրն, Կոմնենոսները, հատ. II**

Դատկանշական է, որ արևելքից (Ամանոսի լեռանցքով) Կիլիկիա մտած հակառակորդը հարկադրված նահանջում է դեպի հյուսիս (Կիլիկյան դռներով): Դյուսիսային լեռնանցքները Թորոս Բ-ն նախապատրաստել եր՝ Ենթադրելով, թե հակառակորդի ներխուժումը Կապադովկիայից է լինելու: Դրանք այնքան էին ամրացվել, որ նույնիսկ թարմ ուժերով հարձակում սկսած հակառակորդը համար դիմադրության կիանդիպեր: Դամաճարակից հյութված հակառակորդի համար այն գրեթե անհաջողաբերի արգելքի է վերածվում: Նահանջող թյուրքական բանակն այնքան հզոր հարվածների է Ենթարկվում, որ միայն նրա մեծաթվությունն է հնարավորություն տալիս դիմանալ դրանց: Իկոնիայի ուժասպառ եղած բանակի մնացորդները մի կերպ կարողանում են «դուրս պրօնել» Կիլիկիայից, որը ռազմավարական թակարդի էր վերածվել նրա համար:

**Պատմական տեղեկանք.** «Այդ հաղթանակը, որի շնորհիվ Կիլիկիան ազատվեց թյուրքերից, Դայոց պատմության ամենափայլուն էջեղ մեկն է»:

**Ողմեն Գրուսե, Պատմություն խաչակրաց, հատ. II**

Այսպիսով, ընդամենը մեկ և կես տարում երեք պատերազմաշրջաններով իրականացված գործողության ընթացքում Խկոնիայի սուլթանության բանակը խոշոր պարտություն է կրում: Մեծ դժվարությամբ է հակառակորդը կարողանում խուսափել լիակատար ջախջախումից և ոչնչացումից:

Պատերազմի երրորդ փուլում Ասորական դռների մոտ թյուրքական զորքը ջախջախվում է Կիլիկիայի հայկական իշխանապետության բանակի և Տաճարական միաբանության զորամասերի հաջող փոխգործողությունների շնորհիվ: Անտիոքի լատինների հետ հաճախակի ծագող պատերազմների համայնապատկերում այս համագործակցությունը քրիստոնեական համերաշխության անչափ արժեքավոր օրինակ էր<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Պաղուս (Գաստոն) ամրոցի Տաճարականների կայազորը Անտիոքի իշխանապետության վասալն էր:

## ՌԱՋԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### 1160-ԱԿԱՆ ԹՅ.

**Ա**րևելուն բավարար ուժեր կենտրոնացմելով՝ Մանուել Կոմնենոս արշավում է դեպի Կիլիկիա ու Ասորիք (1158թ.) և ամեն հարմար առիթով հայտարարում, թե արշավանքը Դալեպի աթաքեկ Նուր աղ-Դիմի դեմ է: Դա ոգևորում է արքայզն Ուենալդ Շատիյոնցուն, որը շտապում է ճամաչել կայսեր գերիշխանությունը: Սակայն Անտիոքում հաստատվելուց հետո Մանուել Ա-ն համաձայնության է գալիս Նուր աղ-Դիմի հետ և լատիններին միայնակ թողնելով՝ հեռանում է: Իսկ Թորոս Բ-ից կայսրն ընդամենը պահանջում է որոշակի տարածքային գիշումներ և Կիլիկիայի դուքս նշանակելու կարգի վերականգնում: Փաստորեն, նա հաշտվում է ստեղծված իրավիճակի հետ և, ի լրումն, Թորոսին պրոտոսեբաստոսի տիտղոս շնորհում: Այդիսով կայսրն օրինականացնում է մյուս իշխանների նկատմամբ Թորոս Բ-ի գերագահությունը:


Իր հերթին, Թորոսը շարունակում է անկախ քաղաքականություն վարել, իսկ 1162թ. Կիլիկիայի դուքս Անդրոնիկոս Ֆորբենոսի կողմից Ստեփանե իշխանի սպանությունից հետո մեծ արշավանք է ծերնարկում դեպի կայսրությանը պատկանող Խավորիա (տես քարտեզը): Կիլիկիայում բյուզանդացիների դիրքերը թուլացնելուց հետո Թորոս Բ-ի առջև ծառանում է արտաքին քաղաքականության մեջ ճշգրտումներ մտցնելու հարցը: 1160-ական թթ. սկզբներին Նուր աղ-Դիմի կրած անհաջողությունները ժամանակավոր էին: Նա 1163թ. պաշարում է Դարիմ բերդաբանարքը: Անտիոքի արքայազնի, Տրիպոլի կոմսի, Կիլիկիայի դուքս Կոնստանտին Կալոնանի, Թորոս Բ-ի և նրա ավագ եղբայր Սլեհ իշխանի գլխավորած լատինա-բյուզանդա-հայկական բանակի մոտենալուն պես Նուր աղ-Դիմն նահանջում է: Չլսելով Թորոս Բ-ի խորհուրդները դաշնակիցների հրամանատարները ոգլորված հետամորում են հակառակորդին և Դարիմից թիւ հեռու ընկնում նրա պատրաստած ծուղակն ու գլխովին ջախջախվում: Նրանց բոլոր հրամանատարները՝ Թորոսից ու Սլեհից բացի, գերվում են:

**Տեղեկանք.** «Թորոս Բ-ն փրկվել էր Դարիմի աղետից: Վերադառնալով Կիլիկիան Տավրոսի իր տիրությօթ, նա բանակցություններ սկսեց Նուրեդիմին (Նուր աղ-Դիմի) հետ ճակատանարտում գերված հայ զինվորներին ազատելու նպատակով: Նուրեդիմից մերժում ստանալով, նա հանկարծակի ներխուժեց Մարաշի գավառ, որը պատկանում էր աթաքեկին, գերեց չորս հայուր քուրքերի և սպանաց ողջակիցել նրանց: Ուղիղ խոսքը հասկացվեց, Նուրեդիմը համաձայնեց գերիների փոխանակմանը (1165թ.):»

*Ողմն Գրուսե, Պատմություն Խաչակրաց..., հատ. II*

ה ס ר ב ת ה כ ה י ש כ

Ամսական գրողութեալսէրը 1160-սկան թթ.



## ԲՅՈՒՋԱՆՊԱՇԻՆԵՐԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՎՏԱՐՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ 1172Թ.

**Փ**յուղանդիան, որը ոչ վաղ անցյալում Կիլիկիայի հայկական իշխանապետության անկախության գլխավոր հակառակորդն էր համարվում, թուլացել էր: Մինչև 1160-ական թթ. կետերը լատիններն ընդհանուր վտանգի առջև ժամանակ առ ժամանակ միավորվում էին հայկական իշխանապետության հետ, բայց Կիլիկիայի վրա գերիշխանություն հաստատելու մոլուցքով տարված Անտիոքի արքայազն Բոհեմոնդ Գ-ն (1163-1201թթ.) սկսում է հրաժարվել «հավասարը հավասար» սկզբունքով դաշնակցելուց: Վստանգ կար, որ Նոր առ-Ղինի դեմ պայքարի վճռական պահին լատիններն իրենց տիրույթները պաշտպանելու համար կարող էին «զիել» դաշնակից հայերին:

Այս ոժվարին պայմաններում Մլեհը հօչակվում է իշխանապետ (1169-1175թթ.):<sup>1</sup> Նրա գահակալման նախօրյակին Կիլիկիան համակված էր տագնապմերով: Կայացման ժժվարին ուղի անցած իշխանապետության հեռանկարն անորոշ էր, քանի որ կենսական նշանակություն ունեցող մի շարք շրջանների վրա հսկողությունը կորսված էր. Դաշտային Կիլիկիայի մի մասը գտնվում էր բյուզանդացիների ծեռքում, իսկ հարավարևելյան լեռնանցքները փակող ամրությունները՝ լատինների:

Իր գահակալության առաջին իսկ օրվանից Մլեհն ապացուցում է, որ անկախ քաղաքականություն է վարելու: Կիլիկիայի իշխանապետ հօչակվելով՝ նա ցանկանում է Ասորիքը զավթած մահմեդական տիրակալի հզորությունն օգտագործել ի շահ Կիլիկիայի հայկական իշխանապետության:

Անկանխատեսելի և, նոյնիսկ, անհավասարակշիր քաղաքական գործի համարում «ծեռք բերած» հայոց իշխանապետից գգուշանում էին ոչ միայն բյուզանդացիները և լատինները, այլև բյուրքերը: Եվ մինչ հարևաններն անորոշության մեջ էին, Մլեհը հասցնում է կայունացնել իշխանապետության ներքաղաքական իրադրությունը, հզորացնել տնտեսությունը և համակողմանիորեն նախապատրաստվել պատերազմի: Մեկ-երկու տարում Կիլիկիան վերածվում է տարածաշրջանի կայունության կղզյակի, որն իրեն է ձգում մահմեդականների տիրապետության տակ անցած գավառների հայկական բնակչությանը: Չուսալի թիկունք ունենալով՝ Մլեհը հնարավորու-

<sup>1</sup> Տեղեկանալով Մլեհի՝ Կիլիկիայի տարածք մտնելու մասին իշխանապետության իշխանների խորհուրդն արյունահեղություն թույլ չտալու նպատակով որոշում է նրան իշխանապետ հօչակի:

թյուն է ստանում ակտիվ արտաքին քաղաքականություն վարել և, մասնաւորապես, որոշում է իշխանապետության համար կենսական նշանակություն ունեցող տարածքներն ազատագրել հաջորդական հարվածների ուշագրավ ռազմավարությամբ:

Դրանց հաջորդականությունը և սկսվելու պահի ընտրությունը վկայում են Մլեհի գրուարական տաղանդի մասին: Առաջին հարվածը հասցվում է բյուզանդացիներին նրանց Դաշտային Կիլիկիայից վերջնականացնելու նպատակով: Նկատենք, որ բյուզանդական ճակատում մարտական գործողությունները սկսվում են որպես արտաքին քաղաքականության ընդհանուր ակտիվացնան բայსացուցիչ մաս՝ արևելյում և հարավ-արևելյում ռազմական գործողությունների նախապատրաստմանը գուգընթաց:

Առաջ է քաշվում արտակարգ հավակնոտ և հեռահար ռազմավարական համակարգ ստեղծելու ժրագիր: Որոշվում է չքավարարվել Լևոն Ա-ի և Թորոս Բ-ի առաջադրած խնդիրներով և վարվող ռազմական գործողությունների արդյունքում հասնել նախկինից որակապես տարբերվող արդյունքի: Այն է Դաշտային Կիլիկիայի ազատագրմանը գուգընթաց ձևավորել այնպիսի պայմաններ, որ հետագայում երեք բյուզանդացիները չկարողանան վերականգնել իրենց իշխանությունը Կիլիկիայում:

1172թ. աշնան սկզբից սկսված մարտական գործողություններն ընթանում են Դաշտային Կիլիկիայում (տես քարտեզը): Նախօրոք մշակված ռազմավարական ծրագրի համաձայն, նախքան ցոտերն ընկնելը բյուզանդացիներն արագործեն դուրս են մղվում նախ՝ Աղանայից, ապա՝ Մամեստիայից և, վերջապես, Կիլիկիայի դրսի նստավայր Տարսունից:

1172թ. տարեվերջին Կիլիկիայի հայկական իշխանապետությունը թևակոխում է նոր փուլ: Դաշտային Կիլիկիայի գլխավոր քաղաքներից դուրս են քշվում բյուզանդական կայազորները, և գրեթե ամբողջ ծովափն անցնում է հայկական իշխանապետության բանակի հսկողության տակ:

**Պատմական տեղեկանք.** «Աղանա, Մամեստիա և Տարսոն քաղաքները Կ. Պոլսի տիրոջ՝ Ռումի թագավորի ձեռքում էին, իսկ Մլեհը վերցրեց նրանից, որովհետև դրանք իր երկրին հարևան էին»:

**Իր ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Ռազմական գործողությունների նախապատրաստման ժամանակ Մլեհն իրականացնում է մեր միջնադարյան ռազմարվեստի համար բացառիկ անուղղակի գործողությունների ռազմավարություն:

ՈՍԽԱԿԱՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1172 թ.



Կերպարանի հայկական իշխանապետություն	Հայության բնակչության գործողությունը (I փուլ)
Հայության կռոջին ամցած տարածք	Հայության կռոջը
Ամսիդի իշխանապետություն	Դաշնակիցներ
Այ պատրիարքություն	Հայության բնակչությունը (II փուլ)
Պաշարում	Հայության կռոջ
	Հայության բնակչությունը (III փուլ)
	Հայության կռոջ

## **ՆԱՊԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄ ԲՈԼՈՐ ՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ**

**1173թ.**

**Մ**լեհի իշխանապետության ամենաղժվարին, սակայն ամենափառավոր տարին սկսվում է Բյուզանդական կայսրության դեմ առճակատումով (1173թ. հունվար): Երկու կողմերն ել գիտակցում էին, որ այդ պատերազմաշրջանը վճռորոշ է լինելու Կիլիկիայի համար: Գլխավոր ուժերի ճակատամարտն ավարտվում է բյուզանդացիների ծանր պարտությունով և Կիլիկիայից նրանց վերջնական վտարումով, որը Մլեհի իշխանապետության տարիների քաղաքական ամենամեծ ձեռքբերումն է (տե՛ս քարտեզը):

Նույն թվականին իշխանապետության մայրաքաղաք է դարձվում Սիսը:



**Սիսի բերդի ընդհանուր տեսքը**

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՐՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1173 թ.



Մենք շարունակում է Կիլիկիայի՝ Ռուբինյան իշխանապետությանը հարևան շրջաններում հայկական գերիշխանությունը վերականգնելու իր քաղաքական գիծը: Հարվածն ուղղվում է դեռևս 1156թ. Տաճարական միաբանության կողմից խլված Պաղրաս (Գաստոն) և Դարբսակ (Տրապեզակ) ամրոցների ուղղությանը: 1173թ. գարնանն իրականացված գործողության գլխավոր դժվարությունը հոգեբանական էր, որն այս դեպքում Մլեհին դեմ էր: Հարցն այն է, որ իշխանապետը նախկինում Տաճարական միաբանության ասպետ էր Եղել և այժմ համարձակվում է մարտահրավեր նետել Կիլիկիայի սահմանային ամրություններին տիրող միաբանությանը:

Անտիոքի դուքս Բոհեմունդ Գ-ի (1163-1201թթ.) աջակցությունը վայելող տաճարականներն ի վիճակի չեն լինում կասեցնել հայկական զորագնդերի առաջխաղացումը: ճակատային հարձակման, ինչպես նաև մի շարք անուղղակի գործողությունների հետևանքով հակառակորդը դուքս է մղվում ամրություններից և նահանջում մինչև Անանոսյան լեռների հակառակ կողմը:

## Հաղթանակը

Սինէկ 1170-ական թթ. լատինները հազվադեպ էին դաշնակցել հայկական իշխանությունների հետ: Մլեհի արտաքին քաղաքականության շրջադարձից ելնելով՝ Երուսաղեմի Անորի Ա (Անալիկ, 1162-1174թթ.) քագավորը քանից բանակցությունների է հրավիրում Մլեհին: Վերջինս իրավացիրեն կասկածելով, թե հրավերը կարող է ծուղակ լինել, հրաժարվում է ընդունել առաջարկը: Ի պատասխան, Երուսաղեմի թագավորն արագորեն գորահավաք է հայտարարում և արշավանք սկսում դեպի Կիլիկիա:

Ցայ իշխանապետի դրյամաճ Նուր ադ-Դինը 1173թ. գարնան վերջին արշավանք է սկսում Պաղեստինում Քարաք քաղաքից հյուսիս: Անորի Ա-ն հարկադրված է լինում դադարեցնել դեռևս չչկսված արշավանքը և հետ դառնալ: Միայնակ մնացած Բոհեմունդ Գ-ն ևս չի համարձակվում ներխուժել Ռուբինյան իշխանապետության տարածք:

1173թ., օգտվելով հուլիսի կեսերին Նուր ադ-Դինի դեպի հյուսիս սկսած արշավանքից, Մլեհը գգալի տարածքների է տիրանում:

Այսպիսով, 1173-ը Ռուբինյան իշխանապետության բանակի հաղթանակների տարին է դառնում: Եռամդուն իշխանապետի գլխավորությանը բանակը մեկ տարուց էլ քիչ ժամանակահատվածում.

- ջախջախում է բյուզանդացիներին ու նրանց վերջնականապես դուրս մղում Կիլիկիայից,
- ազատագրում է Անանոսյան Լեռների ամրությունները, որոնք Թորոս Բ-ի օրոք Տաճարական միաբանության էին անցել,
- սահմանային ամրոցների երկարատև պաշտպանության նախապատրաստումվ և արտաքին ակտիվ քաղաքականությամբ կանխում է Երուսաղեմի քագավորության բանակի արշավանքը դեպի Կիլիկիա,
- ամրացնում է իշխանապետության սահմանները հյուսիսից:

Նպատակաւագ էր նաև Մլեհի ներքին քաղաքականությունը: Նույն 1173թ. իշխանապետը միջամտում է նոր կաթողիկոսի ընտրությանը և օժանդակություն է ցուցաբերում Ներսես Շնորհալու եղբոր Վասիլ Պահլավունու որդուն՝ Գրիգորին (Գրիգոր Տղա), որը կաթողիկոս է օծվում Գրիգոր Դ անունով (1173-1193թթ.):

Ընդամենը մեկ տարում Մլեհին հաջողվում է ամուր հաստատվել Դաշտային Կիլիկիայում, բարենպաստ դիրքեր գրավել Անտիոքի իշխանապետության հետ սահմանակից շրջաններում, իսկ կաթողիկոսի ընտրության միջոցով ներքաղաքական կայուն իրավիճակ ստեղծել ու իր հաջորդներին թողնել աննախադեպ հզորացած իշխանապետություն<sup>1</sup>:

**Պատմական տեղեկանք.** «Բյուզանդացիների նկատմամբ տարած իր հաղթանակից հետո Մլեհը շատ շուտ սրտապնդվեց, և նա պաշտպանական կառույցներով հագեցրեց Յայաստան-Կիլիկիան»:

**Ալ-Զահարի, Գրոք մահմեդական պետությունների մասին**

<sup>1</sup> Սակայն Մլեհի որոշ համագործակցությունը մահմեդականների հետ դգոհություններ է առաջացնում Կիլիկիայի իշխանապետությունում, և 1175թ. նա սպանվում է:

# ՊԱՏԵՐԱՋՄԸ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ՌԻԺԵՐԻ ՂԵՄ

## 1180թ.

### Ռազմաքաղաքական իրադրությունը

Մլեհից հետո Ստեփանեի որդին՝ Ռուբեն Գ-ն (1175-1187թթ.), ժողովոդի ու գորքի միահամուռ հավանությամբ իշխանապետ է ընտրվում:

Քրիստոնյաների դեմ պայքարող մահմեդական միապետերի մրցակցության պայմաններում առաջնորդությունն անցնում է Եգիպտոսում Այյուբյան սուլթանության հիմնադիր Սալահ ար-Ղիմին (1169-1193թթ.), որը 1174թ. գրավում է Դամասկոսը, իսկ 1176թ. իր գերիշխանությունն է պարտադրում Նուր ար-Ղիմի որդուն՝ Հալեպի ամիրա Խսնայիլ ալ-Սալիհին (1174-1182թթ.) և նրանից խլում է Ասորիիքի (Սիրիա) մեծ մասը:

Ռուբենյանների և Անտիօքի իշխանապետերի դեմ հակամարտություններում իր ուժերը սպառած բյուզանդական բանակը 1176թ. Միհրոկեֆալոնի ճակատամարտում պարտություն է կրում Իկոնիայի սուլթանությունից:

**Տեղեկանք.** «Սանագլերու 1071թ. ճակատամարտը արդեն հսկ մահացու հարված էր Փոքր Ասիայում բյուզանդական տիրապետության համար: Բայց ժամանակակիցները դա չէին հասկանում և դեռևս հոյս էին փայփայում, որ կարող են ուշքի գալ ու ազատվել սելջուկյան վտանգից: Առաջին երկու խաչակրությունները չնվազեցրին այդ վտանգը: Միհրոկեֆալոնի 1176թ. ճակատամարտը հիմնավեր կործանեց թուղթերին Փոքր Ասիայից վտարելու Բյուզանդիայի վերջին հոյսը»:

**Ա.Վահիկ, Բյուզանդական կայսրության պատմություն,  
հատ. II, էջ 429**

Ռուբեն Գ-ն, օգտվելով այն հանգամանքից, որ Բյուզանդական կայսրությունը կորցրել էր Կիլիկիայի հետ ընդհանուր սահմանը, վերջնականապես հսկողության տակ է առնում Կիլիկիայի ամբողջ ծովափը:

### Յարիմ. շրջադարձ դեպի լատինները

Ստեղծված պայմաններում Բոհեմոնդ Գ-ն դիմում է Կիլիկիայի իշխանապետ Ռուբեն Գ-ին՝ խնդրելով նրան մասնակցել Յարիմ ամրոցի դեմ նախապատրաստվող արշավանքին:

**Տեղեկանք.** «Զենգիներին ենթակա հողերի նվաճմանը ավելի շահագործված էին Անտիոքի իշխան Բոհեմունդ Գ-ն և Տրիպոլիի կոմս Ռայմոնդ Գ-ն: Նրանք կարողացան ստանալ Եվրոպայից նոր ժամանած Ֆլանդրիայի կոմս Ֆիլիպի օգնությունը, որը, Երուսաղեմի թագավորից վերցնելով հեծելազոր ու հետևակ, զորքով շարժվեց դեպի Տրիպոլիս և միացրեց իր ուժերը խաչակրաց զորքերին»:

**Վ.Տեր-Ռևոնյան, Կիլիկյան Դայաստանը և Մերձավոր Արևելք...  
էջ 76-77**

Ոուրեն Գ-ն գիտակցում էր, որ վաղ թե ու Սալահ աղ-Դինը հարվածելու էր հզորացած Կիլիկիային: Սուլթանն իր իշխանության ներքո միավորել էր նահմեդական Ասորիքը, մինչդեռ լատինները տակավին անմիաբան էին: Նրանց իշխանություն միայն բացառիկ դեպքերում էին վարում միասնական արտաքին քաղաքականություն և հաճախ հրաժարվում էին ռազմական օգնություն ցուցաբերել միմյանց:

Ոուրենը միանում է Ջարիմի արշավանքին, որը տեղի է ունենում 1177/78թ. ձմռանը (տես քարտեզը): Դաշնակիցների նպատակն էր ռազմահենարան գրավել Անտիոքի արևելքում և նախքան Սալյահ աղ-Դինի հետ դժվարին ընդհարումը սկսելը՝ քարենապատ դիրք գրավել: Ջարավում ռազմաքաղաքական իրադրությունը կայունացնելու Ոուրեն Գ-ի ծառումը ևս մեկ հեռահար նպատակ էր հետապնդում: Նա հույս ուներ, որ Ջարիմի արշավանքից հետո կկարողանա ուշադրությունը սկսել հյուսիսային ռազմավարական ուղղության վրա: Անհանգստության պատճառը քոչվոր թյուրքական ցեղերն էին, որոնք որոշակի վարձ վճարելով հայ իշխանապետին՝ միահմանակով թույլտվություն էին ստացել հոտերն արածեցնել Կիլիկիայի արտօսվայրերում: Ակզբանական շրջանում նրանք չին անհանգստացնում հայկական կողմին:



**Ասորիքի և Եգիպտոսի մահմեդական իշխանությունների ծանրազն հետևակային**

Իկոնիայի սուլթանը Կիլիկիայում գերիշխանություն հաստատելու ծրագրեր էր մտմտում: Հետագայում իր գլխավոր ուժերի հավանական արշավանքների համար պարարտ հող ստեղծելու նպատակով նա իր հովանավորության տակ է առնում Կիլիկիա ներթափանցած քչվորներին, որոնք աստիճանաբար սկսում են իրենց սանձարձակ պահել: Ուուրեն Գ-ն Յարիմի արշավանքից հետո միջամտում է վեճին և որոշում նրանց պատժել: Յայկական զորագնդերը կոտրում են բյուլթական ցեղերի դիմադրությունը և գերելով կենդանի մնացածներին՝ տիրանում նրանց ունեցվածքին (տես քարտեզը):


Յարվածը հասցել էր ծիշտ ժամանակին: Քիլիչ Արսլան Բ-ն չէր կարծում, որ Ուուրեն Գ-ն կիանարձակվի այլքափ կտրուկ միջոցների դիմել: Բացի այդ, բյուզանդացիներից գրաված հողերում ամրանալու հոգսերով տարված՝ սուլթանը պատրաստ չէր հարավում նոր պատերազմ սկսելուն: Այդ պատճառով նա դիմում է Եգիպտոսի սուլթան Սալահ առ-Դիմին:

**Պատմական տեղեկանք.** «Սուլթանդակ հասավ Քիլիչ Արսլանի կողմից, որը թախանձում էր սուլթանին (Սալահ առ-Դիմին)՝ նրա հետ համաձայնություն կնքել, միաժամանակ գանգատվում էր հայերից: Սուլթանը, Քիլիչ Արսլանին օգնելու համար, արշավեց դեպի Լևոնի որդու երկիրը»:

**Ալ-Կաղի Բահաեդդին Իբն Շարդար,  
Այուրյան Սալահ առ-Դիմի կենսագրությունը**

Սալահ առ-Դիմը, որը վաղուց էր ձգտում իրեն ենթարկել անկախ քաղաքականություն վարող Ուուրինյան իշխանապետությունը, որոշում է օգտագործել ընծեռված հնարավորությունը:

Ուժութեան մասին գործութեան վեցերորդ համար 1180 թ.



## ՆԵՐԻԽՈՒԺՈՒՄԸ

Սալահ աղ-Դինը սկսում է նախապատրաստվել ոչ մեծ, սակայն անուր հայկական իշխանապետության դեմ պատերազմին: Սուլթանը կարևորում էր արշավանքը, քանի որ Կիլիկիայում հաջողության հասնելով՝ նա լատիններին կզրկեր թիկունքային ռազմավարական կարևոր հենակետից: Բացի այդ, Սալահ աղ-Դինը որոշում է լատինների դեմ արդեն իսկ նախանշվող մեծ պատրազմի համար միավորվելու պատրաստ ուժերի յուրօրինակ գորատես կազմակերպել: Նրա համար կարևոր էր նաև մինչ մեծ պատերազմը ծեռք բերված հաղթանակներով ոգևորել գորքին և մյուս միապետերի շրջանում բարձրացնել իր հեղինակությունը:

Պատերազմը սկսվում է 1180թ.: Սալահ աղ-Դինն ուժերը կենտրոնացնում է Հայեափից հյուսիս՝ Կարահիսար վայրում: Այստեղ նրան է միանում Հայեափի սուլթանության զորքը: Միացյալ բանակը շարժվում է Էկոնիայի բանակին ընդառաջ և միավորվում Կապույտ գետի մոտ: Սահմեդական տիրակալների միասնական ճակատ ստեղծելու խնդիրներով մտահոգված Սալահ աղ-Դինի միջնորդությանը հաշտություն է կնքվում Քիլիջ Արսլան Բ-ի և Արտուրյան ամիրայի միջև:

Ուզմական և քաղաքական խնդիրները լուծելուց հետո Սալահ աղ-Դինը զորքը մոտեցնում է Կիլիկիայի սահմանին և շարժվում դեպի սահմանային Սև գետը:

## ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նախորդ տարիների ընթացքում Ռուբեն Գ-ն ձևավորել էր սահմանային ամրությունների մի ամրող համակարգ: Ամրոցների մեծ մասի պարիսպները վերանորոգված էին, դրանց կայազորները բավական մեծաթիվ էին, մարտիկները մարտական պատշաճ պատրաստություն էին անցել, և բավարար մթերապաշտը էր կորտակված:

Կիլիկիայի հայկական իշխանապետության դեմ միավորվել էին տարածաշրջանի մահմեդական բոլոր միապետերը: Մեկ այլ իրադրությունում դա կարող էր բավարար լինել հաղթանակ տանելու համար: Հակառակորդի բանակն այնքան մեծաթիվ էր, որ բաց դաշտում վճռական ճակատամարտի դուրս գալու մասին խոսք անգամ լինել չէր կարող, և իշխանապետը որոշում է անկանոն ռազմարվեստ կիրառել. ստեղծված իրադրությունում դա առավել նպատակահարմարն էր:

Հայկական կողմի առաջին իսկ «խոչընդուների» հաղթահարման ժամանակ մահմեդական զորքի համար դժվարություններ են ծագում: Հանդիպելով ան-

որոցների երկարատև ու համար պաշտպանությանը՝ հակառակորդն արյունաքամ է լինում: Սալահ աղ-Դիմի գործի առաջխաղացումը դանուաղում է:

Այդուհանդեռձ, ռազմական գործողությունների սկզբանական փուլում հաջողությունը հակառակորդի կողմն էր: Սև գետի շրջանում հակառակորդի առաջխաղացումը դանդաղեցնելու նպատակով կաշկանդող մարտերում Սալահ աղ-Դիմին հաջողվում է առավելություն ստանալ, խորանալ իշխանապետության տարածքում, ապա նաև գրավել Մանաքիր (Դիսն ալ-Արման) ամրոցը:

Սակայն Մանաքիրի գրավումով ոչ միայն կարևոր ռազմավարական խնդիրներ չեն լուծվում, այլև նորանոր դժվարություններ են ծագում<sup>1</sup>: Ռազմական գործողությունների ճգճգումը դժվարություններ է ստեղծում հսկայական բանակի մատակարարնան գործում: Այդ ամենը ստիպում է Սալահ աղ-Դիմին վերանայել պատերազմի նկատմամբ իր մոտեցումները:

Սրափ գնահատելով իրադրությունը՝ Ռուբեն Գ-ն Սալահ աղ-Դիմին խաղաղություն է առաջարկում: Դատկանշական է, որ հայկական կողմը սուլթանին հասկացնում է պատերազմի ճգճգման աննպատակահարմարությունը և որպես «բարի կամքի արտահայտություն» առաջարկում վերադարձնել թյուրքերից խված հարստությունն ու ազատ արձակել նախկինում գերված իինգ հարյուր թյուրք անասնապահներին:

Սալահ աղ-Դիմն ընդունում է Ռուբեն Գ-ի առաջարկը: Դաշտության պայմանագիրը կնքվում է 1180թ. հոկտեմբերի 2-ին: Դայտարարելով, որ իր արշավանքի նպատակն ընդամենը գերիներին ազատելն է եղել, սուլթանը վերադարձնում է եգիպտոս:

Այսպիսով, Սալահ աղ-Դիմի 1180թ. կիլիկյան արշավանքը գրեթե ապարդյուն էր: Տարածաշրջանի մահմեդական բոլոր պետությունների գորքերը միավորելուց հետո ձևավորված ահրելի բանակը գրավում է ընդամենը մեկ սահմանային ամրոց և ազատում իինգ հարյուր գերիների:

Ռուբեն Գ-ն մեծաթիվ հակառակորդին հակադրում է հայկական կողմի կազմակերպվածությունը և քաղաքական իրադրությունից առավելագույն օգուտներ քաղելու ունակությունը, որոնք եւ առանցքային նշանակություն են ունենում ռազմական գործողությունների վարման ընթացքում: Լրջագույն փորձությունից նվազագույն կրորուստներով դրւու եկած հայկական իշխանապետությունը ոչ միայն շարունակելու էր իր գոյությունը, այլև անընդհատ հզրանալու էր:

<sup>1</sup> Հավանաբար, դրանից բարկացած է Սալահ աղ-Դիմը իրամայում ավերել քաղաքն ու կոտորել Մանաքիրի պաշտպաններին:

# ԿԻԼԻԿԻԱ ՆԵՐԽՈՒԺԱԾ ՌՈՒՍԱՍ ԱՄԻՐԱՅԻ ՉՈՐՁԻ ԶԱԽԶԱԽՈՒԾ

## 1187Թ.

### **Բոհեմունդ Անտիոքցու ուխտադրժությունը**

Սալահ աղ-Դինի 1180թ. արշավանքը լրջագույն ահազանգ էր Կիլիկիայի հայկական իշխանապետութան համար: Սահմեղական պետությունների աքցանի մեջ հայտնվելու հեռանկարը Ռուբեն Գ-ին հարկադրում է համախմբել բոլոր ուժերը: Այդ օճաքքում իշխանապետության բանակը պաշարում է Լամբրոնը, որի տեր Յեթումյան իշխանները ձգուում էին ինքնուրուցնության:

Պաշտոնապես, Անտիոքի դուքսն ու հայ իշխանապետը դաշնակիցներ էին, բայց Բոհեմունդը դժգոհ էր այն ծերմ ընդունելությունից, որն իր քաղաքական հակառակորդ բարոններին ցույց էր տրվել Կիլիկիայում և պատեհ առիթ էր վիճակում հզոր հարևանի ներքին գործերին միջամտելու համար: Նա խնջույքի է հրավիրում Ռուբեն Գ-ին և ծերբակալում: Անտիոքի դքսության բանակը ներխուսում է Կիլիկիա: Սակայն Ռուբեն Գ-ն կարողանում է իր ծերբակալման մասին տեղեկություն հաղորդել Եղբօրք՝ տաղանդավոր պետական ու ռազմական գործիչ Լևոն իշխանին, որը փայլուն կերպով կազմակերպում է պայքարը ներխուժած հակառակորդի դեմ: Կիլիկիա ներխուժած անտիոքյան բանակը չի կարողանում գեթ մեկ քաղաք կամ ամրոց գրավել:

Տեսնելով, որ Կիլիկիայի ներքին գործերին միջամտելու փորձն ապարդյուն է, Բոհեմունդը մեկ տարի անց ազատ է արձակում Հայոց իշխանապետին: Իր ազատության դիմաց Ռուբեն Գ-ն զիջում է Աղանա և Մամեստիա քաղաքներն ու Սարվանդիքար և Թիլ Շամտուն թերթերը, ինչպես նաև Վճարում է որոշ փրկագին: Սակայն փրկագին Վճարումից և գերիների վերադարձից անմիջապես հետո հայկական գորագները ազատագրում են այն ամենը, ինչ զիջել էին: Անտիոքի դուքսն ի վիճակի չեր կասեցնել հայկական կողմի առաջխաղացումն, թեև մի քանի անարդյունավետ արշավանքներ է իրականացնում: Կիլիկիայի ամբողջ ծովափը՝ Սելկիւջինց մինչև Ալեքսանդրեթ, մտցվում է Ռուբենյան իշխանապետության կազմի մեջ:

### **Լևոն՝ իշխանապետ Հայոց**

Անտիոքյան վլտանգն արդեն չեղոքացված էր, երբ 1187թ. Ռուբեն Գ-ն որոշում է հեռանալ աշխարհիկ կյանքից և քաշվում է Դրազարկի վանքը՝ իշխանությունը փոխանցելով Լևոնին: Վերջինս իր փայլուն գործունեության համար արժանանում է «Սեծագործ» պատվանվանը:

**Պատմական տեղեկանք.** «Իշխանությունը վերցրեց քաջ և պատերազմող Լևոնը: Սա հենց որ տիրեց, անմիջապես ընդարձակեց իր տերության սահմանները: Նա պատերազմեց շրջակա ազգերի հետ և քաջությամբ հարթեց, ըստ իր անունի առյուծաբար, որովհետև Լևոն առյօտ է նշանակում»:

**Կիրակոս Գանձակեցի, Դայոց պատմություն, Էջ 118**

Լևոն Բ-ի (1187-1219թթ.) իշխանապետության առաջին իսկ տարում հյուսիսից Կիլիկիա են ներխուժում թյուրքական ցեղերը, սակայն գրեթե անմիջապես այս իրադարձությունը երկրորդ պլան է մղվում Երուսաղեմի շուրջ ծավալված ռազմական գործողություններով: Սալահ առ-Ղինի բանակը ծանրագույն հարված է հասցնում լատինական թագավորության գործին, իսկ 1187թ. հոկտեմբերի 2-ին գրավում է Երուսաղեմն: Խաչակիրների ստեղծած պետությունների ոչնչացման ժրագիրն իրականացնելու նպատակով Սալահ առ-Ղինը դաշնակցում է Բյուզանդիայի հսահակ Բ Անգելոս (1185-1195թթ.) կայսեր հետ:

Այս իրավիճակում նախքան հյուսիսային ուղղությամբ վարվելիք գործողությունները՝ հայ իշխանապետ Լևոն Բ-ին անհրաժեշտ էր հուսալի թիկունք: Ընդհանուր թշնամու դեմ միավորվելու անհրաժեշտությունը, ինչպես նաև Կիլիկիային հյուսիսից սպառնացող թյուրքական և Անտիոքին հարավից սպառնացող եգիպտական վտանգները Լևոն Բ-ին ու Բոհեմոնդ Գ-ին հարկադրում էին մոռանալ ոչ վաղ անցյալում տեղ գտած հակասությունները և համատեղ գործել:

## Ներխուժումը

Մինչ Պաղեստինում ծավալվում էր հակամարտությունը, Մոսուլի ու Մծրիմի շղթական տարածքներում թյուրքերը (թուրքմեններ) երկու անգամ ջախջախում են քրդական ցեղերին ու սկսում նրանց հետապնդումը: Դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք շարժվելով հետապնդող թյուրքական գործը Ռուստամ (Ռոստոմ) ամիրայի գլխավորությամբ հասնում է Կիլիկիայի արևելյան սահմանները հանդիսացող Անանոսյան Լեռներին: Թյուրք ամիրան, որի ենթակայության տակ ավելի քան 20 հազարանոց բանակ կար, որոշում է ասպատակել նաև Կիլիկիայի լեռնային շրջանները:

Ռուստամի գործը բավարար մեծաթիվ էր, սակայն լեռներում պատերազմելու, առավել ևս՝ լեռնային անրոցների պաշարման համար անբավարար էր նախապատրաստված: Այսինքն՝ Կիլիկիա արշավելու նրա որոշումը ռազմական տեսանկյունից հիմնավորված չէր և, պետք է կարծել, պայմանավորված էր պահն օգտագործելով հայկական իշխանապետության հարուստ շրջանները քալանելու ձգումով:

Ներխուժումն ընդհանուր առմանը անսպասելի էր հայկական կողմի համար: Բացի այդ, մեծաթիվ հակառակորդն անակնկալներից խուսափելու համար ու-

Ժերը դեռևս չի մասնատում այս ու այն կողմում թալանի համար գորամասեր ու դարձելով: Ուստամ ամիրան, նախքան «հիմնական» թալանը սկսելը, որոշում է վճռական ճակատամարտ տալ Լևոն Բ-ին:

## Դազմավարությունը

Լևոն Բ-ն ծգտում էր ստեղծել այնպիսի իրադրություն, որ տակավին պահպանելով քանակական գերազանցությունը՝ թյուրքական հրոսակախմբերը «զղջային» ներխուժման համար: Կազմակերպված զորահավաքի և հայկական կողմի նյութ միջոցառումները կանխել չկարողանալով՝ հակառակորդն անբարենպատ իրադրությունում էր հայտնվելու: Այնուեւու հասցվելու էր շամբահար անող վճռական հարվածը: Այսպիսով, որքան էլ որ ներխուժումն անսպասելի էր, սակայն երիտասարդ տարիքում բազմափորձ զորավարի համբավ ծեռք բերած Ուլիբյան իշխանապետը կարողանում է ուժերը համախմբել ու համար դիմադրություն կազմակերպել: Արդյունքում՝ արդեն սահմանային ամրոցների շրջանում հակառակորդի առաջխաղացումը կաշկանդվում է, և մի քանի օրում հակառակորդը կորցնում է ռազմավարական նախաձեռնությունը, որն անհրաժեշտ էր երկարատև պաշտպանության համար նախապատրաստված լեռնային ամրոցները գրավման ժամանակ:

Մինչ Ուստամը դանդաղ առաջ էր շարժվում և խորհում առջևում գտնվող ամրոցները գրավելու կամ շրջանցելու հարցի շուրջ՝ տեղեկություն է ստացվում, որ հայկական գրուագները փակել են Ամանոսյան լեռների այն կիրճերը, որոնցով անցնելու էր նրա քանակը: Դակառակորդի առջև կիրճերի փակումը և ամրոցներից դուրս դիմադրության օջախների ստեղծումը կարևոր և հաստատուն տեղ են գրավում Կիլիկիայի հայկական իշխանապետության ռազմավարության մեջ:

Զքավարարվելով ծեռնարկված միջոցառումներով՝ հայկական կողմը սկսում է փակել նաև այն անցումները, որտեղով հակառակորդը նտել էր Կիլիկիա<sup>1</sup>: Այս զորամասերը գրեթե մասնակցություն չէին ունենալու մարտական գործողություններին, սակայն հակառակորդի թիկունքում նրանց ներկայությունը սկզբից և կարևոր բարոյահոգեբանական նշանակություն է ստանում: Լևոն Բ-ի այս մտահղացումները նոր խոսք էին հայոց ռազմարվեստում:

Տախկինում շարժուն ջոկատմերը գործում էին հակառակորդի գլխավոր ուժերից այնպիսի հեռավորության վրա, որպեսզի բացառվի նրանց և հակա-

<sup>1</sup> Դակառակորդի շրջափակումը, հավանաբար, իրականացվել է հայոց ռազմարվեստում բավական մեծ տարածում ստացած չըլող ջոկատմերի միջոցով:

ռակորդի գլխավոր ուժերի կամ գլխավոր ուժերից առանձնացված վերջապահ զորամասերի միջև ընդհարման հավանականությունը: Քանի որ հակառակորդը դեռևս գտնվում էր սահմանային շրջաններում՝ նրա թիկունքում գործող ստորաբաժանումները շատ մոտ էին լինելու թյուրքական զորքին: Կիրառվող նորարարությամբ ռազմավարական ու մարտավարական տարրերը մոտեցվում էին իրար:

## Հաղթանակը

Ուստամ ամիրան հայտնվում է դժվարին իրադրությունում: Այլևս առաջ շարժվեն ամինաստ էր, քանի որ նրանց գործը հայտնվել էր յուղորինակ շրջապատման մեջ, իսկ առջևում հայոց իշխանապետության պաշտպանական հզոր ամրոցների համակարգն էր:

Այս ընթացքում Լևոն Բ-ն հակառակորդին նոր «անակնկալ» է մատուցում: Թյուրքական հետախուզական ստորաբաժանումները նկատում են, որ հայկական գլխավոր ուժերը համարձակորեն կազմակերպված տեղաշարժեր են կատարում: Ակնհայտ էր, որ հարձակման ենթարկված իշխանապետության բանակը, նախքան վճռական ճակատամարտի դուրս գալը, համախմբվում էր: Դեռ հակառակորդը չէր հասցրել ուշի գալ տագնապալի տեղեկություններից, երբ ենթարկ-




Անամուր ամրոցի ընդհանուր տեսքը

Վում է տակավին փոքրաթիվ, սակայն արդեն իսկ հստակորեն կազմակերպված և իր անելիքն ինացող հայկական ուժերի սրբնեաց հարվածին (տես սխեման):

Գրոհն իրականացվում էր՝ տեղանքն օգտագործելով: Լևոն Բ-ն կիրառում է իր մարտավարական հնարքներից մեկը՝ հարված հակառակորդի մարտակարգի հանգուցակետին: Այս մարտում հակառակորդի համար այդպիսի կարևոր նշանակություն ուներ իրամանատարական վրանը, որի ուղղությամբ էլ կենտրոնացվում են հայկական գրագիրների ջանքերը:

Թյուրքական իրոսակները միայն իրամանատարական վրանի մոտ են կարողանում մարտակարգ ձևավորել և կանոնավոր դիմադրություն ցույց տալ: Մյուս տեղանաբերում անկանոն մարտ է սկսվում, որն ավարտվում է հակառակորդի ջախճախումով: Դրամանատարական վրանի մոտ մարտակարգը կանոնավորելու և, հավանաբար, հակագրող իրականացնելու նպատակով Ուստամբ նետվում է մարտի և սպանվում իրամանատարական վրանից քիչ հեռու:



Ուսպինի ճակատամարտը 1187թ.

Ամիրայի սպանվելուց անմիջապես հետո հակառակորդի շարքերում խուճապ է սկսվում, որի հետևանքով փախչում են նաև հրամանատարական վրանի մոտ կանոնավոր դիմադրություն ցույց տվող զորանական գործում է հակառակորդի հետապնդումը, որին նաև կիրճերում ամրացած հայկական զորախմբերը: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հաջողվում է ավարտել անկանոն նահանջող հակառակորդի գլխովին ջախջախումը: Դատկանշական է, որ հակառակորդի հետապնդումը որոշվում է ավարտել ոչ թե նրան իշխանապետության սահմաններից վտարելով, այլ ջախջախումն ավարտելով: Այդ նպատակով հայկական զորագնդերը համարձակորեն դրւում են գալիս Կիլիկիայից և իշխանապետության սահմաններից դրւում՝ Մարաշի շրջանում, նորանոր հարվածներ հասցնում նրան:

**Պատմական տեղեկանք.** «Ապա, երբ Լևոնը, Կիլիկիայի կառավարիչը (իշխանապետը) իմացավ այդ ճամփն, նա փակեց նրանց առջև բոլոր լեռնանցքները Մարաշի շրջանում և նրանց բոլորին սրի քաշեց»:

**Բար Ներեռու, ժամանակագրություն, Էջ 328**

Այսպիսով, Կիլիկիան լուրջ փորձության է ենթարկվում Լևոն Բ-ի իշխանության առաջին իսկ տարում: Դակառակորդի գորքերի ջախջախման ընթացքուն հայ իշխանապետն իրեն դրսկորում է որպես ռազմական գործի տաղանդավոր կազմակերպիչ: Ընդամենը մի քանի օրում, չկարողանալով ներխուժել իշխանապետության կենտրոնական շրջաններ, թյուրբական զորքը ջախջախում է, իսկ Ռուսական սպանվում:

Սահմանային շրջաններում համառ դիմադրությամբ և արագորեն իրականացված զորահավաքով հաջողվում է հակառակորդից խլել ռազմավարական նախաձեռնությունը և վճռական ճակատամարտում պարտության նատնել նրան: Դակառակորդի գլխավոր ուժերից ոչ մեծ հեռավորության վրա՝ նրա թիկունքի կիրճերում դիմադրության օջախների ստեղծումն ուշագրավ հնարք էր: Այն կրկնում էր հռոմեական բանակների դեմ ավելի քան 1200 տարի առաջ կիրառված ռազմավարությունը, սակայն հավելելով մարտավարական բաղկացուցիչներ:

---

**ԿԻԼԻԿԻԱՅԻ  
ՀԱՅԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ՌԱՅՈՒՄԱՐՎԵՍԸ**

---

# ՊԱՏԵՐԱՋ ՀԱԵՊԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԻՍՎՈՐԱԾ ՌԱՉՄԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՉՈՐՖԵՐԻ ԴԵՄ 1203-1206թթ.

**Խ**աչակրաց արշավանքի ծախողումից հետո Սալահ աղ-Դիմը վերջնագրով Լևոն Բ-ից ոչ միայն պահանջում է վերադարձնել վերջին տարիներին գրավված տարածքները, այլև ճանաչել իր գեղիշխանությունը: Հայոց իշխանապետը վճռականորեն մերժում է այդ առաջարկը և պատրաստվում պաշտպանության: 1193թ. գարնանը «պատժիչ» արշավանքի սկզբում Անանոսի նախալեռներին հասած սուլթանը մահանում է, և նրա գործը վերադառնում է:

Լևոնի անզիջում քաղաքականությունը բարձրացնում է Կիլիկիյայի հայկական պետության հեղինակությունը: Այդ իրադարձություններից ընդամենը մեկ տարի անց Անտիոքի իշխանապետ Բոհեմոնդ Գ-ը ճանաչում է Լևոն Բ-ի գեղիշխանությունը: Կիլիկիյայի բանակը հսկողության տակ է առնում Դրունք Ասորվոցը (Պորտելա լեռնանցը): Հայ իշխանապետը համարձակորեն միջամտում է Քիլիջ-Արսլան Բ-ի որդիների գահակալական Կրիվներին, որից օգտվելով՝ նրան հաջողվում է հյուսիսարևմտյան և արևմտյան ուղղություններում մի շարք շրջաններ գրավել, մասնավորապես Կալոնոռոս նավահանգիստը և հարակից մի ամրող շարք ամրոցներ: Այդպիսով Հայկական պետության սահմաններն արևմուտքում հասցվում են Եվրիմենդոն գետին, իսկ հյուսիսում՝ Մալանդաս լեռնանցքին ու Կիզիստրային:

Դիվանագիտական նուրբ գործունեություն ծավալելով՝ Լևոն Բ-ն թագավոր է հոչչակվում: Նրան թագավոր են ճանաչում Հռոմի պապ Կելեստինոս Գ-ն (1191-1198թթ.), Հռոմեական սրբազն կայսրության Հենրիխ Զ (1190-1197թթ.) և Բյուզանդիայի Ալեքսիոս Գ (1195-1203թթ.) կայսրերը: Կիլիկիյայի հայկական թագավորությունը շտապում է ճանաչել նաև Բաղդադի Խալիֆա ալ-Նասիր (1180-1225թ.), որն իր դեսպանների հետ թանկարժեք նվերներ է ուղարկում: Անճախաղեական հզորացած Կիլիկիյայի թագավորությունը (1198-1375թթ.) վերածվում է տարածաշրջանի քրիստոնեական առաջնորդի:

## **ԱՄԿ ԼԽԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ 1205թ.**

**Մ**տեղծված պայմաններում Հայոց արքային մտահոգում էր թուլացած, սակայն Կիլիկիայում գերիշխանություն հաստատելու նտրից չիրաժարվող Ասորիքի լատինների «համառությունը»: Հարլան իշխանապետությանը սաստելու համար Հայոց բանակը 1203թ. արշավում է դեպի Անտիոք: Ուժերն ընդհանուր թշնամու դեմ համախմբելու փոխարեն Անտիոքում կրկին դիմում են մահմեդականների օգնությանը: Այս անգամ «անշահախնդիր» աջակցի դերում հանդես է գալիս Սալահ աղ-Դինի որդին Հալեպի սուլթան ալ-Սալիք ալ-Զահիրը: Չորրորդ խաչակրաց արշավանքի նախօրյակին քրիստոնեական պետությունների վեճին Այյուբյանների միջամտությունը վտանգավոր հետևանքներ կարող էր ունենալ, սակայն Կիլիկիայի բանակը կարողանում է վերականգնել հայոց գերիշխանությունն Անտիոքում ու բարեհաջող վերադառնալ:

## Յալեափի սուլթանի «արշավանքը»

Յայկական բանակի վերադարձից անմիջապես հետո Յալեափի սուլթանի բանակը սկսում է պատրաստվել Կիլիկիայի դեմ արշավանքին, սակայն նոր խաչակրաց արշավանքի մասին տեղեկությունները հարկադրում են ձեռնպահ մնալ Վճռական գործողություններից:

Իրադրությունը փոխվում է 1205թ., երբ խաչակրաց արշավանքի անհաջող ավարտն Ասորիքի մահմեդական տիրակալների շրջանում նորից Յայոց թագավորությունը զավթելու հոլոյեր է առաջացնում: Գարնանը մահմեդական տիրակալների միացյալ բանակը կենտրոնանում է Յալեափի մոտ՝ Դարքսակի ուղղության վրա: Յայկական թագավորության դեմ վարվելիք գործողություններից առանձնապես ակնկալիքներ չունենալով՝ Յալեափի սուլթանը որոշում է ժամանակավորապես բավարարվել «ուժի ցուցարումով» և իր գերիշխանությունն ընդունելու վերջնագիր է ներկայացնում: Որոշվում է մահմեդական տիրակալների բոլոր ուժերի համախմբումն իրականացնել Յալեափի մոտ: Յայոց թագավորության սահմանից երեք օրվա երթի հեռավորության վրա:

**Պատմական տեղեկանք.** «Յալեափի կողմերի տիրող սուլթանը զատկի օրերին զորաժողով արեց և այսպիսի պատզամ ուղարկեց Լևոն արքային: «Եթե հարկատու չլինես ինձ, ին թագմաթիվ զորքերով քր երկի բոլոր բնակիչներին՝ մորը մանկան մոտ, սրածելով կոչնչացնեմ և ձեր այդ տոնն... ծեզ համար սգի կվերածեն»: Եվ երբ առաքեց այս, ինքը իր թագմաթիվ զորքերը առավ ու բանակեց նրա սահմանների մոտ, սպասում էր պատզամի պատասխանի գալստյանք»:

**Կիրակոս Գանձակեցի, Յայոց պատմություն**

## Ռազմավարությունը

Ինչպես և պետք էր սպասել, ալ-Զահիրի ահարեկման քաղաքականությունը ցանկալի ազդեցություն չի ունենում Յայոց արքունիքի վրա:

Տեղեկություն է ստացվում, որ հակառակորդը սկսել է Դարբսակի ուղղությունից հարձակում ծեռնարկելու համար անհրաժեշտ պաշարներ կուտակել: Ալ-Զահիրը բանակը քաժանել էր երկու մասի, որոնցից մեկը սկսել էր արդեն մոտենալ սահմանին: Ընդ որում, հավանաբար, հայկական կողմից ինչ-որ ակտիվություն կանխատեսելով, երկրորդ բանակի հրամանատար նշանակված ամիրա Մայմուն ալ-Կասրին իր հերթին որոշել է ուժերը երկու մասի բաժանել և Դարբսակ տեղափոխվող բեռներն ուղեկցելու հա-

մարտրամադրել իր գորամասերի մեջ մասը: Հակառակորդի ուժերը փաստացի երեք մասի էին բաժանված, որոնցից ամենաթույլը կենտրոնում գտնվողն էր:

**Պատմական տեղեկանք.** «Զահիրն իր զորքի մի մասը առաջապահ նշանակեց մի մեծ ամիրի գլխավորությամբ, որը կոչվում էր Մայմոն ալ-Կասրի<sup>1</sup>: Զահիրը սննդամթերը և գենք ուղարկեց իր մի բերդը, որը դրացի էր Լևոնի որդուն (Լևոն Բ-ին) և կոչվում էր Դարր Սար (Դարրսակ): Նա լուր ուղարկեց Սայմոնին, որ իր զորքի մի մասը ուղարկի այս ռազմաճթերին ընկերակցելու համար մինչև Դարր Սար: Այդպես էլ արեց նա և իր զորքի մեջ մասն ուղարկեց, իսկ ինքը մնաց փորդ զորամասով: Լուրը հասավ (Լևոնին), որը շտապ հասավ ու, գտնելով նրան փորքարիվ զորքով, կովի բռնվեց նրա հետ»:

**ԻՐԾ ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Որոշվում է հակառակորդին «դիմավորել» նրա տարածքում՝ հանկարծակի հարվածով անակնկալի բերել ու մաս-մաս ջախչախել: Պակաս կարևոր չէր նաև, որ մարտուական գործողությունները հակառակորդի տարածք տեղափոխելով՝ Կիլիկիայի զգալի մասն ազատվում էր ասպատակվելու հեռանկարից:

Միայն հայկական կողմի խոշոր անհաջողության դեպքում հակառակորդը կկարողանար հակահարձակման անցնել: Այդ դեպքում էլ նրա հաջողությունները նվազագույն կլիմեին, քանի որ հարվածի ենթակա կլիմեին Կիլիկիայի միայն արևելյան լեռնային շրջանները: Այս ամրությունները նախօրոք պատշաճ ամրացվել ու երկարատև պաշարնան էին նախապատրաստվել: Ենտևաբար, նույնիսկ այդ դեպքում դրանց հաղթահարումը հակառակորդի համար դժվարին փորձության կվերածվեր:

Հայկական բանակն ավարտում է զորահավաքը և պահպանելով գաղտնի տեղաշարժի համար անհրաժեշտ բոլոր պայմանները շրջանցում է հակառակորդի սահմանային ամրություններն ու մտնում Հալեպի տուքանության տարածք:

Ալ-Զահիրի հետախույզները չեն բացահայտել հայկական կողմի գործողությունները, իսկ սուլթանը չէր կարծում, թե Լևոն Բ-ն կհամարձակվի բանակը դուրս բերել Կիլիկիայից ու այսչափ հանդուգն քայլ կձեռնարկի:

Հայկական բանակը գիշերը շրջանցելու էր Ամկ լիճը և մոտենալու էր Մայմոնի զորագնդերի տեղաբաշխման շրջանին: Երկու կողմից (արևելքից ու արևմուտքից) հարվածի տակ հայտնվելու վտանգն աչքի առաջ ունենալով հանդերձ, հայկական զորագնդերը մտադիր էին ընթացքից հարձակվել հակառակորդի վրա: Հատկանշական է, որ հայկական բանակի մարտակարգը պետք է լիներ փաղանգածն՝ ուժերը ճակատով և հնարավորինս հավասարապես բաշխված:

<sup>1</sup> Ալ-Կասրի - թարգմանաբար՝ պալատային:

Յայոց արքայի գլխավոր խաղաթուղթն անսպասելի գրոհի ենթարկված հակառակորդի հավանական գործողությունների կանխատեսելիությունն էր: Դժվար չեր կրահել, որ պարտության դեպքում Մայմունը սուլթանին ստիպված էր լինելու բացատրություններ տալ իր ուժերի մեջ մասը դեպի Դարրսակ ուղարկելով՝ բանակի հաղորդակցման ուղիները վտանգի ենթարկելու և, գլխավորը, պատշաճ մարտական ապահովում (հետախուզություն) չկազմակերպելու համար: Տիած հեռանկարից խուսափելու համար Մայմունն «արդարանալու» մեկ հավանական պատասխան էր ունենալու: Անդեմ, թե սկզբից ևեր նկատի է ունեցել հայկական բանակի գործողությունների բոլոր տարրերակներն ու գիտակցված ծուլակ է կազմակերպել:


Յամարձակ մտահեղացումն իրականացնելու համար հայկական բանակը պետք է շտապեր, քանի որ առաջին հաղթանակից շատ բան էր կախված լինելու: Մեկ հաջող հարվածը կարող էր էապես բարելավել կողմերից մեկի ռազմավարական դիրքերը և, նույնիսկ, կանխորոշել պատերազմի ելքը:

## Ճակատամարտը

Իրադրությունը լարված էր, բայց, հայկական կողմի համար՝ ընդհանուր առմանը նպաստավոր: Յամարձակ առաջխաղացումով Յայոց բանակը, որը մինչ այդ արդեն հասցրել էր շրջանցել հակառակորդի սահմանային ամրությունները, հայտնվում է Դարրսակ ուղևորված գորամասերի թիկունքում և հակառակորդի գլխավոր ուժերի հաղորդակցման ուղիների վրա հաջող գործողություններ ծավալելու իրական հնարավորություն է ստանում (տե՛ս սխ. 1):

Յայկական բանակը հասնում է Մայմուն ամիրայի գլխավորությամբ գործող գործի տեղաբաշխման վայրը: Յակառակորդի այս գորամասերի փոքրաթվությունը օգալի առավելություն էր տալիս հայկական կողմին, սակայն հավատարիմ մնալով իր ռազմավարությանը Լևոնը, համաձայն իր մտահեղացման, որոշում է այնպիսի հարված հասցնել, որ մեկ մարտով վճռվի նախաձեռնության հարցը: Որոշվում է նաև մարտը սկսել սրբնթաց գրոհով:

Շեշտակի հարվածով հակառակորդի ճամբարը երկու կողմերից թևանցվում է՝ նպատակ ունենալով թույլ չտալ, որպեսզի Մայմունի ուժերը կարողանան դրւու գալով հարվածի տակից՝ նահանջել ու միանալ ոչ հեռու տեղաբաշխված ալ-Զահիրիի բանակին:

Միտմա 1

Ամպ լճի ճակատամարտը 1205թ.

**Պատճական տեղեկանք.** «Երբ կրիվը սաստկացավ, Մայմունը լուր ուղարկեց Զահիրին իմաց տալով այդ մասին, սակայն սա հեռու էր նրանից: Պատերազմը Երկարեց, իսկ Մայմունը պաշտպանում էր իր անձն ու բեռները փոքրաթիվ մահմեդականներով մեծաթիվ հայերի դեմ»:

*Իրն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX*

Նկատելով, որ հայկական բանակը ճեղքման տեղամասեր չունի, Մայմունը չի կարողանում ճիշտ գնահատել իրավիճակը: Նա վճռում է, որ մեկ-երկու տեղամասում մարտակարգի ճեղքման տեսանելի վտանգ չունենալով՝ մարտի ընթացքում կհասցնի իր ուժերը մարտակարգով շարել և շրջանաձև պաշտպանությամբ ժամանակ շահել: Ամիրան անմիջապես սուրհանդակի միջոցով օգնության հասնելու խնդրանքով դիմում է գլխավոր ուժերին: Ըստ նրա, տեղ հասնելով՝ գլխավոր ուժերը կհարվածեին Յայոց բանակի մարտակարգի թերին և անհաջող սկսված մարտը հնարավոր կլիներ փրկել և ավելին՝ հաղթանակ շահել:


## Հաղթանակը

Կիսաշրջանաձև պաշտպանություն կազմակերպելու վրա զգալի ժամանակ ու ջանքեր ծախսելուց հետո Մայմունը համոզվում է, որ իր հույսերն ապարդյուն են: Ակնհայտ է դաշնում, որ գլխավոր ուժերի նույնիսկ հեջյալ գորանասերը չեն հասցնի նախքան մարտի ավարտը Հալեայից օգնության հասնել: Այժմ արդեն նոր հարց է հուզում Մայմունին. ինչպես իրականացնել նահանջը (տե՛ս սխ. 2):

Թևանցումներով հայկական զորամասերի մի մասը հայտնվել էր հակառակորդի թևերում ու թիկունքում: Նահանջի դեպքում պետք էր լինելու հաղթահարել հայոց հռչակավոր նետածիզների թևային «կրակը», որը նորանոր խնդիրներ էր առաջադրում նրան: Ինչպես և պետք էր սպասել, նահանջն իսկական աղետի է վերածվում Մայմունի զորամասերի հաճար, որոնց ջախջախման ավարտումն արդեն եական դժվարություն չէր ներկայացնում:

Ամեն կերպ շրջապատումից խուսափելու նպատակով հակառակորդի զորքի մնացորդները թողնում են ճամբարում կուտակված հարուստ ռազմավարն ու արագ նահանջելով՝ մի կերպ խուսափում լիակատար ոչնչացումից:

Սխեմա 2



Ամկ լճի ճակատամարտը 1205թ.

## ԴԱՐԲՍԱԿԻ ԽԱԿԱՏԱՄԱՐՏԸ


### 1205թ.

**Մ**արտի սկզբից և եթ իրավիճակին անհամապատասխան գործողություններ վարող Մայմոնի զորամասերի ջախջախումով կտրվել էր գլխավոր ուժերի կազմը Դարբսակ ուղարկված զորքի հետ, ընդ որում, հայկական բանակը հայտնվում է նրանց միջև։ Դայոց արքայի նտաղացումը հաջողությամբ էր պասկվել և նախաձեռնությանը սկսում է լիովին տիրապետել հայկական կողմը։ Միևնույն ժամանակ, առաջին հաղթանակի կարևորությունը մեծ չէր լինի, եթե չիննեին հաջողությունը զարգացնելու հստակ ուղղիները Զգտելով հասնել առավելագույն արդյունքի։ Լևոնը բանակն ուղղում է դեպի Դարբսակ (փաստորեն՝ նահանջում է) սննդամթերքի ու զինամթերքի պաշարներով այդ քաղաքի ուղղությամբ շարժվող հակառակորդի զորքի դեմ։

Դայկական բանակի համար նպաստավոր գործոն էր մեծաթիվ սայլերով ծանրաթեռնված հակառակորդի դանդաղաշարժությունը։ Կատարվածից անտեղյակ՝ ռազմերը կատարող ուժերը վստահ էին, որ Դալեպի մոտ ահօելի բանակի տեղակայումն իրենց ազատել է թիկունքում խնդիրներ ունենալուց ու մտահոգված էին միայն ճակատային հարվածի չենթարկվելու խնդրով։ Այդ նպատակով նրանք ուժեղացրել էին ռազմերթի առաջնային ուղեկալը և իրենց երթուղու առջևում մանրակրկիտ հետախուզություն էին կազմակերպել։

Այս ընթացքում Մայմոնի ջախջախված զորամասերը հասնում են Դալեպի մոտ ճամբարած բանակին և հայտնում իրենց պարտության մասին։ Ստեղծվում է ուշագրավ իրավիճակ։ Ալ-Զահիրը կրահում էր, որ Դայոց բանակը, վճռական խնդիրներ չունենալով, չէր համարձակվի դրւու գալ Կիլիկիայից, բայց չգիտեր, թե որն է լինելու Լևոնի հաջորդ քայլը։ Սուլթանը չէր կարող բացառել ոչ մի տարբերակ, այդ թվում նաև իր ճամբարի վրա Դայոց բանակի հարվածի հավանականությունը, և պատրաստվում է վճռական ճակատանարտի։ Անհրաժեշտ տեղեկատվության սպասող հակառակորդն ակամայից անգործության է մատնվում։ Դա Լևոն Բ-ին հնարավորություն է տալիս դեպի արևմտյան շարժվող բանակի մարտակարգը շարել առաջիկա գործողությունների պահանջին համապատասխան։ Մասնավորապես, մինչ վերջապահ զորամասերը կավարտեին մարտադաշտում թողնված ռազմավարի տեղափոխումը, գլխավոր ուժերը սրբնաց արշավում են դեպի Դարբսակ։ Նախատեսվում էր, որ արշավող զորքի հետևից շարժվող գումակը մարտադաշտ կիասնի ճակատամարտի ավարտից անմիջապես հետո և գլխավոր ուժերին նիանալով՝ կնահանջի դեպի Կիլիկիա (տես սխ. 1)։

Միենա 1



Կողմերի երթակարգերը՝ Դարրսակի ճակատամարտի նախօրյակին (1205ր.)

Հետախույզների միջոցով պարզելով, որ հայկական բանակը դեպի արևմուտք է շարժվում, ալ-Զահիրը որոշում է հետապնդում սկսել, սակայն արդեն ուշ էր էր. հայկական բանակի գլխավոր ուժերը գտնվում էին շուրջ 40 կմ հեռավորության վրա, որը հաղթահարելու համար անհրաժեշտ էր ավելի քան մեկ օր<sup>1</sup>:

## Ճակատամարտը


Հայկական կողմը ևս չէր կարող լիովին ազատ գործել, քանի որ հակառակորդն ավելի մեծաթիվ էր, իսկ նախորդ մարտից հետո խլված հսկայական ռազմավարի տեղափոխումը ևս որոշակի դժվարությունների հետ էր կապված: Լևոնը, ճշգրիտ գնահատելով իրավիճակը, որոշում է, որ թի-

<sup>1</sup> Ակատենք, որ դեպի Դարրսակ արշավող հայկական բանակը հեռանում էր Հալեպի մոտակայքում կենտրոնացած հակառակորդի գլխավոր ուժերից ու նրանց միջև հեռավորությունը չէր կրծատվում:

կունքից հարվածի ենթարկվելու հավանականությունը փոքր է, և Դարբսակին մոտեցող հակառակորդի ուժերի գրոհը հետաձգում է մինչև հաջորդ առավոտ:

Երբակարգի առջևում մեծաթիվ ուժեր կենտրոնացրած հակառակորդի ամենախոցելի տեղը թիւունքն էր, որի դեմ էլ ուղղված էր Հայոց բանակի գլխավոր ուժերի հարվածը: Դա հնարավորություն է տալիս երկատված հակառակորդին աստիճանաբար ջախջախել: Մանավանդ որ հարձակման կասեցումից բացի, հակառակորդի զրանասերը պետք է հոգ տանեին պարենի հսկայական պաշարները պահպանելու համար:

Միենա 2



Դարբսակի ճակատամարտը 1205թ.

## Յաղթանակը

Սկսվում է համար, բայց կանխորոշված ելքով մարտ (տես սխ. 2): Ի դեպ, հակագրուիներն ուշագրավ իրավիճակ էին ստեղծել մարտադաշտում, քանի որ պաշտպանվող կողմն անհաջող սկսված ճակատամարտի երկրորդ փուլում փաստացի վերածվել էր հարձակվողի: Յայկական կողմը հնարավորություն է ստանում հակագրուիող զորամասերին դիմավորել հեծելազորից ավելի ուշ մարտադաշտ հասած նետածիգների զորամասերի արձակած նետերի տարափով: Այլ խոսքերով, հակագրուիների կասեցմանը մասնակցում է անբողջ հայկական բանակը: Մասամբ դրամով է բացատրվում մարտում հակառակորդի զոհերի մեծ թիվը:

Յակագրուիների անդրադառնով էլ ավարտվում է հակառակորդի վերջնական ջախչախումը: Ցանկալի արդյունքի չհասնելով՝ նրանք սկսում են նահանջել: Այդ նկատելով՝ հայկական զորամասերը նետվում են հետապնդման, որը շարունակվում է գրեթե մինչև Դարբսակի մատուցները: Նետապնդման ընթացքում գերվում են հակառակորդի մեծ թվով զինվորներ:

Սակայն արդեն ծագում է նոր խնդիր՝ Դարբսակի կայազորի և ալ-Զահիրի գլխավոր ուժերի միջև հայտնվելու վտանգը: Այդ պատճառով 1205թ. պատերազմաշրջանում իր առջև դրված խնդիրները լուծված հանարելով՝ Լևոն Բ-ն բանակին Կիլիկիա վերադառնալու հրաման է արձակում:

# 1205-1206թթ. ՀԱՊԱՐՀԱՎԸ ԱՍՈՐԻՔՈՒՄ

## I հարվածը

Նոր էր ալ-Զահիրն արձակել բանակը, երբ հերթական «անակնկալն» է ցնցում Հալեպի սուլթանությունը. կարճատև դադարից և ուժերի անհրաժեշտ վերախմբավորումից հետո հայկական բանակն աշնանը ներխուժում է հակառակորդի տարածք: Սակայն դա էապես տարբերվում էր գարնանը ծավալված գործողություններից, քանի որ դրանք ոչ թե ակտիվ պաշտպանողական էին, այլ հարձակողական:

**Պատմական տեղեկանք.** «Այդ տարում (18 օգոստոս 1205 - 7 օգոստոս 1206) կիրճերի տեր հայազգի (Լևոնը) մի քանի ամգամ արշավեց Հալեքի նահանգի վրա, կողոպտեց, հրկիցեց, գերեց և գերվարեց:»

**Իրն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Հայկական զորագնդերը սրբնթաց անցնում են մահմեդականների կողմից զավթած Ասորիի հյուսիսով: Տակավին մեծաթիվ, սակայն Լևոն Բ-ի հմուտ ռազմավարության շնորհիվ նախաձեռնությունից խսպառ գրկված հակառակորդն ի վիճակի չէր կասեցնել այդ առաջխաղացումը: Մինչ հակառակորդը կիասցներ համախմբել իր ուժերն ու դուրս գալ հայկական բանակի դեմ առճակատման՝ Լևոնը հասցնում է վերադաշնալ ու ամրանալ Անանոսի լեռներում:

Ոչ վաղ անցյալում տարածաշրջանի քրիստոնյաների ահ ու սարսափի համրավ ձեռք բերած սուլթան Սալահ առ-Դինի որդու համար դյուրին գործ չէր Լևոն Մեծագործ արքայի ցասումից խուսափելը: Այժմ արդեն ալ-Զահիրն էր հարկադրված մտահոգվել արդյունավետ պաշտպանություն իրականացնելու խնդրով:

## II հարվածը

1205թ. տարեվերջին մեկ այլ ուղղությունից երկրորդ արշավանքն է ձեռնարկվում: Հայոց արքան ուշագրավ ծևով է օգտագործում կլիմայական պայմանները: Հարձակումը սկսվում է մի այնպիսի ժամանակ, որ Հալեպի սուլթանության հյուսիսային շրջաններում եղանակն առանձնապես չխոչընդոտեր

հայկական գորամասերի ռազմերթերին, իսկ վերադարձից հետո Կիլիկիայի լեռներն արդեն ծյունապատ, իսկ ճանապարհները՝ անձրևներից անանցանելի դարձած լինեին: Կրկին, մինչ հակառակորդը կիասցներ համախմբել ուժերն ու ընդառաջ շարժվել, հայկական բանակը հարուստ ռազմավարով վերադառնում է Կիլիկիա:

Հակառակորդն անհամենատ ավելի լավ էր նախապատրաստված երկրորդ արշավանքի կասեցմանը, բայց հարվածն այնքան շրջահայացորեն է հրականացվում, որ ալ-Զահիրը ևս գիտակցում է ձմռանը Կիլիկիայի լեռներում ռազմական գործողությունների ծավալման անկանխատեսելի հետևանքները: Տա հարկադրված է լինում 1205թ. ընթացքում երկրորդ անգամ բանակն ազատ արձակել (ուղարկել ձմեռանոցները): Մինչդեռ հաճախակի իրականացվող գորահավաքները և ապարդյուն ռազմերթերը չեն կարող չափարարանալ Յալեպի սուլթանության բանակի գինվորների բարոյահոգեքանական վիճակի վրա:

Հակառակորդի բանակի բարոյահոգեքանական իրավիճակն էլ ավելի է ծանրանում, եթե գարնանամուտին հայկական բանակը հերթական հանդուզն հարվածն է իրականացնում: Այս անգամ, օգտագործելով հանկարծակիության գործոնը, խնդիր էր դրվել ռազմական գործողությունները վարել ավելի վճռական և հասնել մինչև Յալեպի մատուցյները: Յապճեպ հավաքված Այյության ների բանակը կրկին չի հասցնում համարժեք քայլեր ձեռնարկել: Յայկական բանակն այս արշավանքն էլ է հաջողությամբ ավարտում: Կիլիկիայի սահմանային ամրություններին մոտեցած հակառակորդի բանակը հայտնվում է նախորդ տարեվերջին չլուծված լինդիրի առջև և մեկ տարում երրորդ անգամ է հարկադրված լինում նահանջել:

### **III հարվածը**

Ստեղծվել էին բոլոր նախապայմանները նորանոր հարվածներով հակառակորդին խաղաղության առավել նպաստավոր պայմաններ պարտադրելու համար, և 1206թ. գարնան-ամռան ընթացքում հայկական բանակը ևս մի քամի նույնատիպ արշավանք է ձեռնարկում: Այս պատերազմաշրջանում ևս պատկերը նույնն էր, ու հակառակորդը ոչ մի կերպ չէր հասցնում կանխել Յայոց բանակի համարձակ հաղթարշավը:

Ամեն անգամ Յալեպի սուլթանը նոր անակնկալների էր ականատես լինում: Պատճառն այս արշավանքների հանդեպ Լևոն Բ-ի ցուցաբերած համակարգված մոտեցումն էր: Ռազմերթերի նախապատրաստվելիս մանրամասնորեն հաշվի էին առնվում նախորդ արշավանքների արդյունքները, որը մեր ռազմավարությունը կատարելագործելու ուշագրավ օրինակներից է:

Դմտորեն հաջողությունը զարգացնելով՝ հնարավորություն է ստեղծվում էապես բարձրացնել իրականում ոչ մեծ, բայց հսկայական նշանակություն ստացած արշավաճրների արդյունավետությունը, որոնց հետևանքով Ասորիքի հյուսիսում գտնվող Այյուբյանների ռազմական հենակետերին ծանր հարվածներ են հասցվում: Այդ տարածքները վերածվում են Դայոց բանակի ռազմավարական նախադաշտի:

Այսպիսով, 1205-1206թթ. Կիլիկիայի հայկական թագավորության բանակը ծանր հարված է հասցնում Դալեաի սուլթանության գլխավորած ռազմական դաշինքի ուժերին ու ոչնչացնում է Ջյուսիսային Ասորիքի այն բոլոր հենակետերը, որոնք հակառակորդը կարող էր օգտագործել Կիլիկիայի դեմ հավանական հարծակումների ժամանակ:

Այս պատերազմը, որի ընթացքում տարածքային մեծ նվաճումներ տեղի չունեցան, Լևոն Բ-ի զորավարական գործողությունների գագաթնակետն է: Դայոց արքան հանդես եկավ որպես տաղանդավոր զորավար և ռազմարվեստի բարեփոխիչ: Խորտակվեց Այյուբյանների ռազմական հզորությունը: Դալեաի սուլթանությունը ոչ միայն դադարեց Կիլիկիայի արկեյյան շրջանների ասպատակումը, այլև սկսեց ծերնպահ մնալ Անտիոքի իշխանապետության հետ Կիլիկիայի հայկական թագավորության հարաբերությանը միջամտելուց:

**Տեղեկանք.** Լևոն Բ-ի օրոք Կիլիկիան Դայաստանի հզորության մասին է վկայում գերմանացի քահանա Վիլբրանդ Օլդենբուրգցին, որն իր ճանապարհորդության հուշագրությունում (1211թ.) Կիլիկիայի նորաստեղծ թագավորության մասին գրում է. «(Կիլիկիայի թագավորությունը) շատ հզոր երկիր է, քանի որ մի կողմից երիզված է ծովով, իսկ մյուս կողմից ունի քարձը և դժվարանատչելի լեռներ, որոնք թիւ անցումներ ունեն և որոնք հեշտ է պաշտպանել, այնքան հեշտ, որ նույնիսկ եթե թշնամին թափանցում է երկիր՝ առանց աղքայի թույլտվության այնտեղից դրւոք գալ չի կարող»:

## ԱՆՏԻՈՔ-ԻԿՈՆԻԱԿԱՆ ԴԱՅԻՆՁԻ ՉՈՐՁԵՐԻ ԶԱԽԶԱԽՈՒՄԸ 1225-1226թթ.

**Լ**ուն Բ-ն երկարատև համակարգված գործունեության հետևանքով հզորության գագաթնակետին է հասցնում Կիլիկիայի հայկական թագավորությունը: Արքան իրենից հետո թողնում է բարգավաճող տնտեսություն ու ամուր պաշտպանված սահմաններ ունեցող մի պետություն, որը կարևոր դերակատարում ուներ տարածաշրջանային գործընթացներում:

Լսովին հաջորդում է դրաստրոց Զարելը, որին խնամակալ (պայլ) է նշանակվում Լամբրոնի իշխանական տոհմի ներկայացուցիչ Կոստանդինը: Վերջինս հայ իշխանների և բարձր հոգևորականության ժողով է հրավիրում Զարելի ամուսնության հարցը քննարկելու նպատակով: Զգտելով ի դեմ Ասորիքի լատինների դաշնակից ծեռք բերել ժողովականները որոշում են Զարելին ամուսնացնել Անտիոք-Տրիպոլիի («պիհնց») Բոհեմունդ Դ Միհականու<sup>1</sup> որդու՝ Ֆիլիպի (Փիլիպոս) հետ: Որպես նախապայման Փիլիպոս Անտիոքացուց պահանջվում է, որ նա հետևի հայկական կենցաղին ու կատարի Յայ Եկեղեցու ծեսերը: Ամուսնությունը տեղի է ունենում 1222թ.:

Յայոց գահին հաստատվելով՝ Ֆիլիպոսը սկսում է խախտել տված խոստումը, արքունիքից հեռացնում է հայ իշխաններին և իրեն շրջապատում է Փրամկներով: Նրա այսպիսի վարքագիծը չէր կարող հայ իշխանների դժգոհությունների պատճառ չդառնալ, և նրանք Կոստանդին Լամբրոնացու գլխավորությամբ ծերբակալում են Ֆիլիպոսին ու արգելափակում Թիլ Յամտունում, որտեղ էլ նա մահանում է 1225թ.:

<sup>1</sup> Բոհեմունդ Գ-ի որդի Բոհեմունդ Դ-ն 1187-1233թթ. Տրիպոլիի կոմսն էր: Յոր նահանջությունը՝ 1201թ. նա հոչակվում է Անտիոքի իշխանապետ: Անտիոքի գահից նա վտարվել է 1216-1219թթ., երբ իշխանապետ է հոչակվել Լևոն Բ-ի զարմիկ Ռուբեն Ռայմոնդը:

## Առաջին պատերազմաշրջանը

Կիլիկիայի հայկական թագավորությունում գերիշխանություն տարածել ձգտող Բոհեմունդ Դ-ն չէր կարող հաշտվել որդու գահընկեցության և ծերակալության հետ: Որոշելով, որ արքայի գահընկեցությունից հետո հայկական թագավորությունը խոցելի է դարձել, նա սպառնալից վերջնագիր է հղում Կիլիկիա և պահանջում իրեն հանձնել Ֆիլիպոսին: Իշխանապետի ուժի դիրքերից խոսելու բնական հակազդեցություն է առաջ բերում հայ իշխանների շրջանում, որոնք մերժումով են պատափանում վերջնագրին: Նրանք նաև տեղեկություն են ստանում, որ անտիքյան գորքերն արդեն սկսել են կենտրոնանալ Կիլիկիայի սահմանին (տե՛ս քարտեզը):

Փորձելով նախքան ռազմական նոր գործողություններ ծավալելը «հովանավոր» գտնել Բոհեմունդը Կիլիկիայի վրա հարձակվելու թույլտվություն է խնդրում Հռոմի պապ Հոնորիոս Գ-ից: Վերջինս՝ դժողոհ էր Բոհեմունդի գործելակերպից, ոչ միայն մերժում է խմբանքը, այլև բանադրանքի է ենթարկում քրիստոնեական պետությունների դաշնակի նշանակությունը չգիտակցող ամսություն իշխանապետին:

Սերժելով պապի հորդորները՝ Բոհեմունդը 1225թ. կեսերին զորքը մտցնում է Կիլիկիա:

**Պատմական տեղեկանք.** «(Բոհեմունդը) լուր ուղարկեց մեծ Հռոմում ֆրանկների թագավորին (Հռոմի պապին), թույլտվություն խնդրելով հարձակվել հայերի երկրի վրա: Սակայն սա արգելեց նրան հարձակվել, ասելով՝ նրանք մեր համայնքին պատկանող ժողովուրդ (քրիստոնյա) են և չի կարելի նրանց երկրի վրա հարձակվել: Բրինաց չուզեց հնազանդվել... Ալ-Ղաուկիյա և ալ-Ասրիտար ասպետները<sup>1</sup>, որոնք ֆրանկների եռանդուն ռազմիկներն են, ասացին, որ Հռոմի թագավորը մեզ այդ բանն արգելեց, սակայն եղան որիշներ, որոնք հնազանդվեցին բրինացին և մտան Հայոց երկրի (Կիլիկիայի) սահմանները»:

**Իր ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Առանց ժամանակ կորցնելու Կոստանդին Լամբրոնացին համախմբում է պետության ապագայով մտահոգ բոլոր իշխանների ուժերը և շարժվում հակառակորդին ընդառաջ: Անտիքո-տրիպոլյան գորքերը մեծ դժվարությամբ ընդամենը կարողանում են հասնել մինչև Թիլ Համտուն: Այստեղ նրանք տեղեկանում են, որ Ֆիլիպոսը բանտում մահացել է<sup>2</sup>:

<sup>1</sup> Ալ-Ղաուկիյա ասորերեն «աղքատ» նշանակող բառի աղավաղումն է և նշանակում է «տաճարական ասպետ»: Ակրում սրանք կոչվում էին Քրիստոսի աղքատ ասպետներ: Իսկ ալ-Ասրիտարիյա հյուրընկալ (հոսայիսահեր) բառի աղքատակամ աղավաղումն էնք է:

<sup>2</sup> Ըստ որոշ տեղեկությունների Ֆիլիպոսը բանտում թունավորվել է:

Ուստի գործողութեան 1225-1226 թթ.



Թիլ Յամտունի մերձակայքում հայկական գորքերը հարվածներ են հասցնում հակառակորդին և վերջնականապես խափանում բոհեմունդի ծրագրերը: Ավելին անել չկարողանալով՝ լատինների բանակը հեռանում է Կիլիկիայից:

## Երկրորդ պատերազմաշրջանը

Լատինների համար ռազմաքաղաքական իրադրությունը վերջնականապես անբարենպաստ է դարնում, երբ Յոռմի պապի պահանջով՝ հրաժարվում են պատերազմին մասնակցել ասպետական միաբանությունները: Ակնհայտ էր, որ Բոհեմունդի ձեռնարկումն իրատեսական չէր, քանի որ եղած ուժերով նա ոչ միայն չէր կարողանալու նվաճել Կիլիկիան, այլև շատ թե քիչ նշանակալի հաջողության հասնել: Սակայն պատերազմի մոտքից համառորեն չհրաժարվող իշխանապետը դիմում է Իկոնիայի Ալաեդին Քեյ-Կուրքադ Ա (1219-1237թթ.) սուլթանի օգնությանը: Խավիրիայում Լսոն Բ-ից իր նախորդների կրած պարտությունները հիշող սուլթանը որոշում է, որ եկել է փոխհատուցման պահը և առանց հապաղելու համաձայնում է միանալ Բոհեմունդ Դ-ի արկածախնդրությանը:

Սակայն Կիլիկիան ասպատակելու նպատակ ունեցող ուժերի համախմբում տեղի չի ունենում, քանի որ.

- անեն գնով տարածաշրջանի քրիստոնեական պետությունների դաշինքը պահպանել ձգոտող Յոնորիուս պապի ջանքերով՝ Անտիոքում ծևակվորված ընդդիմությունը զսպելը ժամանակ և ջանքեր էին պահանջում իշխանապետից,
- թեև միարանությունների ասպետների մի մասը գայթակովել էր ավար ձեռք թերելու գաղափարով և արհամարհելով Յոռմի պապի բանադրանքը ու մահմետականներին ներքրիստոնեական տարածայնություններին չներքաշելու պահանջը՝ միացել էր Բոհեմունդին, սակայն ներքին տարածայնությունների հետևանքով միանական ճակատ ծևակվորել չի հաջողվում,
- անրանը (կամ աշնան սկզբին) կրած առաջին պարտությունից հետո լատինների բանակը չէր հասցրել պատրաստվել տարեվերջին իրականացվելիք նոր արշավանքին:

Ստեղծված իրադրությունում որոշվում է ներխուժումն իրականացնել ինքնուրույն գործող բանակների ուժերով, և առաջինը 1225թ. դեկտեմբերին Կիլիկիա են ներխուժում Քեյ-Կուրքադ Ա-ի գործերը, որոնց հայկական բանակը կազմ ու պատրաստ է դիմավորում: Տաղանդավոր պետական և ռազմական գործիչ Կոստանդին Լամբրոնացու գլխավորությամբ ձեռնարկվել էին մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր կասեցնել հակառակորդի առաջխաղացումը սահմանային շրջաններում և թույլ չտալ նրան ներխուժել երկրի կենտրոնական շրջաններ:

Իկոնիայի բանակը համառ ու հստակ կազմակերպված դիմադրության է հանդիպում: Ռազմավարական մտահղացման համաձայն, հակառակորդը պետք է կաշկանդվեր սահմանային ամրությունների գոտում: Երկրորդ փուլում, կլիմայական պայմաններն օգտագործելով, հայկական բանակը հասցնելու էր ջախջախիչ հարվածը:

Հսկայական բանակի առաջխաղացումը կասեցվում է Տավրոսի լեռնային ամրոցների բնագծում: Միայն թվային գերազանցությունն է սուլթանին հնարավորություն տալիս գրավել չորս ամրոց: Դա սուլթանի ակնկալած արդյունքից անհամեմատ քիչ էր և խորտակում է պատերազմում նրա հետապնդած բոլոր նպատակները: Գլխավոր անհաջողությունը ժամանակի կորուստն էր, որը հնարավորություն չէր տալիս նախքան «Ճնշան վրա հասնելը» անցնել սահմանային լեռնային ամրությունների գոտին ու իշնել Դաշտային Կիլիկիա, որտեղ հնարավոր կլիներ շարունակել պատերազմը:

Փաստացի անհաջողության մատնված թյուրքական բանակը հաղորդակցության ուղիների փակվելու սպառնալիքի պայմաններում, նախքան Բոհեմունդի բանակի հարձակումը սկսելը, հարկադրված է լինում նահանջել և հեռանալ Կիլիկիայից: Իկոնիայի բանակի նահանջը Կոստանդին իշխանին ազատում է երկու ճակատով պատերազմնելու հեռանկարից և հնարավորություն է տալիս ուշադրությունը սկսել հարավային ուղղությամբ ծավալվելիք գործողությունների վրա:

Կարելի է արձանագրել, որ արդեն այս փուլում են դրվում հայկական ուժերի ապագա հաղթանակի հիմքերը:

## Հաղթանակը

1226թ. տարեսկզբին ռազմաքաղաքական իրադրությունը բոլոր առումներով անբարենպաստ էր Բոհեմունդի համար, որը ժողովորդականություն չէր վայելում նույնիսկ սեփական երկրում (տե՛ս քարտեզը):

**Պատմական տեղեկանք.** «Երբ Հռոմում ... (պապը) լսեց, լուր ուղարկեց Անտիոքի ֆրանկներին, հայտարարելով, թե ինքը բրինսին (պրինցին) բանադրել է: Ալ-Դառլիյա և ալ-Ասրիտարիա և շատ ուղիշ ասպետներ նրա նոտ չին ներկայանում ու նրա խոսքը չին լսում, իսկ երբ իրեն հպատակ Անտիոքի ու Տիրապոլիսի ժողովուրդը որևէ տոն էր տոնում, նա (Բոհեմունդը) դուրս էր գալիս քաղաքից և միայն տոնակատարությունը վերջանալուց հետո նոյից մտնում էր քաղաք»:

**Իրմակ ալ-Ասիր, Լիակատար պատմություն, հատ. IX**

Օգտվելով բարեմաստ իրավիճակից՝ Կոստանդին իշխանը համարձակ ռազմավարություն է մշակում: Դեռևս Լևոն Բ-ի օրոք հստակ կազմակերպական կառուցվածք ստացած հետախուզական ծառայության միջոցով տեղեկանալով, որ Բիհենունդը հարձակման եռամդագին պատրաստություն է տեսնում, հայկական կողմը նախապատրաստվում է ոչ միայն ներխուժումը կասեցնելու, այլև հակահարձակումով հակառակորդին վերջնականապես ջախջախելու: Կոստանդին իշխանը թույլ չի տալիս հակառակորդին նույնիսկ անցնել Ամանոսյան լեռների կիրճերը: Կիրճերում (լեռնային անրոցներից դուրս՝ անրոցների ճատույցներում) այնպիսի դիմադրություն է ցույց տրվում, որ անտիք-տրիպոլիսյան բանակը գրկվում է առաջխաղացնան բոլոր հնարավորություններից: Կիրճերում դիմադրության կազմակերպումը, որը մինչ այդ էլ հայոց անկանոն ճարտավարության բաղկացուցիչներից էր, վերջնականապես դառնում է Կիլիկիայի բանակի յուրօրինակ «Ճեռագիրը»:

Սահմանի մոտ էլ հակառակորդը ծանր պարտություն է կրում և հարկադրված հրաժարվում պատերազմը շարունակելու մտքից:

Այսպիսով, 1225-1226թթ. պատերազմի ընթացքում անդրադարձվեց Իկոնիայի սուլթանության բանակի արշավանքն ու ծախողվեց Կիլիկիան ասպատակելու փորձը, ինչպես նաև վերջնականապես կանխվեցին գահի ժառանգման հարցի շուրջ սկսված վեճերը: Պատերազմը նշանավորեց մեր ռազմարվեստի հարուստ պատմության աստղերից մեկի՝ Կոստանդին Լամբրոնացու ռազմական գործունեության գագաթնակետը: Լևոն Բ-ի արժանի հետնորդը լինելով՝ նա կարողացավ շարունակել նախորդ դարավերջին ընդունված ռազմաքաղաքական գիծն ու հասնել նոր հաջողությունների:

## **ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՎՈՍԽ ԻԿՈՆԻԱՅԻ ԴԵՄ 1246-1249թթ.**

**Լ**այկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Բարձր Յայքում 1242թ. մոնղոլական զորքերը Բաչուի հրամանատարությամբ երկանյա պաշարումից հետո գրավում են Կարինը, իսկ հաջորդ տարի Չմանկատուկի ծակատամարտում մոնղոլական բանակը ծանր պարտության է մատնում Իկոնիայի սուլթան Թեյ Խոսրով Բ-ի զորքերին ու նվաճում Փոքր Յայքի մեծ մասը:

## Դազմադիկանագիտական քաղաքականությունը

Կիլիկիայի հայկական թագավորությունը հայտնվում է մոնղոլների ներխուժման վլատանգի առջև: Դժվարին աշխարհաքաղաքական իրադրությունում ճիշտ կողմնորոշվելով՝ Հեթում Ա թագավորը (1226-1269թթ.) 1243թ. բանակցություն-ներ է սկսում Բաչուլի հետ:

Պահօն նպաստավոր էր հայկական կողմի համար, քանի որ թեև մոնղոլների հաջողություններն ակնհայտ էին, սակայն Իկոնիայի բանակին պարտության մատնելուց հետո նրանք բավական հյուծվել էին, և հետագա առաջխաղացումը դյուրին չէր լինելու: Տակավին հզոր սուլթանության դեմ պայքարում Բաչուն ևս դաշնակից էր որոնում, և Հեթումի առաջարկը տեղին էր: Մոնղոլ զորավարի համար պակաս կարևոր չէր նաև, որ Կիլիկիայի հետ դաշնակցելով՝ նա հնարավորություն էր ստանում Փոքր Ասիան կտրել իր նվաճումների գլխավոր թիրախ դարձած Միջագետքի և Ասորիքի մահմեդական ամիրաների տիրություններից ու թշնամիներին ջախջախել առանձին-առանձին:

Մոնղոլները պահանջում են իրենց հանձնել Իկոնիայի սուլթանի կնոջն ու դստերը, որոնք Երզնկայի (Երիզա) շրջանում ծավալված մարտական գործողությունների ընթացքում ապաստանել էին Կիլիկիայում: Սահ արքունիքը ստիպված է լինում կատարել այս պահանջը, և նոյն՝ 1243թ. կնքվում է հայ-մոնղոլական դաշինքը: Այս ազատում է Բաչուլի ծեռքերն արևմուտքում և հնարավորություն տալիս 1245թ. արշավել դեպի Ջյուսիսային Միջագետք: Զարգացնելով հաջողությունը մոնղոլական բանակը հասնում է մինչև Դամասկոս:



Լևոնկայի ամրոցի ընդհանուր տեսքը

## Իկոնիայի բանակի արշավանքը

Քեյ Խոսրով Բ-ի պատասխանը սպասել չի տալիս: Յայ-մօնղողական պայմանագրի կնքումից անմիջապես հետո Կիլիկիայի հյուսիսարևմտյան սահմանային շրջաններում ընդհարումներ են սկսվում, որոնք թեև ընթանում են սելջուկյան զորքերի առավելությամբ, սակայն էական արդյունքների չեն համգեցնում:

Կարծատ դադարից հետո՝ 1246թ. սուլթանը որոշում է մեծ հարձակում սկսել դեպի Կիլիկիա: Իկոնիական 30 հազարանոց բանակը, հաղթահարելով Կուկլակ կապանի հյուսկական ամրությունների նեղ գտնին, ներխուժում է Յայկական թագավորության տարածք: Արշավանքի ընթացքին մոտիկից հետևելու նպատակով սուլթանը նախքան Կիլիկիա ներխուժելը բանակի հետ հասնում է Կիլիկիայի սահմանի մոտ գտնվող Կոլոնոսս ամրոցը, որտեղ էլ որոշում է մնալ:

Երկրորդական խնդիրների կատարման (շրջակա ամրությունների գրավում, գլխավոր ուժերի ռազմավարական թևերի անվտանգության պահովում և այլն) վրա ժամանակ ու ջանքեր չծախսելով՝ սելջուկյան բանակը կենտրոնացնում է Տարսոնի մոտ: Անհրաժեշտ վերաբնմբավորումներից հետո հակառակորդ պաշարում է քաղաքը, որով հայտնվում է հյուսկական տիրույթներում միաժամանակ դիրքում:

Կատարելով իրենց դաշնակցային պարտականությունները՝ մոնղոլները Քեյ Խոսրովից պահանջում են զորք դուրս բերել Կիլիկիայից: Տեղեկանալով, որ մոնղոլների օգնությունը հյուսկական կողմին միայն որոշ ժամանակ հետո կկարողանա հասնել, սուլթանը հրաժարվում է դադարեցնել արշավանքը: Թեև, սելջուկյան բանակի դեմ հակամարտությունում հյուսկական կողմը գրկվել էր դաշնակցի աջակցությունից, սակայն չի դադարեցնում պայքարը:

Պատերազմի սկզբից Լեթ, թյուրքական բանակի գործողություններով պայմանավորված, հակասական ռազմավարական իրադրություն է ստեղծվում: Տարսոնի պաշարման վրա իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրած թյուրքերը, պահպանելով համկարծակի ներխուժման հետևանքով ստացած նախաձեռնությունը, հայտնվում են անբարենպաստ իրադրությունում:

## Տարսոնի պաշտպանությունը

Տարսոնի պաշարումով կաշկանդված հակառակորդին առավելագույն ծանր իրադրության մեջ դնելու նպատակով Նեթումը որոշում է նախքան հակահարձակման անցնելն օգնել քաղաքում պաշարվածներին: Տարսոնի պաշտպանությունը դեկավարելու համար այնտեղ են ուղարկվում Կոստանդին թագավորահայրն ու Սմբատ սպարապետը՝ օգնական զորամասով:

Արդեն իսկ բազմափորձ գորավարի համարում ունեցող սպարապետը բժախնդրորեն է ընտրում իր հետ ամրոց մտնելու նախապատրաստվող գորամասի կազմը: Կամխատեսելով թյուրքական ծանրագեն հետևակի գրոհներն անդրադարձելու խնդիրը՝ նա իր հետ Տարսոն գնացող գորամասի մեջ լատին արբալետաձիգների ստորաբաժանում է մոցնում: Նրանք ծանրագեն հետևակի դեմ պայքարի հարուստ փորձ ունեին և, թեև արագածգործարյամբ զիջում էին նետաձիգներին, բայց անփոխարինելի էին գրահավորված հետևակին խոցելիս:

Թագավորահայրը և սպարապետը Տարսոն են հասնում ճիշտ ժամանակին: Թյուրքական բանակը պարսպակործան մերենամերով զգալի վնաս էր հասցել քաղաքի պարսպակ բավական մեծ հատվածի, որի փլուզման վտանգ էր առաջացել: Բացի այդ, գիտակցելով Տարսոնում ավելորդ ժամանակ կորցնելու հնարավոր բացասական հետևանքները, հակառակորդը կատաղի գրոհներով փորձում էր գրավել քաղաքն ու նախքան հայկական կողմի նախապատրաստական աշխատանքների ավարտը՝ շարունակել առաջնադաշտում:

Տարսոնի կայազորը, որը նախքան համալրում ստանալն էլ համառորեն էր պաշտպանում քաղաքը, հասնում է նոր հաջողորդուների: Մնթատ սպարապետը հմտորեն գամում է հակառակորդին Տարսոնին և կարծ ժամանակում նրա ձեռքից խլում նախաձեռնությունը: Զգտելով արագ ավարտել Տարսոնի պաշտումը՝ թյուրքական բանակն ավելի ու ավելի մեծաթիվ ուժերով է իրականացնում գրոհները: Քաղաքի պաշտպանները հաջորդությամբ ևս մի քանի գրոհ են անդրադարձնում: Մեծարիվ զոհեր տալով՝ հակառակորդը հարկադրված է լինում ուժերը հետ տանել դեպի ելման բնագծերը:

Այս ընթացքում Ներում արթան, առանց ավելորդ շտապողականության, ի մի է բերում թագավորության բոլոր ուժերն ու հակահարձակողական ռազմավարություն մշակում: Սակայն մինչ նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներն ավարտելը, հայտնի է դառնում Քեյ Խոսրով Բ-ի մահվան մասին:

## Դադթանակը

Իրադրությունը հակառակորդի համար վերջնականապես վատանում է, եթե տեղեկություն է ստացվում կենտրոնացումն ավարտած հայկական բանակի առաջինադարձման մասին: Ամողոցում գտնվող բավական մեծաթիվ կայազորի և հայկական բանակի գլխավոր ուժերի միջև հայտնվելու հեռանկարից խուսափելու համար թյուրքական բանակի հրամանատարությունը հարկադրված որոշում է նահանջել Կիլիկիայից: Դակահարձակման անցած հայկական կողմը կարողանում է նաև ջախջախել սահմանային անրությունների շրջանում տեղակայված թյուրքական կայազորները:

Ասորիքում վարվող մարտական գործողություններն ավարտած մոնղոլական բանակի հրամանատարությունն իր օգնությունն է առաջարկում Կիլիկիայի հայկական թագավորությամբ: Դաջողությամբ հարձակումը զարգացնող հայկական բանակը չէր կարող դադարեցնել առաջխաղացումը և սպասել դաշնակիցներին: Մասնավանդ որ ծավալված մարտական գործողություններին նրանց միջամտության խիստ անհրաժեշտություն չկար: Սսի առքունիքում դրոշում է կայացվում հրաժարվել առաջարկված օգնությունից ու պատերազմն ավարտել սեփական ուժերով:

**Պատմական տեղեկանք.** «Եվ ապա եկան թաթարներից (մոնղոլներից) առաջարկելով իրենց օգնությունը, սակայն մննք հրաժարվեցինք, քանզի քաղաքը մեր ձեռքում էինք պահում»:

**Մըրատ Սպարապետ, Տարեգիրը, Էջ 227**

1246թ. պատերազմաշրջանի ավարտին հակառակորդի ձեռքում է մնում միայն Պրական ամրոցը, որը երկու տարի անց հայկական բանակն ազատագրում է: Ավելին, կոտրելով կլոնիական առավել մարտունակ զորամասերի դիմադրությունը՝ հայկական բանակը 1248թ. հնարավորություն է ստանում մարտական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածք: 1249թ. Դայոց բանակը մի շարք նոր հաղթանակներ է տանում:

Այսպիսով, 1246-1249թթ. Իլոնիայի դեմ պատերազմի ընթացքում հայկական բանակը նախ կարողանում է կասեցնել Կիլիկիա ներխուժած հակառակորդի առաջխաղացումը, ապա թշնամուն դուրս է քշում երկրից, քանից զախշախում և հակահարձակման անցնելով՝ մարտական գործողությունները տեղափոխում հակառակորդի տարածքը:



**Արրալեսի ստեղծումով բազմաթիվ երկրների բանակներ հայկական լայնակիճ աղեղին համարժեց հեռահար խոցման միջոց ստացան:**

---

**ԾՈՎԱՅԻՆ ՌԱՎՄԱՐՎԵՏՍԸ  
ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

---

## ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԾՈՎԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

### ԿԻԼԻԿԻԱՅԻ ՆԱԿԱՆԱԳԻՒՏՆԵՐԸ

**Տեղեկանք.** «Կիլիկիայի հայկական պետության ծաղկման ժամանակաշրջանում՝ XIII դարում, նրա տարածությունը կազմում էր 40000 քառ. կմ, իսկ բնակչության թիվը անցնում էր մեկ միլիոնից: Խոշոր քաղաքներն էին Սիսը, Տարսոնը, Աղանան, Անարգարան, Մամեստիան (Մոպսուեստիան), Այասը և Կոռիկոսը: Վերջին երկուսը նաև նավահանգիստներ էին:

Կիլիկիայի լեռնային նասում գտնվում էին ավելի քան 100 ամրոցներ, որոնց կատուցումը մեծ մասամբ կապված է եղել Կիլիկիայի հայկական պետության ծագման, զարգացման ու պաշտպանության հետ: Ամենազլիավոր բերդ-ամրոցներն էին Վահկան, Լամբրոնը, Կուլկակը և Կապսանը»:

**Դժողով, հատ. III, էջ 672-673**

Կիլիկիայի հայկական պետությունը ծովային տերություն էր, և հզորության շրջանում (XIII դ. սկիզբ) թագավորության ծովային սահմանները հասնում էին 500 կմ-ի՝ 26 ծովային նավահանգիստներով։ Երկրի հայ տիրակալները հմտորեն օգտագործում էին ծովամերձ դիրքի առավելությունները։

Կիլիկիայի գլխավոր նավահանգիստն Այասմ էր, որն ուներ երկշարք պարիսպներով ցանքաքային անառիկ ամրոց։ Իսկ հանդիպակաց փոքր կղզյակի վրա կառուցված էր ևս մեկ ամրոց՝ միաշարք ամուր պարսպով։ Այսի դերը հատկապես աճեց XIII դ. կեսերից, երբ այն վերածվեց Սիցերկրական ծովի խոշոր առևտորական կենտրոններից մեկի։

Նշանակությամբ երկրորդ նավահանգիստը Կոռիկոս էր, որ կառուցվել է XIII դ. վերջին, նշանավոր ռազմական ու պետական գործիչ, սպարապետ Քեթումի նախագծով ու ջանքերով։ Այն պատված է եղել հզոր պարիսպներով ու աշտարակներով և նույնպես ունեցել է դիմացի կղզյակի վրա խոյացած ամրոց։ Կոռիկոսը XIV դ. կեսերից դարձել է Կիլիկիայի գլխավոր նավահանգիստը։

Դիշարժան են նաև Սարսոնի, Սելլիկիայի, Պայասի, Կալոնորսի, Լամասի և այլ նավահանգիստները։

Ամրացված նավահանգիստների տեսուչները կոչվել են միհնապան կամ կապիտան։ Նրանց վրա դրված է եղել նավահանգիստների ջրային տարածությունում ծովային ոստիկանության կազմակերպումը։ Մինապանները ներկայացնում էին նաև Դայոց արքայի շահերն օտար պետությունների հյուպատոսների հետ վեճերում։ Նրանք գտնվում էին զինված ուժերի հրամանատարի և նաքսային գլխավոր գործակալի ենթակայության տակ։



Այսի ամրոցի աշտարակներից մեկը

## Կիլիկիայի ռազմական նավատորմը

Կիլիկյան նավատորմի մասին տեղեկությունները մեծ տեղ են գրավում միջնադարյան պատմական աղբյուրներում: XIX-ր. արար պատմիչ Իբն-ալ-Կարդին հիշատակում է 1323թ. եգիպտական մամլուքների դեմ հերոսական պաշտպանությանը մասնակցած երեք հայկական նավերի մասին՝ «Այս», «Ալլաս» և «Շամա»: Նավատորմը պաշտպանում էր ոչ միայն ծովափնյա շրջանները, այլև օգտագործվում էր ծովային արշավանքներ ձեռնարկելու համար: Մասնավորապես, հայ-անտիոքյան 1156թ. համատեղ ծովային արշավանքով եականորեն թուլացվում են բյուզանդական նավատորմի հարավարևելյան բազանները և կանխվում նրանց ոտնձգությունները հայկական պետության դեմ:

Հայկական ռազմանավերի շարքում երեւ են անտիկ շրջանում ծևավորված և միջնադարում Միջերկրածովում իշխող խոշոր թիանավեր՝ գալերաներ:

**Տեղեկանք.** Գալերա - թիանավ. ուներ միաշար թիեր և եռանկյունաձև առագաստ, որը գործածվում էր միայն համընթաց քամու ժամանակ: Երկարությունն ավելի քան 50 մ էր, լայնությունը՝ 6 մ: Այս համանասնությունն ապահովում էր նավի արագընթացությունը՝ մինչև 8 հանգույց<sup>1</sup>: Անձնակազմի և ուղևորների ընդհանուր թիվը հասնում էր մոտ 450-ի ավագաստիներ, զինվորներ, թիավարներ:

Պատմիչները ռազմանավերը կոչում են նաև «արագաթե», որը ռազմանավի տեսակ չէ, այլ արագընթաց նավերին տրվող հավաքական անուն:

Ռազմական փոխադրումների նպատակով օգտագործվել է նավերի հայկական տեսակը: Այս տեսակի նավերն ունեին երկու կողմից չորսական թի, երկու թի հետնամասի անկյուններում և եռանկյունաձև շեղ առագաստ: Երկարությունը 20 մ էր, լայնությունը՝ 5 մ, կայմի բարձրությունը՝ 12 մ: Զարգացնում էր մինչև 3 հանգույց արագություն: 12-15 հոգանոց անձնակազմից բացի նավը տեղափոխում էր մինչև 100 զինվոր: Նավն անփոխարինելի էր «դեսանտային» գործողություններ իրականացնելիս, ինչպես, օրինակ, 1156թ. Կիպրոսյան արշավանքը:

Առևտրական անվտանգ նավարկությունների համար գործածվել են նաև գալերներ (եռակայմ բերդանավեր), որոնք հայերեն կոչվել են ղալէ:

Կիլիկիայի հայկական պետության ռազմանավերի կառուցվածքային առանձնահատկություններով էլ պայմանավորված էր ծովային մարտավարությունը: Ռազմանավերը ցուլկավոր<sup>2</sup> էին, որի պատճառով նավատորմավարնե-

<sup>1</sup> 1 հանգույց- 1,87 կմ/ժ:

<sup>2</sup> Տես բառարանը:

որ ձգտում էին ծովանարտի ընթացքում գլխավոր (մեծ կամ առավել արագընթաց) նավերը դուրս բերել հակառակորդի նավակողերի դիմաց ու խոյահարումնով խորտակել դրանք:

Այս դարաշրջանում լայնորեն կիրառվում էր նաև նավերի ճանկումը: Հայկական նավատեսակը, որը հիմնականում կիրառվում էր ափամերձ շրջաններում իրականացվող գործողությունների ժամանակ, ծովանարտերում ճանկումներ իրականացնելու խնդիրներ էր ստանում:

## **Պայքար «մերձափինյա» իրավունքի դեմ**

Մերձափինյա իրավունքը սովորույթ էր, որ հմուց ի վեր հասկացվում էր որպես ծովափի մոտ վրարի ենթարկված նավի բեռների, անձնակազմի և ուղևորների նկատմամբ ափատիրոց իրավունք: Ծովափերի տեր հանդիսացող իշխաններն ու նույնիսկ կայսրերն այն հարստացնան միջոց էին համարում: Ավետիքաված գույքն ու բեռները «ծովի բարիքներ» էին համարվում, իսկ դրանց թալանը բոլոր երկրներում իրավական առունով բնական էր ու անվիճելի: Որոշ ավատատերեր իրենց ջրային տարածքներում նավաբեկություններ «կազմակերպելու» նպատակով օտարերկրյա նավերի նավավարների հետ հանցավոր համաձայնության էին գալիս:

Հատկանշական է, որ այս ոլորտում հայկական թագավորները միջազգային հարաբերությունների կանոնակարգման ժամանակ նոր գործելակերպ սկսեցին ներդնել, որը հիմնված էր փոխադարձ պայմանավորվածությունների վրա (օտարերկրացիններին տրվող առևտորական շնորհագրի, կամ ինչպես ընդունված է ասել՝ ոսկեգրի ձևով): Առաջին միջազգային պայմանագիրը կնքել է Կիլիկիայի հայկական թագավորության արքա Լևոն Բ-ը 1201թ. մարտին շենովացիների հետ (Վերահաստատվել է 1215թ. մարտին): 1201թ. դեկտեմբերին համանան պայմանագիր է կնքվել նաև վենետիկցիների հետ (պայմանագիրը թարմացվել է 1245թ. մարտին): Շնորհագրեր էին տրամադրվել նաև սիցիլիացիներին, ֆլորենցիացիներին և ուրիշների:

Սիկանույն ժամանակ, շնորհագրերն իտալացիներին չէին ազատում խիստ որոշակի պարտավորությունների կատարումից, և հայ թագավորներն իրենց իրավունք էին վերապահում տնտեսական պատժամիջոցներ կիրառել ծովագնացության կանոնները խախտելու համար:

Կիլիկյան Հայաստանում մերձափինյա իրավունքի կանոնակարգման խնդրում սկզբից ևեք առաջնորդվում էին Մխիթար Գոշի «Դատաստանագրով»:

**Տեղեկանք.** «Խորտակված նավերը ծովին մերձակա քաղաքին ծնանտու ծևով փրկիր, որովհետև այդ քաղաքն էր լինելու բեռնավորված նավից շահույթ ստացողը, իսկ խորտակված նավի թալանելը օտար նարդկանց կողմից եկեղեցական դատարանից վեր է: Եթե չկամենան նավը ծրի փրկել, այդ դեպքում որքան հնարավոր է՝ թռ վարձ տան: Իսկ ազգիւթյուն հանդես բերելու և հափշտակելու դեպքում թռ վճիռն այսպես լինի. կամ երևան հանի ավարը՝ որպես տեր, կամ տասամորդ կամ հինգանորդ վճարի...»:

*Միհրար Գոշ,  
Դատաստանագիրք, հոդված  
214*

Այս հանգամանքը, որ այս իրավական նորմը սկզբում ծևակերպում է ստացել «Դատաստանագրքում» և նոր միայն կիրառվել միջազգային պայմանագրերում, վկայում է, որ մերձափնյա իրավունքի նկատմամբ հայ ժողովողի վերաբերմունքը չի ծևավորվել արտաքին գործոնների ազդեցության տակ:

Մերձափնյա իրավունքից հրաժարման գործում կարևոր քայլ էր Եգիպտոսի սուլթան Քելավունի հետ 1285թ. նայիսի 7-ին Լևոն Գ-ի կնքած պայմանագրում իրենց երկրների նավերի նավարեկությունների ժամանակ մերձափնյա իրավունքի կիրառումից հրաժարվելու կետ մտցնելու որոշումը (Հոդված 16):



Կոռիկոսի ծովային ամրոցը

**Պատմական տեղեկանք.** «Եթե պայմանադիր երկու կողմերից մեկին պատկանող նավը խորտակվի մյուս տերության ծովափերին, ապա այդ նավի «պարունակած անեն բան» խմանքով պիտի պահպանվի և հանձնվի մեռնող վաճառականի «պատկանած ազգի» պաշտոնակալ-ներին: Եթե վաճառականը «Սուլթանի հպատակներից կամ ծրոտերից է», ապա նրա գույքը պիտի հանձնվի Սուլթանի տեղակալներին, եթե Լևոն թագավորի հպատակներից է, նրա գույքը պիտի հանձնվի այս իշխանի տեղակալներին, «որպեսզի տնօրինեն ըստ իրավանց և արդարության կանոնների»»:

**1285թ. Դայ-Եգիպտական պայմանագիր, Խորված 16**

XIII-XIVդդ. իտալական քաղաքները Միջերկրածովքի հզոր տերություններն են, իսկ Եգիպտոսի սուլթանի դրոշի տակ էր լողում Միջերկրական ծովում մահմեդական պետությունների նավերի մեծ մասը: Դետևաբար, Կիլիկիա եկող կամ նրա ափերի մոտով անցնող նավերի մեծ մասի վրա չէր տարածվում մերձափնյա իրավունքը:

Այսպիսով, արդեն XIII դ. Կիլիկիայի հայոց թագավորները կանխագործում են այն իրավական դրույթը, որը Եվրոպական օրենսգրքերում ծևակերպվեց միայն XVIII դ.:

Դայկական նավատորմիդը կարևոր դերակատարում է ունեցել Կիլիկիայի հայկական թագավորության ռազմաքաղաքական զարգացումներում: Ստորև ներկայացնում ենք հայկական ծովային ռազմարվեստի մի քանի դրվագներ:

## ՏՈՎԱՅԻՆ ԱՐՃԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԿԻՊՐՈՍ

1156թ.

### Պատերազմը

Կիլիկիայի հարավային և արևելյան սահմանն ամրացնելու խնդրով մտահոգված Ռուբրինյանների ծեռնարկած միջոցառումները պարարտ հող էին ստեղծում բյուզանդական դիվանագիտության գործունեության համար: 1156թ. նրանց հաջողվում է Անտիոքի տիրոջը՝ Ռեյնալդ Շատիյոնցուն դրդել արշավանքի Կիլիկիայի դեմ (տես քարտեզը):

Սարտավարական իրավիճակը նպաստավոր չէր հայկական կողմի համար, սակայն լատիններին չի հաջողվում ռազմավարական էական առավելության հասնել: Ռեյնալդը ստիպված էր բավարարվել սահմանային շրջաններն ասպատակելով:


Հայկական կողմը ձգտում էր ամրոցներում համար դիմադրությամբ հնարավորինս կաշկանդել հակառակորդին, նիմշդեռ ռազմական գործողությունների ձգձգումը հղի էր ծանր հետևանքներով լատինների համար: Նման իրավիճակում հայտնված Անտիոքի պրինցը որոշում է հոգեոր դասի բարեհաճությունը շահելու և ռազմական գործողությունները շուտափույթ ավարտելու նպատակով Թորոս Բ-ին առաջարկել խաղաղություն բյուզանդացիներից գրավված սահմանային որոշ ամրոցներ Տաճարական միաբանությանը գիշելու պայմանով:

Առաջիկա դիմակայությանը պատրաստվող Թորոսը ևս ձգտում էր օր առաջ ավարտել մարտական գործողությունները, և համաձայնությունը կայանում է:

**Պատմական տեղեկանք.** «1156թ. Անտիոքի տերը (Ռեյնալդ) կրիվ սկսեց Կիլիկիայի իշխան Թորոսի դեմ: Ֆրանկներն ուզում էին, որպեսզի հայերի կողմից հույններից խված ամրոցները տրվեին Փրեր Եղբայրներին (Տաճարական ասպետներին), որոնք գործում էին ի շահ բոլոր քրիստոնյաների, քանի որ նի ժամանակ հույններն այդ ամրոցները խել էին ֆրանկներից: Հայերը հակադրվում էին դրան... Հետո նա (Թորոս Բ-ն) խաղաղության պայմանագիր կնքեց և բերդերը հանձնեց Եղբայրներին»:

*Միքայել Ասորի, Ժամանակագրություն, հատ. III*

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԵՍՏՐԱՆԳՈՒՐ



## Կիպրոսյան արշավանքը

Դաշինք կնքած Թորոս Բ-ն և Ույնալդը որոշում են համատեղ գործել այդ պահին ընդիանուր թշնամի դարձած Բյուզանդիայի դեմ (տես քարտեզը): Նրանք համատեղ արշավանք են ծերնարկում դեպի բյուզանդացիներին պատկանող Կիպրոս կղզի, մասնավորապես՝ օգտվելով այն հանգանանքից, որ հայկական նավատորմն արդեն հնարավորություն ուներ մեծաթիվ զորք տեղափոխել: Արշավանքն այնքան հանդուզն էր, որ կզում տեղակայված բյուզանդական զորքերի իրամանատարության մտքով իսկ չեղ կարող անցնել դրա հավանականությունը, և առանց դժվարությունների ափ իջած զորքերը սկսում են առաջ շարժվել:

Հանկարծակիության շնորհիվ դաշնակիցները նախաձեռնություն են ստանում: Ապահար հակառակորմն արշավանքի ամբողջ ընթացքում այրաբս էլ չի կարողանում համարժեք գործողություններով կասեցնել դաշնակիցների առաջխաղացումը: Արշավանքի այս փուլում հճուտ մարտավարությամբ աչքի է ընկնում Թորոս Բ-ի երբայր Մլեհը, որն առանձին զորայաց իրամանատար էր: Արշավանքի երկրորդ փուլն էլ է հաջող ավարտվում, որը, հիրավի, հաղթանակ էր նշանավորում:

Վերադարձի ճանապարհին՝ ծովում հակառակորդը չի կարողանում խոչընդոտներ ստեղծել դաշնակիցների նավատորմի համար, որը ցնծությամբ վերադարձնում է արշավանքից:

Այսպիսով, 1156թ. Կիպրոսյան արշավանքը հայոց բազմադարյան հարուստ պատմության ամենահամարձակ դեսանտային ռազմական ծեռնարկումներից է, որն իրականացվում էր տակավին հզոր Բյուզանդական կայության դեմ: Ռազմարվեստի տեսանկյունից ուշագրավ է, որ մարտական գործողությունները ծավալվում էին ջրային արգելքի հաղթահարումից հետո, որը վկայում է հայոց ռազմարվեստում ծովային մարտավարության տարրերի բավական մեծ տեղի մասին: Թեև արշավանքն իրականացվում էր համատեղ ուժերով, սակայն այս հաղթանակի հեղինակը իշխանապետ Թորոսն էր:

Այդ մասին կարելի է դատել իրադարձությունների ժամանակակից Գրիգոր Երեցի ուշագրավ հիշատակումից: Բոլորովին այլ առիթով, խոսելով Անտիոքի իշխանապետության և Բյուզանդական կայսրության հարաբերությունների մասին, պատմիչը շեշտում է, որ «պրինցը (Ույնալդը) Թորոսի դրդմամք» է արշավել դեպի Կիպրոս:

Արշավանքը հայոց ռազմարվեստում յուրահատուկ տեղ է զբաղեցնում՝ որպես հայկական ցամաքային զորքի և նավատորմի փոխգործողությունների եզակի օրինակ:

## **ՊԱՅՉԱՐ ԾՈՎԱՇԵՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԿԻՊՐՈՍԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ  
ԱՂԱՍՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ  
1197թ.

**Կ**իլիկյայի աշխույժ ծովային առևտուրը հնարավոր էր միայն անվտանգության որոշակի միջոցառումների անցկացման պայմաններում, որն ապահովելու գործում կարևորվում էր ռազմական նավատորմը: Ծովահենների և հակառակորդ պետությունների նավատորմերի դեմ տարած հաղթանակներով հայոց նավատորմը նշանակալի դեր է կատարել տարածաշրջանային առևտուրի զարգացման գործում: Միջերկրականի ծովահենների համար Կիլիկյայի ժայռոտ ափերը խիստ հարմար էին ապաստաններ և հենակետեր ստեղծելու առումով:

**Տեղեկանք.** Ծովահենությունը ծագել է ծովագմացության հետ գրեթե միաժամանակ ու զարգացել միջազգային ծովուղիների ձևավորմանը զուգընթաց: Մասնավորապես, Միջերկրական ծովում ծովահենության զարգացմանը նպաստում էին նաև պատմական տարբեր ժամանակաշրջաններում ծովային տերությունների (Հռոմ, Բյուզանդիա, Եգիպտական սուլթանություն և այլն) կողմից ծովահենների հովանավորումը:

Փաստորեն, Վերածվելով պետությունների ռազմաքաղաքական հականարտության բաղկացուցիչ տարրի, ծովահենությունը լրաց խոշոշում էր դարձել Կիլիկիայի հայկական պետության համար, քանզի ծովահենների գործողությունները հաճախ խրախուսվում և ուղղորդվում էին թշնամի պետությունների կողմից ու ստանում վառ արտահայտված կրօնաքաղաքական երանգներ:

Կիլիկիայի ծովափնյա շրջաններում հայկական պետության հաստատումից կարծ ժամանակ անց ծովահենության ավանդական կենտրոնի «համբավ վայելող» Կիլիկիայում ոչ միայն արմատախիլ արվեց այդ չարիքը, այլև Կիլիկիան Հայաստանը դարձավ Միջերկրականի ավագանում ծովահենության դեմ պայքարող հիմնական ուժերից մեկը:

Ծովահենության դեմ պայքարելու գործում Կիլիկիայի թագավորները գիտակցում էին այլ պետությունների հետ համագործակցելու կարևորությունը և վերջիններիս հետ կնքվող պայմանագրերում «հակածովահենական» կետեր էին մտցնում: Կիլիկիան Հայաստանի նման անզիջում քաղաքականությունը բացատրվում է երկու հանգամանքով.

- հայկական ռազմական նավատորմն այնքան հզոր չէր, որքան ցամաքային բանակը, հետևաբար, սահմանափակ էին նաև պատժիչ գործողություններ իրականացնելու հնարավորությունները,
- ակնհայտ էր, որ նույնիսկ հզոր նավատորմ ունեցող պետությունները միայնակ չեն կարող պայքարել ծովահենության դեմ:

Ծովահենության դեմ միասնական ճակատ ձևավորելու գործում եղակի է Լևոն Գ-ի 1285թ. պայմանագիրը Եգիպտական սուլթանի հետ, որտեղ, թերևս, Հայոց թագավորի պնդմանը, ծովահենության և ավագակության դեմ համատեղ պայքար նախատեսող հատուկ կետ է մտցվում:

**Պատմական տեղեկանք.** «(Կողմերի տարածքը, բնակիչներն ու գույքը)... պետք է պահպանվեն զիշեր ու ցերեկ, առավոտից մինչև երեկո. ծանապարհները պետք է հսկվեն, սահմաններն ու գավառակները պետք է պաշտպանվեն ծովից ու ցամաքից՝ ընդդեմ նրանց, ովքեր կուգենան վճասել ու գրունելով թշնամական ծեռք կգործածեն, ընդդեմ ավագակների, ելուզակների, հարձակվողների ու խառնակիչների»:

**1285թ. Դայ-եգիպտական պայմանագիր, հոդված 6**

## Յույն Իսահակը Կրագյան Անտիոքում

Դեռևս Ռուբեն Գ-ի օրոք հայկական բանակը գրավել էր Կիլիկիայում բյուզանդական վերջին հենակետերը, այդ թվում բյուզանդացիների կողմից ժամանակավորապես գրավված Տարսոնը (1182թ.): Քաղաքի կայազորի հետ գերվել էր նաև կայսեր կուսակալ Իսահակը, որն առավել հայտնի է Յույն (Կիշ) Իսահակ անունով: Կամնագգալով Կիլիկիայում բյուզանդական տիրապետության անդարձ ավարտը՝ հոյս իշխանը պատրաստակամություն է հայտնում ծառայել հղորացող Յայկական թագավորությանը: Պետական ծառայության մեջ փորձ ունեցող Իսահակի ծառայություններից դեմ չեն օգտվել նաև Ռուբեն Գ-ն, որը որոշ ժամանակ անց նրան ազատ է արձակում:

Արևմուտքում հաջող հարձակողական գործողություններ իրականացնող Լևոն Բ-ն Իսահակին նշանակում է Կիլիկիայի արևմտյան սահմանային մասում գտնվող Անտիոքի Կրագյան նավահանգստային ոչ մեծ քաղաքի կառավարիչ: Իշխանապետի ընտրությունը պատահական չէր, քանի որ քաղաքն ու շրջակա գավառը հիմնականում հունարենակ էին: Յույն կառավարչի խնդիրն էր հնարավորինս սահուն կերպով քաղաքում ներդնել կառավարման նոր համակարգն ու սկզբնական շրջանում ապահովել իշխանությունների կապը բնակչության հետ:

## Առևանգումը

Յույն Իսահակի անվան հետ է կապվում մեծ աղմուկ համած և ծովահենության նկատմամբ հայկական պետության վերաբերնունքի հարցի ուսումնասիրնան համար կարևոր մի դրվագ:

Կիպրոսի մի ծովահեն, տեղեկանալով, որ Կիպրոսում նոր թագավորական հարստություն հիմնած (1192թ.) Ամորի Լուսինյանը մտադրվել է ձերբակալել

իրեն, փախչում է Կիպրոսից: Հույն Խսահակը փախստականին ապաստան է տալիս իր մոտ: Շուտով նրանց միջև «ջերմ բարեկամական» հարաբերություններ են ծագում:

Խսահակից սպառազինված ռազմանավ ստանալով՝ ծովահենը Կիպրոսի ափերի մոտ վերադարձնում է իր «արհեստին»: Նրա գործողությունները հակա-կիպրոսական ուղղվածություն ունեին և սպառնում էին վնասել Կիլիկիայի ու Կիպրոսի միջև հաստատված ջերմ հարաբերություններին:

Ծովահենների առաջին «հաջողություններից» մեկն է դառնում Ամորի Լուսինյանի ընտանիքի առևանգումը: Տեղեկանալով, որ Կիպրոսի Էշիվա թագու-հին երեխաների հետ հանգստանում է ծովափնյա գյուղերից մեկում, ծովահենները հանկարծակի հարձակվում են գյուղի վրա (1197թ.) (տե՛ս քարտեզը): Թա-գավորական թիկնազորն ի վիճակի չի լինում կասեցնել անակնկալ հարձա-կումը, ու ելուզակները կարողանում են նախքան օգնական ուժերի տեղ հաս-նելը գերել թագավորական ընտանիքը: Նրանք զավթում են նաև թագուհու զարդերն ու այլ թամնարժեք իրեր: Չեզք զցված «հարուստ» ավարով ծովա-հենները թաքնվում են Հույն Խսահակի մոտ:



## Ծովահենի պատիժը

Ծովահենների կատարածը և կիր Խսահակի կողմից նրանց հովանավորումը առաջ է բերում Հայոց իշխանապետ<sup>1</sup> Լևոն Բ-ի գայրույթը: Եվ դա բնական էր, քանի որ ծովահենության դեմ պայքարում տարբեր պետությունների նիասնական ճակատ ստեղծել ձգուղ Լևոնը չեղ կարող չարձագանքել այս խնդրին: Նա կիր Խսահակից պահանջում է.

- ազատ արձակել Կիպրոսի թագավորական ընտանիքը,
- պատժել ծովահեններին,
- հրաժարվել ծովահենների հովանավորումից:

Հատկանշական է, որ Հայոց իշխանապետը Խսահակին սպառնում է ճահապատժի ենթակել, մի քան, որը միջնադարի պայմաններում ազնվականների նկատմամբ կիրավում էր խիստ հազվադեպ՝ վտանգավոր պետական հանցագործությունների (մասնավորապես, թշնամու կողմն անցնելու, պետական ու ռազմական գաղտնիքը թշնամուն հայտնելու, իշխանությունը զավթելու նպատակով դավադրություն կազմակերպելու և այլն) համար: Այն փաստը, որ Լևոնն իրեն իրավունք էր վերապահում ծովահենության կամ ծովահենների հովանավորման դեպքերի կրկնություն թույլ չտալու նպատակով կիրառել պետական հանցագործությունների համար նախատեսված պատիժներ, վկայում է Կիլիկյան Հայաստանում դրա դեմ պայքարին տրվող մեծ նշանակության մասին:

Լևոն Բ-ի «համառությունն» ունենում է իր դրական արդյունքները: Խսահակն անմիջապես կատարում է իշխանապետի հրաման ու ազատ արձակում գերյալներին:

## Խնդրի իրավական կողմը

Հարց կարող է ծագել, թե օրենսդրական ինչ հիմնավորում ուներ Լևոնի գործունեությունը: Արդյո՞ք կային Հույն Խսահակին ուղղված սպառնալիքներն իրավական դրամական հիմքեր, թե՝ տվյալ պարագայում գործ ունենք ինքնակալի քմահաճույքների կամ միջազգային իրադրությամբ պայմանավորված քաղաքական որոշումների հետ:

Պատասխանը կրկին գտնում ենք Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»<sup>2</sup>:

<sup>1</sup> Մեկ տարի անց Լևոն Բ-ն թագադրվեց՝ հիմք դնելով Կիլիկիայում հայկական թագավորությանը (1198-1375թ.):

<sup>2</sup> Մերաստ Սպարապետի «Դատաստանագրքի» կազմումից առաջ Կիլիկիայում առաջնորդվում էին Մխիթար Գոշի «Դատաստանագրքով»:

**Պատմական տեղեկանք.** «Գողերը և նրանց ապաստանողները, զստ եկեղեցու կամքի, մահվան են արժանի, քանզի հնում ավազակն ու իր հանգանձարները միշտ նահյան էին դատապարտվում։ Այդ օրենքին պետք է հետևի դատավորը։ Եվ այս ճարդագողերի և ավազակների մասն է ասվում, և Օրենքով է է պատվիրում մահվան դատապարտել նաև նրանց կամակից հաց տվյալներին, եկեղեցական օրենքները ևս այս են կարգադրում»։

**Միջիար Գոշ, Դատաստանագիրը, Խորված 52**

Ակնհայտորեն գործ ունենք տարբեր ժողովուրդների պատմության այս շրջանին բնորոշ հետևյալ պատկերի հետ։ Իրավունքի անկատարության պատճառով առաջացող բարդություններից խուսափելու հանար առանձին դեպքերում իրավունքի մի բնագավառի իրավական նորմը հնարավորինս փոխարինվում կամ լրացվում էր մյուսից վերցված նորմերով։ Այսպես՝ հայկական պետականության՝ Ջյուսիսային և Արևելյան Հայաստանում վերականգննանն ու Կիլիկիայում ստեղծմանը հաջորդած շրջանում լայն տարածում էր ստացել ռազմական կամ քրեական իրավունքի նորմերի կիրառում իրավունքի այլ բնագավառներում, այդ թվում ծովային իրավունքի։

Այսպիսով, ոչ միայն առանց արյունահեղության և, գլխավորը, արագ Կիպրոս են վերադարձվում Եշիվա թագուհին և Լուսինյանների թագավորական ընտանիքի մյուս անդամները, այլև Միջերկրականի ծովափնյա շրջաններում անրացող հայկական պետությունն ի լուր բոլորի հայտարարում է ծովահենության դեմ պայքարում իր վճռականության մասին։

## ԿԻՊՐՈՍԻ ՇՈՎԱՄԱՐՏԸ ՄՈՏ 1211Թ.

**Կ**իլիկիայի հայկական պետության նավատորմի կայացման գործում խիստ մեծ էր Լևոն Բ-ի դերը: Եթե արքայի հորեղբոր՝ Թորոս Բ-ի օրոք 1156թ. Կիպրոսի դեմ արշավանքի հանդուզն մտահղացումը կյանքի կոչելու համար Հայոց իշխանապետին անհրաժեշտ էր եղել անտիռքյան նավատորմի աջակցությունը, ապա ընդամենը կես դար անց հայոց նավատորմն այնքան էր հզորացել, որ Միջերկրական ծովում ինքնուրույն գործողություններ էր վարում:

## Հայ-կիպրական հարաբերությունները

Ֆրիդրիխ Ա-ից հետո Երրորդ խաչակրաց արշավանքի առաջնորդությունը ստանձնած Ոչչարդ Արյութասիրտը 1191թ. գրավում է Կիպրոսն ու հերթական լատինական պետությունը ստեղծում: Նորաստեղծ իշխանապետությունը 1197թ. քաջակիրություն է դառնում: Նոր պետության հիմնադրման սկզբից ևեր հայ-կիպրական հարաբերությունները ջերմ էին, որին նպաստում է նաև Լևոն Բ-ի ամուսնությունը Կիպրոսի քաջավոր Շուգո Ա Լուսինյանի (1205-1218թթ.) քողջ՝ Սիրիլի հետ: Շուգոն տակավիճ երիտասարդ էր, սակայն հայ-անտիդրան հակամարտությունում վարում է հայամետ քաղաքականություն: Ավելին, Շուգոն իր մյուս քրոջ՝ Ջելվիսին էլ ամուսնացնում է Անտիոքի գահի հավակնորդ և Լևոն Բ-ի զարմիկ Ռուբեն-Ռայմոնդի հետ:


## Ուղևորությունը

1211թ. Լևոն Բ-ն աներորդու՝ Շուգո Ա-ի հրավերով ուղևորվում է Կիպրոս: Տեղեկանալով ուղևորության մասին՝ Այյությանների նավատորմը բաց ծովում դարան է կազմակերպում Լևոն Բ-ի դեմ: Թշնամիների կարծիքով, ցամաքում բազմաթիվ հայքանակներ տարած Հայոց արքան ծովում առավել խոցելի էր, առավել ևս, որ նա ծով էր դուրս եկել զբոսանավով, ընդամենը մի քանի ռազմանավերի ուղեկցությամբ: Նշենք նաև, որ Կիլիկյան նավատորմի ծովուղիները հուսալիորեն հսկվում էին, և դարանի կազմակերպումը եգիպտացիներից<sup>1</sup> զգալի ժամանակ է պահանջում: Նախապատրաստական աշխատանքն ավարտվում է միայն Լևոն Բ-ի վերադարձի նախօրյակին:

Վերադարձի ճամապարհին Հայոց արքային ուղեկցող նավախմբի առաջապահի դիտորդները նկատում են հակառակորդին, որը, կարծես, սպասողական դիրք էր գրավել (տես սխ. 1): Արագորեն հաջողվում է նավերը հետ շրջել ու հասնել Կիպրոսի ափերին:

<sup>1</sup> Հավանական է, որ եգիպտական նավերից բացի հակառակորդի նավատորմի կազմում եղած լինեն նաև Ասորիքի Այյությանների ուժերը:

Ախեմա 1



Կիպրոսի ծովամարտը (մոտ 1211թ.)

## Դադթանակը

Մեծ հեռավորությունից նկատելով արքայական ուղեկցող նավախմբի առաջապահին՝ հակառակորդը նետվում է հետապնդման: Իր հերթին, արքան անմիջապես տագնապով բաց ծով է դրուս թերում Կիպրոսի ափերի մոտ պարեկում իրականացնող հայկական նավատորմի գլխավոր ուժերը<sup>1</sup>:

**Պատմական տեղեկանք.** «Լևոն այս լսելով՝ կրկին ետ դարձավ Կիպրոս, որովհետև ծովի վրա ճանապարհին էր: Վերցրեց իր ռազմական նավերը և եկավ այն դարանը, որ բազմաթիվ նավեր պատրաստել էին նրա համար»:


*Կիրակոս Գանձակեցի, Դայոց պատմություն, Էջ 121*

<sup>1</sup> Խիստ հավանական է, որ հայկական նավատորմի հետ ծովամարտին մասնակցած լինեն նաև կիպրոսյան նավեր:

Գլխավոր ուժերի տեղ հասնելուց հետո մարտական իրավիճակը փոխվում է, քանի որ հետապնդում սկսած հակառակորդի նավերն են հայտնվում յուրօրինակ ծովակում: Դայկական ռազմանավերի անակնկալ հայտնվելն իրարանցում է առաջացնում մեծ արագությամբ արշավող հակառակորդի նավավարների շրջանում: Նրանց նավատորմն այնքան մեծ արագությամբ էր իրականացնում հետապնդումը, որ հնարավոր չի լինում շրջել նավերի ընթացքը, և նրանք ստիպված ընդունում են մարտը:

Գլխավոր ուժերի հարվածն ուղղվում է հակառակորդի հրամանատարական նավի վրա (տե՛ս սխ. 2): Դակառակորդի առաջնորդող (հրամանատարական) նավը ենթարկվում է ցողուկով խոյահարման, ճանկվում ու ջրասույզ է արվում: Հրամանատարական նավի խորտակումը խուճապի պատճառ է դառնում, և հակառակորդը դիմում է փախուստի:

Ախտմա 2



Կիպրոսի ծովամարտը (մոտ 1211թ.)

Այսպիսով, Կիպրոսի ծովամարտում Կիլիկիայի հայկական թագավորության նավատօրմը տանում է իր կարևոր հաղթանակներից մեկը, որը մի շարք առումներով նաև ամենանշանակալին էր:

Ռազմավարական առումով մեծ նշանակություն ուներ, որ նավատօրմը փայլուն կատարում է անհանգիստ Միջերկրական ծովում պետության դեկավարի անվտանգության պահովման բարդ, բայց պատվավոր խնդիրն ու հանդես գալիս որպես ինքնուրույն ռազմավարական առաջադրանքներ կատարելու ունակ, կայացած ուժ:

Մարտավարական առումով կարևոր էին նորաստեղծ նավատօրմի իրականացրած համարձակ գրոհը, հակառակորդի իրամանատարական նավի խոյարումն ու ճանկումը:

## Գրականություն

**Անանուն Եղեսիացի**, ժամանակագրություն (թարգմ. բնագրից, առաջարան և ծանոթագր. Լ.Յ. Տեր-Պետրոսյանի, Եր., 1982 (Օստար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, 12, Ասորական աղբյուրներ, Բ):

**Առաքել Դավիթիցի**, Պատմություն, Թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Եր., 1988:

**Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համակի, Արուլ-Ֆիդա, Իրն Շաղար, կազմեց Յ.Թ. Նալբանդյան, Եր., 1965:**

**Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, Թարգմանությունը Վ.Ա. Գևորգյանի, Եր., 1971:

**Գրիգոր Վարդ. Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, աշխ. Ն. Պողարեանի, Երուսաղեմ, 1974:

**Թովմա Արծորումի և Անանուն, Պատմություն Արծորումյաց տան**, Եր., 1978:

**Թովմա Սեծոփեցի**, Պատմագրական երկեր, Թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Ա. Մադոյանի, Եր., 2003:

**Իրմ ալ-Ասիր** (թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնյանի), Եր., 1981, (Օստար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, 11, Արարական աղբյուրներ, Բ):

**Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Թարգմ., առաջարանը և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Եր., 1982:

**Ճովհաննես Սլիլիցես**, Բյուզանդական աղբյուրներ, Գ., թարգմ. բնագրից, առաջարան և ծանոթագրությունները Յո. Բարթիկյանի, Երևան, 1979:

**Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Յո. Բարթիկյանի, Եր., 1973:

**Միքայել Ասորի**, ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871:

**Միհրարայ Այրիկամեցւոյ Պատմութիւն Ժամանակագրական, Մոսկվա, 1860:**

**Սամուելի քահանայի Անեցւոյ Հավաքնունք ի գրոց պատմագրաց, աշխատասիրութեամբ Աշշակ Տեր-Միքայելեանի, Կաղարշապատ, 1893:**

**Սմբատ Սպարապետ, Տարեգիրը, աշխատասիրությամբ Յ. Սերովիք Վ. Ագըլեանի, Վենետիկ, 1956:**

**Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Թարգմ., ներած. և ծանոթագր. Ա.Ա. Արահանյանի, Եր., 1986:**

**Կարդանայ Բարձրբերդցւոյ, Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1861:**

**Կահրամայ Ռարունոյ Պատմութիւն Ուլքենեանց, Փարիզ, 1859:**

**Ալիշան Ղ. Սիսուան, Վենետիկ, 1885:**

**Բարթիկյան Յո., Հայ-բյուզանդական հետազոտություններ, հատ. Ա-Բ, Եր., 2002:**

**Բողոքյան Ա.Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Եր., 1988:**

**Բոռնազյան Ա.Վ., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, Եր., 1973:**

**Բոռնազյան Ա.Վ., Հայաստանը և սելչուկները XI-XII դդ., Եր., 1980:**

Կոմմագենացի (Եղիա Քաստումի), Փիլարտոս հայք. Կիլիկեան ճոխութեան բուն հիմնադիրը, Յալեպ, 1930:

Յայ ժողովորի պատմություն, ԴՍՍԴ ԳԱ հրատ, հատ. III, Եր., 1976:

Յայերեն ծեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դդ.), Աշխատասիրությամբ Ա.Ս. Մաթևոսյանի, Եր., 1988:

Յայերեն ծեռագրերի հիշատակարաններ (ԺԳ դար), Կազմեց Ա.Ս. Մաթևոսյան, Եր., 1984:

Յարությունյան Յ., Յայաստանը 9-11-րդ դդ., Ե., 1959:

Յովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Եր., հատ. Ա, 1957:

Յովհաննիսյան Ն., Արաբական Երկրների պատմություն, հատ. I, Արաբները VII դարից մինչև 1516թ., Եր., 2003:

Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., կազմեց Վ.Ա. Յակոբյանը, Եր., հատ. I, 1951, հատ. II, 1956:

Յ. Միքայէլ Վ. Յովհաննիսեան, Յայկական Կիլիկիոյ թերդերն ու թերդաքաղաքները, Վենտովի, 1989:

Սուրաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001:

Չամչյան Ս., Պատմութիւն Յայոց, Եր., հատ. Գ, 1984:

Պոտոկեան Զ., Կիլիկեան Յայաստանի դրամները, Վիեննա, 1963:

Սուրիայան Ա.Գ., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Եր., 1987:

Տեր-Ղազարյան Յ., Յայկական Կիլիկիա, տեղագրություն, Անթիլիաս, 1966:

Տեր-Պալմեյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Յայաստանում, Եր., 1965:

Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիոները և հայերը, հատ. Ա, Եր., 2005, հատ. Բ, Եր., 2007:

Зaborov M.A., Крестовые походы, М., 1956:

Зaborov M.A., Крестоносцы на Востоке, М., 1980:

Каждан А.П., Армения в составе господствующего класса Византийской империи, Ер., 1975:

Босворт К.Э., Мусульманские династии: Справочник по хронологии и генеологии, М., 1971:

Микаелян Г.Г., История Киликийского армянского государства, Еր., 1952:

## Ոազմական տերմինների բառարան

### Ա

**ԱԳՐԵՑԻԱՎ,** մեկ կամ մի քանի երկրների գինված հարձակում այլ երկրի կամ երկրների վրա նվազողական նպատակներով:

**ԱԳՐԵՄԱՅԻ ԱՍԴՐԱՎԱՐՁԱՄ,** ագրեսորի կողմից պետության ինքնիշխանության և տարածքային աճրողության խաստման մտադրությունների ծախողմանն ուղղված գինված ուժերի գործողությունների համայիր:

**ԱԳՐԵՄԱՅԻ ԿԱԼԵՆՈՒՄ,** պետության կողմից ոչ ռազմական ներազդման միջոցառումների հետ միասին գինված ուժերի կիրառմանը ագրեսորի կողմից գինված հարձակման դադարեցումն է:

**ԱԳԱՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ,** օտարերկոյա պետության դեմ ճնշված և կախյալ ժողովուրդների ու երկրների զինված պայքարը պետական ինքնիշխանության, ազատ և ինքնուրույն տնտեսական և մշակույթական զարգացման համար:

**ԱԶՊԱՆԵԱՆՆԵՐ,** հրամանատարի (պետի) կողմից հաստատված պայմանական նշաններ՝ ոչ մեծ տարածությունների վրա ենթականներին կարծ կարգադրություններ, հրամաններ և այլ տեղեկություններ հաղորդելու և տաճալու համար:

**ԱԿԱՍ,** պարագան տիպի պաշտպանական կառույցների ու գրահավոր աշտարակների պատերի մեջ բացված անցք նետաձգության կամ հակառակորդին այլ կերպ խցելու համար:

**ԱԿԻՆԱԿ (ԽՐԱ),** հասուկ սահմանափակիչով սկյութական երկար դաշույն (կամ կարծ թուր): Հայտնի է ք.ա. VII դ. Կեսերից: Հայտնի են երկու տեսակի շերեբով Ա. եռամկյունածն մի քանի հաստածներով (բարորոշ է ալանտադրամական շերեբի համար) և սահման միավորով զուգահեռ սայերերով, կողով կամ շերանկյունածն կրտսածքով: Ակինակները լայն տարածում են գտն. մեր տարածաշրջանի ժողովուրդների մոտ, որտեղ ուղարկի գենք լինելու բացի հանդիսանում են նաև գորականների, գինվրական ազնվականությանը պատկանելու խորհրդանշ:

**ԱԿՏԻՎ ՊԱՇՏՈՓԱՍԻՄՅՅՈՒՆ,** պատերազմող կողմերից մեկի կողմից պաշտպանական գործողությունների վարում, ոչ միայն տարածքը պահելու, այլև հիմնականուն հակառակորդի խոշոր ուժերը հյուծելու և արյունաբամ անելու նպատակով:

**ԱՂԵՂ,** սովորաբար 30-250օ (լայնալիք աղեղով՝ կրկնակի ավելի) հեռավորության վրա նետեր արձակելու համար նախատեսված ծեռօթի նետող զենք: Արյունավետ խոցման հեռավորությունը կազմում է մինչև 200 մետր:

**ԱՂԵՂԱՎԵԹԸ,** կտարելագրոծված աղեղ նետ, քար և այլ նետելու համար:

**ԱՄԻՐԱ,** 1. անվանում, որը Արաբական խալիֆայության մեջ տրվում էր նահանգների կառավարիչներին և գորակամանատարներին: Խալիֆայության թուլացումից հետո անկախացած նահանգների մահմեդական կառավարիչների գօալի մասը շարունակեց կրել Ա. տիտղոսը, իսկ մրաց ստեղծած պետությունների մեջ մասը կոչվում էր ամիրայություններ: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ Ա-ի կարգավիճակի փոփոխման դեպքում (հարաւան ամիրայությունների նվաճման արյունը մուտքային փաստացի կայսերական լիազորությունների ծեռքբերումից հետո) Ա-ը շարունակել է կրել նոյն տիտղոսը: Եվ հակառակը՝ ամիրայության անկախության փաստացի կորստից ու Ա-ի հետինակության անկան հետևանքով պետությունում իշխանությունը Ա-ի հնամակալին (աթաքեկին) անցնելուց Ա-ն կարող էր պահպանել իր գահը: Զաքարյանների օրոք Ա. էին կոչվում ազատագրված քաղաքների կառավարիչները:

**ԱՄՐԱԾԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՑԵՑՆԵՐԸ**, մարտական տեխնիկայի կիրածան արդյունավետությունը բարձրացնելու, զորքերի հուսալի կառավարումն ապահովելու և զորքերը հակառակորդի խոցման միջոցներից պաշտպանելու համար նախատեսված ինժեներական կառույցներ:

**ԱՄՐԱԾԻՆՈՎԹՅՈՒՆ**, ռազմա-ճարտարապետական գիտություն տեղանքը ռազմական կառույցներով ամրացնելու մասին:

**ԱՄՐԱԾՎԱԾ ԲԱՄԲԱՐԸ**, զորքերը կենտրոնացնելու (տեղաբաշխելու) և հակառակորդի հավանական հարձակումն անդրադարձնելու համար նախատեսված տեղանքի հատված: Տարբեր խնդիրներ կատարելու համար ելակետ է համդիմանում: Առաջին դաշտային ամրաշինական կառույցներից է:

**ԱՄՐՈՑՑ**, արիեստական կերպով ամրացված դիրք կամ ռազմական կառույց թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար:

**ԱՄՐՈՊԱՅԻՆ ԹՈՂՄԲ**, բարձր հողային լիցք ամրոցում, սովորաբար՝ առջևում փորված փոսով:

**ԱՄՅՈՒՁԻ**, Դայոց հեծելազորը իին և միջին դարերում: Պեղածո նյութերն ու սեպագիր արծանագործությունները հավաստում են, որ Ք.ա. I հազարամյակում Դայկական լեռնաշխարիդրակիշները պատերազմներում օգտագործված էին ինչպես մարտակառքեր, այնպէս էլ Ա.: Ըստ Քենոնփոնի, Երվանդունիներն ունենին 8 հազարամոց Ա.: Դայոց Ա. ավելի մեծացվեց և կանոնավորվեց Արտաշեսյանների օրոք:

Դայոց Ա-ի կորիզզը իին աշխարհում հոչակված ծանրագեն զրահավոր հեծելազորն էր, որի համար ընտրվում էին առավել մարմնելու և ուժեղ ծիրակ: Դեծեկանարտիկները կրում էին ծանր հանրեաններ, մետաղ դիրեններով պատասխ կամ մետաղ զրահներ (սաղավարու, վանոց, օդազրա, ուսակա, պրունքակալ, լանջապանակ, սոնապան, կրծքակալ ևն): Գլխավոր գենքը երկար միզակն էր: Զրահավոր Ա. հայկական բանակի գլխավոր հարվածային ուժն էր, որը գործում էր սեպածն իսխ շարերով:

Թեթևագետն Ա., որի համար ընտրվում էին համեմատաբար փորքամարմին, արագավազ և դիմացկուն նժույգներ, ոյուրաշառողւթյան համար չեղ գրահավորվում: Դեծայի հիմնական գենքը նետ ու աղեղն էր: Թեթևագետն Ա. կատարում էր բանակի մարտակարգի թերոն ու թիկունքը պաշտպանելու, գլխավոր ուժերի ծավալանը սպասարկելու, ցրված ուժերը կենտրոնացնելու, հակառակորդին հետապնդելու, հետախուզելու և այլ պարտականություններ: Դարձակվում էր ցրից շարերով:

Դայոց Ա. կամուր դեր էր կատարում պարբեկա-հոնմենական նրացակցությունում: Բորա անցումը մեկի կամ մյուսի կողմը հաճախ ունենում էր վճռական նշանակություն: Դոռնը մարտունակ հեծելազոր չուներ: Այդ պատճառով ահեղ հեծելազորատեր Պարթևատանի դեմ նղվող պատերազմներում ճառում էր շահել Դայաստանի դաշնակցությունը: Արշակունիների ժամանակ Ա., մասնավորապես ծանրացներ, համարվում էր ազնվառուհիներով՝ պատմերով, որոնց դաստիարակության մասն էր կազմում ծիավարժությունը:

Պատերազմի ժամանակ ցածր խավերից մույնպէս ստեղծվում էր առանձին հեծելազորուն, որը կոչվում էր «ռամիկ Ա»: Ա-ի գերագույն հրամանատարը կոչվում էր «ասպետ», որը միաժամանակ «քաֆաղիր» կամ «քաֆակապ» իշխան էր: Այդ պաշտոնը Բագրատունիների տոհմի մենաշնորհն էր: Արշակունիները Ա. խիստ մեծացրեցին հատկապես III-IV դր, երբ Դայաստանի անկախության սպառնա Սասանյան Պարսկաստանը: Տրդատ Գ Մեծի օրոք Դայոց Ա. 70 հազարից անցնում էր, իսկ Արշակ Բ-Ծ և Պապը այն հասցին 12 բյուրի (120 հազարի): Արշակունիների օրոք Ա. կազմում էր նախարարական և արքայական հեծելազորինից: Զորանամակը հավաստում է, որ 86 նախարարություններ ներկայացնում էին 84 հազար ծիավոր մարտիկ, իսկ արքայական կազմում էր 40 հազար: Ա-ի գին վորական աստիճանների, հրահանգների, կանոնադրությունների, գինանշանների, որոշների մասին պահպանվել են կցկուու տեղեկություններ: Աղբյուրներում հիշատակվում են «բյուրավորը», «հազարավորը», «գումապետը», «հարդարից», «աղեղնադրուց», «ասպարախսաղը» կամ «ասպախսաղը», «դրոշակակիրը», «վառունիքը», «ճակատամուդը» ստորաբաժնուների անուններ:

Արշակունիների անկումից հետո հայկական Ա-ի թիվը նվազեց: Մարգապանական թայաստանում (V-VII դդ), ըստ Սեբեոսի և Յովհան Մամիկոնյանի, Ա. 30 հազարից չեղ անցնում: Յայաստանի կախվածությունը Սասանյան Պարսկական իշխանությունը աշխարհագիր կատարելիս հաշվառում էր նաև հեծելազորայիններին և նրանց թվի համեմատ ռոճիկ վճարում: Այդպես էր վարչում նաև Բյուզանդիան: 529-ին հատուկ հրովարտակվ Յուտափինանոս կայսրը Յայաստանի Բյուզանդական մասում արգելեց նախարարներին հեծյալ ուժեր ունենալ: Այս վիճակը տևեց մինչև արաբական նվաճումները (VIIդ. կես):

Արաբները շարունակեցին հայ հեծյալ ուժերի գրանցման և նրանց ռոճիկ վճարելու պարսկական կարգը: 652-ի հայ-արաբական պատմագիր համաձայն, Յայաստանը կարող էր պահել 15-հազարամոց Ա., որի ռոճիկը (տարեկան 100 հազար արձար) վճարելու էին արաբները: Այս կարգը պահպանվեց մինչև Արդուլան Խալիֆը (750-775թթ): Բարգատունիների օրոք նույնպես հեծելազորային ծառայությունը գերազանցապես կատարում էին ազատները: Օտար զավթիչների հատուկ պատճենալիքները Բագրատունիներին մղում էին մշտական հեծյալ բանակի հզրացմանը: Գաջիկ Ա-ի ժամանակ (990-1020թթ.) արքունական զրոգանիներում հաշվում էր 55 հազար, իսկ իշխանականներում՝ 45 հազար զինվոր:

Բագրատունիների թագավորության անկումից հետո, սելջուկ թուրքերի տիրապետության շրջաններում (XI-XIIIդդ.) հայ «հեծելազորն անտերունչ թափառում էր Պարսից, Յունաց և Վրաց կողմերուն: Ազատների սեպուի գորնոր հայենազրկվեց» (Արքստակեսի Լաստիվեցի): XII-XIIIդդ. հայ հեծելազորները վկաց Բագրատունիների բանակում խոշոր դեր խաղաղում մնացեն վրացական մետության հզրացման, այնպես էլ հայկական հողարքի՝ Գուգարքի, Տայքի, Սյունիքի, Այրարատի, Յու. Տուրութերամի և Բարձր Հայքի արևելյան մասի ազատազրման գործում: XIII-XIVդդ. թաթար-մոնղոլական նվաճողները վերջ դրեցին հայկական հեծելազորի խմբուրում գոյւթյանը:

Կիյիկան Յայաստանում Ա. համալրում էին մանր ազնվականները, որի համար կոչվում էին «ձիավորներ» կամ «հեծվորներ»: Նրանք զգեստավորվում ու գրահավորվում էին եվրոպական խաչակիր ասպետների նման, ստանում զինվորական կրթություն: «Պատերազմների ժամանակ հատուկ հեծելազորն էր ստեղծվում նաև ցածր խավից, որը կոչվում էր «ցած հեծելվորը» կամ «ցած շինականք հեծվորք»: Կիյիկան Յայաստանի պետականության վերացումով (XIVդ.) նրա Ա. և դադարեց գյուղուն նետնալուց:

**ԱՇԽԱՎՈՐ (ՈՉ ԿԱՍՈՎԱԿՈՐ) ԶՈՐՔԵՐ**, հայանական, մշտական կազմ չունեցող կամ կանոնավոր զորքերից համարլան և ծառայությունը տանելու կարգով տարբերվող զորքեր:

**ԱՇԽԱՎՐԱՎՈՐ**, կամավորական հիմնուներով խաղաղ բնակչությունից կազմավորված ռազմական ստորաբաժանում:

**ԱՇԽԱՎՐԱՎՈՐՅԵՒՆ**, աշխարհագորային ստորաբաժանուներում կամավոր ծառայոլ անձ:

**ԱՇԽԱՎՐԱՎԱՍԻ ԴԱՍԳՈԼՅՑՅ**, գլխի վրա, գարգմանակի (արծվի) հետևից կրելու համար: Բառի կազմությունը պարունակում է Յայտնի է միայն, որ վերջին վանկը հմենվորական մի շարք լեզուներում (ապարակեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլն) ներ օրերում է որպես հագուստի զար կիրավող «բամոյ» կամ «բամոտ» բառն է, որը նշանակում է հանգուց, կսա: Յամարում են, թե դա մի ժապավեն է եղել, որ գլխի հետևը բանտի ննան կապում էին և երկու ծայրերը կախ ծգում, ինչպես որ եղում է Ֆիգրան Բ Սեծի դրամների վրա:

**ԱՇՏԱՐԱԿ**, շրջանաձև քառակողմ կամ քազմակողմ բարձր ու ներ կառուցվածք ամրոցի պարիսպների վրա հակառակորդին դիտելու և նրա դեմ կրվելու համար:

**ԱՇՏԵ**, երկար կրով նիզակ՝ ծեռորվ հարվածելու կամ նետելու համար: Ա-ի կրունը պատրաստված է փայտից, ծայրը՝ հնում բրոնզից, միջնադարում երկարից: Յայկական բանակում եղել է աշտեավորների հատուկ զորամաս: Ա. առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին, որն այն նույնացնում է մկունդի հետ:

**ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱԿՈՒՆԵՐ**, իրենց երկրներում քաղաքական, ազգային ազատագրական, կրոնական, գիտական և այլ գործունեության համար հետապնդվող օտարերկրյա քաղաքացիներին իր տարածքում նույնի և բնակչության թույլտվություն տալու պետության իրավունքը:

**ԱՊԱՏԵՂՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ**, հակառակորդին մողորեցնելու նպատակով սեփական զորքերի, նրանց խմբավորման, կազմի, սպառագինության, մարտունակության, ռազմական գործողությունների մասին կամսանմանաված կեղծ լրտեր տարածելու քողարկման հնարքը:

**ԱՊԻՋԱՎԱԿԱՄԵԶՁՎԱԿ**, կրօքի գարդ: Կիրառել է միայն Փակսոս Բուզանդը և միայն Մանուել Մաֆիկոնյանին ուղարկված պատիվածը եղած թվարկելիս: Առաջարկվող նյութ բացատրությունները (գիրք, օր և այլն) բավարար հիմնավորում չունեն:

**ԱՎԱՍՑՈՂ ՅԱՐՎԱԾ**, գլխավոր հարկափո ուղղությունից մեկ այլ ուղղությամբ ուժերի և միջոցների մի մասով հասցվող հարված: Դժմանկանում իրականացվում է հակառակորդի ուշադրությունը գլխավոր հարկափո ուղղությունից չեղելու, նրա ուժերի և միջոցների մի մասը կաշկանդելու և ուժերով ու միջոցներով գրաշարժը բացառելու նպատակով:

**ԱՊԱԽԱՎՈՒՆԵՐ**, գլխավոր ուժերի առջևից մարտական գործողություններ վարող գորամաս, ավագանարդ:

**ԱՊԱՏԱՎՈՎ ԶՈԿՎԱԾ**, մարտի ժամանակ ինքնուրուց առաջարրանքներ կատարող ուժեղացված ստորաբաժնում: Մարտակարգի տարր է՝ Դարձակման ժամանակ ապահովում է գլխավոր ուժերի կազմակերպված մարտի մեջ մտնելը (մարտակարգի ծավալվելը): Պաշտպանությունում գործում է ապահովման գոտում: Ա.Զ. Կարող է առանձնացվել նաև ռազմերի ժամանակ՝ մարտի մեջ մտնելու մտադրության դեպքում (հատկապես համդիպական մարտի դեպքում):

**ԱՊԱԽԱՎԱՅԻՆ ԵՐԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԾ (ՈՂԱՅԵՐԹԻ ԱՊԱԽԱՎԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԾ)**, երթային պահպանության օրգան, որն ուղարկվում է գլխավոր ուժերի անխափան տեղաշարժը ապահովելու, պահպանվող գործերի մոտ հակառակորդի հետախուզության ներքափանցումը. նրանց վրա համարժակի հարձակումը կամնելու և բացազատվելու ու մարտի մեջ մտնելու նպաստավոր պայմաններ ստեղծելու առաջարանքում:

**ԱՊԴԱՏԱՎԱԾ**, հեծյալ գորամաս, որ պատերազմի ժամանակ և հաղթությունից հետո ուղարկվում էր թշնամու երկիրը գերի և ավար թերելու:

**ԱՊԴԱՐ**, պաշտպանական սպառագինություն, որը կրվողները կրում էին թիվ վրա՝ հակառակորդի հարվածներից և նետերից պաշտպանվելու համար, վահան:

**ԱՊՌԵՏ**, VIII-XVդդ. Արևմտյան Եվրոպայում ազնվական ժամրագեն գրահավոր հեծելազորային:

**ԱՊԵՏԱՏԱԿԱՆ ԶՈՐՔ**, ծանրացեն հեծելազոր, որը VIII-XVդդ. Արևմտյան Եվրոպայում հանդիսացել է ավատատիրական բանակի հիմքը: Ա.Զ. աշխարհագոր էր, որը հանդիսանում էր արևմտաեվրոպական բանակների կրոիզը: Ասպետի հիմնական սպառագինությունը երկար ժիղակ էր, երկայնակի ծանր սուր և տապար: Ա.Զ.-ի ստորին կազմակերպական միավորը (ասպետ, գինակիր, հեծյալ (կամ՝ հետևակային) նետաձիգների ոչ մեծ խումբ, 1-2 ծառաներ) կոչվում էր «միզակ»: Ա.Զ. զորամասերը բաղկացած էին լինում 25-80 «միզակից» (իշխանն իր վասար ասպետների ստորաբաժնումներով), որոնց կոչվում էին «դրոշ»: ճակատամարտը սովորաբար հաջործ էր ասպետների մեջանմարտերի, որոնց ելքով էլ վճռվում էր հաղթող կողմը, քանի որ ծանրաշարժ Ա.Զ-ը ստորաբար ի վիճակի չէր լինում հետապնդել նահանջող հակառակորդին:

**ԱՎԱԽԱՎԱԾ**, խաղաղ բնակչության վրա հարձակվելու նպատակով գինված խմբերի (հրոսակախմբերի) անդամ:

**ԱՎԱԽԱՎՈՒԹՅՈՒՆ**, խաղաղ բնակչության կամ կազմակերպությունների վրա հարձակվելու նպատակով գինված խմբերի (հրոսակախմբերի) ստեղծում, ինչպես նաև նմանատիպ խմբում և գործողություններում մասնակից լինելը:

**ԱՎԱԽԱՎՈՒՅԹԱՆԵՐ**, պատմականորեն ձևավորված և սերնդեսերում փոխանցվող կանոնների և վարչելակարգի նորմեր:

**ԱԿԱՐ (ՊԱՍՊԱԿԱՐ)**, հակառակորդից զավթած, նրա կողմից մարտադաշտում լրված կամ հանձնվելու դեպքում հանձնած գենը, ուազմական համերձանք, տրանսառորդի միջոցներ (ծիեր, մեթենաներ և այլ ուազմական արժեքներ): Ողջ Ա. հաճարվում է հաղող կողմից սեփականությունը և օգտագործվում է ինչպես ուազմական, այնպես էլ այլ նպատակներով (որպես պարզ նվիրել մարտում աչքի ընկած հրամանատարներին և մարտիկներին):

**ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑ**, գործերի առաջխաղացմանը խոչընդոտող կառույց, հարմարանք և ավերածություններ (փլուզումներ): Ստեղծվում են հակառակորդին կորուստներ պատճառելու, նրա տեխաշարժը և գործողությունները դժվարեցնելու, զորաշարժը կաշկանդելու կամ սեփական գործերի համար առավել նպաստավոր ուղղություններով նրան շարժվել հարկադրելու նպատակով:

**ԱՐԾՎԱՆՔ**, հարձակողական ռազմական գործությունների տեսակ: Ներխուժման հակառակորդի կողմից վերահսկվող տարածք՝ առավել նպաստավոր պայմաններում պատերազմ վարելու ակնկալիքով, ինչպես նաև ավարառության կամ ասպատակության նպատակով:

**ԱՐՏԱԳՐՈՂ**, անակնկալ հարձակում հակառակորդի վրա՝ դիրքից, ամրությունից դուրս նետվելով:

## Բ

**ԲԱՐԱՆ**, պաշարողական մարտական գործիք՝ ամրությունների վրա քարեր նետելու կամ ուղղակի հարվածներ հասցնելու հանձն:

**ԲԱՄԲԱՄ**, գետնամերձ հրածագության համար նախատեսված հիմ նետող մեթքնա: Գործակվել է հյուսված թելերի (ջերի, պարանների, մազերի և այլ ծկունության շնորհիվ): Նախատեսված էր անբողների պատերը կործանելու և պաշտպաններին խոցելու համար: Կիրառվել են մինչև 500 կգ զանգվածով քարեր, սրածայր գերաններ, ծաղր նետեր և ա: Նետման հեռավորությունը 200-1000 մ:

**ԲԱՍԱԳԱՑ**, հակառակորդի հետ բանակցություններ վարելու լիազորություններով օժնված հակամարտող որևէ կողման ներկայացնող անդ: Բ. օգտվում է անձեռնմխելիության իրավունքից, տարբերանշանը՝ սպիտակ դրոշ:

**ԲԱՏԱԿ**, որևէ պետության զինված ուժերի ամրություն:

**ԲԱՏԱԿԱՏԵՐ**, գործերի կայսր, կենտրոնացման շրջան:

**ԲԱՐ**, ունի նույն իմաստը, ինչ զարդ, ավելին, հաճախ զարդ արտահայտվում է Բ. բառով: Այն հավանաբար խորհրդանշում էր զահի վրա դրվող բարձը, իբրև փափկության (առանց խընդրությունի և անփորձանք իշխելու) խորհրդանշի:

**ԲԱՐԴԱՎԱՐՈՒՄ**, բարոյական բայցայում, բարոյականության, կարգապահության, ոգու անկում: Բ. զարգացման խօսնիչներ կարող են հանդիսանալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են պատերազմի անբարենպաստ ընթացքը, անձանակազմի մեջ կորուստները և հոգնածությունը, անբավարար նյութական ապահովածությունը, հակառակորդի քարոզչական ներգործությունը:

**ԲԱՐՈՅԵՐՈԳԵՐԱՓԱԿԱՎ** ԴՐՈՒՅԹՈՒՆ, անհատի, կոլեկտիվի որակական գնահատական, որը կրկնական բնութագրում է հոգեբանական գործոնների ուղղվածությունը և դիմանիկան, միջանձնային հարաբերությունները: Բնութագրում է բանակի հոգեկան և բարոյական ոգու ներուժը:

**ԲԵՐՈ**, մշտական շրջանաձև պաշտպանության համար կառուցված ամրություն, որը լայն տարածում է ստացել միջնադարում, ամրոց:

**ԲՅՈՒԶԱԿԱՎԱԿԱՎ ՎԱՅՈՐԻԹՅԱՆ ԱՍՏԻՇԱՍԹՈՒՑԱԿ**, X-XII դդ. Բյուզանդական կայսրությունում գոյություն ունեին աստիճանացուցակի տասնիհինգ կարգեր: Խիստանական հիերարխիկ սանդղակի վերևում կեսարն էր, որին հաջորդում էր կեն սեբաստոսը (սևաստ), նովիլեսիմոսը, կյուրապահատը, պրոտոպահողորոսը, պրոեղորոսը, մագիստրոսը, վեստարքոսը, վեստուրքոսը (ամբիպատ) և պատրիկը: Աստիճանակարգի ստորին հատվածում պատաս-

խանատու պաշտոններ գրադեցնելու իրավունք ստացած հրամազմն էր՝ պրոտոսպաքարարը (պրոտոսպաքարին), սպաքարին-թեկնածուն, սպաքարիոսը և թեկնածուն, որոնք, սակայն, վարչական լիազորություններ գործեն չեն ունենում:

Կայսրության ռազմավարչական հիմնական միավոր համիսացող բանակաթեմերում կամ պատերազմի ջնիքացքում մի քանի բանակաթեմ ջնիգրիող ռազմավարական ուղղություններում գործող նոյն կազմի սահմանավորմերից մեկի նկատմամբ կայսեր բարեհաճությունը շեշտելու կամ գործում նրա հրամանատարական դիրքը պահպես նախաձայնը (քաջի կեսարից և վերևում թվարկված այն կարգերից, որոնցում այն արդեն իսկ կար):

**ԲՆԱԿԻԾ**, պաշտպանական ամրությունների և ելման դիրքերի գիծը:

**ԲՌԱՆԱԿ**, շենքավոր սարջ զենքի մաս, կազմված է բռնակից, խախարդից, երախակալից և:

#### Գ

**ԳԱՅ**, պարսկերեն բառացի նշանակում է նստելու տեղ, բազմոց, արոր և այլն: Պատմիչներն այդ բառն օգտագործում են նշանակելու համար այն տեղը, որ նախարարները գրավում են թագավորի սեղան շուրջը խնջույքների ժամանակ (սահմանված է Գահնանակ կոչվող հատուկ փաստաթրուվ): Տարբեր պատճառներով բազավոր կարող է գրկել նախարարին Գ-ից, կամ այն իշեցնել: Նոյն կերպ կարող է բարձրացվել Գ-ը: Գ-ով սահմանված կարգը խստիկ պահպանվում է, իսկ նախարարները նախանձախնդիր են իրենց գահերի պահպանամ կամ բարձրացած հաղորդում: Եղիշեն, երբ երում է ցուցակ ու լուսապահ նախարարների, որոնք վարպանի հետ միացան քրիստոնեաւոյն պահպանելու համար, չնայելով, որ վարպանի իր պաշտելի հերուսն է, որ նա առաջնորդն է այս պատաճության գործում, որ նա բոլոր հայ գործերի սպառապետն է՝ այնուամենայնիվ նախարարների ցուցակում նրա անունը դուռնում է երրորդ տեղում՝ առաջն երկու տեղում նշանակելով Արքունյաց և Խորհությունաց հշյաններին, որովհետև նրանք Գ-ով ավագ են: Ստեփանոս Օքրեսանը պատմում է, թե Սյունյաց Անդովկ հշյանը պարսից արքունիքում վիրավորանք կրենով նրանով, որ Շապուհը նրան տասնչորսերորդ Գ-ը տվեց հայ նախարարների շարքում՝ դառնացած կերակրի ձեռք չուվեց, և երբ Շապուհը պատերազմի գնաց՝ նա իր գործերով վիրեխնդրության համար ավերեց նրա ապարանքը, պայր առավ նրա գանձերը և հեռացավ հոյսների մոտ:

**ԳԱՅՆՏԻՔ**, հրամանական նշանատեսված տեղեկություն:

**ԳԱՅՆՏՓՈԽ**, երեմն հատակին սրածայր ցցերով հատած կոնի տեսքով փոս: Հակահետևակային արգելափակոցի տեսակ:

**ԳԱՐԱՎԱԿ**, ծագումն ու ծիշու նշանակությունը հայտնի չեն: Բառարանները բացատրում են իրեն սաղավարտի (խուզի) վրայի զարդ: Կարող է կիրառվել Գ-ով գիշանոցն ու սաղավարտու մեկ բառով նկարագրելու համար: Գ-ը ոսկեց կամ արծաթից շինված արծիվ էր, որ գլխի (սաղավարտի) վրա կրում էին իրեն գլխի պատիվ:

**ԳԵՏՏԱՑՈՒՄ**, գործերի կողմից ջրային արգելքի հաղթահարումը:

**ԳԵՏՏԱՑՈՒՄ ՏԵՂԱՎԱՐ**, ջրային արգելքը հաղթահարելու տեղամաս:

**ԳԵՐԱՎԱՆՑՈՒԹՅՈՒՆ** կամ **ԿԱՍՏԱՐԱՐ**, գլխավրապես գործերի (ուժերի) թվաքանի, նրան հանդերձանքի և ապահովման, բարոյական վիճակի, նարուական գործողություններ վարելու արվեստով մարտում և օպերացիայի ժամանակ հակառակորդի նկատմամբ ունեցած առավելությունը:

**ԳԵՐԻ**, պատերազմի ժամանակ թշնամու ձեռքն ընկած և ազատությունից գրկված մարդ:

**ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱԿԱՐ**, դիմադրող հակառակորդին ջախջախիչ հարված հասցնելու և օպերացիայում (մարտում) տրված առաջարարանքը կատարելու նպատակով ընտրված ուղղությամբ (շրջանում) գործերի (ուժերի) հարձակողական գործողություններ:

**ԳԼԽԱՅԻՆ ԶՈԿԱՅ**, առաջապահ ուժերի կողմից առանձնացվող երթային պահպանության օրգան, որն ուղարկվում է նրա անհավան տեղաշարժը պահպելու, նրա վրա համարժա-

կի հարձակումը կանխելու և բացագտվելու ու մարտի մեջ մտնելու նպաստավոր պայմաններ ստեղծելու առաջադրանքով։ Տեղանքի առանձնահատկություններից ելնելով՝ առաջապահ ուժեղի հրամանատարը կարող էր հաճախակի փոխել գ.ջ. կազմը, որի պատճառով սիեմաներուն (սիեմանտիկ պատկերներուն) չենք առանձնացրել վերջիններին կազմից։

**ԳԼԽԱՎՈՐ ՌԱԺԵՐ,** օպերացիայում (մարտում) գլխավոր խմբիրներ կառարելու համար նախատեսված միավորնամականացում (գրուանասի) հիմնական ուժեղի և միջոցների խմբավորում։

**ԳՐՈՅ,** ուժեղի գերլարումով վճռական հարձակում հակառակորդի վրա առավելագույն արագությամբ։ Այն հարձակման առավել վճռական պահն է և վարդում է բարձր տեմպով՝ գրոհողների ուժեղի լրիվ լարմանը։ Գ.ի հաջողությունը մեծապես ապահովվում է համառությամբ, գրոհողների գործողությունների հանգժոնությամբ, հարվածի անսպասելիությամբ, գրոշարժի սրբացությամբ, կրակի (բաղման) և շարժման անընհատ գուգակցմանը։ Ըստ գործողությունների ժամանակի գ. լինում է ցերեկային և գիշերային, իսկ ըստ վարման ուղղությունների՝ ճակատային, թևային, ինչպես նաև թիկունից։ Գ.ն սկսվում է ելման դիրքերից կամ Գ.ի անցնելու բնագծից կախված Գ.ի անցնելու եղանակներից։

**ԳՐՈՅԵԽՆ ԽՈՂՄԲ (ՁՈԿԱՏ),** ամրոցների (ամրացված շրջանների) վրա հարձակվելիս, ընակավայրում, լեռներում և այլ պայմաններում մարտ վարելիս՝ լավ ամրացված տաճանձին հենակետերի, դիմադրության օջախների և կարսոր օրբեկունների ոչնչացման համար կազմավորված ժամանակավոր խմբավորում։

**ԳՐՈՅԵՅՆ,** հակառակորդի ամրացված շրջանների, դիրքերի, հղոր պաշտպանական կառույցների (ամրոցների) ուժեղի գերլարումով սրբածք գրավումը։

**ԳՐՈՅԻ ԱՊՐԱԿՈՂՈՒՄ,** պաշտպանվող գործերի կողմից իրականացվող նարուակմ գործողություններ, որոնք վարդում են գրոհող հակառակորդին կանգնեցնելու, նրան առավելագույն կրուստներ հասցնելու և պաշտպանության ճեղունը թույլ չտալու նպատակով։

**ԳՈՂՄԿ,** նյութական միջոցներով տեղափոխող, պահպանող և մատակարարող ծիաքարչ ստորաբաժանումների հավաքական անվանում։

**ԳՈՂՄԱՐՏԱԿ,** գործի ստորաբաժանում, որը բաղկացած է մի քանի վաշտերից։

**ԳՈՂՆԻ (պատճ.),** ինքնուրույն մարտական գործողություններ վարող գորական միավոր։ Միշնադրյան հայ պատմինները ինքնուրույն գործողություններ վարող ցանկացած գորամաս, անկախ մեծությունից, կարող էին կոչել Գ. կամ գորագուն։ Այն հաճախ ընդամենը ցույց էր տալիս, որ մարտին (ռազմերին կամ այլ կարգի գործողությամբ) չի մասնակցում ամբողջ բանալի։

**ԳՈՂՐՁ,** հին հարվածային սառը գենք։ Կարճ փայտյա բռնակի վրա նստեցված քարե կամ մետաղյա (առանձին դեպքերում սուր ծայրերով) գլխիկ էր։

## ¶

**ԴԱՇՆՔ,** համատեղ քաղաքական, տնտեսական, ռազմական կամ այլ գործումներուն կատարելու նպատակով ստեղծվող պետությունների ժամանակավոր միջություն։

**ՌԱԶՄԱԿԱՆ Դ.,** կողալիցիոն պատերազմ վարելու նպատակով ստեղծվող պետությունների ժամանակավոր ռազմաքաղաքական միջություն։

**ԴԱՇՈՅԵՆ,** կարծ (մինչ 0,3 մ երկարությամբ) ուղիղ կամ կեռ, մեկ կամ երկսայր սայրով և բռնակով ծակող-կտրող սառը գենք։ Կրկում էր պատյանում։

**ԴԱՍԱՀՔ,** գրամասը կամ ծառայության վայրը ինքնանակ լրող կամ էլ ծառայությունից խոլոյ տալու նպատակով գինվորական ծառայությունից խոլսափող գինծառայող։

**ԴԱՍԱՀՔՆԵՅՅՆ,** գինծառայողի կողմից գրամասի կամ ծառայության վայրի ինքնանակ լրում կամ էլ գինվորական ծառայության չներկայանալը ծառայությունից խոլոյ տալու նպատակով։

**ԴԱՍԱԿ,** գրամասը միավոր (ստորաբաժանում) վաշտի կազմում՝ բաղկացած մի քանի ջոկերից։

**ԴԱՎԱԲԱՆ**, միտունավոր հակառակորդի կողմն անցած և նրան հանձնված զինծառայող: Նման անձինք յուրայինների կողմից բռնվելիս, որպես կանոն, դատապարտվում են որպես ազգի (Շայինների) Դ.: Դնում Դերը պարզապես հրապարակայնորեն մահապատճեն:

**ԴԱՐԱՆ**, թաքնվելու, պահվելու տեղ հակառակորդի վրա հանկարծակի հարծակվելու կամ հեռվից խոցելու համար:

**ԴԵՏԸ**, պաշտպանության ու հետախուզության համար գործից առաջ ուղարկվող փոքր ջոկատ:

**ԴԵՏՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ**, ուղարկվում է հետախուզությունը վարող կամ գլխավոր ուժերից կտրված մարտական խնդիրը կտարող մարդիններից հակառակորդին ժամանակին հայտնաբերելու և տեղանքում հետախուզելու համար:

**ԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**, գինառայողների կողմից մարտի դաշտում սեփական, դաշնակից կամ հակառակորդի զինվածների կամ վիրավորների, ինչպես նաև քաղաքացիական անձանց (խաղաղ բնակչության) իրերի բացահայտ կամ գալստի հափշտակում: Դ. է համարվում նաև նարսի դրատից դուր հանվող վիրավորների իրերի հափշտակում:

**ԴԻՎԱԿԱՆԳԻՒՏԱԿԱՆ ՊԱՅԵՐԱՐ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ**, պատերազմող կողմերի դիվանագիտական միջոցների օգտագործումը հակամարտությունը վարելիս իրենց համար նպաստավոր միջազգային իրադրություն ստեղծելու նպատակով:

**ԴԻՏԱԿԵՏ (ԴԿ)**, մարտակարգի այն տարրն է, որտեղից կատարում են հակառակորդի և տեղանքի հետախուզում, հակառակորդի և մեր գործերի գործողությունների դիտարկում: ԴԿ-ը կարող է լինել: 1) հրամանատարական (ԴԿ1), 2) օժանակ (կողային ԴԿ և առաջնային ԴԿ):

**ԴԻՏԱԿՈՒՄ**, ստորաբաժնումների կողմից հակառակորդի գործողությունների հետեւու միջոցով հրականացվող հետախուզություն վարելու հիմնական միջոցն է:

**ԴԻՏՈՐԾ**, նշանակվում է հակառակորդին և տեղանքը հետախուզելու, ինչպես նաև ռոլոր մարտահետականերում, տեղաշարժվելիս և տեղում տեղաբաշխվելիս յուրային ստորաբաժնումների ու հարևանների գործողություններն ու դրույթունը դիտարկելու համար:

**ԴՐՈՔ**, մարտ վարելու համար նախատեսված աճրաշինական կառույց կամ այդ նպատակով նախապատրաստված (կարող է լինել նաև չնախապատրաստված, սակայն զրոքով քաղցեցված) տեղանքի հատված: Ժամանակակից մարտում Դ. ունենում են ամենափոքր ստորաբաժնումները կամ կրակային (խոցման) միջոցները, օրինակ՝ ջոկի Դ., կրակային Դ. և այլ:

## Ե

